

1535

208

9(47.92)
2-46

1929

Ա. Տ. ԱՐԿՈՄԵԴ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՅԵՎ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

ԿՈՎՀԿԱՍՈՒՄ

ՄԱՍՆ I

ՊԵՏԱՐԱՏ

1929

ՅԵՐԵՎԱՆ

33-88 9/47.32
Ա-88 Ռ-46

Ա. Տ. ԱՐԿՈՄԵԴ

Հարացման
Ժեղագ

ԲԱՆՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՅԵՎ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿՐՎԿԱՍՈՒՄ

ՄԱՍՆ I.

Պոտի հրատակության համար գրած Փ. Գ. Պետրովի
առաջաբանով

Հեղինականացած բարզ. ուսւերեն 2-րդ հրատակությունից
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

783

81



ՅԵՐԵՎԱՆ - 1929

ԱՐԱՋԱԲԱՆ 2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ա զիրքը զրված է 1907-8 թվականներին, թեպետ և նրա բովանդակության տարրերն ավելի վաղ, այն եւ 1903—4 թվականներին արդյունավետ ստուգական աշխատավայր է համարվում: «Բանվորական, սոցիալ-դեմոկրատական շարունակական կովկասում» նյութի մասին յես ռեֆերատներ եմ կարդացել բավարում (Արևելյան Սիբիրում)՝ առաջին անգամ 1903 թվին առաջարկած կենտրոնական աքսորական բանառում՝ քաղաքական առողջապահության մասին, իսկ յերկրորդ անգամ 1904 թվին Յենիսեյարկան առաջարկան աքսորական մասին:

Հայութ քաղաքում՝ քաղաքական գույնու 1910 թվին և
Դիրքս առաջին հրատարակությամբ լուս տեսավ 1910 թվին և
այդ համար անսպասելի հաջողություն ունեցավ։ Ընկ. Անինը Ռ.
Դ. Բ. Կ. (Քայլեկիների) կենարոնական կոմիտեի անունից 2000
ինակ ազատագնեց տպարանից, վորը գրավիլ գիրքը տպագրու-
թյան համար նրան հասանելիք գումարը ժաման գմարելու հնա-
րաբորությունը չունենալու պատճառով։

իսկ ոռւս սոցիալիստական մամուլի մյուս մասը, լիկվիդատու-
ական հօսանքը լուսության տվեց այս գիրքը, վորովինեաւ և այս գիրքը, —
սուսմ ե Գ. Պեխանովը սրան կցած իր առաջարանի մեջ, — վերա-
կանիցնում ե ընթերցողների հիշողության մեջ այնպիսի փաստեր, այն-
իսի գաղափարներ ու պայքարի այնպիսի միջոցներ, վորոնք ա-
նձնապես պարզ ու հասկանալի յեն դարձնում «լիկվիդատորական»
ը ՀՀ է և իստուառական անհեղեղությունները»:

Ապողությունների խախտառագ ամսությունը 1910 թվի № 7-ի մեջ ընկ.

կ. Կառցիկու Արևոց ՏԵՐԻ
Ամիսը տալով զբան բանդակությունը, իմիջի ալլոց զրում է

«Հեղինակը բազմամյա մասնակցությունը այդ շաբախության մասնակի առաջնահերթ գործությունն է» (Հայաստանի պանկառական, սոցիալ-դեմոկրատական շարժման

— Ա. Տ. Արկածեց), —թույլ ետավիս նրան ուրվագծել ամբողջ պըռ-

սուաթ պատկերը, ինչպես և առաջադրել ու լուսաբանել նրա
սով պարզ պատկերը, առանձին-բնորոշ եպիզոդների ոգնությամբ:
Խավոր մումենտները առանձին-բնորոշ եպիզոդների ոգնությամբ:

2004

84286-eeb
785-912

Франция. № 1740 р.

Tunis, № 237.

S_h



Դժբախտարար մակերեսութորեն շոշափված մնացել և միայն աղջական հարցը, զոր կովկասյան աղջաբնակության խիստ խալարզեալագաւորական կազմի պատճառով այնքան կարևոր նշանակություն ունի ձիշտե, զբքի մեջ, ի միջի ալլոց, հիշատակվում ե այն պայքարի մասին, վոր սոցիալ-դեմոկրատիան ստիպված ե լիդել մզել միքանի աղջությունների մեջ ընդդմ աղջաբնական չառողական ահենդինցների ու արագիցիաների (հատկապես հայ աղջաբնակության մեջ), սակայն, այնուամենայնիվ, ընթերցողը պարզ գաղափար չի կազմում, թե Կովկասում գասակարգային պայքարի ու նացիոնալիզմի միջն ինչ առընչություն կա: Հավելվածում մենք գտնում ենք անշափ հետաքրքիր դիտողություն սոց-դեմոկրատական կովկասյան առաջին խմբակի ու սոց-դեմոկրատական առաջին թերթի մասին:

Ընկ. Արկումեղի աշխատանքը, անկասկած, ամենաշիրմ ընդունելությունը կդանի մեր սուս ընկերների շարքերում: Պիորի ափառսել միայն, վոր այս զիրքը վորպես անհրաժեշտություն լույս ե տեսնում արտասահմանում ու «անլեզալ»: սա մեծ խոչընդուռ ե զբքի լայն տարածման գործի համար:

Այս առթիվ, թե «Դժբախտարար մակերեսութորեն շոշափված մնացել և միայն աղջաբնական հարցը», յես պիտի նկատեմ, վոր բանվորական շարժման ու սոցիալ-դեմոկրատիակի առաջացման ժամանակ, ինչպես և սրանց զարգացման սկզբնական շրջանում (անցյալ գար ի 90-ական թվերի վերջին ու 1900 թվերի սկզբին) աղջաբնական հերձակություններն ու տարածայնությունները կովկասյան ժողովուրդների միջն այնպիսի սուր ձեերով չելին արտահայտված, ինչպես այդ պացում եր հետագա տարիներին: Ընկ. սեցենզենուը գրում ե 1910 թվի վերջերին, յերբ աղջաբնական հարցը կովկասում իսկապես վոր զառել եր արգեն հերթական ցավուա մի հարց, ամենաին չժամանելով, թե մի 10—15 տարի առաջ աղջաբնական հարցը կարող եր այգափես չլինել: Այս ժամանակ բացի «Դաշնակցություն» և «Հնչական» կուսակցություններից ու հայ հասարակության միքանի փոքրաթիվ բուրժուական իրզուկներից, վորոնք մտահոգված ելին լուծել աղջաբնական հարցը թյուրքահայտանի հողի վրա, ինչպես և վրացական ու մուսուլման աղջարնակությաս աղջական-կալվածատիրական տարրերի մեջ աղջային շովինիստական տրամադրությունների ու զգացումների թույլ արտահայտությունից, կովկասում աղջաբնական հարցը վորպես մասսայական հասարակական յերեսություն, գոյություն չուներ: Բանվորները և մասամբ ել անդրկովկասյան ժողովուրդների գյուղացիական մասսան այն ժամանակ աղջաբնական յերկառակություններ տած բանը չգիտական, իրարի միջն աղջաբնական հարցը վերջին դնում, այլ միայն

«Երթորա»-ի*) մեջն եյին տեսնում իրենց սոցիալ-տնտեսական ու քաղաքական ազատազրությունը: Սակայն կապիտալիզմի զարգացմանը և կովկասյան հասարակության տնտեսական և ունեցվածքային հարաբերությունների զիֆֆերենցիացիային զուգընթաց վերջին տարիներս աղջապին տարածայնություններն ու խնդրիներն ավելի ու ավելի սուր բնույթ են ընդունում: Բոտ ինքայն հասկանալի յե, վոր մեր աղխատության և մասում մենք անկասկած լուրջ ուշագրություն կը դարձնելինք յերկրի զարգացման պատմական ընթացքի առաջացրած աղջային հարցի վրա, վոր հատկապես սուր ձեերով արտահայտվեց 1905 թվի հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:

Ա. Ռիկաչովը, Պ. Սորովյելի «Ռուսական Մայսլե» որդանի աշխատակիցը, մի որդանի, վորի խմբագրատունն ինչ-վոր հրաշքով ընկել եր մեր զիրքը, ամսագրի զրախոսական բաժնում (1911 թվի հուլիսան Ն-ը) շոշափելով զբքի մեջ արձարձված հարցերը գրում ե: «Թեպետ և հեղինակի մեջ բերած նկութը շատ զեպքերում լրացուցիչ ըստություն և պահանջում, բայց գրքույկը, անկասկած, շատ հետաքրքիր բան ե բովանդակում իր մեջ: Ուշագրության արժանի յեն այն փաստերը, վորոնք լուսաբանում են ինտելիգենտական տարրերի զերը բանվորական շարժման մեջ աղջաբնական հարցի գերը, սոցիալ-դեմոկրատիակի գերը «Անդրկովկասի» գյուղացիական շարժման մեջ»:

Փարզաբանելով այս հարցերից ամին մեկը, նա զյուղացիական շարժման հարցի մասին հետեւալն է ասում: «Թեպետ հեղինակը, ակընհայտ կերպով, միքանի չափազանցություններ և թուլատրում, այնուամենայնիվ սոցիալ-դեմոկրատիակի գերը Վրաստանում գյուղացիական շարժման մեջ, համենայն գեպս, մեծ և յեղել»:

Մեր գրքում մենք մատնանշել ենք, վոր քաղաքային բանվորները և հատկապես զյուղացիական մասսաները հաճախ զիմում ելին տերըրին, չնայած վոր սոցիալ-դեմոկրատիան ընդդիմադրում եր ու բացասական վերաբերմունք եր ցուց տալիս տերըրին: Սրանից պարոն ռեցենզիան այսպիսի յեղրակացություն է անում: «Այսպիսով, զեկագարներն (այսինքն սոցիալ-դեմոկրատաները:—Ս. Արկ.) հարկադրված եյին զիջելու զեկագարվող մասսաների ինստինկտներին և պահելու իրենց աղջեցությունն իրենց սկզբունքներից հրաժարվելու դնով միայն»:

Նախ և առաջ նկատեմ պարոն ռեցենզենտ Ռիկաչովին, վոր լիրերալ ինտելիգենտական յերեսություն չուներ: Բայց սովորության կորված են մասսաներից, հեշտությամբ կարող են փանտաստիկական դատողությունների աղխարհն ընկնել իսկ նրանք, ովքեր սուր եյին կանգնած մաս-

*) «Երթորա» վրացական խոսք և նշանակում և միություն:

սահերին և ակտիվ աշխատել են նրանց մեջ, նման դատողությունների արժեքը շատ լավ գիտեն: Յեթե դարիս առաջին տարիներին մեր լիբերալ-քննադատը գանիվը գեթ մեկ ամսով Դուրիայում կամ Իմերեթիայում, նա կհամոզվեր, թե սոցիալ-դեմոկրատիան այն ժամանակակից այլ շաբաթին մեջ ինչպիսի հսկայական դեր է խաղացել: Մենք այդ առթիվ վոչ մի չափազանցություն ամեներն չենք անում:

Ինչ վերաբերում է աերլորիստական գործողություններին, ապա կարիք կամ արդյոք ապացուցելու, վոր գրանք մեծ մասամբ տարերային բունկումների հետևանքն են յեղել: Սրդյոք զրա մեջ մեղ ունի սոցիալ-դեմոկրատիան, վոր կավում եր ալդ տարերային, անկազմակերպ շաբաթմների ու գրանց անխուսափելի հետևանքների դեմ: Այժմ լուրաքանչյուր զպրոցականին անգամ հայտնի յե, վոր այդ անցանկալի, յերբեմն նույնիսկ վրդովեցուցիչ արարքներն անխուսափելիուրեն առաջանում են այն անտանելի պայմաններից ու կարգերից, այն սանձարձակ ալլանդակություններից, վոր տիրող դասակարգերն ստեղծում են մասսաների համար: Սրդյոք մեղ ունի՝ սոցիալ-դեմոկրատիան, վոր ֆիզիկական հնարավորություն չունենալով վերացնել ան: Կարեռ բոնի գործողությունները, այնուամենաւնիվ կովում եր դրանց գեմ, վորի հետևանքով հարյուր անգամ ավելի նվազեցին մարդկային զոհերի թիվը և նյութական վնասների չափը, մի բան, վոր տեղի կունենար, յեթե սոցիալ-դեմոկրատիան չկովեր ու ընդդիմադրություն ցույց չտար:

Ճիշտ չե, թե «սոցիալ-դեմոկրատական ղեկավարները հարկադրված եյին զիջիլու մասսաների ինստինկտներին և պահելու իրենց ազդեցությունը իրենց սկզբունքներից հրաժարվելու գնով միայն»: Ընդհակառակն՝ սոցիալ-դեմոկրատիան իր ակտիվ միջամտությամբ ու ազդեցությամբ նվազեցնելով մարդկային զոհերի և նյութական վնասների քանակը, զրանով հենց հավատարիմ մնաց իր սկզբունքներին, նալաստեց նրանց ամրապնդմանն ու հաղթանակին: Իհարկե, լիբերալ բուրժուազիի գործն է նսեմացնել բանվորական սոցիալիստական կուսակցության նշանակությունն ու դերը: Մենք ամեներն մտադրություն չունենք այդ բանում նրանց մեղադրելու կամ պահարակելու: Նրանք մնում են և կոչված են մնալու հավատարիմ իրենց դասակարգային շահերի պաշտպանության գործին:

Նույն բանը պիտի ասել նաև հայ մանր-բուրժուազական ազգայնական կուսակցության, «Դաշնակցության» մասին, վորի լիզեր ու իդեոլոգ Պ. Վարանդյանը*), վոր մեր զրքի լույս տեսնելու մոմենտին

*) Միք. Վարանդյանը հայ իրավանության մեջ հասարակական-քաղաքական մտքի ամենաականավոր ելլեկտիկն ե:

ղեկավարում եր կուսակցության կենտրոնական որգան «Դրոշակը», զրքիս մասին ամեն տեսակի ափեղցիկ մտացածին բաներ զրեց*): Հարկ չկա ուշաղրության տուրք տալու մի կուսակցության ու նրա ղեկավարներին, վորոնք Հայաստանն ավերակների վերածելու և հայ ժողովրդին ծայր աստիճանի կործանման հասցնելու իրենց անմիտ գործունելությամբ բավականին ցուց են տվիլ իրենց: Այդ խայտառակ կուսակցությունը և նրա ղեկավարներն արժանի յեն դժբախտ հայ ժողովրդի ամենախորն անարդանքին միայն և ուրիշ վոչինչ:

Ընդհանուր առմամբ այնպես եր զանազան սոցիալիստական և վոչ սոցիալիստական հասարակական խմբակցությունների որգանների քննադատական վերաբերմունքը ներկա աշխատության նկատմամբ:

Յերկրորդ հրատարակության ժամանակ այս աշխատության մեջ վոչ մի ուղղում և փոփոխություն մենք չենք արել, նկատի առնելով, վոր աշխատությունն պատմական փաստաթղթի նշանակությունը ունի. մենք նույնությամբ թողեցինք առաջին հրատարակությունը: Միայն բնագրին վորպես ծանոթություններ միքանի անհրաժեշտ գիտողություններ ենք արել:

Մեր զրքի առաջին մասը բանվոր դասակարգի ու սոցիալ-դեմոկրատիայի շարժման պատմությունը կովկասում հասցնում է մինչև 1904 թիվը, իսկ յերկրորդ մասը, վոր պատմությունը հասցնում է համարյա մինչև Դումայի շրջանը, մենք հնարավորություն չունեցանք հրատարակելու զանազան անպարտելի հանգամանքների պատճառով:

1904—5 թվերի բանվոր դասակարգի հեղափոխական շարժումների շրջանում և 1905 թվի հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեր յերկրում առաջացան նոր հասարակական խմբակցություններ, վորոնցից միքանիսը, վոր մինչ այդ հեկորված չելին, առաջներում գոյություն ունելին սաղմային դրության մեջ:

Այսպես, վրաց սոցիալ-ֆեդերալիստները, հայ գաշնակցականներ և ես-երները քաղաքական կանքի ասպարիզում յերեսում են առավելապես 1905 թվի հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ: Նըրանք հենց սկզբից ևեթ պայքար են մզում բանվոր դասակարգի կուսակցության հետ, վորը յերկրում հեղափոխական-քաղաքական հեկմոնի դեր խաղում:

Հայերի միջև ամենաաւմել կազմակերպությունը, Դաշնակցությունը, վոր մինչ այդ զրպաված եր բացառապես թուրքիայում թյուրքական բռնակալական լից հայերի պատարագական գործով, Ռուսաստանի ու Կովկասի քաղաքական խոշոր զեպքերի ազգեցության

*) Տես «Դրոշակ» № 7—9 1910 թ.:

տակ վորոշում և գործոն մասնակցություն ունենալ ոռուսահայերի քաղաքական կյանքի մեջ։ Նրա այս վորոշումը սանկցիա յէ գտնում կուսակցության 1907 թ. համագումարում։ Այդ ժամանակից սկսած նա յերկու ծրագիր և ունենում մեկը թյուրքահայերի, մյուսը ոռուսահայերի համար։

Այս ու այն տեղ հայտնվում են նույնպես կաղետներ, տուավելապես հայերի ու ոռուսների մեջ, վորոնք համարյա վոչ մի քաղաքական դեր չեն խաղում։

Մուսուրիան ազգաբանակության մեջ «կրթված» ֆեոդալների շրջանում նկատվում են դասակարգացին շահերի դարթոնքը։ Նրանք շահագրգուված են Պետական Դումայում իրենց ներկայացուցչությունն ունենալու։ Թեպետ և կովկասում այդ ժամանակ նրանք դեռ քաղաքական կազմակերպություն չելին կազմում, բայց և այնպես, ոգտվելով զյուղացիական մասսաների մեջ մեծ ազդեցություն ունենալուց, նրանք հնարավոր են գտնում իրենց ներկայացուցիչներից միքանիսին Դումա ուղարկել։

Մեր գրքի մեջ մատնանշել ենք կովկասյան կյանքում գոյություն ունեցող վոչ մի բանի հետ անհամեմատելի մի մեծ չարիքի վրա։ Մեր հասարակական քաղաքական կյանքի դժբախտությունը մուսուլման ազգաբանակության հզոր, բայց քաղաքականապես դեռ չձեւավորված ազնվական-ֆեոդոլական դասն եր, վորը թյուրք ժողովրդական մասսաների խորը հետամնացության, լքումի ու տգիտության շնորհիվ հետապնդում եր ամենահետապիմական դիտավորություններ ու նպատակներ։

Դժբախտաբար, մեր յերկրի հասարակական-քաղաքական հառաջադիմական կազմակերպություններից վոչ մեկը, և վոչ եր մանավանդ, սոցիալ-գեմոկրատիան, ամենաին չի մտածել իր զործունեյության մի մասը թուրք լքված մասսաների մեջ ուղղելու, վորպեսզի քաղաքականապես ու կուլտուրականապես դաստիարակի և ազատազրի նրանց իրենց ցեղակից բեկերի ու խաների դարսվոր անտանելի լից։

Ժամանակի ընթացքում՝ ստոլիպինյան ռեակցիայի շրջանում, թուրք ֆեոդալները, վոր մինչ այդ հայկական ջարդեր*) նյութելու մեջ առաջաւարտիկ դեր ելին խաղում, քաղաքական ասպարեզ են յեւնում շատ ավելի կազմակերպված կերպով։ Նրանց կազմակերպությունը հատկապես հզոր դարձավ 1917 թվի փետրվարյան հեղափոխության շրջանում։

*) Կասկած չկա, վոր հայ դաշնակցականները նույնպես իրենց հերթին չելին հողկում թուրքական ջարդեր կազմակերպելուց Այսպիս, որինակ՝ 1905 թ. նոյեմբերին թիֆլիսում վոչ թե հայկական, այլ թուրքական ջարդ յեղափ։

Այս ամենահետաղիմական ու տաճկասեր կուսակցությունը, վոր Հայտնի յէ «Մուսավաթ» անունով, մեր յերկրի ապրած կրիտիկական մոմենտներին բացորոշ կերպով տաճկական բռնակալության գործակալության վերը խաղաց։ 1918 թվին նա մեր յերկրը տաճկական հրոսակների ու ֆեոդալ մալդակերների ձեռքը մատնեց՝ միանգամայն քայլացիկ կեղեցիկ յերկիրն ավերակեների վերածեց։

Այս կուսակցությունն ամեն կերպ աջակցում եր տաճկա-դերմանական իմպերիալիստների ծրագրերին։ Այդ ծրագրերն իրագործվում են, յերկիրը մուսաստանից քաղաքականապես տնջատվելով, բաժան-բաժան և լինում միմյանց թշնամի տերը տորիալ մասերի, իրարից միանգամայն «անկախ» ազգային-տերրիտորիալ հակամարտ պետությունների։ Մենք չենք խոսի այն մասին, թե զա մեր յերկրի բանվորա-զուղացիական դեմոկրատիայի թիկունքին ինչպիսի սարսափելի հարված եր հասցնում, թե յերկրի տնտեսական, առեւրական կյանքի զարգացման համար ինչպիսի անպարտելի խոչընդուներ ու դժվարացումներ ստեղծում, թե ինչքան առատ զբուրավագությունների մեջ իշխող աղդանական խմբակցությունների քաղաքական գործունելությունը։

Մուսավաթներն Աղբեկջանում, չխենկելիստները Վրաստանում և գաշնակները Հայաստանում միայն մի ձգում ունելին՝ ստեղծել կովկասում «նոր Բալկաններ», վորի արյունակից պատմության՝ դիմաց նսեմանում են ազգային ընդհարումների ամենամույլ ժամանակները Յեկովական Բալկաններում։

Անվայինան արյունակից կոշմարը մշտական չարիք և գառնում։ Տերրիտորիալ հարցերը, վոր զրգում են ազգայնականների ախորժակները, անխուսափելիորեն սուածացնում են արյունահեղ ընդհարումներ։ Մինչև խորհրդային իշխանության հաստատումը կովկասում համարյա անընդհատ ազգամիջյան կոփսեր են տեղի ունենում Աղբեկջանի, Վրաստանի, Հայաստանի, Աղարիստանի, Ասեթիայի, Ղարաբաղի, Եախիջևանի շրջանի և այլոց միջև։ Այդ կոփսերի մեջ վաչընշանում ե յերեսասարդ սերնդի աշխատունակ ծաղկի մասը, յերկիրն ավերակների կուտի վերածվում, հասարակական կանքի զարկերակը դադարում և խփելուց, կարծես մարել եր վողջ ժողովրդական կյանքը։

Այդ ծանր մոմենտներին վրաց սոցիալ-գեմոկրատիան, վոր Կովկասում քաղաքականապես ղեկավար կուսակցություն եր հանդիսանում, դասակարգակին պայմանագրի միանգամայն հեռանում ու բռնում և զարյուն ազգայնականության ուղին։ Քանի դեռ նա թ. Ա. Ֆ. Բ. Կ. հետ միասին մի կուսակցություն եր կազմում, միջազգային հեղափոխական բանվորական դեմոկրատիայի աղդեցության տակ, հե-

դափոխական սոցիալիզմի սկզբունքներին հավատարմություն եր պատճում, թեպետ և նրա շարքերում, սկսած այն որից, յերբ կովկասում առաջանում է սոց.-դեմ. կուսակցությունը, ազգայնական, մասն բուժուական տարրերը պակաս չելին: Այս զաս սոցիալ-դեմոկրատական տարրերի գեմ հարկադրված են յեղել կովկել սոցիալ-դեմոկրատիայի ձախ ինտերնացիոնալիստական թեր ներկայացուցիչները:

Հեղափոխական ընդհատակյա մոմենտներին վրաց սոցիալ-դեմոկրատական ազգայնականները կենդանության նշաններ չերեան չելին հանում, մինչդեռ հեղափոխական շարժման ամենածանր, կրիտիկական որերին նրանք դուրս ելին զալիս ընդհատակյա ու վեր բարձրացնում վլուխները:

Չխենկելիզմը*) վրաց սոցիալ-դեմոկրատիայի մեջ նոր յերեսում չե. Կովկասում սոց.-դեմ. կուսակցության առաջացման ու զարգացման հենց սկզբից ևեթ նա զգալ ե տվել իր գոյությունը ի դեմում և մեսամենդասիստների մեծամասնության, վորոնք 1898 թվից սկսած Թիֆլիսում հարատարակում ելին «Կվալի» լեզվալ շարաթաթերթը: Այսուամենայնիվ չխենկելիզմն անկարող եր լինում բացահայտ ընդդիմանալու բանվոր դասակարգի ինտերնացիոնալ շարժման գրոհին: Լիկվիդատորական հոսանքը, վոր ընդզրկել եր համարյա ամբողջ սոցիալ-դեմոկրատիան. և վորի դեմ սովառագինիկել եր հանգուցյալ Պիեխանովը մեր գրքի առաջին հարատարակությանը կցած հառաջաբանի մեջ, չխենկելիզմի, վրաց սոց.-դեմոկրատիայի ազգայնականուողակորյունիստական այդ թեր ցայտուն արտահայտություններից մեկն և: Սակայն վրաց այս շեյգեմանականները, ցարիզմի անկումից հետո 1917 թվի փետրվարյան հեղափոխության շրջանում, մի առանձին հաստատակամությամբ դուրս են զալիս ազգային հարցի մասին իրենց նախագծերով: Ժորդանիան, Չխենկելին, Ռամիշվիլին և լուս զանուարի նախագծերում են անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատիան կազմակերպությունների հուլիսյան համագումարին «ազգային տերիտորիալ ինքնավարությունների» նախագիծը, վորը նրանց յեռանդագին ջանքերի շնորհիվ իրազորդվում է հետագայում առանձին, իրարից միանգամայն «անկախ» տերիտորիալ պետությունների վրաստանի, Հայաստանի ու Աղրբեշանի կերպարանքով: Համագումարում մենք առիթ ենք ունեցել արտահայտվելու ազգային հարցի լուծան ժորդանիական հեղանակի դեմ, մենք

*.) Այս հետագիմական հոսանքը, վորին հարեց վրաց սոցիալ-դեմոկրատիայի անդին մեծամասնությունը, կոչված և Ա. Չխենկելիի անունով, վորը հանդիսանում է վրաց սոց.-դեմ. ազգայնականության ամենացայտուն արտահայտիչը, թեպետ, պիտի խոսանոված, վոր նա ինքը, վրակեա քաղաքական գործիչ իրենից վոչչություն եր ներկայացնում:

մատնանշում ելինք, վոր ամբողջապես չարիք և միջազգային բանվորական գետմոկրատիայի ուժերի անջատումը, վոր վտանգավոր մի եքսպերիմենտ և յերկրի քաղաքական բաժանվածությունն ըստ ազգային հատկանիշի, մի յերկրի, վորի ազգայնակառությունն իրենից ազգայնական մի կատարյալ կոնգրեսներատ և ներկայացնում, վոր մեզնում «աղգային-տերըրիտորիալ ինքնավարությունների» իրագործմանը վորպետանիուսափելի հետևանքներ հարավոր են պերտուրացիաներ, անվերջանալի ազգային արյունահեղ ընդհարումներ: Մեր այս կարծիքն առ վոչինչ համարվեց, մեր ձայնը խեղդվեց:

Ուղիղ մի տարի հետո մեր յերկուղացումներն արդարացան-վրա հասավ 1918 թիվը, մեր ժողովարդների կյանքի ամենամուտ տարին: Այդ տարվա սկզբին արդեն մենք դիտում ենք վրաց սոցիալ-դեմոկրատիկմից նացիոնալ-դեմոկրատիկմին անցնելու նշանները: Կուսակցությունը, վոր անցյալում փառապանձ դեր եր խաղացել, այժմ անկման նշաններ եր միայն արտահայտում: Սոց.-դեմոկրատական կուսակցության չխենկելիստական հոսանքը գերազանցեց հեղափոխական ձախ թերին: Այդ հոսանքը վճռականապես բռնեց քաղաքական ու ազգային սեպարատիզմի ուղին: Չխենկելիին, Ժորդանիան, Ծերիթելին, Ռամիշվիլին և ուրիշները դառնում են սեպարատիզմի մուսաստանից քաղաքականապես անջատվելու և կովկասն անկախազգային տերրիտորիալ պետությունների բաժանելու ջերմ կողմանակիցները: Նրանք այժմ ազգային հարցի մեջ պաշտպանում են «գաշնակցականների» տեսակետը, վորի դեմ նրանք առաջ յիռանդագին կալում ելին:

1917 թվին Անդրկովկասյան կոալիցիոն կառավարության մեջ, իսկ այսուհետեւ հաջորդ տարին, Անդրկովկասյան սեմի ժամանակ, վրաց չխենկելիստները բլոկի մեջ են մտնում թուրք Փեռողաների ամենահետաղիմական «Մուսավաթ» կուսակցության հետ: Նրանց բարեկամական հարաբերությունները մուսուլման ազգայնակության հետադիմական ներկայացիան համար կայացուցիչների հետ բոլորին զարմանք են պատճառում: Նրանք կովում են բալշենիզմի ու այն ամենի դեմ, ինչ վոր սուսական եր, միայն թե հաղթանակեր յուրահատուկ ազգային գաղափարը, վորով հափշտակված ելին նրանք ինչպես նոր ավետարանով: Դաժանորեն կովելով բալշենիզմի դեմ, նրանք աջակցում են միայն, վորպեսզի տաճիկներն իրագործեն իրենց նվաճողական նպատակները և հաղթեն ամբողջ յերկրի գեմոկրատիալին ու Բազիքի պրոլետարիատին, վորի ահազին մեծամասնությունն այն պահին գնում եր բալշենիկների յետերց:

Եկրը տաճկական ֆեոդալների նվաճողական ծրագրերի գործակալների կուսակցությունը, «Մուսավաթը» և նրա ներկայացուցիչնե-

բը անդրկովիկաստան կառավարության ու սեյմի մեջ անողոք կոիվ ելին մզում բարձրիչների ու Բազվի պրոլետարիատի դեմ, նրանց ճշնշելու և վոչչացնելու համար ուղարկում ելին իրենց այսպիս կոչված «վալրի» գործմաները, ինը այնունետեւ շուտով Անդրկովիկասի տերիտորիան մտան տաճկական հրոսակները, և մուսավաթիտներն ամեն կերպ աջակցություն ելին ցուց տալիս տաճկական սրի հաղթությանը, և վերջապես, յերբ մուսսավաթիտների «վալրի» զորամասուրն ու տաճկական ասկիալները շրջապատեցին Բազվի հարցուր հազարանոց պրոլետարական բանակը, վրաց չխենկելիստ սոցիալ-դեմոկրատները, շատ բազակ լինելով, թէ ինչ և կատարվում, վոչ միայն մատների արանքով ելին նախում տեղի ունեցող զրամալին, այլ և շարունակում ելին իրենց սիրալիր ու բարեկամական հարաբերությունները «Մուսսավաթի» ներկայացուցիչների հետ:

Մեր յերկիրը Ռուսաստանից քաղաքականապես անջատեց ու անկախ պետությունների բաժանվեց վոչ միայն գեղքերի ու արտաքին իմպերիալիստական ուժերի ճնշման տակ, այլ և մեր յերկրի քաղաքական խմբակցությունների մարտական ազգայնականության շընորհիվ իրենց նվաճողական նպատակներին հասնելու համար ինպերիալիստները ձգտում ելին մեզ Ռուսաստանից անջատել ու բաժանրաժան աներ մինչդեռ վրաց չխենկելիստներն ու մեր յերկրի մյուս ազգայնական խմբակցությունները կամենում ելին ու ձգտում ելին նույն բանին իրենց ազգայնական նպատակների համար:

Նրանց ազգային տենդենցները միանգամայն զուգադիպեցին տաճկա-գերմանական իմպերիալիստների ծրագրերին*): Վրաստանի «անկախություն» հայուարարելուց հետո վրաց սոցիալ-դեմոկրատիայի ազգային ամբողջ քաղաքականությունը բռնում և ազգային բուրժուատիան ուժեղացնելու և մյուս ազգությունների բուրժուազիային նեղելու ուղղությունը: «Ազգայնացման» պատրիակի տակ ազգայնացվեց այն ամենը, ինչ վոր ոտարի ու «այլազգու» սեփականություն եր: Նույնիսկ բանվորական քաղաքականության մեջ նկատելի ելին նրա «ազգայնացման» տենդենցներն ու հոգսերը:

Դադարում ե գործել դասակարգային պայքարի սկզբունքը, ընդհատվում ե բանվոր դասակարգի շարժումը մասն անհնարին եր: 1918 թ. մայիսի 25-ին յես գրագոր հայուարարություն տիֆ շրջանային կոմիտեյին, վորի անդամը և փոխնախագահն ելի, վոր գուրս հմ գալիս կոմիտեյի կազմից, պատճառաբանելով իմ այդ քայլը նրանով, թէ ինձ համար անհնարին ե հաշվել չխենկելիստական քաղաքականության հետ, վորը հեղափոխական սոց-դեմոկրատիայի վրա հաղթանակ եր տարել:

*) Այդ բանից հետո վրաց չխենկելիստ սոցիալ-դեմոկրատների հետ միասին մի կուսակցության շարքերում մասն անհնարին եր: 1918 թ. մայիսի 25-ին յես գրագոր հայուարարություն տիֆ շրջանային կոմիտեյին, վորի անդամը և փոխնախագահն ելի, վոր գուրս հմ գալիս կոմիտեյի կազմից, պատճառաբանելով իմ այդ քայլը նրանով, թէ ինձ համար անհնարին ե հաշվել չխենկելիստական քաղաքականության հետ, վորը հեղափոխական սոց-դեմոկրատիայի վրա հաղթանակ եր տարել:

Իստ լիդերների: Մի խոսքով՝ վրաց սոցիալ-գեմոկրատական մենշեվիկում, հանձինս չխենկելիստների, այլասերվում ու ընկնում և անձանաչելիության աստիճան: Վերջին տարիներու նրա քաղաքական գործունեյությունը չի տարբերվում նացիոնալ-դեմոկրատների քաղաքականությունից:

Ժորդանիա-Ռամիշվիլի ուժիմը վոչ գեմոկրատական եր ու վոչ ել, և առավել, սոցիալիստական, այլ սիակն ազգային-բուրժուական: Վրացի բանվորները, կանվելով իրենց «լիդերների» ուժեղ ազգեցության տակ, չելին զգում այն կողմարակին ճնշումը, վոր ամբողջտպես պատել եր: Նրանց, իվիճակի չելին հասկանալու այն մոռայլ ազգայնական մթնոլորտի պայմանները, վոր նրանց համար ստեղծել ելին իրենց առաջնորդները:

«Անդրկովիկասի քաղաքական կյանքը 1918 թվին» վերնագիրն ունեցող մեր գրքի տուաջարուում (հայերեն լեզվով)*) գրված 1919 թ. հուլիսի 15-ին, մենք գրել ենք հատկայլը. «Այն որը, յերբ վրաց բանվորական գեմոկրատիան կոթափի իր «լիդերների» ներշնչած նացիոնալիստական քաղաքականության հիմնողից, այդ որը կլինի մեր յերկրի միջազգային սոցիալիզմի քաղաքական կանքի պայծառ որելից մեկը:

Այդ որը յեկագի. Անդրկովիկասի ու Ռուսաստանի պետությունների ֆեղերացիան, վորի իրագործմանն ուղղել ելին իրենց բոլոր քայլերը խորհրդային իշխանությունները, մահարեր մի հարված և ազգային մեկուսացումին ու ամեն տեսակի ազգայնական տենդենցներին ու գիտավորություններին:

Իսկ մեր «Յանիկ Ռевոլյուցիոներ»-ի մեջ (1920 թ. հունվար № 1), ջերմագին պաշտպանելով կանոնական-ֆեղերատիվ պետական կարգի կազմակերպությունն Անդրկովիկասի համար, մենք հողվածը վերջացնում ենք հատեյալ տողերով.

«Անդրկովիկասի բոլոր քաղաքացիների ծննդավալըն Անդրկովիկասին և, բայց մեր բոլորիս ընդհանուր հայրենիքը մեծ զեմոկրատիկ Ռուսաստանն ե, հեղափոխության Բլուտամերը»: Ով չի ուզում հասկանալ ու ընդունել այս բանը, նա անուղղելի եգուստ-ազգայնական և, ըստ սովորական դարձվածքի, խղճուկ մի «մորթեպաշտ» (աշկրեմ), վորի տեղը ՀՀ դարի սոցիալական միջավայրը չե, այլ միջին դարերի վաղանցած եպուստական միջավայր»:

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ (ԱՐԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ)

Թուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կյանքի ու պատմական ձևավորման մեջ կովկասյան սոցիալ-դեմոկրատիան ականավոր տեղ ե բռնել, և նույնիսկ կովկասյան ժողովության բարձրագույն հեղափոխական, ազատազրական շարժման մեջ փոքր գեր չեն խաղացել։ Այն հանգամանքը, վոր Կովկասում *) մինչ այժմ գոյություն չունի կազմակերպված տեղական աջ քաղաքական կուսակցություն, յույց ե տալիս, վոր բնակչության հասարակական գործող տարրերի առաջադիմական, ազատագրական աշխատանքն իսկ զլիավորապես կովկասյան սոցիալ-դեմոկրատաների վերջին տասնամյակի լուսանդազին գործունեյությունը համարյա ընդգրել ե ազգաբնակության բոլոր խավերը և հնարավորություն չի տվել աջ հետազիմական տարրերին կերպարանավորվելու և կազմակերպելու առանձին մի քաղաքական կուսակցություն։ Շատ հավանական ե, վոր մոտիկ ապագայում քաղաքական ու եակցիալի ու սե-հարյուրակային Յ-րդ Դումայի ազգեցության տակ ալպիսի կուսակցություն կադմի։ Սակայն ներկայումս (1908 թ.), բացի սպորադիկ պատահող հատ ու կենտ մարդկանցից ու խմբակներից, այդպիսի կազմակերպություն գոյություն չունի։ Ազգաբնակության պահպանողական տարրերի միջև գերակշռող հոսանքը չափավոր լիբերալ, աջ-կադետական հոսանքն ե Նույնիսկ վլրաց ազնվական-ները և թուրք բեկերն ու խաները՝ թուրք աշխատավոր մասսաներին հողեպես ու տնտեսապես այդ սարսափելի ստրկացնողները, ընդհանուր քաղաքական հարցերի շուրջը շատ ավելի խոհականություն են լերեան բերում, քան սե-հարյուրակային Պուրիշէները, կելեպովները, Բորբինսկիները և նմանները։

Ինկատի ունենալով, վոր Կովկասյան սոց-դեմոկրատիան Կովկասում հեղափոխական շարժման մեջ դեկավար գեր ե խաղացել և շարունակում ե խաղալ և վոր նա, վորպես քաղաքական կազմակերպություն, բարոյական հեղինակություն և վայելում վոչ միայն պրոշետարական մասսաների ու ազգաբնակության մանր-բուրժուական խավերի, այլ և ծայր աստիճանի հետամնաց թուրքական մասսաների մեջ սուս ընթերցողի համար անհետաքրքիր չի լինի, յեթե ծանոթանու ընդհանուր գերբորդ Կովկասի բանվորական շարժման, կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ծագսան ու զարգացման պատմությանը։ Մանավանդ վոր, կովկասյան սոցիալ-դեմոկրատիան, վորպես միակ հեղափոխական դեմոկրատական կազմակերպություն, կապիտալիզմի ավելի ու ավելի ուժեղացման զարգացման շնորհիվ այդ յերկրում հաջողության մեծ շանսեր ունի, չնայած նրա շարքերում

*) Յես ինկատի ունեմ միայն հարավ-ասիական մասը՝ Անդրկովկասը։

այժմ նկատվող այն ճգնաժամին, վոր ժամանակավորապես առաջանել ե զանազան ընդհանուր քաղաքական ու այլ պատճառներով։

Ընդումին կարենոր եմ համարում մատնանշել, վոր կովկասյան շարժման պատմության համար անհրաժեշտ նյութերը պակասում են։ Հեղափոխական ընդհատակյա կազմակերպության համար, չնայած նրա բոլոր ջանքերին, պատմական փաստաթղթերի արխիվ պահեն անհարին ե լիղել և այժմ շատ դժվար ե գտնել, առավելապես շարժման առաջին շրջանին վերաբերող, այս կամ այն փաստաթուղթը։ Թերես այս աշխատության յերկրորդ մասի համար նյութեր մեծ քանակությամբ գտնվեն, մանավանդ վոր լիգալ մամուլում նույնիսկ վերջին տարիների շարժման մասին հարելի յերավականին դիտողություններ ու տեղեկություններ գտնել։

Այնուամենայնիվ, պատմության առաջին մասի համար յես կարողացա ողտագրություն այն ամենը, ինչ վոր գտա Կովկասի վերաբերյալ՝ «Բարօայ Մայսլ», «Բարօայ Դելո» անլեգալ հրատարակությունների, վրացերեն «Բրձոլա» անլեգալ թերթի և առանձնապես «Իսկրայի» մեջ։ Բացի այդ, կազմակերպության ու շարժման մեջ անձամբ ունիցած իմ ակտիվ մասնակցությունը, ինչպես և իմ հիշողաթյուններն ու գիտողությունները նրանց մասին, այս աշխատության բովանդակության մեջ պակաս տարրեր չեն մտցրել։

Իմ շարադրության մեթոդը, ինչպես կնկատի ընթերցողը, պատմողական, նկարագրական ե, դրա համար ել աշխատությունը թերես կրում ե վորոշ կոմպիլյատիվ բնույթ։ Յես յենթադրում եմ, վոր այս տեսակի ամեն մի աշխատություն չի կարող ալպիսին չլինել։ Յես աշխատել եմ հետեւ բանվոր դասակարգի կյանքի բոլոր արտահայտություններին, նրա ամեն մի քալին, նրա գործողություններին, սխալ թե ուղիղ՝ անխոտիր, բայց վորոնք արժանի յեն դիտվելու շարժման պատմության մեջ։

Ինձ թվում ե, վոր Ռ. Բ. Կ. ու ոռւսական մեծ հեղափոխության պատմության համար ողտավետ ու գնահատելի կլինի, յեթե նման մենագրություններ, վորոնք, իմիջի այլոց, չեն կարող չունենալ նշանակալից թերություններ, ձեռնարկեն մյուս խոշոր կազմակերպությունների իրազեկ ու կարող ընկերները նույնական վորոնք վորպես կենացնած յեղել գործին և կարող ելին այդ իսկ պատճառով ներշնչել զեսի իրենց համապատասխան վստահություն։ Բացի արխիվային զրավոր նյութերից, շարժման ու կազմակերպության մեջ ջերմ մասնակցություն ունեցած է իր բազմամյա գործունեյությումը նրա զարգացմանն աջակցած յուրաքանչյուր անձնավորության մեջ կարելի յերավականին դիտվելու առաջած այդ իսկ կազմակերպության պատմության սաղմերն ու տարրերը։

Հեղինակ

Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎԻՆ

Մեծարգու ընկեր

Գիորգի Վալենտինովիչ.

Զեղ եմ նվիրում իմ այս համեստ աշխատությունը, Զեղ, վորպես
գիտական սոցիալիզմի նախահորը Ռուսաստանում և ոռւսական սո-
ցիալ-դեմոկրատիայի ամենաականավոր հիմնադիրներից մեկին: Վոր-
պես ուղղափառ մարքսիզմի անխոնջ պաշտպան, դուք համառ կոիլ
եք մզել բոլոր նրանց դեմ, ով «սոցիալիզմի» զրոշակի տակ, զիտա-
կցաբար թե անդիտակցաբար, թագցրել եր իր բուրժուական կերպա-
րանքը: Զեր գրական-քննադատական ու հրապարակախոսական գոր-
ծունելության յերկարատես ընթացքում Դուք քիչ թշնամիներ չեք
ունեցել: Ժըննում իմ նախկին ուսանողական կյանքից լավ հիշում եմ,
թե ինչպես «Աշխատանքի Ազատագրության և բակալավրական գործու-
թյան առաջին տարիներին, յերբ սոցիալ-դեմոկրատիալի ուժն ու
նշանակությունը գենես աննշան ելին, Զեղ հետապնդում ելին, դեպի
Զեղ թշնամանք և նույնիսկ ատելություն ելին աածում «տիխոմիրո-
վյան» հասկացողության տեր նարոգովոլցիները (народовольцы ժո-
ղովրդա-պատասերներ) ու ամեն յերանգի նարոգնիկները (народ-
նիկն—ժողովրդասերները): Դուք, այնուամենայնիվ, Զեր անխոնջ
աշխատանքով ու անխնա պայքարով մեկը մըուսի յետելից խորտակե-
ցիք Փիլիսոփայական-քաղաքական մտածողության հին, հետամնաց
ձևերը: Այդ պայքարը Դուք շարունակում եք նաև մինչև այսոր նույն-
իսկ նրանց դեմ, վորոնք գտնվելով մեր կուսակցության շարքերում,
պարզորոշ կերպով շեղվում են հեղափոխական մարքսիզմից ինչպես
տակտիկական, այնպես և սկզբունքալին հարցերիմեջ*):

Բացի այդ անգնահատելի ծառայություններից, վոր Դուք մա-
տուցել եք ոռւսական սոցիալ-դեմոկրատիալին, մասնավորապես կով-
կասյան սոցիալ-դեմոկրատական շատ բանով ձեղ և պարտական: Նրա
շարքերում Դուք քիչ աշակերտներ, հետևորդներ ու համակիրներ չեք
գտնի:

*.) Այդ կերպ դուք կովում եք այժմ մեր կուսակցության նորագույն չարեքի
լիկվիդատորության ու նեռեկանմիզմի դեմ:

Անհատապես յևս իմ ուսանողական կյանքիս հենց առաջին տարուց սկսած դեպի Զեր հեղափոխական գաղափարական գործունելությունը տածել եմ լիակատար համակրություն։ Յևս յերբեք չեմ մոռանալ մոմենտը, յերբ 1888 թվին լույս տեսած «Սոցիալ-Դեմոկրատ»-ի առաջին համարը կարդալուց հետո յևս ուղարկեցի Զեր խորապես համակրական, խանդավառ մի նամակ, վորը վերջանում եր այսպիսի խոսքերով. «Կեցցե արեւելյան սոցիալ-դեմոկրատիան»։ Այս, հենց այդ «արեւելյան սոցիալ-դեմոկրատիան» կերպարանավորվեց, աճեց ու ընդլայնվեց այնչափ, վոր տոն տվեց «ոռուսական մեծ հեղափոխությանը» ու ստեղծեց նրա եալոպեան։ Նա, այդ «արեւելյան սոցիալ-դեմոկրատիան», վորի առաջնորդն ու իդեոլոգը հանդիսացել ու հանդիսանում եք Դուք, թե կունել են նույնիսկ Պարսկաստան ու Տաճկաստան։ Ահա թե ինչ նկատառումներ դրդեցին ինձ, Գեորգի Վալենտինովիչ, Զեր նվիրել այս աշխատությունը ինշան դեպի Զեր ունեցած իմ անկեղծ յերախտագիտության ու խորունկ համակրանքի։

Ս. Տ. Ռեկոմեն

1909 թ. սպոսոս
Ժընկ

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր յերկիրը, իսկ նրա հետ նաև մեր կուսակցությունը, գիտակից պրոլետարիատի կուսակցությունը, — ապրում ե այժմ «անծանակայնուրուն» («բեզբրեմենե»), ամեն տեսակի անկումներով անչափ առաջ մի ցավալի շրջան։ Յեթե սրանից վոչ վաղ, քան միքանի տարի առաջ մեր ընկերներից շատերը կուրացած եյին անհիմն հույսներով, վոր նրանց անհիմն արարքների լեն մղում, ապա այժմ հենց նույն ընկերների չափազանց նշանակալից մասը մատնվում ե նույն անհիմն վհատության, վոր զրդում ե նրանց սխալ գործողություններ անելու։ Միքիչ առաջ դեռ յեռանդով լի թվացող այդ մարդկանցից մեկը չե, վոր իրեն համակող վհատության ազդեցության տակ կառող ե կրկնել էկրմոնառովի խոսքերը,

Նայում եմ ապագային վախով,
Նայում եմ անցյալին կարոտով...

Այսուամենայնիվ, նրանք, ովքեր «նայում են ապագային վախով», «անժամանակայնության» ամենից շատ տուժած զոհերի թվին զեռ չեն պատկանում։ Ամենից շատ տուժել են նրանք, վորոնց ապագան արդեն չի վախեցնում, այլ ընդհակառակն, միիթարում ե «լեզալ» գործունեյության գուրեկան հեռանկարով։ Ռուսական սոցիալ-դեմոկրատը պիտի ծայր աստիճան տնկման հասած լինի, վորպեսզի լեզալիս*) գառնա մի այնպիսի ժամանակ, յերբ կառավարության բոլոր արարքների վրա ապօրինուրյան կնիքն ե դրված, մի բան, վոր անորինակ ե նույնիսկ Ռուսաստանում, և յերբ ոռուսական «քաղաքացիների» «իրավունքները», ավելի քան յերբեմիցե, կախումն ունեն վոստիկանական անսահման ու ցինիկ կամայականությունից։ Իսկ սինչեռ, մեր շրջանում, թվում ե, վոր ավելի ու ավելի աճում ե «լիկվիդատորների» թիվը, վորոնք արհամարհորեն յերես են թեքում իրենց համար անհամելի դարձած հեղափոխական «ընդհատակից» հանուն «լեզալ» գործունեյության։ Ռուսաստանում չկա մի այնպիսի անկուռն, վորտեղ վիտալիս չլինեն, — յերբեմն նույնիսկ վոչ պակաս «հաջողությամբ, —

*) Լեզալիզմի որդանը վերջին ժամանակներս դարձել ե Մոսկվայի «Վозрождение» («Վերածնունդ») ամսագրը, վորը հարկ ե, վոր իրեն կոչի «Վարույթ» («Այլասերումն»):

այդ սոցիալ-դեմոկրատ հոկտեմբերականները: Բայց յերևութիւն նրանք թափանցել են նույնիսկ Կովկաս, վորտեղ մեր ընկերների մեջ իշխում եր միանգամայն ուրիշ տրամադրություն, և վորտեղ մեր ընկերները բարձր են պահում հեղափոխական դրոշակը:

Ահա թե ինչու ինս միանգամայն ժամանակին եմ համարում ընկ. Ս. Արկոմեդի գրած Կովկասի հեղափոխական շարժման պատմության դրվագի լույս ընծայումը: Այս գրվագը վերականգնում է ընթերցողների հեշտության մեջ այնպիսի փաստեր, այնպիսի գաղափարներ ու պատճեռի այնպիսի միջոցներ, վորոնք առանձնապես պարզ ու հասկանալի ին դարձնում «լիկվիդատորական» զատողությունների խայտառակ անհեղեղությունները:

Ահա ցատուն մի որինակ: Մինչ վերջին ժամանակս կովկասյան սոցիալ-դեմոկրատիան ազատգրական շարժման մեջ պրոլետարական հեղմանիալի գաղափարին եր հետեւում: Այժմ լիկվիդատորները, — ճիշտն ասած՝ նրանց մեջ ամենաշխատկները, — ժխտում են, վիճելի ին գտնում այդ գաղափարը, հրաժարվում են նրանից: Այդ գաղափարը նրանց աննպատականարմար ե թվում: Յեկ նրանք իրավացի յեն: Այդ գաղափարն իրոք վոր աննպատականարմար ե... Երանց տեսակետից: Իսկ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետից բանը միանգամայն այլ կերպ ե ներկայանում: Դա ամենից լավ ապացուցում է հեղափոխական շարժման պատմությունը Կովկասում:

Էնկ. Ս. Արկոմեդն ասում է.

«Կովկասի բանվորական շարժման մեջ իրենց բնույթով խիստ տարբեր լերկու շրջան կարելի յե հաստատել: Առաջին շրջանը, սկսած անցյալ դարի 80-ական թվերից մինչև 1900 թիվը, մենք կոչում ենք տարերային-անդիտակցական տնտեսական շարժման շրջան, իսկ յերկրորդ շրջանը, վոր ընդգրկում ե 1900 թ. մինչ 1905—6 թվերի ժամանակամիջոցը, — գիտակցական, քաղաքական-տնտեսական շարժման ջրջան: Ներկա դեպքում «գիտակցական շարժման» տիրմինը մենք այն մտքով ենք գործածում, վոր բանվոր դասակարգի առաջամարտիկ մասը, ինչքան ել նա փոքրաթիվ լիներ, գառնում ե շարժման զեկարգարը, առն և ուղղություն ե տալիս հեղափոխական դորձին, տրամադրություն ե զաթեցնում և իր յետեկց տանում բանվոր դաստկարգի ամենից հետամնաց, բազմաքանակ խավերը» (տես՝ լ գլուխ):

Այս բանը ժխտել չի ջանա նույնիսկ ամենահամոզված «լիկվիդատությունը»: Սակայն հարց ե առաջանում, արդյոք հեղափոխական շարժման ուժը Կովկասում չպականց այն հանգամանքից, վոր նրա (շարժման) գեկավար գերում դուրս յելավ «բանվոր դաստկարգի առաջամարտիկ մասը», այսինքն սոցիալ-դեմոկրատիան: Այդ հարցին գեղաքերը բարձրաձայն ու հասկանալի պատասխանում են, վոչ, չպակսեց

և վոչ միայն չպակսեց, այլ յեվ, ընդհակառակն, մեծացավ այն աստիճան, վոր աստիճանին յերբեք չեր հասնի, յեթե շարժումը ղեկավարելը բուրժուական մի վորեւ կուսակցություն: Հապա ինչու յե անհանգըտացնում այժմ մեր «լիկվիդատորներին» պրոլետարիատի հեղեմոնիայի գաղափարը, վոր գործնականում այնպիսի բեղմանավոր արդյունքներ ե յերեան բերել: Ինչու նրանք այդպես խնամքով փորում են պլոտետարիատի հեղեմոնիայի գաղափարի տակը: Հենց այն պատճառով, վոր ինչպես վերն արդեն նկատվեց, այդ գաղափարը նրանց տեսակետից միանգամայն աննպատականարմար ե:

Դժվար չի հասկանալ, վոր դեպի ընդհատակն ունեցած արհամարհանիքը, վոր անչափ առանձնահատուկ ե մեր «լիկվիդատորներին», անխուսափելիութեն պիտի հանգի, — համենայն դեպս տրամաբանությունից միանգամայն վոչ գործի գլուխներում, — պրոլետարիատի հեղեմոնիայի գաղափարի բացասանը:

Այստեղ բանը կրկին լավ պարզաբանում է Կովկասի հեղափոխական շարժման պատմությունը: Հենց նույն ընկ. Ս. Արկոմեդը գրում է.

«Գյուղացիական շարժումը կովկասում իր առաջացման որից սկսած ու իր հետագա զարգացման ընթացքում, հանդիսանում ե քաղաքային պլոտետարական շարժման արտացոլումը: Քաղաքային սոցիալ-դեմոկրատական շարժման հետ նա շատ ընդհանուր գծեր ու նմանություններ ե ունեցել: Սոցիալ-դեմոկրատիայի հետ կողք-կողքի ու նրան զուգընթաց և նրա գրոշակի տակ գյուղացիությունը կովում եր վոչ միայն տնտեսական ազատագրության, այլ և քաղաքական ազատագրության համար: Նրա պայքարի հնարիներն ու ձեերը համարյա նույնն ելին, ինչ վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը» (Տես՝ գրքիս «Գյուղացիությունը յեկ հողային շարժումը կովկասում» գլուխը):

Նման յերեսությը տեղի կարող եր ունենալ գյուղացիական ազատակության վրա սոցիալ-դեմոկրատական կուսակցության արած գիտակցական ու պլանաշափ ներգործության պայմաններում միայն: Սա պարզ ե: Սակայն պարզ ե և այն, վոր այդպիսի ներգործությունը պիտի վոր անլեզար լիներ, պիտի վոր բղխեր հեղափոխական ընդհատականից: յուրաքանչյուր լերեիս անգամ հասկանում ե, վոր մեր «լեզակ հնարավորյունները» այդ ներգործությանը միանգամայն տեղ չեն թողել: Այդ պատճառով ել նա, ում համար թանգ ե այդպիսի ներգործությունը, վոր պլոտետարիատի հեղեմոնիայի գաղափարի իրագործան կարեւրագույն միջոցներից մեկն ե, անհրաժեշտաբար թանգ կցնահատի: Կաև հեղափոխական «ընդհատակլ» Յեկ հակառակը. նա, ով արհամարհանքով փոնչում ե «ընդհատակլ» հասցեին, վոչ միայն չի գնահատում պլոտետարիատի հեղեմոնիայի գաղափարը, այլ անհրա-

Ժեշտաբար տրամադրվում ե կամ միանգամայն բացասելու այն, կամ թեկուզ այնպիսի «մեկնություն» տալու նրան, վոր պրոլետարիատի հեղեմոնիայի գաղափարը կորցնում է հեղափոխական ամեն մի միտք։ Գերմանական առածն ասում ե՝ ով ասում է «Ա», նա պիտի ասի նույնպես «Բ»։ Իսկ մեզ հետաքրքրող այս դեպքում հարկավոր ե հիշել, վոր ով ասում է «Բ», նա զրանով հենց ցուց ե տալիս, վոր ինքն արդեն արտասանել ե «Ա», յեթե վոչ բարձրածայն, ապա թեկուզ ինքն իրեն, «մտքի մեջ», «մտացի» սահմանափակումների ու մեկնությունների վերաբերյալ ունեցած ճիզվիտների հայտնի կանոնին համաձայն։

Ուղարի համար ավելի դյուրին ե անցնել ասեղի ծոկովը, քան թե լիկվիդատորի համար մարսել պրոլետարիատի հեղեմոնիայի գաղափարը։

Իսկապես վոր, լիբեակայեցեք մի «ընկերոջ», վորը կորցնելով 1905-6 թվերի փոթորկալից շրջանի ընթացքում իրեն թևավորող հույսերը *), անդորրությամբ ապաստանել ե վորեն լեզար կազմակերպության մեջ։ Դուք գալիս եք այդ մարդու մոտ և առաջարկում նրան մասնակցել կազմակերպված ու պլանաչափ այն գործողություններին, վորոնք նպաստակ ունեն նպաստելու գուուղացիության քաղաքական գիտակցության զարգացման գործին։ Նման գործողությունները պարզապես պարտավորեցուցիչ են գիտակից պրոլետարիատի համար, վորոնք ազատագրական շարժման մեջ, թեկուզ նվազ չափով, դեկավար (հեզեմոն) գեր ունենալու պահանջն ե դնում, և մենք տեսանք, վոր, որինակ՝ կովկասի գիտակից պրոլետարիատը կարողացել են լավ կատարել իրենց այդ կամաց անլեզաւ «ընդիմատակյա» կազմակերպությունից։ Այլ կերպ վարվել նրանք չեն կարող քաղաքական պարտականությունը։ Բայց այդ պարտականությունը կատարելու համար նրանք ստիպված են յեղել ոգտվել իրենց անլեզաւ «ընդիմատակյա» կազմակերպությունից։ Այլ կերպ վարվել նրանք չեն կարող պահանջների արհեստակացական միությունները, վոչ սպառողական ընկերությունները և ընդհանրապես նրանց վոչ մի լեզար կազմակերպությունը նման գործողություններ չեն կարող և չպիտի չել իրենց վրա վերցնեն։

Նշանակում ե, յեթե մեր սիրելի «ընկերը», վոր անգորրությամբ ամոքում ե իր «հիասթափության» ցավը այդ տեսակի կազմակերպություններից մեկի մեջ, վճռեր հավանություն տալ և սպաշտանել

*) Հիասթափելու ընդունակ են միայն ուսուպիսաները։ Արհեմուաքում, 1848-49 թվերի հեղափոխական բռնկման անհաջող յելքը «հիասթափեցրեց» այն սոցիալիստակի միայն, — ճիշտ ե, նրանք շատ ելին, — վորոնք պրոլետարիատի շարժման նկատմամբ ուսուպիսական հայցը ունենալուց գեր չեյին դադորել։ Մարքսն ու ենթերը վոչ մի բանում «հիասթափեցրեն» հենց այն պատճառով, վոր նրանք կանգնած եյին գիտական սոցիալիզմի տեսակետի վրա։

մատնանշված քաղաքական գործողությունները, ապա նա հարկադըրված կամ ինքը պիտի մտնելը «ընդհատակյա» աշխատանքի մեջ, կամ թե, համենայն դեպս, անուղղակի կերպով ոգները «ընդհատակյան» մարդկանց, մտնելով նրանց հետ վորոշ կազմակերպչական հարաբերությունների մեջ, այսինքն պարզ ասած, հայեր ընդիմատակյա խղանակն կուսակցությանը։ Սակայն հենց դա իե, վոր չի ուղում մեր «հիասթափակած» ընկերը, հենց զրանից ե, վոր նա ամենից շատ խուսափում ե։ Հապա ինչ ե մնում նրան մնելու։ Նրան մնում ե հայտարարել, վոր մատնանշված քաղաքական գործողություններն անժամանի են կամ, ել ավելի լավ, ընդհանրապես հարկավոր չեն։ Իսկ քանի վոր այդ գործողությունները հարկավոր են պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը պաշտպանող մարդկանց տեսակետից, ապա նա ակամայից դեմ կղառնա նաև այդ գաղափարին։

Ճիշտ ե, նա այդ բանը այն գեպքում միայն կանի. յեթե տրամաբանությունից զուրկ չի և իր դատողությունների մեջ կարողանում է ծալրը ծայրին հասցնել։ Յեկ պիտի խոստվանել նույնպես, վոր տրամաբանական մտածողության ընդունակությունը չկորցրած եկղեմպլարները մեր սոցիալ-դեմոկրատական հոկտեմբերականների միջև միանգամայն քիչ են։ Այդ պատճառով հենց Ստիվանովիչը, վոր այնպես լավ «գիտակցել ե ինքն իրեն», նրանց մեջ ներկայանում ե վորպես տրամաբանականության հսկա։ Սակայն տրամաբանականության բացակայությունը պատճառ չի և վոչ ել նույնիսկ մեղմացուցիչ հանգամանք։ Համենայն դեպս անհերքելի չե, վոր հետևողականորեն մտածող սոցիալ-դեմոկրատ հոկտեմբերականը (այլ կերպ՝ «լիկվիդատորը») ողբուհատարիատի հեգեմոնիայի գաղափարից ամեն տեսակի ստություններով չի կարող ճարպկությամբ չհրաժարվել։

Խնդրում եմ նշել, վոր յես չափաղանց հեռու չեմ այն մտքից, թե իբր մեր «լիկվիդատորներն» այդ գաղափարի նկատմամբ դժկամուրյուն ունենալու ուրիշ առիթներ չունեն։ Ի՞նչպես կարող են չլինել։ Կան, բայց դժվել այդ բոլորը։ Նույնիսկ այդ բանի կարիք ել չկա։ Ընթերցողն այս բանում կզտնի այն թագավորի վիճակում, վորին բացարել են, թե ինչ պատճառով նրա քաղաք մտնելու ժամանակ թնդանութաճություն տեղի չեր ունեցել։ «Նախ և առաջ, ամել են նրան, այն պատճառով, վոր մենք թնդանութներ չունենք։ Յերկրորդ...»։ «Ինձ համար բավական ե առաջին պատճառը», ընդհատել ե հաետորին անհամբեր թագակիրը։ Այդպես կընդհատեր ինձ, յերկի, նաև ընթերցողը, յեթե յես մտադրվելի պարզաբանել նրան մյուս այն պատճառները, վորոնք զրգում են կուսակցությունից «հիասթափակած» մեր գիտականներին յերես թեքելու պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարից։ Նա կդառներ, վոր իմ մատնանշած պատճառը բավակա-

Նին պարզում ե հարցը: Համենայն դեպս յես կդիտեմ դարձյալ ահա
թե ինչ:

Ինչքան ել հեղաբարու չլինեն մեր սոցիալ-դեմոկրատ հոկաեմքեցականները, վորոնք բանվորական լեգալ կազմակերպությունների մեջ իրենց մոտիկ անցյալի «Հիասթափուռներից» հանգիստ են առնում, այնուամենայնիվ ժամանակակից կառավարությանը հաճոյանալը հեշտ բան չի: Այդ կառավարությունն ամենուրեք «քաղաքականություն» և տեսնում և վայրագորեն հետապնդում ե նույնիսկ ամենաանվաս բանվորական կազմակերպություններին: Այս բանը «լիկվիդատորներին» հիշեցնում ե, վոր, իրոք, առանց քաղաքականության անհնարին ե յոլա գնալ: Պիտի ապահովել իրենց համար թեկուզ փոքրիկ «լեգալ հասրավորություններ», Պիտի «կովել լեգալուրյան համար»: Իսկ վորպեսզի մեր աշխատանքը նոր պարտություն չկրի, — գատում ե «լիկվիդատորը», — մենք նախ և առաջ պիտի մտածենք այն մասին, վոր մեզ պաշտպանի բուրժուազիան: Բայց պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը բուրժուազիային դուք չե՞ զալիս: Ի՞նչ անել հապա: Տախոս populii supremata let (ժողովրդի բարորությունը ամենաբարձր որենքն ե): Զոհաբերենք այս գաղափարը ժողովրդական շահերին: Դա հենց նույն տակտիկական հնարն ե (պրիեմ), վորով այնքան աղմուկ արագ ե. Բերնշտեյնը 30 տարի սրանից առաջ: Բուրժուազիային չլախեցնելու համար նա հրաժարվեց սոցիալիստական հեղափոխության գաղափարից, փոխարինելով այն սոցիալական բարեփոխության (քեֆօրմա) գաղափարով: Բուրժուազիային չլախեցնելու համար նա հրաժարվեց մատերիալիզմից ու անցավ նեոկանտյանների կողմը և այլն և այլն:

Մենք բոլորս զիտենք, վոր բացի ամենատաղեկալի դատարկություններից այդ տիրահանչաչակ «ուկիզիան» վոչ մի բան չտվից: Սակայն սա իմիջի ալլոց:

Հնթեցողը տեսնում է, թե ինչպես բոլոր ուղիները չոսմ են տանում, այնպես ել «լիկվիդատորների» բոլոր զատողությունները (գիտակից թե անգիտակից, այդ բոլորը միևնույն են) տանում են գեղիպղոլետարիստի հեգեմոնիալի գաղափարի բացասումը: Զարմանալի վոչ մի բան չկա դրանում: Բայց զարմանալի ու ցավալի է այն, վոր այդ տեսակի զատողություններն ազգեցություն են գործում նույնիսկ այնպիսի փորձառու և լուրջ ընկերների վրա, վորոնք, թվում եր, թե վոչ մի բնդանուր բան չախտի ունենալին «լիկվիդատորության» հետ:

«Դիսկուսամիոն թերթիկի» № 2-ի մեջ (1910 թ. հունիս 14/7) տպված է բնկ. Ան.՝ի* բանակախմբ բնկ. Կ. Ստ.-ի** հետ՝ վրացական «Ազգի» և

*) Նոյ Ժողովանիա:

**) L. b. Ушашін:

«Դասողկիսի» թերթերում դեռ 1908 թվին լույս տեսած և հենց նույն ընկ. Ան.-ի գրչին պատկանող հողվածների առթիվ: Վրաց լեզուն չի-մանալով, յես այդ հողվածների մասին գատել կարող եմ միայն այն քաղվածքների հիման վրա, վոր մեջքերում են վիճող կողմերը: Դժբախ-տարար, այդ քաղվածքներն ընկ. Ան.-ի մտքերի ընթացքի մասին միանգամայն ձիշտ հասկացողություն չեն տալիս, իսկ այն բացա-տրությունները, վոր տալիս ե այդ քաղվածքներին ընկ. Ան., բավա-կանին կցկտուր են: Սակայն ինչ ել վոր լինի, պարզ ե ոի բան. ընկ. Ան. հերքում ե այն հիմունքը, վոր արտահայտել եմ յես 1889 թվին Պարիզի միջազգային համագումարում, այն ե՝ «Հեղափոխա-կան շարժումը Ուուսաստանում կհաղթանակի կամ վորպես բանվորա-կան շարժում, կամ թե յերբեք չի հաղթանակի»: Ընկ. Ան. իրավացի յե, յերբ կարծում ե, վոր այդ հիմունքի մեջ յես արտահայտել եմ պրոլետարիատի հեգեմոնիայի զաղափարը *): Բայց նա չարաչար սխալվում ե, յերբ յենթադրում ե, -թե այդ զաղափարըն արդեն իր ժա-մանակն ապրել անց է կացըրել: Միանգամայն ընդհակառակիլը՝ այդ գա-ղափարը ժամանակակից ե այժմ ձիշտ այնպես, ինչպես ժամանակա-կից եր նա միքանի տարի տուած: Սակայն լսենք ընկ. Ան.-ին:

«Վլացական հոգվածների հեղինակի գեմ (այսինքն՝ ընկ. Ան-դեմ) զրած «նամակի» մեջ առաջադրած (ընկ. Կ. Ստ.) լիկվիդատորական բոլոր մեղադրանքներից միայն մեկն է ճիշտ, - դա պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի լիկվիդացիան և՝ ներկա և ապագա ազատազրական շարժման մեջ։ Սրա գլխավոր արգումենտը վոչ թե Մարքսի կամ հեղափոխությունների պատմության վկայությանը զիմումներ, այլ հասարակական ուժերի փոխհարաբերությունների այն փոփոխությունը, վոր տեղի ունեցավ վերջին յերեք տարիները՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև տնտեսական և ընդհանուրապես գասակարգային սրացարի ուժեղացման ու զասակարգային դիֆֆերենցիացիալի հետեանքով։ Իհարկե, այս արգումենտը չի համոզի նրանց, վորոնք կարծում են, թե Ռուսաստանի վերանորոգման գործը կատարի պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրան։ Բայց կակտուակցության մի ուրիշ մաս, վորը այլ կերպ է մտածում, առա հենց այդ մասի համար հիշյալ մեր գատողությունը նշանակություն կարող է ունենալ։ Զեմ կարծում, վոր սրանք այժմ կարող լինեն շարունակել մտածելու, թե ապագա շարժման մեջ բուրժուազիան գարձյալ պրոլետարիատի լեռնեց կզնա, ինչպիս գնաց նա մինչ հոկտեմբերի 17-ը։»

*) Այստեղ ինչպես եւ պետք երազանել անհամեմատ ավելի նըրամտություն ե յերեան բերում, բայն «Սոլոս Սոցիալ-Դեմոկրատ»-ի Խմբագրությունը, վորը իսկեմ Ա. Մարտինովի (տես նրա նորվածը՝ «Ով լիվիդացիայի յենթարկեց գաղափարական ժառանգությունը» տպված «ԳՈՅՈԾ»-ի մեջ) փիզն է, վոր նենց չի տեսնում:

Վրացական հոգվածների հեղինակն ասում է, վոր «հեղափոխության գլուխը, հիրավի, կանգնած եր պրոլետարիատը և յեթե (հեղափոխությունը) չհաղթանակեց, ապա դրա պատճառն այն եր, վոր պրոլետարիատը չեր կարող բուրժուական հաղթական հեղափոխության գլուխը կանգնել, վորովհետև յեթե հեղափոխությունը հաղթական ե, ապա նա վոչ թե բուրժուական կլինի, այլ սոցիալական»:

Սա միանգամայն համոզեցուցիչ չե: Ըստ ընկ. Ան.-ի գուրս ե գալիս, վոր մեր ազատագրական շարժումը 1905 - 6 թվերին վոստիկանական պետությանը հաղթանակելու համար բավական ուժեղ այն պատճառով չեղավ, վոր նրա գլուխը կանգնած եր պրոլետարիատը: Մական ի՞նչ կլիներ, յեթե այդ շարժումը պրոլետարիատի փոխարեն զեկավարեր բուրժուազիաի այս կամ այն խավը: Այս հարցին յես արդեն պատասխանեցի վերը: Այդ շարժումը վերջնական հաղթանակից ել ավելի հեռու կլիներ, Ավելին գեռ Կարելի յե վստահությամբ ասել, վոր մենք չեինք ունենա նույնիսկ հոկտեմբերի 17-ի պատճական որը: Քանի վոր մեր ազատագրական շարժման գլուխը կանգնած եր պրոլետարիատը, ապա այդ շարժումը դրսերեց մաքսիմումը այն ուժի, վոր նա կարող եր դրսերել տվյալ տնտեսական պայմաններում*:

Ընկ. Ան. մեր հետագա քաղաքական զարգացման այսպիսի սքեմա յե նկարում.

«Այսպիսով, պրոլետարիատն իր հեղափոխական ուղին բոնած դեպի իր արմատական նպատակը յերթալով, դաշնակիցներ և գտնում դժգո՞ն բուրժուազիայի շրջանում և, պաշտպանելով նրա ընդդիմագիր պահանջները, վոր հարուցվում են պրոլետարիատի շարժման ուղին ընթացքում, դրանով հենց թեթևացնում ե իր համար հետագա պայքարը» (եջ 29):

Յես ընդունում եմ այս սքեման և հարցնում եմ ընկ. Ան.-ին՝ կարծում ե արդյոք նա, թե մեզ մոտ, բացի բուրժուազիայից ու պրոլետարիատից, չկա ուրիշ վոչ մի հասարակական խավ, վոր շահագրգութած լինի հին կարգի տապալման մեջ: Թվում ե, վոր նա այսպես մտածել չի կարող: Նրա հետ վիճող ընկ. կ. Ստ.-ի խոսքերի համաձայն, նա, ընկ. Ան., բուրժուազիա ասելով ամենուրեք հասկանում ե միջին լիբերալ-բուրժուազիան, վորի իդեոլոգիները հանդիսանում են կադեսիւրը:

* Այնուամենայնիվ, սա չի նշանակում, թե ուժի այդ մաքսիմումը պատշաճ գործադրություն ունեցավ: Տակտիկական շատ սիալներ արվեցին, վորոնք խանգարեցին պատշաճ կերպով ոգտագործելու դրյություն ունեցող ուժը:

Սակայն այստեղ մենք անցնում ենք մի ուրիշ հարցի, վորի վրա յես այժմ չեմ կարող կանգ առներ: Կասեմ միայն, վոր յես յերբեք չեմ թագցրել իմ կարծիքը մեր կուսակցության տակտիկական սիալների նկատմամբ (տես իմ «ԴНЕВНИԿ»-ում «Պисьма о тактике и безтактности», «Новые письма о тактике и безтактности» հոդվածները և այլն):

Ընկ. կ. Ստ. այս խոսքերը ընկ. Ան.-ի կողմից ամենափոքր առարկություն անգամ չեն հարուցել: Ընդումին նա ինքը ևս նկատում է, վոր «հին ուեժիմի դեմ մղելիք պայքարը պրոլետարիատի մենաշնորհը չե» (եջ 30): Նշանակում ե, վոր նա ևս ընդունում ե, —հասկանալի յե, վոր չի յել կարող չընդունել, —թե մեզ մոտ կան հասարակական խավեր, վորոնց շփոթել չի կարելի վոչ պրոլետարիատի և վոչ ել «միջին բուրժուազիայի» հետ, և վորոնք ազատագրական պայքարի հաջողության մեջ նույնպես շահագրգութած են: Ո՞ւմ յետևից կգնան այս խավերը: «Միջին բուրժուազիայի» թե պրոլետարիատի յետևից: Ըստինքյան հասկանալի յե, վոր գիտակից բուրժուազիան պիտի աշխատի տանել նրանց իր յետեկոց, իսկ գիտակից պրոլետարիատը պարտավոր ե անել իրհնից կախված ամեն բան, վորպեսզի յենթարկի նրանց իր ղեկավար պղկեցությանը: Յեթե այս բանը նրան հաջողվի, ապա նա կրկին ազատագրական շարժման զեկավարը կդառնա, այսինքն կհանդիսանա հեգեմոնի զերում: Քաղաքական տրամարանությունը բնության նման մի բան ե: Կուզես նրան դուրս քշիր դռնից, նա ներս կթռչի լուսամուտից:

Յենթարկենք, սակայն, վոր սուսական պրոլետարիատը կմտարերի ընկ. Ան.-ի խորհուրդը և կմտադրվի խոսափել ղեկավար դերից: Ի՞նչ միջոցով նա կարող ե հասնել իր այս մտադրությանը:

Ուրիշ միջոց չկա. նա գիտակցորեն պիտի հրաժարվի այն պայքարից, վոր մղելու յե բուրժուազիայի դեմ միջանկալ հասարակական խավերի վրա ազգեցություն ունենալու համար: Սակայն նման ինքնարաժարեցումը հավասարագոր ե քաղաքական ինքնաներքինացման (самооскոլение): Կցանկանա արդյոք պրոլետարիատն իրեն այսպիսի անդամանատության յենթարկել:

Դրանում յես խիստ կասկածում եմ: Սա դեռ քիչ ե. յես կարծում եմ, վոր այդ անդամանատությունը նույնիսկ չի մտնում ընկ. Ան.-ի հաշիվների մեջ: Ինձ թվում ե, վոր նա պարզապես չի խորհել, թե ուր ե տանում սոցիալ-դեմոկրատական տակտիկայի իր «ոեվիզիայի» անվանելի տրամարանությունը:

Իսկ յեթե յես սխալում եմ, յեթե ընկ. Ան. պատրաստ ե ընդունելու այն բոլոր յեզրակացությունները, վոր յելնում են նրա «ուելփիզիայից», ապա ուրեմն թող նա չնեղանա այն ընկերներից, վորոնք, ընկ. կ. Ստ. պես, նրան վորպես կատարյալ «լիկվիդատոր» համարեն: Կրկնում եմ, ով ասում ե «Ա», նա պիտի ասի նույնպես «Բ»:

«Լիկվիդատորներն» այն ծալրից չեն սկսում, ինչ ծալրից վոր սկսում ե ընկ. Ան... նրանց «ոեվիզիային» վորպես յելակետ ծառայում ե այն արհամարհական վերաբերմունքը, վոր հանուն լեզալիզմի:

տածում են նրանք դեպի հեղափոխական «ընդհատակը»։ Բայց յեթե հեղափոխական «ընդհատակը» բարեհածի յերկար ապրել յեթե մեր սոցիալ-դեմոկրատներն իրենց ամբողջ գործունեյությունը փոխադրեն բանվորական լեզաւ կազմակերպությունների մեջ, և յեթե այդ կազմակերպությունների մեջ չգտնվեն ընդունակ պրոլետարյունը, վորոնք ընդդիմադրեն սոցիալ-դեմոկրատական հոկտեմբերականությանը, ապա մենք կհանգենք հենց այն բանին, ինչի մասին յերազում ե ընկ։ Ան., այն ե՝ մեր զիտակից պրոլետարիատը հեղեմոնի գերում դուրս չի գա հենց այն պտտմառով, վոր նա արդեն անընդունակ կլինի այդ բանին և անարժան։ Յեվ այն ժամանակ բուրժուազիային մի բան կմնա միայն՝ ծափահարել նրա քաղաքական «իմաստությունը»։ Նա, բուրժուազիան, վերջապես կհասնի այն բանին, վորին մինչ այսոր նա այնպես ապարդյուն կերպով ձգտել ե, այն ե՝ նրա զեկավար աղղեցության տակ կընկնեն բոլոր միջանկյալ հասարակական փալերը։

Ծնկ. Ան. չի ուզում բուրժուազիային վախեցնել։ Յեվ վոչ մի կասկած անգամ չկա, վոր հեղափոխական թրագներից հարբած քաղաքական ռոմանտիկները միայն կուղենան վախեցնել բուրժուազիային գեղարվեստի սիրուց դրդված։ Սակայն ընկ։ Ան. թող վերհիշել, թե կաղետները, վորոնց նա համարում ե միջին բուրժուազիայի իդեոլոգներ, յերբ յերեան բերին հեղափոխականներին հաճոյանալու վորեե ձգում։ Միայն այն ժամանակ, յերբ պրոլետարիատի դեկավարությամբ ազատագրական շարժումն իր ամենաբարձր կետին հասավ։ Սա կարելի յե ապացուցել փաստաթղթերով։ Յեվ յեթե հիմա կրկին լայն հեղափոխական շարժում սկսվի, ապա պարոն Միլյուկովը կրկին կարտահայտվի հիմնադիր ժողով գումարելու ողաբին։ Ճիշտ ե, հիմա հեղափոխական շարժումն անհամեմատ ավելի խորը և լայն պիտի լինի, վորպեսզի փորձից սովորած կադետները հավատան, վոր նա անպարտելի յե, բայց սա գործն ամենսեին չի փոխում։

Քաղաքական մանուկ ե այն սոցիալ-դեմոկրատը, վորը հանուն սիստ հասկացած «սկզբունքի» հրաժարվում ե իր մեծ նպատակի համար ուղագործել տիրող կարգի դեմ յեղած ամեն մի (իմիջի ալլոց նաև կաղետական) շարժում։ Սակայն քաղաքական շատ հասունություն յերեան չի հանի նաև նա, ով կվախենա «վախեցած» պ. Միլյուկովի ուրվականից։

Ակսիումա։ Հանձինս կաղետների ներկայացվող «միջին բուրժուազիայի» արիությունն ու վճռականությունը հնարափրին չափ բարձր աստիճանի հասցնելու համար (կամ թե, յեթե ուղում եք, նրանց վախեկոտությունն ու անվճականությունը ծալր աստիճանի պակսեցնելու համար) անհրաժեշտ ե հեղափոխական շարժումը մաքրումում ուժին հասցնել^{*)}։

^{*)} Իսկ սենք արդեն զիտենք, վոր հեղափոխական շարժումը մաքսիմումին հասում է միայն պրոլետարիատի զեկավարությամբ։

Այս ակսիուման, վոր միանգամայն մառացության և տալիս ընկ։ Ան., ջախջախում ե նրա բոլոր պատճառաբանությունները։ Հենց արդ ակսիուման մի ավելորդ անգամ և ցույց ե տալիս, թե վորքան սիստ է «լիկվիդատորների» տակտիկան։ Յեթե այդ տակտիկան մեզ մոտ յերկար ժամանակով հաղթանակի, ապա դրա անխուսափելի հետևանքը կլինի այն, վոր կդադարի հեղափոխական շարժումը այն չափով, վոր չափով երա ընթացքը կախված ե սոցիալ-դեմոկրատների գիտակցական զաներից։ Իսկ այս հանգամանքը, իր հերթին, ծալր աստիճան կնվազեցնի ոլեգալուրյան համար մղվող այն պայքարից հաջողության շանսության մերը, վորի ծրագրերը նոր ավետարանի պես ձեռքներն առած ման են գալիս այժմ մեր սոցիալ-դեմոկրատ-հոկտեմբերականները։

Բարեբախտաբար սոցիալ-դեմոկրատական հոկտեմբերականությունը նույնպիսի սնանկ մի բան ե, ինչպես և բուրժուալիսն հոկտեմբերականությունը։ Հեռու չե այն ժամանակը, յերբ նրանից ամոթով յերես կթեքեն նրա այժմյան կողմանակիցներից ու ոժանդակողներից յերես կիրաքին նրա այժմյան կողմանակիցներից ու ոժանդակողներից յատերը։ Ահա թե ինչու մենք, հեղափոխական սոցիալ-դեմոկրատաշատ շատերը։ Մենք չենք մենք, հեղափոխական վախով նայելու։ Մենք չկիտենք, թե մեր ներքին կայսքի գեպքերն ինչպիսի տեսք կընդունեն։ Սակայն մենք շատ լավ զիտենք, վոր ինչպիսի տեսք ել ընդունելիս լինեն այդ գեպքերը, նրանց ընթացքի բնդիմանությունը մեզ համար շատ ավելի բարեհաջող կլինի, քան մեր թշնամիների։

Հին կարգի գեմ մզվող պայքարը մուսաստանում ամենսեին գեռ չի վերջացած։ Պատճական այն պրոցեսը, վորի շնորհիվ մեր պրոլետարիատը պատմական բեմ գուրս չելավ և աղատավրական շարժման զարգացումին անցավ գեռ չի դադարել։ Մուսաստանի տնտեսական զարգացումն այժմս կատարվում է շատ արգելափիթ պայմաններում։ Սակայն ցույց այժմս կատարվում է ապա ամենայն գեպս, կատարվում ե; Իսկ քանի վոր կայդ զարգացումը, համենայն գեպս, կատարվում է; Իսկ քանի վոր կատարվում է, ապա ուրեմն չի դադարում աճելուց բանվոր դասակարգի թե քանակը, թե զիտականությունը և թե, վերջապես, միջանկյալ խավերի վրա ունենալիք նրա քաղաքական աղղեցության որուեկտիվ հասրափորությունը։ Այս ամենը մեր հասարակական ուժերի փոխհարբերությունը մեր ողաբին է փոխում։

Զերնիշնակին մի ժամանակ գոչել ե. «Ինչ լինելու չե, թող լինի, մի որ ել մեր փողոցում հարսանիք կլինի»։ Յես այժմ հաստատ համար փողոցում հարսանիք կլինի։ Յես այժմ վողջ այն մողմունքով կրկնում եմ նրա խիզախ խոսքերը, չնայած վողջ այն մեր ներկա անհրապույտ զրությանը, վոր ապրում ե մեր ներկա անմոթալի անհրապույտ զրջանը։ Յես ավելացնում եմ այդ խոսքերին ժամանակայնության շրջանը։ Յես ավելացնում հարսանիք կլինի, յեթե մենք մեր միայն միջին հետեւյան միջին համար կլինի, յեթե մեր սեփական հոկտեմբերականության համար գանք և վերածնենք մեր կուսակցությունը, վոր իր թերություններով, պակասություններով

ու սխալներով հանդերձ, հսկայական ու անմոռաց ծառայություններ ե արդեն մատուցել պրոլետարիատի գործին ու քաղաքական ազատության պայքարին:

Հնկ. Ս. Արկոմեղի գիրքն ընթերցողի հիշողության մեջ վերականգնում ե ոռւսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ արագիցիաները: Այս բանը բավական է հենց, վորպեսզի սրտանց հաջողություն ցանկանանք նրան:

Կարիք կա արդյոք ավելացնել այստեղ, վոր ինձ խորապես շարժեցին այն պարզ, չերմ ու բարեկամական խոսքերը, վորոնցով գիմում ե նա ինձ իր նվիրատվության մեջ: Մի բան կասեմ. ընկ. Ս. Արկոմեղի ու նման ընկերների ինձ տաճած համակրանքը կարող ե վարձահատուց լինել այն շատ ծանր բողեների համար, վոր անխուսափելի յեն ներկա պահին, անսպասելի զավաճանությունների ու ամոթալի յերերումների ժամանակ: Հուսանք, վոր շուտով կանցնի այս սոոր ժամանակը և «արեկլյան սոցիալ-դեմոկրատիան», վորի մասին խոսում ե հեղինակը, որ առաջ կլաղդուրվի իր տաղրած ճշգնաժամից:

Գ. ՊԼԵԽԱՆՈՎ

1910 թ. սպոստու
Ժ ը ն ե

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ- ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

1

ԸՆԴԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մի յերկրի հասարակական հոսանքները վորոշելու համար անհրաժեշտ ե նախ և առաջ ճիշտ հասկացողություն ունենալ այդ յերկրի սոցիալ-անտեսական ու ազգագրական դրության մասին: Այդ տեսակետից կովկասը, վոր Ռուսաստանի կարեոր ծալրագավառներից մեկն ե, լայն հասարակության համար մինչև որս ել համարյա terra incognita (անհայտ մի յերկիր) ե:

Շատերի համար կովկասը մինչև վերջին ժամանակս պատկերանում եր վորպես մի յերկիր, ուր ընակվում են միայն «վայրենի լեռնականներ», «անկուլտուրական վայրենի մի ազգաբնակություն», վոր քրեական հանցավորների, ավազակային, պրոֆեսսիոնալ շակաների շատ մեծ տոկոս ե տալիս: Այսպիսի կարծիք շատերն ունելին, այսպիսի կարծիքի ելին նաև ցարական կառավարական բառուղութիկ շրջանները, վորոնց համար դա ձեռնոտու մի բան եր, վորպիսզի արդարացնելին մտրակի, նագալկալի ու կախաղանի իրենց քաղաքականությունը:

Խորը խափարի, անթափանց տգիտության ու աղքատության մեջ, վոր պայմանավորում եր հին ոեժիմն ու նրա կառավարությունը, հակասոցիալական ընույթ ունեցող յերեսույթների հանդիպելը զարմանալի բան չեր: Հանցավործը, ստրուկը խոմ հավիտյանս չի կարող ստրկության մեջ մնալ: Յերբ կյանքի որբեկտիվ պալմանները փոքր իշտե փոխվում են, ստրուկն արթնանում ե, բացում ե աչքերը ճանաչում իր թշնամուն, ստրկացնողին: Յեկ ահա հենց այս «կովկասյան վայրենի ցեղերը» վերջին տարիներս հեղափոխական, ազատագրական շարժման մեջ իրենց ակտիվ պայքարով ցուց տվեցին, թե վորքան նրանք վայրենի ու ստրուկ ելին: Իսկ կովկասյան պրոլետարիատը, — այդ «վայրենի ցեղերի» զափակը, — հեղափոխական ավանդաբարդի իր ստանձնած դերով բոլորին զարմանք ու հիացմունք

պատճառեց: Նա, ով միայն վկա յե յեղել այն ամենին, ինչ վոր կատարվում եր «ազատ որերին» (1905թ.) կովկասյան քաղաքներում՝ թիֆլիսում, Բագվում, Բաթումում և ոլուր, ժողովրդական հավաքութներում, միտինգներում և հասարակական ընուլիթ ունեցող ուրիշ դեպերում, վորոնց մասնակցում ելին տասնյակ հազար «վարենիներ»), նա կարող ե հասկանալ թե նրանց մեջ ազատության վորին վոր աստիճան զարգացած ե, թե նրանք վորպիսի որինակելի կարգապահության ու խելացի գործողությունների ելին ընդունակ:

Կովկասյան ժողովուրդները հասունացել ելին, կովկասյան պրոլետարիատը՝ սոցիալ-դեմոկրատիալի դեկավարությամբ, եր հեղափոխական-քաղաքական զարգացման մեջ այնքան եր բարձրացել, վոր այդ տեսակետից բուրժուազիան ու նրա ինտելիգենցիան տեղի ելին տալիս նրան, չքանում ելին: Բուրժուական մամուլը, գրականությունը և լրագրությունը հանկարծակիի ելին յեկել, բուրժուական գործիչներն ու լիբերալ ինտելիգենցիան այնպիսի տարակուսանքի ու անորոշ դրության մեջ ելին ընկել, վորը հասկանալ նրանց համար այնքան ել հեշտ բան չեր:

Ի՞նչ եր պատահել: Միթե ցնցոտիների, բանվորական կապույտ բաճկոնների մեջ յերեացող այդ կերպարանքները, վորոնք ժողովրդական հավաքութներում յելնում ելին ու վառ ճառեր ասում իսպաշտություն իրենց դասակարգային շահերի, յեկելիք նույն «սորուկները», գյուղացիների ու բանվորների նույն ծանոթ գեմքերը չելին: Այս, դրանք հենց նույն մարդիկն ելին, արտաքուստ թեպետ և քիչ փոխված, բայց ներքին աշխարհայցքի կողմից այնքան անձանացելի դարձած, վոր վհատության ու սարսափի ելին հասցնում տիրող դասակարգերն ու նրանց իդեոլոգներին:

Յեկանակարեսը, վոր պիտի նկատել, գա այն ե, վոր այդ կերպարանափոխությունը, աշխատավոր մասսաների, արդյունաբերական պրոլետարիատի ու գյուղացիական չքավորության աշխարհայցքի ու գիտակցության, այդ գիտիսությունը, տեղի կարող եր ունենալ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունների գորիսիման հետևանքով և, —վոր ել ավելի հետաքրքիր ե, —շատ կարճ ժամանակամիջոցում: Իրոք վոր, սրանից մի 15—20 տարի առաջ շատերին թվում եր, թե տիրող ուժիմի որոք, քաղաքական կամայականության, աղքատության ու տգիտության տառապանքի ու ձնշման տակ անհնարին բան ե, վոր կովկասյան ժողովուրդները բարձրանան ու հասնեն ինքնարդիտական մի վորոշ աստիճանի և թե նրանց վիճակված ե մնալ հավիտյան խավարի, ստրկական հպատակության ու ճորտության մեջ: Սակայն իրերի ուժը հաղթանակեց ելին սեժիմի մարդկանց «իմաստուն քաղաքականությունը»: Վերջին յերկու տասնամյակների

ընթացքում կատարվում ե հասարաւկան-անտեսական գարգացման մի պրոցես, վորը, ստեղծելով հասարաւկան նոր ու թարմ տարրեր, հակամարտության մեջ ե դնում նրանց հին տարրերի հետ, բաղխում ե նրանց միմյանց հետ և ալդպիսով նպաստում նրանց միջև յեղող պարքարին ու վճռում նրանց բախտը: Հիշյալ ժամանակամիջոցի ընթացքում մեր աշքի առջև անհետ վերանում են հասարաւկության անտեսական ու սոցիալական կառուցվածքի հին ձևերը և առաջանում, կազմվում ու զարգանում են նոր ձևեր: Տեղական հին (ազգային) արտագրություններն անհետացման շրջաննեն ապրում և դրանցից շատերն արդեն միանգամայն չքացել են: Չքանում և չքացել են արհեստավորական համքարների (ցեմերի), յերեամբի ուժեղ կազմակերպությունները: Այսպես, միանգամայն չքացել են՝ ասիական կոշկակարությունը (խարագները-սախական կոշկակարներն են *), ասիական գլխարկ կարելու արհեստը (ձոն), իսկ ասիական գերձակությունը կործանման մոտ և գտնվում: «Կինտոնների», կովկասյան յուրահատուկ այս բոսյակների մեծ մասը, վորոնք հազարների ելին հասնում համարյա կովկասյան բոլոր քաղաքներում, անհետացել են և շուտով յերեի այլևս չեն լինի: Նրանց սերունդները վարձու բանքներում, զավոդներում են գարձել, աշխատում են սրհեստանոցներում, զավոդներում ու գործարաններում, զլմավորապես ծխախոտի գործարաններում:

Այն ամենը, ինչ ելին ե, նահապետական, հետին պլանի վրա յե անցնում, չքանում, տեղի տալով նոր, առաջադիմական հոսանքին: Մի 25—30 տարի սրանից առաջ կային մեծ քանակի «սառափներ»՝ գրամափոխներ, վաշխառուներ, իսկ այդ ժամանակից իվեր հիմնվում են տասնյակ բանկային ու վարկային հիմնարկներ: Թիֆլիսում, կովկասի այդ կենտրոնական քաղաքում, հենց նույն այդ ժամանակ աղքարնակությունը գործ եր ածում անային յեղանակով պատրաստած ձարպամոմը, հասկացողություն չունենալով այն մասին, թե նրանից այնչափ մոտ կովկասյան հողի ծոցում թագնված են նավթի անսպառ հարսաւություններ:

Յոթանասնական թվերին Փոթիից մինչև Թիֆլիս գցած Անդրկովկասյան յերկաթուղու բացումը, 80-ական թվերի սկզբին յերկաթուղագծի շարունակությունը թիֆլիսից մինչև Բագու և նավթային մթերքների արտաքրումը (Ճօնավանիք) Ապշերոնի թերակղղումը մեր յերկում անտեսական հեղաշրջում առաջացրին: Նավթն ուժեղ խթան գարձավ յերկրի անտեսական զարգացմանը:

*) Խարագներն անցյալ գարի 70—80 թվերին կազմում ելին Թիֆլիսում կարու համքարներից (ցեմերից) մեր:

Բացի նավթից էերկիրն ոժտված և նաև ուրիշ բնական հարըստություններով։ Մարգանեցի (Քութալիսի նահանգ), պղնձի (Գանձակի ու Թիֆլիսի նահանգ) մշակույթը լայն չափեր և ընդունում։ Առևտրական գործը խիստ զարգանում է։ Բամբակաբուծությունը (Յերևանի նահանգ), ծխախոտի մշակույթը (Սուխումի շրջան) ընդլայնվում են, ինչպես նաև կինքործությունն ու կոնյակագործությունը (Կախեթիա, Յերևանի նահանգ) և այլն։ Նույնիսկ զյուղատնտեսական արտադրությունները հետզհետեւ ինդուստրիալ բնույթ են բնդունում։

Հին ռեժիմի քաղաքական հարստանաբումն ու ճնշումն արմատական կերպով վերացնելու, բանական կուլտուրա սկսելու և արտադրական ուժերի զարգացման մեջ մեծ թափ մտցնելու գեղքում՝ յերկրի բարեկեցությունն արագորեն կը արձրանար ու բարձր աստիճանի հասներ:

Զնայած կովկասյան «Հաբողնիկների» ու ամեն լեռանդի հետադիմականների բոլոր ջանքերին՝ կանգնեցնելու կապիտալիզմի հաղթական յերթը, չնայած գլուղացիությանն ուղղած նրանց հորդորներին, բանավոր ու գրավոր պլրոպագանդին՝ չլքել գյուղը, մեծարել իրենց գյուղական, նահապետական ոջախի սրբությունը, գլուղացիներն, այնուամենայնիվ, մասսաներով լքում են «իրենց ոջախը» և ուղերձվում գեղի կենտրոնական քաղաքներն աշխատանք ճարելու։ Այս գաղթը, վոր սկիզբն առավ յիրկաթուղու գցելու որից, մեծ չափեր և ընդունում վերջին տարիներս։ Միքանի գավառներ, ինչպես, որինակ՝ «Ղարաբաղի*» լեռնաշխին գավառները՝ Զանգեզուրը, Ղափանը, Վրաստանում՝ Ողուրգեթի գավառը (Քութայիսի նահանգը) և այլն, պարզապես ամայանում, զրկվում են յերիտասարդ բանվորական ձեռքերից։

Գրուղում յերկրագործական աշխատանքը գրուղացու համար դառնում է իր ու իր ընտանիքի ապրուստի անբավարար միազգութը, ու նա թողնում է իր զյուղը և ուղերձում դեպի քաղաք՝ աշխատանք ճարելու։ Քաղաքային արգյունաբերության մեջ բանվորները հնարավորություն ելին գտնում մի կերպ ապրելու՝ ծանր տառապանքների ու տանջանքների գնով միայն, մի բան, վոր նկատելի յեւ ամենուրեք կապիտալիզմի նախնական զարգացման պրոցեսում։ Եթե բախտաբար կովկասում մինչև որս ել լույս չի տեսել վորեւ լեզվով անդամ, վոչ մի լուրջ աշխատանք, վորը ներկայացներ բանվոր դասակարգի կյանքի ու նրա գրության ճիշտ պատկերը կովկասում։ Իսկ այդ գրությունը սարսափելի յէ, շատ կողմերով անհասկանալի նույնական միգրոպական բուրժուազիային։ Հիբավի, հեշտությամբ կարելի

*) «*Услыхи о крепости*», *Задания к альбому о крепостях* Французской империи, *Франция и ее крепости*.

յեւ յերկակայել մի գրություն, յերբ հնամոլությունը (բրտիա) գեռաւ
իշխում և արտադրության մեջ, թեպետ և արտադրության կատարե-
լազործված միջոցներն ավելի ու ավելի էն դուրս դցում հներին, մի
գրություն, յերբ աշխատանքի պայմանները թեև աննորմալ են, քա-
ռասային ու կործանիչ ազդեցություն են ունենում բանվորների առող-
ջության ու կյանքի վրա, բայց և այնպես, վերջիններս, իրենց հետա-
մացության, անդիտակցության և աշխատանքի ու կապիտալի հարա-
բերությունների ստրկային ըմբռնումի հետևանքով, ամենին տրա-
մադիր չեն շարժվելու և ընդդիմագրություն, պայքար արտահայտելու
իրենց կենցաղը թեկուղ վորոշ չափով բարեկազմվելու. համար:

Այսպիսի գրության մեջ տեղական կապիտալիստները՝ շուշեցի հայ կամ թուրք կտրվածատերերը, կոպիտ, տգետ այդ ասիացիները, քանչորների սարկացնելու գործում արտահայտում ելին իրենց վայրի բոլոր ինստինկտները, ստեղծելով իրենց համար շահագործման. բազմապիսի ձևեր ու տեսակներ: Բանվորների նկատմամբ տեղական կապիտալիստների ունեցած վերաբերմունքը բնութագրելու համար յետ կիշատակեմ հետեւալ փաստը միայն. 1900 թվի սկզբին Բագվի նավթարդյունաբերողների համագումարին, իրբ քննության ե առնվում վարձու աշխատանքի ու կապիտալի հարաբերությունները կարգավորելու հարցը, յելրոպական Բենկենդորֆ և Նորել նավթարդյունաբերական ֆիրմաների ներկայացուցիչներն առաջարկում են կարճել բանվորական ժամանակի տևողությունը նավթային արտադրության մեջ: Կովկասյան հայտնի խոշոր կապիտալիստ Մանթաշյանը և նրա հետ միասին տեղական կապիտալիստ-արդյունաբերողները, յեռանդագին ընդդիմանալով այդ առաջարկությանը, տապալում են այն: Պիտի առել, վոր Մանթաշյանը առաջարկիմական կապիտալիստներից մեկն ե և Կովկասում համարվում ե վորպես «հայտնի բարեկործ»: Յեթե «կըրթված» ասիացի-կապիտալիստի տիպն այսպես ե, ապա՝ դժվար չի հասկանալ բնույթը շահագործման այն միջոցների ու ձևերի, վոր կերպում ելին իրենց բանվորների վերաբերմամբ տեղական «անկիրթ» կապիտալիստները:

«Գործատերերի (ԽօՏՅԱԻՆ) կամայականությանը լիսակատար ազատություն ե արված, նրանք ինչ ուզում, անում հն, չվախենալով վոշվոքից և վոչնչից և հանդիսանում են բանվորների կյանքի ու առողջության լիսակատար տերերը, իսկ բանվորները՝ նրանց ստրուկները»*): Որենքի դիմաց գործատերերի կատարյալ անպատճախանատվության պատճառով բանվորների գրությունն ամեն կողմից անկայուն, անապահով ե դառնում: Աշխատանքի ու կաղիտավայրի միջև աեղի ունեցող

*.) Նամակ Բաթումից, „Искра“ № 16:

միջադեպերի ժամանակ վոստիկանությունը միջամտում է, բայց՝ իհարկե, գործը քննվում ու վճռվում և միշտ գործատերերի ոգտինութանքուները յերբեմն փորձել են գատարանի դիմել, բայց այդ կատակերգությունից՝ ինքնակալ որենսդրության շրջանակներում տեղի ունեցող դատավարությունից վոչինչ դուրս չի գեկել: Մեծ մասամբ գործը տարել են գործատերերը, վորովհետև այդ բանին նպաստել են միշտ գործի պարագաները (կապիտալիստների ուժը, կեղծ վկայությունները, բանվոր-վկաների վախը՝ գործատերերի գեմ ցուցմունքալու և ալին) և իրավաբանական ձեսկանությունը միշտ հաղթանակել և արդարադատությանը: 1902-3 թվերի նավթային ճգնաժամի պահին Բագվում հարցուրավոր բանվորներ փողոց են շպրտում, թեև դուրս արվածների մեջ կային պայմանագրով վարձված բանվորները բանվորների կողմից փորձեր են յեղել՝ գատական կարգով պատասխանառվության կանչելու անսանձ արդյունաբերողներին, բայց «գործը տարիներ եր ձգձգվում, իսկ այդ ժամանակաշրջացքում տեղ չունեցող բանվորը կամ իրեն հարբեցողության եր տալիս ու մեռնում քաղաքի մի վորեե ցանկապատի տակ, կամ թե ձեռք քաշում ձգձգվող այդ ամբողջ գործից ու չբանում Բագվից: Այդ ժամանակաշրջանում առանձնապես շատ զգալի յեր բանվորի գրության անկայունությունը և միությունների ու բանվորական դրամարկղների բացակայությունը: Նավթային բոլոր ծառայողներին, սկսած նավաստիներից ու վերջացրած նավերի հրամանատարներով, ուղած մոմենտին կարող են ծառայությունից վանդել առանց վորեե տուգանք վճարելու: Վայրկենապես նրա բոլոր իրերը նավից դուրս են գցում նավահանգիստ և հայտարարում նրան, թե նա այլևս ծառայող չի: Ինչի՞ համար: Հարբեցողին կարելի յե վոնդել առանց վճարելու պայմանագրով հս ստունիք փողը: Յեթե վոնդվածը, վոր հարբեցողություն չի արել, գործը դատարան և տալիս, նավթատերը նրա դեմ դուրս և բերում տանյակ կեղծ վկա—պարսիկներ ու գործը տանում: Կամայականությունը բաղավորում և նավթահանքերում*):»:

Զավոդներում ու գործարաններում շատ հաճախ դժբախտ դեպքեր են պատահում: Ազահ գործարանատերերը, բացի այն բանից, վոր ամենեին չեն հոգում բանվորների ապահովության մասին, նրանք իրենց շահերի տեսակետից գերադասում են վարձել եժոնադին, վոչ մի բանի չվարժված բանվորներ, վորոնց հետ ել հեշտությամբ ու ամենից հաճախ պատահում են դժբախտ գեպքեր: «Բաթումի նավթային զավոդների թիթեղագործ բաժանմունքներում ու սպոցարա-

նում սակալ և պատահում, վոր դժբախտ դեպք չլինի: Յեթե աշխատանքը կատարելու ժամանակ բանվորներին դժբախտություն է պատահում, ապա արձանագրությունները, ինչքան ել այդ տարորինակ լինի, գրում են զավոդների կառավարիչները: Յեթե գաղզահը (ԺԱՀՈՒ) կարում ե բանվորի մատը, գրում են, թե վիրավորվածքը լուրջ բան չե», յեթե շտամպի հանկարծակի իջնող գանակը կարում ե բանվորի ձեռքի թաթը այն պահին, յերբ բանվորը քչփորելով դուրս հանելիս ե յեղել շտամպի մեջ մնացած թիթեղի կառոր, վոր պիտի ավատում կերպով դուրս շպրտվեր, գրում են, թե վիրավորվածքը կառավիկ ե բանվորի անգուշության պատճառով: Իսկ յեթե բանվորը զանակի իջեցումը կանխելու համար նրա տակը փայտի մի կտոր և գնում, և յեթե դանակն իջնում ե այդ փայտի վրա, նրան տուգանքը են գրում 3—5 սուրլու չափ: Զորբորդ և հինգերորդ անգամ զազգյանի տակ ընկած բանվորներին միշտ նույն կերպ, ինչ վրբ հասարակ պատըրվակը բանվորով, ուղղակի դուրս են շպրտում, վորպեսզի աշխատանքի անընդունակության համար սահմանված վարձահատույցը չվճարեն:

«Նավթային զավոդների զորման բաժանմունքներում բանվորները կոկորդի ու կրծքի հիվանդություններ են ստանում, վորովհետև ողն այդ արհեստանոցներում հազեցած և զանազան թթվուտների գուրշիներով: Այդ զավոդների նավթային հեղուկի բաշխման (բազուօչինական) բաժանմունքներում բանվորների վոտները կերպուինից ուղարկում են ու վերքերով ծածկվում: Բաթումումում դժվար թե զտնի մի բանվոր, վոր հիվանդացած չկինի դողերոցքով ու վոսկրացավով*):

«Սանդուխքը նավթամբարին չի ամրացրած: Բանվորին համայում են բարձրանալ սանդուխքով. նա բարձրանում եր, —սանդուխքի հետ միասին ցած և զլորվում ու հաշմանդամ անում իր ձեռքը կամ վոտը: Նա գործը գատարան և տալիս, զործարանատերը գործը բոլոր առյաններում պտտեցնելով յերկու-յերեք տարի ձգձգում ե: Աշխատանքի անընդունակ դառնաց մի կտոր հացի մնացած հաշմանդամ մարդը մուրացկանության և դիմում: Նրան վորսում ե վոստիկանությունը և շտապով ծննդավայր ուղարկում: Այնտեղ ապրուստ չգտնելով, հաշմանդամը կրկին քաղաք և գալիս և սկսում է թափառությունների մի շարան բանտերում ու հտապներում: Իսկ այդ պահին նրան գատարան են կանչում, ծանուցագիրը նրան չի հասնում, և գործը գաղաքեցվում է հայցվորի չներկայանալու պատճում**):

Նավթային արդյունաբերությունը արտադրության ամենազգվելի

*) «Искра» № 16.

**) Նամակ Բագվից. «Искра» № 47:

ճուղերից մեկն ե: Ամենուրեք կեղա, մուր, գարշահոտություն, վորոնցից մարդիկ միանգամայն սևանում ու շնչասպառ են լինում:

Ով գիթ կարձ ժամանակով յեղել ե Բալախանիում, Սարունչիում այն պահին, յերբ Բագվում բանվորական շարժումը զեռ չեր առաջացել, նա հանդիպած կլինի այնպիսի յերեսութի, վոր վոչվոք յինթագրել անգամ յերեք չի կարող: Ո՞վ չի մտարերում նավթահանքերի այն կեղտու ու հեղծուցիչ կազարմաները, վորոնց մեջ բանվորները պառկում ելին, ինչպես տառեխը տակառի մեջ: Այդ կազարմաները բանվորական տներ ելին: Ո՞վ չի մտարերում այն հրդեհները, վոր հաճախ պատահում ելին նավթահանքերում անփութության ու անուշագրության պատճառով և ընդգրկում մի շարք նավթային ուայոնները: Յեկ ինչքան դժբախտ պատահարներ ելին լինում այդ ժամանակ, ինչքան կանք եր լավում տարերքը... Նավթարդյունաբերողները հարյուրավոր կործանված կյանքերին նայում ելին վորպես սովորական մի յերեսութի և նրանց կործանման մեջ իրենց պատասխանառու չելին համարում:

«Անմիտթար պատկեր են ներկայացնում նույնպես ձկնորսարանները արևելյան Անդրկովկասում: Այս ձկնորսարաններում գարնանը հավաքվում ե յերկարատև ձմեռվա ընթացքում սովալուկ դառած ու իր կյանքը հազիվ գարուն քարշ տված վողջ յեկվոր պլրութարիատը: Այստեղ հավաքվում են ամենից շատ քաղցած և հետևապես ամենից շատ նվաստացած մարդիկ: Գրագետներ քիչ են լինում, և ձկնորսարանի տերերը լայն կերպով ոգտվում են այդ հանգամանքից: Որինակ՝ յերբ բանվորը վարձում ե, ձկնորսարանի տերը նրանից վերցընում ե անցագիրը, բայց փոխարենը բանվորական գրքույկ չի տալիս Բանվորներին անսառների պես քշում են կեղտու տախտակե բարեկների մեջ: Ուտելիքի մասին ավելորդ ե նույնիսկ խոսելը: Պիտի անձամբ լինել այդ ձկնորսարաններում, վորպեսզի նրանց մասին գաղափար կարելի լինի կազմել: Յեկ ահա, յերբ այդ թշվառ մարդկանցից վորևէ մեկը բողոքում ե, ձկնորսարանի տերն առանց այլայլության վունդում ե նրան, շատ հաճախ չտալով թե անցագիրը և թե աշխատածը (չարաբուօք): Զրկված բանվորը գնում ե իշխանության մոտ, վորն ամենից առաջ անցագիր ե պահանջում: Բանվորն սկսում ե բացատրել, բայց նրան չեն լսում: Կամ անցագիր տուր կամ գրքույկը վոչ մեկը կա և վոչ ել մյուսը: Յերեմի իշխանությունը տեղեկանք է հավաքում: ձկնորսարանի տերը պատասխանում ե, թե ոռմիկը վճարված ե, իսկ անցագիրը յետ տված: այն ժամանակ վոստիկանությունը ձերբակալում ե բանվորին վորպես անցագիր չունեցողի և ճամպում հայրենիք: Այսպիսով առաջանում են անանցագիր թափառաշրջիկներ: Սակայն ամենազլխավոր չարեքը ձկնորսարանի բանվորի նյութական

անապահովությունն ե: Յեթե վորսը լավ ե, ոռմիկը վճարում են, յեթե վորսը վատ ե, բանվորը վոչինչ չի ստանում: Ձկնորսարանի տերը թագնվում ե, և վոչվոք չի հետապնդում նրան, իսկ քանի վոր գրավ մտցնելն ընդունված բան չե, ապա և հաճախ բանվորների մի ամբողջ խումբ, աշխատելով յերկույթերեք ամիս, մնում ե առանց վորեւ աշխատածի (չարաբուօք):

Գործատերերի կողմից բանվորների աշխատածի ցուրացումն ու կտրելը սակալաղեալ մի յերեսութ չե և ձկնորսարաններում չե միայն, վոր գործադղրվում ե:

«Բաթումի գործարաններում բանվորական ժամանակը յերկարացնում ու աշխատավարձից յետ պահածը թագնում են: Հաճախ բանվորներն ստանում են աշխատած փողի կեսը միայն. մնացած կեսը հաշվում են անպետք ճանաչված ապրանքների փոխարեն, թեպետ և բանվորները դրանում մեղավոր չեն լինում, վորովհետև աշխատանքի վատ կատարման պատճառը հին, փչացած մեքենաներն են: Իսկ Մանթաշյանի զավոդում մեքենաները գործի չեն դրվում չչակից կես ժամ, մի ժամ վաղ»**):

Բանվորական որվա տևողությունն արտադրության բոլոր ճյուղերում կանոնավորված չե, թեպետ և արդյունաբերական հիմնարկների համար որենքով սահմանված ե որվա մեջ 11 և կես ժամ: Գործարանատերը հարկադրում ե բանվորին աշխատել՝ ինչքան իր քեֆն ուղղում ե: «Մինչև ապրիլ ամիսը (1903 թ.) Բագվի ձիաքարի կոնդուկտորներն ու կառավարներն որվա մեջ աշխատում ելին վոչ ավել, վոչ պակաս, քան 18 ժամ՝ առավոտայն ժամը 5-ից մինչև յերեկոյան ժամը 11-ը, ճաշի համար ունենալով ընդամենը կես ժամ ժամանակամիջոց»:

17-18 ժամ տևողություն ունեցող բանվորական որվա նման դեպքերը սակագ չեն:

Բաթումում առանձնապես գարգացած ե փոքրահասակների աշխատանքը: Մանթաշյանի զավոդում աշխատում են 7-8 տարեկան յերեխաներ: Յերեխաներն այնքան ժամ են աշխատում, ինչքան աշխատում են հասակավորները, իսկ քանի վոր արտադրությունն այդտեղ խիստ անհարատև ե լինում և պատվերների ժամանակ՝ Մանթաշյանի զավոդում բանվորական ժամանակը շաբաթվա մեջ հասնում ե մինչև 105 ժամի, ապա յերեխաները հարկադրված որվա մեջ դադարացների մոտ կանգնած մնում են 15—16 ժամ: Հենց վոր պատվերը զավարում ե, բանվորների կեսը սովորաբար հեռացվում ե»***):

*) Ibid.

**) Искра № 16.

***) Ibid.

իսկ ի՞նչպես և աշկերտ-յերեխաների դրությունը կովկասի հատկապես արհեստագին հիմնարկներում: 8—15 տարեկան հասակ ունեցող այդ գժրախտների ամբողջ կյանքն անցնում է զրկանքների ու տառապանքների մեջ. գործատեր արհեստագորը միքանի տարի շարունակ նրանց վոչինչ չի վճարում, մինչև վոր նրանք արհեստը չսովորեն: Նա ըստ արագիցիալի ու սովորության պարտավորվում է պահել նրանց, բայց, իհարկե, պահում է շատ ավելի վատ, քան ընտանի կենդանիներին շանը կտմ էշին, ցնցոտիների ու կեղախ մեջ: Այդ յերեխաները կատարում են ամեն տեսակի աշխատանք, ինչպես արհեստագոր վարպետի տանը, այնպես և արհեստանցում. արհեստագորի ու նրա կնոջ համար նաև թե աշկերտ ե, թե ծառա, թե բեռնակիր և թե կոմիսարիոներ: Նրանց հարկադրում են աշխատել մինչ ուշ գիշեր և առավոտյան վեր կենալ ամենից վագ: Նրանք հպատակվում են արհեստագոր վարպետի բոլոր հրամաններին, նրա կապրիզներին, նրա քմահաճուքներին. նրանց մշտապես վիրավորում են, հայնոյում փոփոցյին խոսքերով և հաճախ ծեծում, ծեծում յերբեմն անխնա կերպով: Մշտապես վիրավորված ու ծեծված, փիզիկապես ու բարոյապես խեղանգամ դարձած այդ արարածները լուս համբերում են, համբերում են, վորովհետև սովորույթն այդ և պահանջում: Զե՞ վոր նրանք յերեխաներ են, իվեճակի չեն բողոքելու...

Յեկ միթե գործատերերը միայն յերեխաների հետ են այդպես անխնա վարվում: Հասակավոր բանվորներին հաճախ վոչ միայն կոպիտ վերաբերմունք են ցուց տալիս ու հայնոյում, այլ և բռնցքածեծի յենթարկում (կուպահայ քառականական պատճենի մեջ) ու նույն թղթակիցը Բաթումից, —բանվորների նկատմամբ իշխում և բռնցքածեծը: Բանվորներին ծեծում են վերակացուները, վարիչները, մեխանիկները և իրենք վերատեսուչները: Անդադրում ծեծելու կողմից առանձնապես աչքի ին ընկնում Մանթաշյանի զավորում՝ կառավարիչ Տեր-Հակոբյանը, իսկ Ռոտշիլդի զավորում՝ մեխանիկ Շուբերը և գործակատար Ֆայնշտեյնը: Ծեծում են նույնպես յերեխաներին, գործեսպի նրանք ավելի ջանասիրությամբ աշխատեն: Նրանց հետ առանձնապես դաժանությամբ վարվում է գործակատար Ֆայնշտեյնը»:

Յերեանի շուկայում այգետերերը բանվորներ վարձելու ժամանակ ծեծում են այն բանվորներին, վորոնք համարձակվում են ալգետերերի կեմայական կերպով սահմանած նորմացից բարձր աշխատավարձ պահանջել: Իսկ այդ նորման հետևալին ե. որական 35—45 կոպեկ հասահանջել: Իսկ 20—25 կոպեկ յերեխաների համար, իսկ աշխատել կավորների, իսկ 20—25 կոպեկ յերեխաների համար, իսկ աշխատել նրանց հարկադրում են առավոտյան ժամը 5-6-ից մինչև յերեկոյան ժամը 7-8-ը:

Ընդհանուր գծերով այսպես և մոտավորապես բանվորների կլաս-

քը կովկասում: Լիակատար անարխիա արտազրության մեջ և ասիականություն, կապիտալի անսահման ու անսահման իշխանություն՝ հասաւալած ու պաշտպանված համապատասխան ասիական քաղաքական կարգով, —այսպես և ընդհանուր այն դրությունը, վորի մեջ դրված են աշխատավոր մասսաները: Բացի այդ՝ նրանք տառապում են թե արտադրության անբավարար զարգացումից և թե իրենց սեփական հետամնացությունից ու անգիտակցությունից:

Կովկասում սոցիալ-գենոկրատիայի առաջացման հետ միասին ձահճի մեջ առաջին անգամ քար և նետվում: Մասսաները խոռվագում են, ալեկոծվում ե, հետզհետե գիտակցելով իրենց դասակարգավին շահերը, տնտեսական ու քաղաքական հարատե կովի մեջ մտնում իրենց թշնամիների հետ: Նրանք ըմբռնում են ազատության ունիվերսալ միջոցը և միայն այդ ամենալավ միջոցով, այսինքն պայքարով կարող են իրազործել նրանք լիակատար ազատագրությունը:

II

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ. ՆՐԱ ԱՐԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Կովկասում բանվորական շարժումն առաջանում է այն մոմենտից սկսած, յերբ յերկրի հասարակական-տնտեսական կյանքի զարգացումն ինքնին առաջարկում և նրա համար անհրաժեշտ որբեկտիվ պայմանները, յերբ դիֆերենցիացիայի մեն յենթարկվում հասարակական, արտադրական հարաբերությունները: Այդ շարժման սկիզբը պիտի հաշվել անցյալ դարի 80-ական թվականներից: Այդ շրջանից սկսած քառորդ դարի ժամանակամիջոցի ընթացքում նա զարգանում է խուզ կերպով, ընդլայնվում և ու վերջին տարիներս համնում լայն չափերի:

Կովկասի բանվորական շարժման մեջ իրենց բնույթով խիստ տարբեր յերկու շրջան կարելի լի հաստատել: Առաջին շրջանը, սկսած անցյալ դարի 80-ական թվերից մինչև 1900 թիվը, մենք կոչում ենք տարերային-անգիտակցական տնտեսական շարժման շրջան, իսկ յերկորդ շրջանը, վոր ընդգրկում է 1900 թ. մինչև 1905-6 թվերի ժամանակամիջոցը, —զիտակցական, քաղաքական-տնտեսական շարժման շրջան: Ներկա գեղարվում «զիտակցական շարժման» տերմինը մենք առաջարկում ենք գործածում, վոր բանվոր դասակարգի առաջամարտիկ մասը, ինչքան ել նա փոքրաթիվ լիներ, զանում և շարժման զեկավարը, տոն և ուղղություն և տալիս հեղափոխական զործին, տրամադրություն և զարթեցնում և իր յետերից տանում բանվոր դասակարգի ամենից հետամնաց, բազմաքանակ խավերը:

Կանգ առնենք միքիչ շարժման տարերային շրջանի վրա: Բանվորական շարժման առաջացման ու դարպացման կենտրոնը կովկասում՝ թիֆլիս, Բագու և Բաթում քաղաքներն են: Այս քաղաքները 80-ական թվականների սկզբին իրար հետ միացվում են յերկաթուղային գծով, նախ Սև ծովի նավահանգստային քաղաք Բաթումը Թիֆլիսի հետ, իսկ այնուհետև արդեն Անդրկովկասյան յերկաթուղային գլխավոր գիծը Թիֆլիսից մինչև Բագու վերջնականապես ավարտվում է 1883 թվին: Այդպիսով Բագովի նավթի արդյունաբերության համար յերկաթուղային հաղորդակցություն ե բացվում ներքին և, վորել ավելի կարեռ և, համաշխարհային շուկայի հետ, մի քան, վորվճռական նշանակություն ունեցավ յերկրում կապիտալիզմի զարգացման համար: Յեթե նկատի առնենք այն հանգամանքը, վոր Բագովի նավթի արդյունաբերությունը տալիս ե Ռուսական կայսրության պետական բյուջեյի ահագին տոկոսը*), ապա ինքնին հասկանալի յեղառնում, թե Բագու քաղաքն իր նավթի մեքենայական արտադրությամբ ինչպիսի հսկայական տնտեսական ու քաղաքական նշանակություն ե ներկայացնում ընդհանրապես ամբողջ կայսրության և մասնավորապես կովկասի համար:

Տեղական ու արտասահմանյան կապիտալներն սկսում են գործել ավելի ու ավելի նշանավոր չափերով: Կապիտալիզմի զարգացման նախնական շրջաններում աշխատանքը սոսկալի կերպով շահագործվում եր, իսկ շահագործվողները, ինչպես յես արդեն ասել եմ, իրենց լիակատար անգիտակցության ու մարդկային հարաբերությունների ստրկալին ըմբռնումի հետևանքով յենթարկվում ելին ամեն տեսակի շահագործման, թեպետ այս կամ այնտեղ, այս կամ այն արհեստանոցում ու զավողում բանվորների ու սեփականատերերի միջև տեղի ելին ունենում ընդհարումներ ու միջադեպեր, բայց դրանք միայն մասնակի, մեկուսացած բնույթ ելին կրում:

70-ական թվերին միջինատեր յեղը. Միրզոյանները Թիֆլիսում հիմնարկում են կովկասի մեջ առաջին ջուհակային բամբակեղենն գործարանը, վորի բանվորների թիվը լավ տարիներին հասնում եր մոտ 100 մարդու**): Այս գործարանի քառորդ դար գոյության ընթացքում բանվորների ու գործարանատիրոջ միջև անընդհատ պայքար և մզկում:

*) 2-րդ հՀատարակության մեջ սխալմամբ տպված է $\frac{1}{20}$ մասը:
Ծանոթ. թարգմ.

**) Այս գործարանն անցնում է կովկասում այն ժամանակ հայտնի առևտուրական կապիտալիստ Փրանսիացի Ռիշարի, իսկ ապա Թիֆլիսի նախկին բանկից Զիթայանի ձեռքը: Հետագայում այդ գործարանը փակվում է, նրա բանկորները յերկար ժամանակ կարիք ու աղբատություն են քաշում: Նրանց մի մասը ծխախոտի գործարանն է մտնում, իսկ մյուս մասը Բագու յե գնում աշխատանք ճարելու Թաղիմէնունակայի ջուհակային գործարանում:

Բանվորները շատ հաճախ դիմում են գործադուլների, ներկայացնելով պահանջներ՝ ավելացնել աշխատավարձը, պակսեցնել բանվորական ժամանակը (աշխատում եյին որական մինչև 16-17 ժամ), վերացնել գիշերային աշխատանքը, վճարել աշխատավարձը ուսմոնտի կամ այլ պատճառներով գործարանը կանգ առած ժամանակամիջոցի համար և այլն: Բանվորներն իրենց ծայր աստիճան հետամնացության, անկազմակերպվածության և գործարանատերերի զանազան ինտրիկների ու խորա և անկ խարդախությունների հետեանքով, մեծ մասամբ տանու եյին տալիս և, աղքատությունից, քաղցից ու ցրտից հարկադրված՝ աշխատանքի կանգնում: Այս բանը կատարվում է 80-ական ու 90-ական թվականներին: Այս միջադեպերի ժամանակ վոստիկանությունն ամենակին չի միջամտում, վորովհետև գործարանատերերը կարողանում են այդ միջադեպերը «տնավարի» կերպով կարգավորել, նըրանք հավաքում են բանվորներին և «բարերարի» տեսք ընդունելով «հայրաբար» հորդորում նրանց աշխատանքի կանգնու, հավատացնելով, թե իրենու միշտ բարի ին ցանկանում նրանց, չեն ուղում ամենակին խիստ միջոցների դիմել, խղճում են բանվորներին, իրենք իրը թե հանդիսանում են բանվորների սննդուռն և յեթե փակեն գործարանը, նրանք իրենց ընտանիքներով կքաղցեն, աղքատության ու տառապանքի կհատութեն... Ահա այսպես «հայրական», «հոգատար» լեզվով եյին խոսում նրանք, իսկ բանվորները կուրորեն հավատում եյին նրանց ու խաղաղությամբ աշխատանքի կանգնում: Իսկ յեթե գործարանատերը, ծայրահեղ գելքերում, ստիպված եր լինում քաթանիամեն մի արշինը գործելու համար 2-3 կոպեկ ավելացնել, ապա բանվորները հեղությամբ ու ակնածությամբ հիշում եյին գործարանատիրոջ այդ մեծ «բարերարությունը»: Իսկ գործարանատերն այս «բարերարության» հիման վրա, շահագործման ել ավելի վատթար ձևելով, լիակատար իրավունքներով քամում եր բանվորների աշխատության վերջին ուժը: Այդպես եր վոչ միայն մի գործարանում, այլև արտադրության բոլոր ճյուղերում:

Այսպես ե բանվորների ու գործարանատերերի փոխադարձ հարաբերությունների ընհանուր բնույթը պարի 80-ական թվականներից մինչև 90-ական թվականների կեսերը, մի կողմից՝ կապիտալիստների «հայրական» ու «բարերար» հոգատարության քաղաքականությունը բանվորների մասին, մյուս կողմից՝ բանվորների կույրը, հեղաբարությունը: Սակայն յերբեմն ծայր աստիճանի հարաբերական հասած բանվորները յերեան եյին բերում կողեկանի ընդդիմագրություն: Թիֆլիսում 1894-5 թվականներին գործադուլ են ընդդիմագրություն: Թիֆլիսում անդամանի ծխախոտի գործարանի բանվորները, ամեն որ անում Բաղարջյանի ծխախոտի գործարանի բանվորները աղմոնստրատիվ կերպով անցհարյուրավոր բանվորներ աղմոնստրատիվ ու գեմոնստրատիվ կերպով անց-

նում են վրացներով՝ հուժկու բոլոք արտահայտելով գործարանատերերի ստոր շահագործման ու խարելայության դեմ: Բացի շահագործման սովորական բիրտ միջոցներից ու անողորմ վերաբերմունքից, վոր Բողարջյանի Փիրման իննթարկում եր բանվորներին, բանվորների ազգիսի բացըրոշ և անվախ մասսայական անբավականության ու բողոքի զիսավոր առիթը ծառայում ե հետևալ բանը. Բողարջյանի Փիրման գործարանի գրասենյակին կից հիմնարկել եր բանվորների համաձայնությամբ մի գրամարկով՝ բանվորներին ու նրանց ընտանիքներին դժբախտ պատահարների, հիվանդության կամ մահվան զեպքերում նյութական ոժանդակություն ցուց տալու նպատակով:

Միքանի տարի շարունակ ամեն շաբաթ բանվորների աշխատավարձի 4-5 տոկոս պահում են հոգուտ գրամարկովի, ընդ սմին հետագայում պարզվում ե, վոր վոչ մի գրանցում չի կատարվել վոչ գրասենյակի մատայակում և վոչ ել բանվորների հաշվեգրքույկներում:

Բանվորները խնայողություն անելով, գրամարկովի ողնությանը չեն գիմում, սոսանալով նույնիսկ, միամտաբար նրա գոյությունը: Բանվորներից մեկը մեռնում է: Բանվորները դիմում են գործարանատիրոջ և պահանջում, վորպեսզի գրամարկովից տա մեռած ընկերոջ թաղման ծախքը: Գործարանատերը կտրուկ մերժում ե, հայտարարելով, վոր վոչ մի գրամարկով չկա և այդպիսին ամենին գոյություն չի ունեցել: Այս բանը բոլոր բանվորներին կատարեցնում ե, նրանք գործադուլ են անում և սկսում փողոցակին մի շարք ազմկալի ցուցեր սարքել: Գործին միջամտում ե զաղանի ու ակնհայտ վոստիկանությունը: Կասկած անդամ չի կարող լինել վոր վարչական իշխանությունը պետք և խեղղեր այդ գործությունն ու բողոքը և այդ «խոսովարների» նկատմամբ գործադրեր վոստիկանական խիստ միջոցներ: Բողարջյանի Փիրման բանվորներին ճնշելու համար դիմում ե բոլոր միջոցներին. կաշառում և վոստիկաններին ու ժանդարմոններին ու վերջացնում բոլոր բանվորների հետ հաշիվը ու ժամանակավորապես փակում և գործարանը: «Խոռվարար» բանվորների ղեկավարները ձերբակալվում են ու բանտարկվում:

Հարյուրավոր բանվորների ցուցմունքներին չեն հավատում, նրանք, իբր թե, խարում են, այլ հավատում են միայն կապիտալիստների «ազնիվ խոռվարին»:

Բանվորների հաշվելով նրանց խնայած փողի գումարը հասնում եր մինչև 30,000 սուբլու: Մի վորոշ ժամանակ անց յեղբ, Բողարջյանները գուրս են զրում նոր կատարելագործված մեքենաներ, վոր անկասկած գնած պիտի լինելին յուրացրած բանվորների գրամական խնայողությամբ, և աշխատանքի գնում միայն կին-բանվորուհիների, վորոնք ավելի «հնագանդ ու ակլուրատ» ելին: Հեռացված ու թալան-

ված բանվորները համարյա տասը տարի շարունակում են Բողարջյան Փիրմալին ներկայացնել իրենց պահանջները: Վերջապես, 1905 թվին վերջին, հեղափոխական շարժման հուժկու վերելքի ժամանակ, Բողարջյան Փիրման հարկադրվում ե բավարարել բանվորների պահանջները, բայց 30,000 սուբլու փոխարեն նրանց տալիս ե ինչ-վոր 2-3 հազար սուբլու և այդպիսով վերջնականապես հարթվում այդ հին պատմությունը:

Բանվորների խնայողության յուրացման այդպիսի սիստեմը, ըստ յերեսութիւն գործադրվում եր նաև արդյունաբերական ուրիշ հիմնարկներում: Այսպիս, որինակը, իր ժամանակին մեզ հասած տեղեկությունների համաձայն, Զիթախիանի ժառանգուհիների ջուրհակալին բամբակեղեն գործարանում գոյություն ուներ ճիշտ այդպիսի դրամարկով, և յերբ գործարանը վերջնականապես փակվում ե, բանվորները չեն ստանում իրենց խնայած փողերը: 1905 թվի վերջին նույնպիսի յերեսությունը բանվորանի ծխախոտի գործարանում:

Այս ու հետագա շրջանում քիչ թե շատ գիտակից բանվորական շարժման զիսավոր կենտրոնը հանդիսանում ելին Անդրկովկաստան յերկաթուղու արհեստանոցներն ու գեպօն, առավելապես թիֆլիսինը: Վերջինիս արհեստանոցներում ու դեպոյում աշխատում ելին 4-5 հազար մարդ: Տարերայնորեն առաջացած և ուշադրավ տոկունություն ունեցող գործադրուներից մեկը պիտի համարել 1898 թվի դեկտեմբերի գործադրուները, վոր կանգնեցնում ե ապրանքատար գնացքների յերեսի գործադրունը, վոր կամաց կամաց վոչնչացրեց թևեկությունը և վերջանում բանվորների լիակատար հաղթանակով:

Այս գործադրութիւնը առթիվ «Բաճուե ծելո» թերթի 1899 թվի № 2-3-ի մեջ կարդում ենք հետևյալը.

«Դիկանմբերի վերջին Անդրկովկաստան յերկաթուղու վրա տեղի ունեցավ գործադրությունների միջանի հազար բանվորների, ինչպիսի կոնդուկտորների, մեքենավարների և այդ գծի վրա աշխատանու մասնակցությամբ: Գանձարանն Անդրկովկաստան յերկաթուղու վրա գնելուց հետ կամաց կամաց վոչնչացրեց շատ արագություններ, վորոնցով ոգտվում ելին բանվորներն ու ծառայողները: Վերջին ժամանակս տիրող կարգերի գեմ արտահայտված գմբուժությունը բացըրոշ ցույցերի կերպարանք ստացավ: Միիսպակ գմբուժությունը բացըրոշ բանվորների վրա տվել այդ գմբուժները կարող ելին զրանցել իրենց անբավականությունները: Վարչությունը յենթադրում եր, թե վոչնչավոր չի հայտնի իր գմբուժությունը, բայց նա սխալվում է իր հաշեմերի մեջ, նազարից ավելի ծառայողներ ու բանվորներ գրքի մեջ են մտցնում իրենց բողոքները: Մի վորոշ ժամանակից հետո այդ գիրքն անհետանում է: Բանվորները, վերջապես, վճռում են գործադրությունը ակլուրատ»

Նում են թիֆլիսի յերկաթուղարին արհեստանոցներում, ինչպես և կանգնեցնում ապրանքատար գնացքը։ Յերբ բանվորների պատգամավորությունը ներկայանում է վարչությանը, վերջինս ցանկանալով այդ ամբողջ պատմությունից հայերի գեմ նոր հետապնդումների պատըրվակ քաղել սկսում է հարցությորձ անել պատգամավորներին, թե բանվորներին հայերը նո չեն դրդել։ Պատգամավորներից մեկը, ոռու բանվոր, վճռականապես հայտնում է, վոր հայերն այդ բանում վոչ մի կապ չունեն, վոր բոլոր բանվորները՝ սուսները, վրացիները և հայերը միատեսակ դժգոհ են կարգերից և կարիք չկար, վոր մեկը դրգեր նրանց։ Պատգամավորներին բոլորին ձերբակալում են։ Բանվորներն ընհանուր առմամբ իրենց խաղաղ ելին պահում, ծեծում են միայն յերկաթուղագծի վերատեսչին։ Վարչությունը գործադուլավորների գեմ զորք ե գուրս բերում։ Գործադուլի յերրորդ որը հաղորդակցության ճանապարհների մինիստրը հեռագրով կարգադրում է բավարարել բանվորներին։ Գործադուլը առնում են։ Տեղական ինտելլիգենցիան շուտով յերեկոյթ ու ժողովարարություն է կազմակերպում՝ ձերբակալվածներին ու նրանց ընտանիքներին ովնելու համար։

ինչպես կարելի է տեսնել վերը մեջ բերած ցիտատից, այդ ու
հետագա բազմիցս կրկնվող գործադուլների ժամանակ առաջադրվում
են այդ արհեստանոցներում չերկաթուղաքին վարչության գործադրած
դաժան կանոնները վերացնելու պահանջները, ինչպես և բանվորների
կենցաղը բարելավելու դուտ տնտեսական պահանջներ։ Բայց այդ
պահանջները, վորոնց ոգտակարության ու կարևորության աստիճանը
գեր անկատար ու անբավարար կերպով եր պարզաբանված, առաջա-
դնում եր անկազմակերպ պրոլետարիատը և կրում եյին պատահական
անցողիկ բնույթ։ Այդպես եր վոչ միայն Թիֆլիսում ձիշտ ե, մինչև
1900 թվականը Բագվում, Բաթումում և Անդրկովկասի մյուս վայրե-
րում նույնպես սպորտագիկ կերպով արտահայտվում են բանվորական
շարժման նշաններ՝ գործադուլների, անհատական ու կոլլեկտիվ բո-
ղոքների նման մի բան ընդգեմ այն դաժան ու վայրենի միջոցների
և նույնիսկ ֆիզիկական բռնությունների, վոր բանվորների վերա-
բերմամբ կատարում ելին գործատերերը և նրանց ավագ ու կրտսեր
կառավարիչները, բայց դրանք այնքան աննշան ելին, վոր նույնիսկ
լույս աշխարհ դուրս չելին գալիս և կատարյալ մոռացության ու լուս-
թյան եյին մատնվում։

Բայց ասիականության այս շրջանը, իշխելով արդյունաբերության մեջ մոտ քառորդ դար, վերջանում ե, թեպետ մասամբ և վոչ ամենուրեք, անցյալ դարի 90-ական թվերի վախճանին, վորից հետո սկսվում ե քիչ թե շատ գիտակից տնտեսական ու քաղաքական բանվորական շարժման լերկրորդ շրջանը, վորի պատմությանը և անցնում եմ:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԹԻՏԼԻՍՈՒՄ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորական շարժման այս շրջանի պատմությունն ու զարգացման ընթացքը կովկասյան սոցիալ-դեմոկրատիալի պատմությունն ու զարգացումն եւ Դրանք սերտ կերպով կապված իրար հետ, պայմանավորում են միմյանց: Արդյունաբերական պրոետարիատի խավերում սիստեմատիկ պրոպագանդ ու ազիտացիա մղելու նպատակ ունեցող սոցիալ-դեմոկրատական խմբակների առաջացումը, իսկ ապա մշտական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գոյացումը Թիֆլիսում և Անդրկովկասյան մջուս արդյունաբերական կենտրոններում, հանդիսանում են հետագա բանվորական շարժման թթվամորն (Фермент) ու շարժիչ ուժը:

Բնդիանուր գծերով ցուցը՝ տանք սոցիալ-դեմոկրատիալի զարգացման ու կազմակերպության և նրան զուզելնից բանվոր դասակարգի քաղաքական-տնտեսական շարժման ուղին:

*) Այս փոքրաքանակ խմբակին, բացի տեղացի ինտելիգենց աշխատողներից, հարցեցին նույնպես և ոռու հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, վոլոնտեր վարչական կարգով թուատուանից զովկաս ելին աքսորված:

բեղմնավոր հող եներկայացնում: Այս ինտելիգենցիան մոտեցավ բանվոր դասակարգին, ընտրեց նրանց միջից ավելի հուսատու և ավելի ընդունակ բանվորներին, կազմեց նրանցից խմբակներ ու սկսեց նըրանց մեջ պրոպագանդա մղել: վար մեծ հաջողություններ ունեցավ:

Այդ խմբակներում սոցիալ-դեմոկրատ պրոպագանդիստները վոչ միայն կարգում ու բացատրում եին ձեռքի տակ ունեցած սոցիալ-դեմոկրատական անկազար բրոշյուրները, այլև դասախոսությունների ձևով այս կամ այն ինտելիգենցիա սոցիալ-դեմոկրատ բանվորների առաջ սիստեմատիկ կերպով զարգացնում են գիտական սոցիալիզմի տարրերը, դասակարգավիճական պայքարի տեսակետը, բանվոր դասակարգի քաղաքական ու տնտեսական խնդիրները: Սոցիալ-դեմոկրատական գրականությունը բերվում է «Բունդ»-ից ու Գետերբուրգից և կարգացվում ձեռքից ձեռք խելով: Գլխավորապես տարածվում ելին «Աշխատանքի Ազատագրության Խմբակի» հրատարակությունները:

Բոլորի նպատակը մեկ եր՝ բարձրացնել բանվորների դասակարգավիճակի ինքնագիտակցության մակարդակը, զարգացնել նրանց մեջ ինքնագործունեյությունը, դարձնել նրանց գիտակից սոցիալ-դեմոկրատ մարտիկներ: Իսկ սա այն ժամանակ մի շատ դժվար խնդիր եր: Գոյություն ունեցող այն ժամանակավա վոստիկանական պայմաններում այդ խնդիրի կատարումը սահմանափակվում եր խմբակային (կրյոկօբայ) գործունեյությամբ: Այլ կերպ ել չեր կարող լինել: Յեկ նեղ շըրջանակներում կատարված ալլ աշխատանքն այն ժամանակ հսկայական նշանակություն և ունենում: Պրոպագանդի բովով անցած մի զետակից բանվոր իր յետեից տանում եր արդեն հարյուրավոր բանվորներ, կազմում եր իր կողմից բանվորական խմբակներ, զրուցներ անում նրանց հետ պայքարի անհրաժեշտության մասին և այլն: Այդ խմբակների թիվը հետզհետե ավելանում է: 1900 թվին արդեն միքանի տասնյակ խմբակներ կային: Յուրաքանչյուր խմբակը բաղկացած էր 10-15 մարդուց: Շատ հաճախ յեղել են և այնպիսի գեղքեր, վոր այս սոցիալ-դեմոկրատ պրոպագանդիստ հավաքում եր 50-60 բանվոր: Յեթե այդպիսի բազմամարդ ժողովների համար գըտնում էին լավ, գաղտնի բնակարան, ապա ժողովները բնակարանում ելին անում, իսկ յեթե վոչ գնում եին քաղաքից դուրս: Ժողովներն անում ելին այդիներում, գերեզմանատներում, անտառում, լեռներում, լեռների կիրճերում կամ խոռոչներում: Բանվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոմիտեն գաղտնի բնակարան չգըտնում ապահանդառությունը շատ հաճախ իր ժողովները նույնպես այդպիսի տեղում եր գումարում:

և բաց թողնել դեղեր, 5) իրավունք տալ բանվորին բացակայելու թաղումների, հաղորդվելու, կնունքների (մկրտությունների), հարսանիքների և նման դեղերի ժամանակ, 6) վերացնել բանվորների նկատմամբ հայհոյանքն ու կոպիտ վերաբերմունքը, ինչպես և աշկերտներին ծեծելը, 7) առանց պատճառի չարձակել վոչվորի, 8) վորպեոզի վոչվոք չտուժի գործադուլի համար՝ ծառայությունից հեռացնելու կամ ձերբակալելու ձեռվ, 9) արհեստանոցներում կախել հայտարարություն գործարանատիրոջ ստորագրությամբ այն մասին, վոր նաընդունում ե այս նոր պայմանները *): Գործադուլավորների վերաբերմամբ ուելիսսիվ միջոցներ են գործադրում: Գործադուլը տեսում ե մի շաբաթ: Պահանջներից բավարարվում են միայն աշխատավարձի 25% հավելումն ու աշխատանքի պայմանների բարելավումը:

Այս շրջանի գործադուլների մեջ ուշադրության արժանի յեն իրակիի, թերությանի և Միրողյանների արևելյան բաղնիսների քիսաշիների ու ծառայողների և «գաբաղխանալի» (ասիական կաշվի գործարան) բանվորների գործադուլները: Այդ բաղնիսների քիսաշիներն ու ծառալողները գլխավորապես կազմում են լքյալ անդրագետ հայերն ու պարսիկները: Նրանց գրությունը սարսափելի լի վոչ միայն այն մըտքով, վոր նրանք յենթարկում են վոչնչով չսահմանափակված շահագործման, այլ և նրանով, վոր նրանց աշխատանքն ինքնին կեղտու, զզվելի մի գործ և կատարվում է շատ վատ մթնոլորտում: Այս քիսաշիներն իրենց ամրող կյանքը համարյա անց են կացնում ընդհանուր բաղնիսներում, այդ կեղտու ու խոնավ կոյուղիներում, չգիտենալով վոչ քուն, վոչ հանգիստ, վոչ ել տուն առած բաները **): Կզան արզուք համախորդները ցերեկը, թե գիշերը ժամը 1-ին, կամ առավոտյան ժամը 3-ին, 4 ին, վոր հաճախ և պատահում, այդ միենույն ե, քիսաշիները պարտավոր են լողացնել նրանց: Կիրակի և այլ տոն որերին բաղնիսները բաց են: Ահա հենց այս քրտնաջան մշակներին ու մյուս ծառայողներին բառիս բուն իմաստով շահագործում, թալանում եյին բաղնիսների կամալառուները: Կապալառուն նրանց հատուկ պայման-

*) Ibid.

**) Թիֆլիսի չքափոր ամբողջ ազգարնակությունն ողտվում ե այդ այսպես կոչված արևելյան բաղնիսներից: Յելլոպացին դժվարությամբ կպատկերացնի իրեն, թե ինչ բան են դրանք: Ավազանի ջուրը, վորի մեջ մտնում են լուսանալու խմբերով թե մեծերը և թե յերեխաները, կեղալից գեղնում ու թանձանում ե: Այդ ընդհանուր բաղնիսների ամբողջ շրջապատը գարզելի յե. կեղտ, գալրահնուություն, միավմա (ժահաճություն—մազմա), ահա թե ինչպիսի մթնոլորտում են անց կացնում իրենց կյանքը գժբախտ քիսաշիները, թիֆլիսը «լիբերալ» ինքնավարություն, ինչպես և քժշկական խորհուրդ ունի, բայց սրանցից և վոչ մեկն ամեներին ուշադրություն չեյին դարձնում զանազան վարակումների ու հիվանդությունների այդ ակնհայտ աղբյուրների վրա:

ներով եր ընդունում: Նրանց համար վոչ մի վարձագին գոյություն չուներ: Նրանց յեկամուտն այն կոպեկներն ելին կազմում (5—25 կոպեկ), վոր ստանում ելին նրանք հաճախորդներից: Կապալառուն վարձելու ժամանակ նրանց հետ ծանր պայմաններ ե կնքում, վորով իրավունք և ստանում իր ոգտին պահելու հաճախորդներից ստացած նրանց յեկամուտի մի մասը ($\frac{1}{3}$ կամ $\frac{1}{4}$ մասը): Այս բանվորների ամբողջ կանքը կախված է կապալառուների կամայականություններից ու կապրիզներից: Ահա հենց այս լքված ու հարստահարված պարսիկներն ու հայերն արթնանում են և բարձրացնում են նույնպես իրենց ձայնը: Նրանք բաղնիսատերերին մի շարք պահանջներ են ներկայացնում, բայց վերջինները կտրականապես մերժում են. նրանք բոլորն ել գործադուլ են անում: Այդ գործադուլի մասին թիֆլիսից «Աւրա»-ին (№12) գրում են.

«Արեկելյան բաղնիսների գործադուլները, վորոնց մասնակցում ելին անդրագետ, խեղճ ու կրակ պարսիկ ու հայ բաղնիսավորները կամ քիսաշիները, զարթեցնում են այս ազգությունների բանվորների մեջ զասակարգային ինքնագիտակցությունը: Բացի այդ՝ հենց նույն գործադուլները գործադուլավորներին ցույց են տալիս, թե ում կողմն ի բունում կառավարությունը: Յերբ բաղնիսների կապալառուները հարկադրված են լինում կատարելու գործադուլավորների պահանջները, այդ ժամանակ գալիս և վոստիկանապետը, հավաքում և բոլոր կապալառուներին ու բաղնիսատերերին ու հայտարարում, վոր լիթե նրանք վորեկ բանում զիջեն բանվորներին, ապա նրանք կհամարվեն խոռվարաներին գրդողներ և նրանց հետ կվարվեն «ըստ որենքի»: Վոստիկանության արագիսի հովանավորությունը բանվորները գնահատում են, իհարկե, պատշաճ կերպով և նրանք խիստ կերպով պնդում են իրենց պահանջները և հաղթում են»:

«Դարաղիսանալի» (ասիական կաշվի գործարանի) բանվորները նույնապես շարժվում են այդ ժամանակ: Նրանց աշխատանքի պայմանները բաղնիսներից ավելի լավ չելին: Այդ գործարանը թիվ ափին ե գտնվում: Մորթիները լվանալու և մաքրելու համար կամ ձևերը հարկադրում են նրանց նույնիսկ ձևերը 4-5⁰ տաքսություն ունեցող ջրի մեջ մտնել ու ժամերով այնուեղ մնալ այդ աշխատանքը կատարելու համար: Վաղ հասակից նրանք վոստիկանավորությունը բանվորները գնահատում են, իհարկե, պատշաճ կերպով և նրանք խիստ կերպով պնդում են իրենց պահանջները և հաղթում են»:

Նրանք պահանջներ են ներկայացնում՝ բարեկավել աշխատանքի պայմանները, կարճել բանվորական որը և այլն: Պահանջներից մի քանիսը մասնակի չափով բավարարվում են:

Ինչպես արդեն ասել եմ, տպարանական բանվորները մի առանձին գործունեյություն են յերկան բերում: Այդ ժամանակ թիֆլիսում

Հկար մի տպարան, վորտեղ գոյություն չունենար գիտակից բանվորների փոքր կամ խոշոր մի խմբակ: Նրանք արդեն ի մի համախմբված են և պայքար ելին մզում վոչ միայն առանձին տպարաններում, այլ և իրար հետ միասին բոլոր տպարաններում: Ժանդարմերիան հատուկ ուշադրություն եր գարձնում տպարաններին, ձերբակալում եր շատ գրաշարների, յենթադրելով, թե կոմիտեի այնպես հաճախակի բաց թողած թոռոցիկներն ու թերթիկները լեզար տպարաններում այդ գրաշարներն ելին տպագրում: Արդարեւ, ալս դեպքում պիտի մատնանշել ժանդարմների աշալըջությունը. այժմ արդեն թագցնելու կարիք չկա: Սկզբում գրաշարներն ահապին ծառալություն են մատուցում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը, այն ժամանակ, յերբ նա դեռ սեփական տպարան չուներ: Նրանք լեզար տպարաններում տպում են անլեզար բրոցըւրներ, թոռոցիկներ և մայիսյան թիրթիկներ...

Տպարանատերերի, ինչպիս և գաղտնի վոստիկանության կողմից տպարանների վրա խիստ հսկողություն և սահմանվում:

Փետրվարին ու սարտին խուզարկություններ ու մասսայական ձերբակալություններ են լինում: Ձերբակալվում են իմիջի ազոց ինտելիգենցիաներից՝ Վ. Կուրնատովսկին (քիմիկոս), Սկորնյակովը, Ֆրանչեսկին («Խօսօօօօրը» թերթի աշխատակից), Մախարաձեն (վրացերեն «Կվալի» թերթի աշխատակից), Պուշկարյովը (ուսանող), Ստեփանյանը (ուսանող), Կալանդահները (յերկու լեզբայր միասին), Պերեցը, Պրոստոսերդովը, Մեշչերինը, Զիրլաձեն, Ժորդանիան (վրացերեն «Կվալի» թերթի աշխատու.), Կալանդարաշվիլին, Ցուլուկիձեն, Կոմաձեները (յերկու լեզբայր միասին) և ուրիշները. բանվորներից՝ Ցերցվածեն, Բիլանովը, Վադաչկորիս, Խուցիկը, Ալշենին, Պետրովը, Խատիսյանը, Յեզորովը, Սուլխանովը, Շարաձեն, Ֆլիգենտովը, Յաշվիլին, Զանտլաձեն, Մայսուրաձեն, Աբրամիշվիլին (15 տարեկան), Նիկոնորովը, Կրիլովը, Բերեզնյակը (մատնում է), Գոգուան, Ստուրուան, Մղելաձեն, Կողիլյանը, Պողոսը և ուրիշները: Խուզարկություններ կատարվում են միքանի հիմնարկներում և շատ մարդկանց մոտ ինչպես՝ Շարաձեյի տպարանում, «Խօսօօօօր» թիրթից խմբագրությունների մեջ, Հայ Բարեկործական Ընկերության գրասենյակում, Հայ Կանանց եժանապին գրադարանում, Գեղջշերութի Կրասնովայի, Ղարաջյանի*), վաճառական Ղարաջյանի, Հակոբյանի, Տեր-Աստվածատրյանի, Լալայանի մսներում, Վրաց Ազնվականության շենքում գտնված կողկակարի արհեստանոցում, ուր գտնում են մեծ քանակի անլեզար գրականություն (ձերբակալվում է կողկակարը), քա-

դաքի ծայրամասում գտնված և «Բանվոր դասակարգ» անունը կրող պանդոկում, «սոցիալ-դեմոկրատական կողկակարանոց» ցուցանակունցող կողկակարանոցում և այլն և այն*):

Բացի այդ՝ խուզարկում են նույնպես կլասսիկական գիմնազիայի աշակերտներին և միքանիսին ձերբակալում: Մի գիմնազիատ Ստանիսլավ Սարպովսկի անունով՝ ժանդարմներից վախեցած լինելով, ասում է այն մարդու անունը, վորը աշակերտներին անլեզար գրականություն եր տվել**):

Զնայած կառավարության այս բոլոր ոեպրեսարաններին, հեղափոխական շարժումը խորանում և ու ընդլայնվում: Ուսանողական հուզումները մայրաքաղաքներում և համալսարանական քաղաքներում ազգեցություն են ունենում նաև մեր յերկրի հեղափոխական տրամադրությունների վրա: Կառավարիչները քուն և հանգիստ չեն ունենում, նրանք իրենց ամբողջ յեռանդը գործ են զնուանշելու բանվորական հեղափոխական շարժումը: Նրանք խուզարկում և ձերբակալում են անխափիր բոլորին, նույնիսկ յերեխաներին, զանազան զպրոցների աշակերտներին: Ամենուրեք նրանք գտնում են անլեզար գրականություն, թիրթիկներ, կոչեր, թոռոցիկներ. նրանք կորցընում են իրենց գլուխը:

Մայիս-մեկյան որերը մոտենում են: Ինչպես վերը մենք հիշատակեցինք, նախորդ սայիսյան տոնակատարության ժամանակ բանվորները միաձայն ցանկություն են հայտնած լինում հաջորդ 1901 թվին քաղաքում մայիսյան բացահայտ ցուց սարքել: Այժմ անցյալ աարվա վորոշման համաձայն բանվորները պարզապես փողոց են նետվում: Կոմիտեն հաշվի պիտի առներ բանվորների ընդհանուր տրամադրությունը և զրա հետ միասին գործադրեր բոլոր ջանքերն ու միջոցները, վորապեսզի այդ քաղաքական ցուցը, վորպես առաջին բացահայտ հեղափոխական եքսպերիմենտ, հաջողություն ունենար, մի եքսպերիմենտ, վորը բանվորների համար անպայման քաջալերական ու դաստիարակչական նշանակություն կարող եր ունենալ:

Ապրիլի 22-ից (ցուցի որը) մի շաբաթ առաջ, մեկը մկուսի յետից թոռոցիկներ են լուս տեսնում, վորոնք բացատրում են մայիսի մի նշանակությունը և կոչ առնում ցուցի յենելու: Այդ իսկ ժամանակին հենց նույն վոգով տարվում է նաև ազիտացիա: Բնակչության մեջ զանազան լուրեր են պտտում, թե բանվորները մտադրվում են

*) «Իսկրա» № 12 և «Թիֆլիսի բանվորական շաբաթումից» բբոյուրը:

**) «Բաձուա» № 1:

ապստամբել, թե վրացիներն ու հայերն ուղում են սրի քաշել սուսներին (վոստիկանության պլովկացիոն փորձերը) և այլն*):

Բանվորները պատրաստվում են տոնակատարությանը, վարչական իշխանությունն, ինարկե, չի քնում, նա ևս պատրաստվում ե: Միքանի գնդերի մարտական փամփուշտներ են բաժանում: Ապրիլի 15-ից քաղաքի փողոցներով շարունակ անցնում են դրագուները, կազմեները, հրետանին և հետիոտը: Փոքրիկ, նույնիսկ յերեք հոգուց բաղկացած հավաքույթները վոստիկանությունը յեռանդագին կերպով ցրում ե: Թիֆլիսի բոլոր հրապարակներում յերկուական, յերեքական վաշտ զինվորներ բիվուակ են դնում ու տեղավորվում**): Կառավարչապետ Գալիցինն այդ պահին փախչում է Գանձակի նահանգը:

Ահա թե այդ ցուցի մասին ինչ են գրում Թիֆլիսից ի միջի ալլոց «Իսկրա»-ին ***):

«Կիրակի, ապրիլի 22-ին (հին տոմարով) Թիֆլիսում տեղի ունեցած գեղքը ամբողջ կովկասի համար պատմական, նշանակալից մի յերեսությ ե: Այդ որից Կովկասում սկսվում ե բացահայտ հեղափոխական շարժում: Տեղական կոմիտեն վճռում ե տոնել մայիսի 1-ը քաղաքում հանդիսավոր ցույց սարքելով: Այդ բանն ուղում ելին նաև իրենք բանվորները: Սկսվում են ամենորյա ձերբակալություններ ու խուզարկություններ: Կառավարությունն ապրիլի 22-ից գեռ մի շաբաթ առաջ գրագուներին ու կազմեներին կանգնեցնում ե յերկաթուղային ու քաղաքային արհեստանոցների և զավոդների շուրջը, վորապես վախ ազդի բանվորների վրա և այդպիսով հարկադրի նրանց հրաժարվելու մայիսի 1-ի տոնակատարությունից: Բայց բանվորները չեն վախենում. նրանք վճռում են կատարել իրենց տոնը ապրիլի 22-ին (մայիսի 1-ից հետո առաջին կիրակի որը), իսկ հավաքույթի տեղը ընտրում են Սալդատակից բաղարը՝ քաղաքի կենտրոնում: Այստեղից շքերթը պիտի ուղղվեր Պուշկինյան փողոցով գեղի Յերևանյան հրաշարակ և հետո Դվորյանյան փողոցն ու Գալավինսկի պլուազեկար:

*) «Ին Տիֆլիս. Բարօ. ձայնենիա»

**) ibid

***) «Իսկրա» № 6, «Մայիսի 1-ը Թիֆլիսում» վերնադրով թղթակցությունը Թիֆլիսից: Այդ թղթակցությունը հայերն ըեղով և շտապ կերպով գրել ե ներկա աշխատության հեղինակը «Նորար» ստորագրությամբ, և վորովնետք ընկերներից շատերն արդ ժամանակ ձերբակարված ելին և մեկ ել այն պատճառով, վոր «Իսկրա»-ի արտասահմանյան հասցեն հեղինակը ձեռքի տակ չւոներ, հովածն ուղարկում է Ժըարտասահմանյան համար: Բայց ի զարմանս մեր, հովածը կրծած ձեռվ լուզ ե տեսնում հայ աղքայնական բուրժուական կուսակցության «Գաշնակցության» որդան «Դրոշակ»-ի մեջ, իսկ այնուհետեւ արդեն, ըստ յերեսի բարձրագույն առաջարկությունը կատարվել է «Իսկրա»-ի մեջ:

Նշանակված ժամին հավաքված բանվորների թիվը հասնում է 3000-ի: Ազդանշանը տրվում ե, և բանվորական կարմիր դրոշակը բարձրանում ու ծածանվում ե ողի մեջ: Դրոշակի վրա կային Մարքսի, Ենգելսի ու Լասալի նկարները և վրացերեն, հայերեն ու ոռուսերեն լեզուներով, հետեւյալ մակարությունները. «Բանվորներ բոլոր յերկրների, միացնեք», «Կեցցե ութժամյա աշխատանքը» (արանք անցյալ տարվա դրոշակներն ելին):

Դրոշակները յերկալուն պիս հնչում են թնդալից ձախներ. «Կեցցե հանրապետությունը, կեցցե ազատությունը, կեցցե ութժամյա աշխատանքը»:

Վարչական իշխանությունը նախորոք ձեռք եր առել իր միջոցները. հենց վոր յերթը շարժվում ե, յերթին մասնակցողների վրա ամեն կողմից թափվում են ժանդարմերն ու խուզարկուները, վոստիկաններն ու զինվորները: Նրանք ծեծում են ցուցարարներին մերկացրած սրբով, իսկ բանվորները պաշտպանության համար ջլուտ ձեռքերից զատ գրեթե վոյինչ չունեյին: Անհարին և նկարագրել այն վրազվեցուցիչ պատկերը, վոր ստացվեց ցուցարարներին գլխովին ծեծելու ժամանակ: Սարսափելի խուճապը պատեց վոյի քաղաքը: Միքանի տեղ կանգ առավ ձիաքարշը. կառավարները վայր ելին թռչում ձիաքարշից ու վազում գեպի ջարդի վայրը՝ ոգնության համեմու իրենց յեղրայր-բանվորներին: Հուսահատական կոփը տեսում է յերեք քառորդ ժամ: այդ ժամանակաշրջանի վազում հոսեց, շատ վիրավորներ ընկան: Ահա ընկնում ե վիրավոր բանվորը, նա ամբողջապես արյան մեջ ե: Վոստիկաններն սկսում են արորել նրան վոտքերով, իսկ նա անդադար շարունակում ե գոչչել. «Կեցցե սոցիալիզմը՝ կեցցե ութժամյա աշխատանքը»: Մի ուրիշ տեղում մի կին (այստեղ կային միքանի կին ցուցարարներ) տեսնելով պրիստավերից մեկի զագանային հարվածները, կատաղությամբ հարձակվում ե նրա վրա, պատառուում ե նրա վրայի մունդիրը և սկսում փունջ-փունջ փետել նրա մազերը: Դրոշակակիր Առաքելը մի ձեռքով լիլում ե իր գլխավերը շողզողացող մերկ սուրը և կոտրում այն յերկու մասի*): Բանվոր Մամալաձեն (թղթակցության մեջ սխալ մամբ ասված և Մամալաձե) թրի յերեք վերք ե ստանում, իսկ ինքը միքանի անգամ կրակում ե ատրճանակը և վիրավորում յերկու քաշաքաղանի (գործօօօյ): Պրիստավ Գեղեանովը ծանր վիրավոր և Վոստիկանապետ Կովալյովը, ուժեղ հարված ստանալով վոտքին, ստիպված իջնում ե ձիուց և կառք նստում: Շուտով վրա յեն հասնում կա-

*) Առաքելի մասին ասած այս վերջին տեղեկությունը պիտի ընդունել զգուշությամբ:

Հեղինակի ծանոթ. II հրատարակ.

գակները, իսկ Նրանց յետելից նաև անդապետը: Ցույցարարներին ցրում են: Դրանից հետո յերեք ամբողջ որ թիվլիսը զինվորական դրության մեջ եր: Բանտարկվածներ շատ կան, թիվետ «Կավկազ» պաշտոնական թերթը հաղորդում է, թե իբր բանտարկված են ընդամենը 41 մարդ:

Առաջ ենք բերում միքանի լրացուցիչ տեղեկություններ այս ցուցի մասին վերը հիշած բանվոր պատմողի բըսշյուրից. «Բանվորների բազմությունը, մոտ 3000 մարդ, խառնված զինվորների, վոստիկանների, ժանդարմների (վերջիններս բոլորն ել ծառայալ ելին) և խաղաղ գնորդների ու վաճառողների հետ, հուզված սպասում ելին ազգանշանին՝ կարմիր գրոշակին: Բոլոր գրոշակներն այդտեղ ելին, բայց գլխավոր գրոշակը, վոր Կովկասում սոցիալ-դեմոկրատիակի ծագման որից սկսած փողփողում ե մեր ժողովներում, այդտեղ չեր: Խոմ բան չի պատահել: Ահա, կարծես թե, արդեն բերեցին, այնտեղ ինչ-վոր իրարանցում ե: Վեհությամբ ու ահեղությամբ բարձրանում ե բազմության գլխավերը կարմիր գրոշակը, պարզ ու վորոշ ազգարարելով քաղաքական ազատություն, ութմայա բանվորական որ և կոչ՝ «Բանվորներ բոլոր յերկըների, միացէք»:

Վարպետների հանդիսավոր բողեք! Բոլոր բանվորները կլսարկները հանելով խորին յերկրագություն են մատուցանում դրոշակին և ապա թնդում բացականչությունը՝ «Կեցցե քաղաքական ապստամբությունը»: Վոստիկանությունը և կազակներն իրենց սպասել չեն տալիս և մերկացրած թրերով նհտվում են դեպի դրոշակը, վոր գտնվում եր բանվորների կենարոնից հարյուր քայլ հեռու և դրա համար ել դրոշակը թիկնապահների (մոտ 25 հոգի) հետ միասին կորպած եր բազմությունից: Վրա յեն վազում կազակները և զինվորները. խաղաղ գնորդներն ու վաճառողները, գլուխները կորցրած, ամեն ինչ զցում են ու փախչում, իսկ բանվորներն ամբոխի ու զինվորների ճնշման տակ, հակառակ իրենց կամքի, զանազան փողոցներ են շպրտում: Դրոշակի պահապահները վոչ միայն չելին ուզում անձնատուր լինել այլ և իրենց կյանքը վտանգի դրած պաշտպանում եյին այն: Թրի հարվածներին բանվորները պատասխանում եյին փայտերով, տարբուրետներով: Բայց ստիպված տեղի յեն տալիս ուժին: Այդ ընդհարման մեջ վերափորձում են ընդամենը 24 հոգի, վորոնցից 13-ը վոչ մի բանի մեջ մեղսակեց չելին և միայն զո՞ն եյին դարձել աջ և ձախ փրթող կատաղած կազակների ձեռքին: Մնացած բանվորները դրոշակակիրի հետ միասին մեծ մասամբ գլխից ելին վիրափորված: Վոստիկանության կողմից ծանր կիրառվ ծեծվում են 7 քաղաքապան և վիրափորվում՝ մի քաղաքապան, վոստիկանապետը և պրիմատավի ոգնական Գեղևանովը: Բանվոր Մամալաձեն այն ժամանակ և միայն կրակում ծեծող վոստիկանների վրա, յերբ ուժերը կորցրած ընկնում և մալթի վրա:

Մայիսի 1-ի որը, բացի ցուցարար բանվորներից ու կողմանակի ժարդականցից, ձերբակալվում են 3 ուսանողուհիներ այն պատճառով, վոր նրանք պաշտպանելիս են լինում ծեծերով թաղային վոստիկանատուն տարվող մի բանվորի: Ձերբակալվում են նույնպես ուսանողները յուրաքանչյուր պատահած քաղաքապանի կողմից:

Բանվորն իր պատմվածքը վերջացնում և հետևյալ խոսքերով.
«Մայիսյան տոնակատարությամբ կովկասյան սոցիալ-դեմոկրատիան
առաջինը լեզակ, վոր սերմանեց ազատության սերմերը և դարձավ
կովկասում բոլոր ընդդիմագիր ուժերի ավանդարդը». Սա պատմական
մի մօմենտ է, վոր կովկասի մոլեգնող բոլոր հեղեղները կուզդի մեկ
հունի մեջ և կկազմի հակայական ջրերի այն հոսանքը, վորը կսրբի
ու կտանի ինչպես չերքեղներին ու հայերին, այնպես և վրացիներին
բոլոր ազգությունների բանվորներին հավասարապես հարստահա-
րող կառավարությունը»:

Մալիսյան այդ խեկ բացահայտ ցուցը համոզում է, վերջապահ կառավարությանը, վոր հասարակական կյանքի ծոցում առաջացել ե հեղափոխական վտանգավոր մի ուժ և աճել այնչափ, վոր լույս աշ- խարհ և յեկիլ և վոր նրա համար անհետաձգելի լինդիր և դարձել այդ աճող ուժի դեմ լուրջ միջոցներ ձեռք առնելը։ Կովկասյան բարձր իշ- խանությունը խիստ անհանգստության մեջ և ընկնում։ Կովկասի կա- ռավարչապետ Գալիցինը շրջաբերականներ և ցրում նահանգապետ- ների ու վոստիկանապետների գրասենյակները՝ խստագույն միջոցներ- ձեռք առնելու մասին, պարտապիր վորոշումներ և հրատարակում ազ- գարնակության համար, կոչ և անում հասարակությանը ոզնելու գարնակության համար, կոչ և անում հասարակական խաղաղությունն ու իրեն՝ կարգը վերականգնելու և հասարակական խաղաղությունն ու հանգիստը պահպանելու համար։ Բայց այդ բոլորն իդուր և ինքն։ Բան- մակերպության շարժումը և սոցիալ-դեմոկրատիայի աճումը մեծանում եր, վորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիայի աճանքերին։ Հնայած վարչության ու վոստիկանության կրկնապատճեած ջանքերին։ Մասսայական ձերբակալություններից հետո կոմիտեն, լրացնելով կազ- մակերպության շարքերը նոր տարրերով, վերականգնում ե իր կոր- ցըրած ուժերը։

Այդ ժամանակ տեղի է են ունենուս որ շարք գործադրությունը, զերոնց մասին խոսեցինք վերը: Բացի այդ՝ մայիս և հունիս ամիսներին կրկին գործադրու են անում Ռուկսի (200 բանվոր), Կոտրինի (150 բանվոր), Յարալյանի ու ընկ. (500 բանվոր) և Գառլի (50 բանվոր) մեքենայական զավոդների բանվորները: Նրանք բոլորը, բացի Յարալյանի ու ընկ. բանվորներից, կարողանում են ավելացնել տակ Յարալյանի ու ընկ. բանվորներից, կարողանում են ավելացնել տակ 10-20%, կարճել տակ բանվորական որը 10 ու կես ժամանակավարձը մից 10 ժամի, կարդալ աշխատավարձի ստացման գործն ու վորոշիով բավարարել աշխատավարձի դրությունը: Իսկ Յարալյանի գործադրությունը կազմությունը:

ծարանում յեղած գործադուլը՝ ժանդարմների բռնության պատճառով՝ տանուլ և տրվում: Բանվորներին բռնի ուժով ստիպում են գործի կանգնել: Գործադրուները տեսում են 17 որ: Այդ գործադրուների նշանակության ու հետևանքների մասին կոմիտեն վրացերեն ու ռուսերեն լեզուներով թոռոցիկներ ե բաց թողնում ու բաժանում բանվորների մեջ:

Այդ տարվա ոգոստոս ամսի գործադրուներին պիտի ավելացնել նաև Բողարջյանի ծխախոտի գործարանի վաճանակ պատրաստող (մոնդաշտուկ) և լցոնող (հաճիւցիկ) բանվորների գործադրուլը—թվով 100 հոգի (բոլոր բանվորները 500 հոգի ելին): Առաջարված պահանջները՝ ավելացնել աշխատավարձը՝ և լավացնել պապիրոսների համար բաց թողնող ծխախոտը (բաց թողնել վոչ խսիտ մանրած ծխախոտը): Հեն բավարարվում Ձերբակալում են «խոսվարար» բանվորներին *):

Բանվորական շարժման անընդհատ աճման պայմաններում, շարժման, վոր ավելի ու ավելի քաղաքական բնույթ եր ընդունում, մասնավանդ առաջին բացահայտ քաղաքական ցուցցից հետո, կառավարությունն արդեն վոչ մի բանի առաջ կանգ չի առնում խոռվությունը ճնշելու և արմատախիլ անելու համար: Այժմ նա վոչ մի վտանգ չի տեսնում «սեպարատիզմի» ձգտումների կամ կովկասյան ազգությունների առանձին-առանձին «թագավորություններ» ստեղծելու, իր սեփական յերևակայության այդ միրաժի մեջ: Նա դադարում է հետապնդել մինչև անգամ այն կովկասահայերին, վորոնք ձգտում ելին այս կամ այն կերպ թեթևացնել ու բարելավիլ տաճկահայերի դրությունը: Այժմ նա իր ուշադրությունը բացարձակապես դարձնում է ամենավտանգավոր «ներքին թշնամու», հեղափոխական բանվորական շարժման վրա: Այդ տարվանից սեթ սկսվում ե կառավարության բացորոշ պրովոկատորական քաղաքականությունը՝ խուզարկության և գաղտնի վոստիկանական գործունեյության լավ կազմակերպված սիստեմի հաստատումը:

Ցուցցից յերեք ամիս դեռ չանցած, կառավարությունը (հունիս 29) ուժեղացած պաշտպանողական դրության մեջ է հայտարարում թիֆլիսի ու Բագվի նահանգները, վորը գործադրության մեջ է մտնում սեպտեմբերի 4-ից: Սեպտեմբերի 4-ի օրը նշանագոր և զաւանում նրանով, վոր ամբողջ քաղաքալին ու գաղտնի վոստիկանությունը կրկնապատճել քանակով փողոցներն են գուրս գալիս, վորպեսզի վախ ազգեն ազգարնակության վրա: Դիշերը քաղաքի զանազան մասերում խուզարկություններ ու ձերբակալություններ են տեղի ունենում: Այդ գիշեր ի միջի այլոց ձերբակալվում են Բոչորիձեն ու Ցուլուկիձեն

*) «Իսկրա» № 12.

(այժմ մեռած) և ուրիշները: Կառավարությունը թիֆլիսը հեղեղում և լրտեսներով ու ազենտ-պրովոկատորներով *): Հենց այդ տարվանից սկսում են հաճախակի դառնալ նրանց գանակոծելու և սպանելու գեղեցրը, վոր նրանց ահաբեկելու նպատակով կատարում ելին մասնավոր նախաձեռնությամբ: Բանի կառավարության քաղաքականությունն ավելի դարձնում եր դառնում, այնքան ավելի ելին զրգավում բանվորները և այնքան հաճախ ելին դիմում նրանք տերորիստական գործողությունների: Ինչքան ել կոմիտեն աշխատում եր գոպել այդ «եքսցեսները» և բանվորների վողջ ուշադրությունը կենտրոնացնել անհետաձգելի անհրաժեշտություն կազմող մասսայական կազմակերպության, մասսայական շարժման ու լեռուցների վրա, այնուամենայնիվ այս կամ այն գաղտնի ագենտի կամ կառավարական պաշտոնյայի գեր կատարվում ելին տերորիստական գործողությունները:

Սոցիալ-դեմոկրատիան տերորիստական կուսակցությունը, այնինչ թիֆլիսի կազմակերպության մեջ կայլին սոցիալ-դեմոկրատական գորոնք կառավարություն ծրագրերն ու ուժերը ջլատելու և քայլացելու նպատակով տերորորն ամենորդա ակտիվ պայքարի համար քայլելու անհրաժեշտ մի հնար, սիջոց ելին ընդունում: Սակայն նրանք վորպես անհրաժեշտ մի հնար, սիջոց ելին ընդունում: Սակայն նրանք ավելի շուտ ըլանկիստներ ելին, քան սոցիալ-դեմոկրատները: Այդ տերորիստական գործողությունները կատարվում ելին ահա հենց այս ոոցիալ-դեմոկրատ-ըլանկիստների ազգեցության տակ, ինչպես և վարչական իշխանության դաժան արարքների շնորհիվ, վորոնք կատարի շական կամ իշխանության դաժան արարքների վճռություն ելին առաջնում բանվորների այս գալրություն ու վրեժինդրություն ելին առաջնում բանվորների այս կամ այն խմբի կամ կազմակերպության վորեան անդամի մեջ: Շատ հաճախ տերորիստական գործողություն կիրառման հարցի վճիռը կախված է տեսական սպառնական համար անձի տաքարություն բնավորությունից ված եր լինում այս կամ այն անձի տաքարություն բնավորությունից (մի բան, վորով աչքի յեն ընկնում կովկասցները) և նման դեպքերի հետ վոչ տակտիկայի տեսական սկզբունքները և վոչ ել համոզմունքները վոչ մի առնչություն չելին ունենում:

1901 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին կազմակերպության մեջ լուրջ ընդհարում է տեղի ունենում վիտակից բանվորների ու «մի խումբ» սոցիալ-դեմոկրատ ինտելիգենտների միջև: Այս փասան արժանի ին, վոր դիմության տանենքը:

Վեճը վերաբերում էր այն հարցին, թե հարկավոր չե արդյոք վերջապես ժամանակ չե արդյոք, վորպեսզի կոմիտեն ընտրեն հենց իրենք բանվորները, կազմակերպության անդամները, և վորպեսզի բանվորները նույնպես, ինչպես և ինտելիգենտները, մասնակցեն կուսակցությունները:

*) Թիֆլիս գործուղղված ժամանակական պաշտոնյաներից մեկի վկայությամբ 1901 թվի վերջին նրանց թիվը հասնում եր մոտ 500-ի:

միտելի աշխատանքներին վորպես անդամներ: Բանվորները պահանջում եյին այդ բանը և խիստ կերպով պաշտպանում նրանց իրավունքները: Այդ հարցի բացասական վճիռը պառակում եր սպառնում: Մինչ այս՝ գործը հետեւյալ հանգամանքների մեջ եր գտնվում:

Ինտելիգենտ սոցիալ-դեմոկրատների խմբակը կոմիտեյի անդամներ եր ընտրում կամ, ավելի շուտ, նշանակում եր իր միջից ավելի հարմար անձանց: Կոմիտեյի կազմը բացարձակապես «ինտելիգենտական» բնույթուններ: Բանվորներին հաղորդվում եր այն ամենը, ինչ վոր կոմիտեն վճռում եր կամ ձեռնամուխ եր լինում անհետու: Կոմիտեն հաշվի յեր առնում ավելի առաջավոր բանվորների տրամադրությունն ու կարծիքը, բայց մեծ մասամբ բանվորներին ինքնուրուն անմիջական գործունեյության մեջ չեր քաշում և կարեռ հարցերի քննության ու վճռին մասնակցելու չեր կանչում, ինչպես և զեկավար կենտրոնի կազմի մեջ նրանց չեր մտցնում: Բանվորները, գլխավորապես գործնական աշխատանքներ եին կատարում, նրանց հանձնարարում եր կատարել գործի տեխնիկական կողմը միայն: Այս տեսակետից կազմակերպության ու կոմիտեյին մոտիկ կանգնած քիչ թե շատ գիտակից բանվորները հանդիսանում եյին կոմիտեյի «կցորդը», «պոչը» միայն: Անբացարելի յեր միքանի ինտելիգենտների համառ տեսնդենցը՝ զրկելու բանվորներին կոմիտեյի կազմի մասնակցելու հնարավորությունից: Դուք կարծում եք, թե նրանք գիտակից ու այդ աշխատանքին հարմար բանվորներ չեին դանում և կոնսպիրատիվ նկատառութներով եյին առժամապես հեռու պահում նրանց տեղական կենտրոնական մարմին մեջ մասնակցելուց: Ամենակին վոչ: Ընդհակառակին, 1899 և 1900 թվականներին կազմակերպությանը մոտիկ կանգնած բանվորների մեջ կարելի յեր գտնել այնքան գիտակից ու պատրաստի անձեր, վոր նրանցից շատերն իրենց գործնականությամբ, նրբամտությամբ ու խոհեմությամբ շատ ավելի բարձր եյին կանգնած, քան այն ինտելիգենտներից կամ, ավելի ճիշտը, կիսահնատելիքենտներից վորանք «խցկում եյին» կոմիտեի կազմի մեջ: 1900 թվի աշնանը, յերբ նոր ընկերներ են մտնում կոմիտեի կազմի մեջ (ուսւներ), վճիռ և կալացվում, անհետաձգելի անհրաժեշտության պատճառով, կոմիտեյի մեջ հարավիրել յերեք գիտակից բանվորներ, մեկական նոզի յուրաքանչյուր ազգությունից՝ հայ, վրացի և ոռու: Հրավիրվում են յերկուսը՝ հայ և ոռու բանվորները, մինչդեռ վրացի վոչ մի բանվորի չեն ուղարկում, թեև գիտակից վրացի պրոլետարներ շատ կային, և նրանց մեջ հարմար անձեր ավելի հեշտ կարելի յեր ճարել, քան թե հայերի կամ ուսւների մեջ: Հաղիվ թե հասարակ պատահականությամբ կարելի լինի բացարել այս բանը: Ազգպես եր այն շրջանում միքանի ազգեցիկ վրացի

ընկերների տեսնդենցը, վորը և արտահայտվում եր նրանց հետագա գործունեյության ու տակտիկայի մեջ: Այդպիսի վերաբերմունքը հող եր պատրաստում բանվորների մեջ «ինտելիգենտականության» դեմ աճող այն բնական դժգոհության համար, վորի մասին հիշատակեցի վերը:

Ինունելիքենտները պիտի հաշվի առնելին բանվորների այդ գըժ գործությունը, այլապես այդ դժգոհությունը, այլապես այդ սիջաղեպը լուրջ բնույթի եր ընդունում և յերիտասարդ սոցիալ-դիմոկրատական կազմակերպության համար անցանկալի հետեւանքներ կարող եր ունենալ: Նոյեմբերին գումարվում է գործարանների, զավողների ու արհեստանոցների բանվորների ընտրյալ ներկայացուցիչների ժողովը, թվով մոտ 40 հոգի: Ժողովին ներկա յեն գտնվում նաև «ինտելիգենտներից» միքանիսը, վորոնք այն ժամանակ ձերբակալությունից պատ ելին մնացել:

Բանվորական շարժման ու սոցիալ-դեմոկրատիակի անցյալ տարվա գործունեյության մասին ընկերներից^{*)} մեկի արած զեկուցումից հետո ժողովը ձեռնամուխ և լինում քննության առնելու բանվորների ներկայացրած պահանջները, այն և¹⁾ վերացնել կոմիտեն կազմելու հին կարգը և սահմանել կազմակերպության մեջ գոնե 2,3 աստիճանականին ընտրություններ, 2) մեկընդիշտ ընդունել կոմիտեյի մեջ բանվորաշը մասնակցության սկզբունքը և այսուհետեւ կիրառել այն գործնականում: Առաջին կետը տարածայնություններ ու վիճաբանություններ չի առաջացնում, բայց յերկրորդ կետի վերաբերմաբը յերեք առաջարկություններ են անում, ա) ընտրել զուտ ինտելիգենտական կոմիտե, առանց բանվորների, բ) ընտրել կոմիտեյի մեջ հավասար կոմիտե, առանց վերաբերմաբը յերեսի կոմիտեյի լիառն թվով ինտելիգենտներ և բանվորներ, գ) ընտրել կոմիտեյի խառնութիվ՝ բանվորներից ու ինտելիգենտներից բաղկացած, ընդունին սրանցից մեկի և մյուսի քանակը վերջնական հաշվով պիտի վորոշի գաղտնի քվեարկությամբ:

Ընկերներից մեկն^{**)} իր յերկար ճառի մեջ խիստ քննադատելով միքանի ինտելիգենտների տեսնդենցը և ընդգծելով բանվորների ինքնազործունեյությունը զարգացնելու և կուսակցության կյանքում նրանց նախաձեռնությունը յերեան բերելու անհետաձգելի անհրաժեշտությունը, առաջարկությունը և անում բանվորներին ու նրանց գիտակից առաջարկու ներկայացուցիչներին թողնել կարգավորելու իրենց գործերը և ընտրելու կոմիտեյի կամ կազմակերպության մեջ այլ հիմնարկի մեջ ում կցանկանան: Սրան դեմ և յելնում յերեի տասարդ, բոլոր գործերի մեջ անխստիր «քուանդուն» ինտելիգենտ միտասարդ, բոլոր գործերի մեջ անխստիր «քուանդուն» ինտելիգենտ մի-

*) Սկզբան Զուղելի, այժմ մեռած:

**) Սույն աշխատաթյան հեղինակը հեղինակի ծանոթ. II հրատարակությանը Սոց.-դեմ. կովկասում—6

ընկեր և, առաջ բերելով կոնսոլիքատիվ նկատառությունները, բանվորների անպատճառատությունը և անգիտակցությունը, գեմ և արտահայտվում բանվորներին կոմիտեի կազմի մեջ մասնակցել թուլատրելու առաջարկությանը *): Դիմելով բանվորներին, նա իր ճառը վերջացնում է այս խոսքերով. «Այստեղ շողոքորթում են բանվորներին. ձեզ եմ հարցնում, ձեր մեջ կամ արդյոք թեկուղ միշերկու բանվոր, վոր հարմար լինի կոմիտեի մեջ ընտրվելու, ասացեք ճիշտը, ձեռքերդ ձեր սրտին գործ»:

Բանվորական ներկայացուցիչներն արժանի պատասխան են տալիս նրան այն բանով, վոր ձայն են տալիս կոմիտեի կազմի խառն տիպի առաջարկությանը և կոմիտեյի անդամ ընտրում բացի ինտելլիգենցից դարձյալ 3 բանվորի:

Սրանով ել վերջանում է այն ժամանակ մեզ խիստ անհանգըստացնող պատմությունը:

Հիշալ յերիտասարդ ընկերը սրանից հետո շուտով իր գործունեյությունը Թիֆլիսից փրխաղբում և Բաթում, ուրիշից Թիֆլիսում աշխատողները տեղեկություններ են ստանում, վոր նա Թիֆլիսի կազմակերպության ու նրա գործիչների դեմ անկորրեկտ վերաբերմունք և յերեան բերում և թշնամական ու կազմալուծական (дезօրգան-զատօրսկայ) ազիտացիա մղում։ Հեղափոխական պրոլետարական գործին շատ միասող միքանի ընկերների նման արարքները բացատըրվում են մեծ մասամբ, ինարկե, վոչ թե ընդհանուր գործի նկատմամբ նրանց ունեցած սկզբունքային վերաբերմունքով, այլ միայն ահատական հատկություններով։ Համարական կապրիզներով և ինքնիշխանության ձգություններով։ Հարկաղբարված ելինք լինում հաճախ կովել մեր խակ ընկերների անկորրեկտ ու միասակար գործողությունների դեմ, իսկ կազմակերպության ներսում տեղի ունեցող այդ ընդհարությունները պակաս չափով չելին թուլացնում առանց այն ել փոքրաքանակ սոցիալ-գենոկրատական խմբակի ուժերն ու յեռանգը։

Միասնական ամրակուռ կազմակերպություն ստեղծելու համար հարկավոր յեղավ շատ աշխատանք ու յեռանգ գործադրել։ Կազմակերպությունը դեռ համեմատաբար շատ թույլ եր, նա շատ թյուններ ու բացեր ուներ։ Տպագրական գործը հարկ յեղածին պես դրված չեր։ Տասն ամսվա ընթացքում, 1901 թվի հունվարից մինչ հոկտեմբեր, կոմիտեն կարողանում է հրատարակել միայն 16 թույ-

*) Իմիջի այլոց բերվում եր այս արդումենտը. «Այդ ի՞նչպես կարող է լինել ինտելլիգենցները սյուրատուկ ու սուլայած շապիկ հագած կլինեն, իսկ բանվորները բաճկոն. աից գա անհարմար բան ե, կոմմենտարիալ չե»։ Կոմմենտարիաներն ավելորդ են, այդպիսի արգումենտի անհեթեթությունը ինքնին հասկանալի յե».

թիկ 19.800 որինակից բազկացած, վորոնցից 7-ը սուսերեն լիզվով, 8-ը վրացերեն և 1-ը հայերեն։ Սեփական անլեզալ որդանի կարիքն եր, վոր գլխավորապես զգում եր կազմակերպությունը 1901 թվի վերջին։ Ունենալ յերեք լեզուներով՝ ուսւերեն և հայերեն թեկուղ վոչ պարբերական մի անլեզալ հրատարակություն, ահա կենսական այն խնդիրը, վորի իրազործմանը ձգտում եր այդ ժամանակ կոմիտեն իր տրամադրության տակ ունեցած բոլոր միջոցներով։ Այդ խնդիրն իրագործելու համար հարկավոր եր հիմնարկել անլեզալ տպարան և հաղթահարել դրա հետ կապված տեխնիկական գժվարությունները։ Յեվ կոմիտեն ձեռնամուխ և լինում իրազործելու այդ գժվարին գործը։ Նյութերն արդեն պատրաստ եյին, տեխնիկական կահավորումը վերջանում եր։ Բայց կոմիտեյի համարյա ամբողջ կազմի անսպասելի տապալումը 1902 թվի փետրվար ամսին զարձյալ մի վորոշ ժամանակով հետաձգում ե. այդ կարենուագույն ձեռնարկության իրազործումը։

Կոմիտեի փետրվարյան այդ ձերբակալությամբ և սրա հետ միաժամանակ նաև 30-ից ավել բանվորների ու ինտելլիգենցների ձերբակալությամբ կառավարությունը խիստ հարված և հասցնում կազմակերպությունը,

Փետրվարի լույս 16-ի գիշերն ի թիվս ուրիշների խուզարկվում և ձերբակալվում են հետեյալ անձինք (բանվորներ ու ինտելլիգենցներ)։ Սուաքել Ոկուաշվիլին, Չողրդի Չիւեհձեն, Կալիստրատ Գոգուան, Գևորգ Ղարաջյանը*), Սևերյան և Սիմոն Զուղելիները, Վասո Ցերածեն, Լիժավան, Մեղրելիձեն, Բիլանովը, Կորկաշվիլին, Քափանաձեն և Կլիմիկը, իսկ միքանի որ առաջ, փետրվարի 4-ին ուսուցչական ինստիտուտի աշակերտ Գևորգ Վարդոյանը, գրաշարներ՝ Յուսուփինեն, Զամուշեալը, Ցերցվածեն, Վասո Ուրուշաձեն, գործակատար Միք. Ուրուշաձեն և ուրիշները։ Այս ձերբակալությունները կատարվում են յերկաթուղարքն արհեստանոցների մի բանվորի (փականագործ) պլրովոկացիայի շնորհիվ, վորը յերկար ժամանակ իրեն ներկայացնում եր վարպես հեղափոխական ու սոցիալ-դեմոկրատ, բայց վորն իրոք հանդիսանում եր պահանորդական բաժանմունքի գործակալ-ուղղովկատորը։ Պահանորդական բաժանմունքի պետ Լավրովը հրաժարվում եր, նա լիակատար հիացմունքի միջ եր։ Նա շարունակ ասում ե, թե կազմակերպության կոմիտեյի, զեկավարների ու անդամներից շատերի ձերբակալումից հետո Թիֆլիսում ամեն ինչ ձնշված է, սոցիալ-գենոկրատիան արմատախիլ արված։ Սակայն ի՞նչպես հուսախարվում ու կատարվում է կալվովը, յերբ այդ ձերբակալություն-

*.) Սույն աշխատության հեղինակու

ներից միքանի որ հետո բաց ե թողնվում կուսակցական կնիքը կը ող տպագրված սի թոռոցիկ վորը, չնայած տապալումին ու ձերթակալություններին, կոչ ե անում շարունակել համառ կոփվը բոնակալ կառավարության դեմ: «Սա հիղա լեռ, զոչում ե այդ թոռոցիկը տեսնելուն պես նույն ինքը լավովը: Այո, կազմակերպությունը իսկապես վոր «հիղա» յեր, վորովհետեւ նրա առաջացման որից ևեթիմնադիր գործիչների բոլոր ջանքերն ու ձգումները լեզել են ստեղծել հենց բանվորական մասսայական մի կազմակերպություն: Ահա թե ինչու նա, չնայած տապալումներին ու ձերթակալություններին, անընդհատ քիչ թէ շատ հեղափոխական գործունեյություն եր յերեան հանում:

Գործադուլալին շարժումը համաճարակի պես տարածվում ե նույնիսկ մանր արհեստանոցների մեջ: Կոմիտայի ղեկավարությամբ գործադուլ ե բոնկլում կանացի հագուստեղենի հինգ գլխավոր արհեստանոցներում (սեպտեմբեր ամսին): Բանվորները պահանջներ են դնում 1) սահմանել մշտական գնահատականներ, 2) աշխատանքը բաշխել բոլոր բանվորների միջն այնպես, վորապեսզի շարաթական ապահովի ամուրիների համար մինիմում 4 ոուրլի, իսկ ամուսնացածների համար՝ 6 ոուրլի, 3) ավելի կանոնավոր բաշխում կատարել «սեպտեմբերին» և «մեռած» ժամանակների միջև, վորապեսզի վերջին ժամանակի ընթացքում կատարվի պատրաստի հագուստեղենի արտադրությունը, վերջապես, 4) պարտավորություն հանձն առնել չարձակելու բանվորին առանց այդ մասին լերկու շաբաթ առաջ նախազգուշացնելու: 3 շաբաթ տեսող տոկուն գործադուլից հետո գործադերերը բավարարում են բոլոր այդ պահանջները: Բանվորները նույնպես իրենց հերթին պարտավորվում են աշխատանքից կամավոր հեռանալու ղեղփում նախազգուշացնել գործատերերին յերկու շաբաթ առաջ:

Ոգոստոսին գործադուլ են անում Աղելխանյանի կոշկեղեն գործարանի բանվորները, սեպտեմբերին՝ Բողարջյանի ծխախոտի գործարանի բանվորները և այլն:

Ինչպես արգեն հիշատակված ե, Թիֆլիսի պրոետարիատի տվանդիքը հանդիսանում ելին յերկաթուղալին արհեստանոցների ու դեպուի բանվորները, վորապես մյուսներից ավելի շուտ կազմակերպված և ավելի գիտակից պրոլետարներ: Վարչական իշխանությունը և պահնորդական բաժանմունքն սկզբից ևեթ հատուկ ուշադրություն են դարձնում շարժման այդ հնոցի վրա և «կրամությունը» (խոռվությունը) կազմակերպելու, արմատախիլ անելու նպատակով նրանք յերկաթուղային արհեստանոցներում դրակոնյան կարգեր են մացնում և լրտեսների ու պրովոկատորների մի ամբողջ լեգեոն դնում: Բրիգադիրներից

ու ավագ վարպետներից շատերը պահնորդական բաժանմունքի ծառայության մեջ են գտնվում: Բանվորների տնտեսական դրությունը դառնում ե ել ավելի անտանելի: Նրանք համար կավով ձեռք են բերում բանվորական որի 13-ժամյա նորմա, բայց շուտով ստիպված են վիճում արտաժումա աշխատանքի դիմել, և աշխատանքը յերեկոյան ժամը 6-ի վոխարեն վերջանում ե ժամը 9-ին: Վերջին ժամանակս վարչությունն ավելի ևս յերկարացնում ե բանվորական որը: «Ամսի 20-ի յերեկոյան ժամը 9-ին, յերբ բանվորներն սկսում են մաքրել գործիքներն ու պատրաստվում են տուն գնալու, բրիգադիր Տրիֆոնովը մըտնում ե ճախարակագործական ցեխը և պահանջում աշխատանքը շարունակել մինչև գիշերվա ժամը 12-ը: Բանվորները հրաժարվում են, Տրիֆոնովը փողոցային հայնայնքներ և թափում նրանց գլխին, կազմում ե բողոքների ցուցակը և վազում գեպի զբանակակ: Այնտեղից նա վերադառնում ե վարդեռ Բլյումբերգի հետ միասին, վորը կըրկնում ե բրիգադիրի պահանջը, սպառնալով բողոքուներին ժանդարմների ձեռք բնած հանձնել բանտ ուղարկելու համար: Մեծամասնությունը գործի յեւ անցնում*):

Իրերի ալսպիսի գրությունը խիստ զարգացնում ե բանվորներին: Խոռվությունները չեն դադարում: Յերկաթուղագծի պետ Վերենելեն սպանվում է: Նրա փոխանորդը, ինժեն. Իվանովսկին, շարունակում է իր նախորդի «քաղաքականությունը»: Նա իր «քաղաքականությունը» ահա թե ինչից և սկսում: Նա սահմանափակում ե յերկաթուղանը վին արհեստանոցներում կովկասցի բանվորների ընդունելությունը և նրանց չի նշանակում ավագ վարպետների պաշտոնով, իսկ ապա յերկաթուղագծի ծառայությունից գուրս և վանում կանացի կազմը: Զայցացած վարչության կամայականությունից ու պահնորդական բաժանմունքի նշանակած ավագ վարպետների լրտեսությունից ու պրովոկատորությունից, բանվորներին մի բան եր մնում դիմել իրենց միշտորությունից, բանվորներին մի բան եր մնում դիմել իրենց միշտորությունից: Նրանց քանից նախազգուշացները վուեժինդրությունը: Իրենց նախաձեռնությամբ և անձնական վուեժինդրությունը գրդված, նրանք սկսում են ծեծել ու սպանել լրտեսներին ու պրովոկատորներին: Ամբոխը ծեծում է ատազճագործական ցեխի բրիգադիր Յարկին և, մտադրվելով նույն կերպ ծեծել նաև ճախարակագործական ցեխի պահանջը, սիալմամբ ծեծում են դարձնոցի բրիգադիր Դանիլյանին: Հուլիսի 31-ին սպանվում ե ավագ վարպետ Ճուլուսի 23-ին ատազճագործական արմատական դրակոնյան կարգեր յերկոնյան կարգով վիրավորվում ե ավագ վարպետ Բլյումբերգը՝ կազմակերպության անդամ բանվոր ընկերներին մատնելու համար:

*.) «Անքա» № 54.

Նոյեմբերի 28-ին պըովոկատորության համար գնդակով կոնտուղիայի յեւ յենթարկում վարպետ Զեպուրնովը: Դեկտեմբերի 4-ին նույնպես գնդակով կոնտուղիայի յեւ յենթարկում վեպոյի պետ Շալիգանովիչը:

Այս միքանի որինակները բավական են, վորապեսզի հասկանալի լինի, թե կառավարական ռեպրեսսիաներն ու պըովոկացիաները բանվորների համար ինչպիսի մթնոլորտ ելին ստեղծում, թե ինչպես բանվորներն անողություն և աննպատակահարմար կերպով վատնում ելին իրենց կուտակված հեղափոխական յեռանդը: Հարկավոր եր ուղղել այդ յեռանդը մի ուրիշ կողմ, այն եւ մասսայական, զիտակցական բանվորական շարժում ստեղծելու ուղղությամբ, մի բան, վոր ուժերի պակասության պատճառով ու աշխատանքի զուտ կոնսպիրատիվ, ընդհատակյա պայմաններում կազմակերպությունն ու կոմիտեն չելին կարողանում կատարել:

Նոյեմբերի 24-ին կայարանում Թիֆլիսի բանվորները ցույց են կազմակերպում: Դեպի Ռուսաստանի ներքին նահանգներն ետապով աքսորի ելին ուղարկում անցյալ տարվա ազրիլի 22-ի մալիս-մելյան ցույցի գործի մեջ մեղադրվող Առաքել Ոկուաշվիլուն, Լեռնտի Մամալաձելին, Տատանելյլիլուն, Վիգրիբինին, Գյորգորիանուն և ուրիշներին: Առավոտյան ժամը 10-ին բացի աքսորյալների ընտանիքներից և ազգականներից կայարանում հավաքվում ե հազարավոր բանվորների մի բազմություն: Տեղավորվելով կալանավորների համար հատուկ վագոնի շուրջը, բանվորները յերգում են «Հրաժարվենք հին կարգերից» և պարզում «Կորչի ինքնակալությունը» մակարություն ունեցող մի կարմիր դրոշակ: Գնացքը շարժվում ե: «Յերգը ծորում եր պարզ լսելի կերպով և բոլորին համակում վոգնորությամբ: «Կորչի ինքնակալությունը» բացականչությունները թնդացնում են ողը, բանվորները վազում են կալանավորների վագոնի կողքով, վորի մեջ նստած ելին նրանք, վորոնք այնքան շատ տուժել ելին կովի ընդհանուր գործի համար, սոցիալիզմի ու ցարական բանակալությունից Ռուսաստանի քաղաքական ազտագրության համար»: Վոստիկանությունը և ժանդարմերիան պատրաստված չելին, ուստի գլուխները կորցնում են ու բազմության կողմից դեն շարտվում: Բանվորներից վոչոք չե տուժում: մի ժանդարմ լուրջ կերպով վիրավորվում ե գընդակով:

Այս ընկերների և ապօլիլի 22-ի մյուս ցուցարարների աքսորի առթիվ կոմիտեն թուցիկ և բաց թողնում:

1902 թվի վերջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպության համար նշանակալից մի դեպք և կատարվում: յերկու լեզուներով՝ վրացերեն ու հայերեն՝ սոցիալ-դեմոկրատական որգաններ են լույս ընծայվում: Թիֆլիսի կոմիտեյին հաջողվում ե վերսկսել վրացերեն

«Բրձոլա» («Պալքար») թերթը, վոր առաջները հրատարակվում եր Բաղվում և տապալումների պատճառով զաղարած եր, և ապա սկսել հայերեն լեզվով «Պրոլետարիատն») թերթի հրատարակությունը:

Վերջինիս հրատարակությունը կապված է հայ սոցիալ-դեմոկրատների մի խմբակի յերկան գալու հետ, վորի առթիվ ավելրդ չի լինի միքանի իսուք ասել:

Կովկասյան սոցիալ-դեմոկրատիալի առաջացման սկզբին ու նրա դոյլության առաջին տարիներին մենք կովկասյան սոց-դեմակամակարդության շարքերում հայ սոցիալ-դեմոկրատների (ինտելիգենցիա-լից) չենք տեսնում: Իր երությամբ նարոդիկական, դեմոկրատական, հայ հեղափոխական ինտելիգենցիան տարված եր Տաճկական Հայաստանում ազգային ազատագրական շարժման գաղափարով: Այդ յաստանում սոցիալ-դեմոկրատ սոցիալապես քաղաքական հեղափոխական գործը և ընդհանրապես քաղաքական հեղափոխական գործը Ռուսաստանում նրան ամեննեին չեր հետաքրքրում: Այդ գործին նա անտարբեր, կողմնակի կերպով եր վերաբերվում է միշտ խուսափում եր նրա մեջ ակտիվ մասնակցություն ցույց տալուց: Բայց ահա ամբողջ Ռուսաստանովը մեկ ծավալվող քաղաքական հեղափոխական բնույթ ունեցող գեղքերը, գլխավորապես բանվորական հեղափոխական-սոցիալիստական շարժումը կարողանում են ազկան հայ հեղափոխական-սոցիալիստական ինտելիգենցիալի ամենազգայուն մաղել նաև հիշյալ հեղափոխական ինտելիգենցիալի ամենազգայուն մաղել նաև պիտի կարեր հին տրագիցիանեսի վրա: Նա ստիպված իր կապերը պիտի կարեր հին տրագիցիաների հետ և մեկ ընդմիշտ կանգներ պրոլետարական դասակարգային պայքարի տեսակետի վրա և վերջապես, պիտի հասկանալ, վոր հայ պայքարի տեսակետի վրա և վերջապես, պիտի կոմիտե գտնել ձնշված ազգի, հայ պրոլետարիատի փրկությունը վոչ թե պիտի գտնել մի նոր գասահարդարական պետություն ստեղծելու մեջ, ուր ել վոր այդ մի նոր գասահարդարական պետություն ստեղծելու մեջ, ուր այդ մի սոցիալ-դեմոկրատի մեջ, հայ պրոլետարիատի գասահարդարական, գիշելինի, այլ սոցիալ-դեմոկրատի մեջ, հայ պրոլետարիատի գասահարդարական պայքարի մեջ, պայքարի, վոր նա պիտի մզի Ռուսաստան պայքարի մեջ միասին բանվոր դասակարգի ընդհանուր քաղաքական ու սոցիալական ազատագրության համար:

Այսպիսով, 1902 թվի կեսերին Թիֆլիսում առաջանում է «հայ պրոլետարիատի միություն» կոմիտեների միություն»: «Միությունը սոցիալ-դեմոկրատների միություն» անուն կրող մի խմբակի**): «Միությունը սոցիալ-դեմոկրատների միություն» անուն կրող մի խմբակի մասին համար:

*) Հետո շուտով այդ յերկու թերթերն սկսում են լույս տեսնել «Պրոլետարիատի կոմիտե» ընդհանուր անունով, վարպետ կովկասյան սկսության որգան:

**) «Միություն» մեջ մտնում ելին Արշակ Զոհրաբյանը, վոր անջատվել եր այդ ժամանակ «Դաշնակցություն» կուսակցությունից, վորի կենարոնական կոմիտեի անդամներ և հնչակյաները՝ Սարգս Խանոյանը, Աշոտ Խումարյանը և ուրիշները: Ճեղինակի ծանրությունը 1

Հնկ. ընկ. Սարգս Խանոյանը և Աշոտ Խումարյանը միքանի անգամ հայտնել են սույն աշխատության հեղինակին, վոր Երևանք անցյալում հնչակյաներ չեն յեղել: Օտանոր. քարգմանի:

թյունը» հարում ե սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը և ղեկավարում ե «Պրոլետար» թերթի խմբագրության գործը, վորի № 1-ի առաջնորդող հոդվածը՝ «Հայ սոցիալ-դեմոկրատիայի մանիֆեստը» վերնագրով՝ միության «Credo»-ն եր ներկայացնում։ Ընդունելով սոցիալ-դեմոկրատական ծրագիրը, «Միությունն» իր կատարյալ համերաշխությունն ե արտահայտում դեպի Ռուս. Սոց.-Դեմ. կուսակցությունը, ինչպես և իր գիտավորությունը՝ կովելու նրա հետ միասին ընդհանրապես ռուսական և մասնավորապես հայ պրոլետարիատի շահերի համար։ «Միությունը հանդիսանում ե Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ճյուղերից մեկը» և այն։

Մեզ հայտնի յե, վոր այս չափազանց փոքրաթիվ խմբակը, անշտավելով «Դաշնակցություն» և «Հնչակյան» ազգայնական կուսակցություններից, իր առաջացման հենց սկզբից ևեժ հարում և Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը և սկսում և աշխատել նրա շարքերում։ Իսկ վերոհիշյալ որդանը հայերեն լեզվով հրատարակում եր վոչ թե առանձին մի խմբակ, վորպես այդպիսին, այլ Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն, ճիշտ այնպես, ինչպես հրատարակում եր վրացերեն լեզվով («Բրձոլա»)։ Թիֆլիսի, և ընդհանրապես կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները մըտնում եյին արդեն Ռ. Ս.-Դ. Բ. մեջ, բայց թե ինչ բանի կարիք կար, վոր Թիֆլիսի սոցիալ-դեմ. կազմակերպության շարքերը նոր մտնող հայ սոցիալ-դեմոկրատների խմբակն առանձին մանիֆեստով աշխարհով մեկ ազգարարում եր իր յերեան գալը, վորպես «Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ճյուղը հանդիսացող մի նոր միություն», մինչև որս ելանհասկանալի յե մնում։ «Աւքրա»-ի № 72-ում լույս տեսած «Բունդի նոր գաշնակիցները» խորագիրն ունեցող հոդվածի հեղինակն այդ տոթիվ տալիս և այսպիսի վոչ լիովին բավարար բացարություն։ «Հայ ընկերները, վորոշագիտացիոն նկատառումներով, գերազանցին լույս ընծայել հայ սոց-դեմոկրատական թերթի առաջին համարը «հայ սոցիալ-դեմոկրատների միության» անունից, թեպետ և նման միություն գոյություն ել չուներ»։ Թող այդպես լինի։ Բայց մյուս կողմից յերեւմ ե, վոր այդ խմբակը, գտնվելով դեռ հայ հեղափոխական կուսակցությունների ազգեցության տակ, վերջիններիս հետ վերջնականապես չի կարում իր տրագիցիաները։ Նա ազգային հարցի նկատմամբ հնարավոր և գտնում կուսակցության ծրագրի մեջ մտցնել ազատ Ռուսաստանում ֆեդերատիվ հանրապետության պահանջը։ «Ինկատի ունենալով, —ասաված է այդ առթիվ մանիֆեստի մեջ, —վոր սուս պետության կազմի մեջ մըտնում են շատ բազմազան ազգություններ, վորոնք կուլտուրական զարգացման տարբեր աստիճանների վրա յեն գտնվում, և յենթագրելով, վոր միայն տեղական ինքնավարության լայն զարգացումը կարող ե

ապահովել այդ բազմազան տարրերի շահերը, մենք անհրաժեշտ ենք համարում հիմնարկելու ապագա աղատ Ռուսաստանում ֆեդերատիվ հանրապետություն»։

Այսաեղ խմբակի վրա անպայման յերեւմ ե հայ հեղափոխական կուսակցությունների ազգեցությունը։ Կոմիտեի հրատարակած վրացական «Բրձոլա»*) թերթի համապատասխան № 4-ում այդպիսի պահանջ չենք գտնում։ Միայն շատ շուտով հիշյալ խմբակի անդամները ֆեդերատիվության սկզբունքը միանգամայն թողնում են և կուսակցության ծրագրի մեջ ազգային հարցի վերաբերյալ կետերն ամբողջապես բարեկարգ համարում։

1903 թվին տնտեսական ու քաղաքական պայքարն ավելի ուժեղ կերպով ե շարունակվում, քան նախորդ տարիներին։ Զանազան, յերբեմն միանգամայն պատահական առիթներով**), իսկ զլիավորապես մայիս-մեկյան տոնի առթիվ քաղաքական բողոքը և տիրող ոեթիմի գեմ ունեցած դժգոհությունն արտահայտվում են հատկապես բացահայտ փողոցային ցույցերի ու մանիֆեստացիաների մեջ։ Ցույցերը առվորական յերեւություն են դառնում, իսկ մայիս-մեկյան ցույցը մի առանձին քաղաքական մարտական բնույթ ե ընդունում, վոր զարթեցնում և ազգաբնակության հետամնաց խավերը։

Յանկանալով հավերժացնել փետրվարի 19-ը, գյուղացիների ճորտությունից ազատազգվելու որը (1861 թ.), Թիֆլիսի բանվորները վճռում են փետրվարի 22-ին փողոց դուրս գալ և, համախմբվելով լեռքուներով «Կորչի ինքնակալությունը», «Կեցեց սոցիալիզմը» մակաղերությունն ունեցող գրոշակի տակ, «մարսելով» յերգելով անցնել քաղաքի փողոցներով***։

Բանվորները զինված են լինում հոնի ծանր դաշտակներով։ Ցույցի տեղը նշանակված եր Գոլովինսկի պողոտան, քաղաքի կենտրոնը բարձրացած յերգոն։ Մոտ 6000 հոգի ցույցարաններ պիտի լինելին՝ բաղկացած կաթուղային արհեստանոցների և Թիֆլիսի բոլոր գործարանների ու

*) Առաջին յերեք համարները լույս են տեսել Բազվում Լազո Կեցինովելու խթմագրությամբ։

**) Այսպես, որինակ, հիշատակներ սոց-դեմ. մի բանվորի հանդիսավոր հուղարկավորությունը, վոր տեղի ունեցավ 1902 թվի ամառը Հուղարկովորությանը մասնակցում եյին միքանի հազար բանվոր։ Զնայած փոստիկանական արգելուներին, հուղարկավորությունը շարժվում է քաղաքի գլխավոր փողոցներով և կանգ և առնում Մետեխի բանտի, Թիֆլիսի այդ Բաստիլի գիմաց, Այլտեղ, «Կորչի ինքնակալությունը», «Կեցեց ազատությունը» բացականչությունները թնդացնում են ողբ։ Բանտի վարչությունը հավաքել ե բանտի վրա հարձակում գործելու։ Այնուհետև գերեզմանատանը Տեղափոխական-քաղաքական հառեր են արտասանվում։

***) «Աւքրա» № 39.

զավոդների բանվորներից։ Մի թիուրիմացության հետեանքով, վորածանիքստացիալի ժամանակի վերաբերյալ առաջացել եր բանվորների զանազան խմբակների մեջ, այդ բոլոր բանվորներին չի հաջողվում մի տեղում հավաքվել, միայն ցուցաբարների մի փոքրիկ խմբակ ժամը 12^{1/4}-ին հայկական Բագրա կոչված փողոցի անկյունում դրոշակեալ պարզութե «Կորչի ինքնակալությունը» բացականչություններով նետվում ե դեպի Հայկական Բազարը։ Այդ պահին այդտեղից անցնում ե թաղման հուղարկավորություն, վորին զինվորական տարազ հազած մասնակցելիս են լինում յերկու սպա, մեկը պաշտոնաթող զնդապետ Աղայնը, իսկ մյուսը Թիֆլիսի գնդի պորուչիկ Խականդար խանը։ Բազմությունը նրանց վորպես վարչական անձինք և համարում, այսինքն վորպես իր թշնամիները և յենթադրելով վոր վոստիկանական թակարդի մեջ ե ընկել, փայտերով ու ատրճանակով վիրավորում են նրանց։ Յերբ բազմությունը բացականչում ե՝ «Կորչի ինքնակալությունը», վոստիկանական ուժեղացրած խումբը Յերեանցան հրապարակում խումապի մեջ փախչում ե զես ու զեն և սուլոցներով ոզնություն կանչում։ Ցուցն արդեն վերջացած եր, յերբ զինվորական շտաբի բակից ոզնության են գալիս կազակները։ Սկսում են առանց խըսրության ծեծել փողոցում բոլոր պատահողներին։ Կազակներն ու վոստիկանությունը խումբ-խումբ, 5—10 հոգուց բաղկացած, հարձակվում են մեկն ու մեկի վրա և, լավ ծեծելուց հետո, քարշ տալիս վոստիկանական թաղամասը, վորտեղ շարունակում են իրենց գազանակին բռնությունը։ Զարդը զեկավարում են ժանդարմական ոստիմիստը Լավրովը և վոստիկանապետ Կովալյովը։ Նրանք հրամայում են կոտորել ու ջարդել աջ և ահյակ, չնայելով վոչ կանանց և վոչ ել յերեսաներին։ 10 կազակ Զիչկինի խանութի տակ գտնված ներքնահարկից դուրս են քարշ տալիս սպիտակ զոգնոցը հագին ծառայողին և սկսում են նրան այնպես դաժանորեն ծեծել, վոր նույնիսկ գոնապանները դուրս են գալիս պաշտպանելու դժբախտին։ Կովալյովը, ձի հեծած անցնելով այդ պահին, հիանում է ստեղծված պատկերից։ Կազակները ներս են խուժում մասնավոր տները և, ծեծելով բնակիչներին նագայկաներով, մահվան սպառնալիքի տակ պահանջում են իրենց մատնեն ցուցաբարներին։ Յերեք կնոջ դաժանորեն ծեծում են սկզբում փողոցում, իսկ այնուհետև վոստիկանական թաղամասում։ Մի քաղաքապան (գործադրություն) վոտի հարվածով գլխից վիրավորում ե տաճնչորս տարեկան մի տղամարդ, վոստիկանությունը արտաքսում ե նրան թաղամասից առանց վիրակապության, չմատուցելով նույնիսկ նախնական ոզնությունը։

Այդ որը ձերբակալվում են սուս հարյուրիչսուս սարդ

*) Մեզ հայտնի յեւ այսպիսի մի փաստ Մի բանվոր կազմակերի հետ կովկու ժամանակ կազմակերից մեկին ձկուց ցած ե գլորում, ինքը թռչում ձկու վրա և ա-

Մանիկեստացիալից հետո խիստ խուզարկություններ են լինում։ Փետրվարի 23-ի և 24-ին բացի բանվորներից ձերբակալվում են, ի միջի այլոց, հետևյալ անձինք՝ ինտելլիգենտներից՝ Զիրլաձեն, Զուղելի յերեք յեղբայրները, Փելդեր Զիչուան, Դոլիձեն, Ցաբաձեն, ուսուցաւության ինստիտուտի աշակերտ Լյապինը և ուրիշներ։

Ցուցից անմիջապես հետո կոմիտեն բաց և թողնում նույնպես մի թուղթիկ «Քաղաքացիներին» վերնագրով։ Մարտի 23-ի լեռելուան, Արտիստական Ընկերության թատրոնում^{**}) մի գերասանի բենեֆիսի ժամանակ վերեկից ցած են թափիլում այդ թուղթիները։ Վոստիկանության համար դա միանգամայն անսպասելի մի բան եր։ Թուղթիկ հույսության հատուր դա միանգամայն անսպասելի մի բան եր։ Թուղթիկ գաղաքական խուզար հատակից հավաքում են վոստիկանապետ Կովալյովը և ժանները հատակից հավաքում են վոստիկանապետ Պուտիկանապետ գաղաքական խուզարկու Լավրովը, վորոնք այդ ժամանակ թատրոնում են գտնվում։ Թատրոնի վարչությանը նախագործացում և արգում, թե՝ «այսուհետև թատրոնում թուղթիներ յերեալու դեպքում պատասխանատու կը ինձ նա»։

1903 թվի սկզբին կուսակցության լեռնք կոմիտեների սրագու-
մով (Թիֆլիսի, Բագվի և Բաթումի) կազմվում ե համակովկասկան-
միասնական կազմակերպություն, զորն ընդունում ե «Կովկասիան Սո-
ցիալ-Դեմոկրատական Բանվորական Միություն» անունը:

ըստ սլանում ե անհայտ մի ուղղությամբ: Վոստիկանությունը յերկար ժամանակ չե-
կարողանում գտնել նրան: Վերջապես նա ձերբակալվում է բանտարկվում Մետեխի-
ամբոցնեմ:

^{*)} *Slu «Искра» № 37, 39:*

*) Այժմ Ռուսթավելու անվան պետական դրամայի թատրոնը:
Ծանօթ. թարգմ.

տան, վորտեղ տեղի պիտի ունենար ցույցը, շղթալսկապում և զորքերով, կազակներով և դոնապաններով. նույն բանը կատարվում է նաև Սալդատսկի Բագրարում:

Մի վորոշ տատանումից հետո, վերջապես, բանվորներին ազդանշան ե տրվում հավաքվել արտիստական թատրոնի դիմաց։ Այդանու առավոտյան ժամը 11 ու կեսին ծածանում են բանվորական դրոշակը ասեղնագործ հետեւալ մակագրությունը՝ «Կորչի ինքնակալությունը! Կեցցե ազատությունը! Կեցցե ութժամյա բանվորական որը»։ Ակրգբում ցուցաբարները մոտ 400 հոգի յին լինում, իսկ հետո նրանց թիֆս ավելի ու ավելի բազմանում են Նրանք շարքերով շարժվում են պետական թատրոնի³⁾ ուղղությամբ ու բացականչում՝ «ուռա», «կորչի ինքնակալությունը»։ Բազմությունը շարունակ մեծանում է։ Հասնելով կաղետսկիյ կորպուսը^{**)} ցուցաբարները թեքվում են Սապյորնիյ փողոցը և սկսում են ցըվել։ Վոստիկանությունը խարված եր, գալիս ե ուշ։ Նա հարձակվում է մնացած 2—3 տասնյակ բանվորների վրա և սկսում դաժանորեն ծեծել նրանց։ Դոնապանները ծեծում են դագանակներով։ Սարսափելի պատկեր եր։ Բանվորներից շատերին ծերբակալում են***։

Վորքան գամեանությամբ եր վարվում կառավարությունը աղ-
գաբնակության հողմուղ մասսաների հետ, այնքան ավելի ու ավե-
լի հյիսն բարձրանում զայլույթի ու վրդովմունքի ալիքները: Բան-
գորները չեն միայն, վոր խոռվում են: Այդ ժամանակ խոռվում՝ են
նույնպես արհեստավորները, արհեստանոցների աշկերտները, գործա-
կատարները, տնալին ծառայողները, խանութպանները, խոռվում են
նաև համարյա բոլոր գլուխների աշակերտները: Արական առաջին
գիմնազիոնում աշակերտներին այնպիսի դրության են հասցնում, վոր
նրանք մի ժամանակ սկսում են ջարդել ամեն ինչ, կոտրատում են
նստարանները, ապակիները: 6 հոգու հեռացնում են: Էռւյս են տես-
նում աշակերտական խմբակի թերթիկները, վորոնց մեջ պահանջում
են յետ ընդունել հեռացվածներին: Ժանդարմական վարչությունը
հրեշ «դաստիարակների» աջակցությամբ սկսում է վորսալ աշակերտ-
ներին: Սկսվում է ընդհանուր խոռվարկություն գիմնազիոնների մոտ,
իմիջի այլոց գտնում են կոմիտեի «Քաղաքացիներին» վերնագիր
կրող թռուցիկը:

*) Այժմ Պետական Ռպերային թատրոնը:

Ծանոթ. թալգմ.

**) Այս շենքում այժմ տեղակորչած են Վ.Ս.Խ. Հ. միքանի ժող. Կոմիսարիատ-ները, ինչպես և Լուսադրկումատը, Հոգդուրկումատը, Պետալլանը և այլն:

***), «Искра» № 40.

Ականախիւ ամրոցը բանտարկյալների նոր տարրեր ե ընդունում
այն Ե՝ 4—5-րդ դասարանի գիմնազիաներին, վորոնց ժանդարմիները
վախեցնում են ժանդարմական բոլոր միջոցներով, հետո բաց թող-
նում վոմանց և ձերբակալում ուրիշներին: Ժանդարմական վարչու-
թյանն առանձնապես լեռանդուն ծառայություն են մատուցում «գաս-
տիարակ»-պրովոկատորներից՝ 1) ուսուցիչ Վ. Աղապյալը, 2) առաջին
գիմնազիոնի հին լեզուների դասատու Սոլովյովը, վորը դասի ժամանակ՝
աշակերտների գիմաց գովաբանում ե վարչության գործողություննե-
րը և իր պատմվածքի մեջ, իմիջի ալլոց, գովում ցուցին մասնակցող
մի ջանիլ աղջկան ծեծող քաղաքապանին (գործօվոյ), 3) հողաչա-
փական գպրոցի ուսուցիչ Զաքեդկինը, վոր գարշելի մի պրովոկատոր
եր և բորբոքում եր բազմացեղ աշակերտության միջն ազգային ստոր-
կրքերը, 4) նույն գպրոցի մաթեմատիկալի ուսուցիչ Խեվուրիանին,
վորը, աշակերտների հուզումների ժամանակ, դիմում ե վոստիկանու-
թյանը և իտ գալիս գիտության ու դաստիարակության տաճարը չեր-
կու քաղաքապանների հետ միասին, 5) Ալեքսանդրյան ուսուցչական
ինստիտուտի վերատեսուչ Սարեկեցին, վորը ժանդարմական գնդա-
պետի հետ միասին ուղղակի խուզարկություններ ե կատարում աշա-
կերտների բնակարաններում*):

Պայքարը մղվում ե վոչ միայն դուրսը, «աղատության մեջ», այլ և բանտերում: Մետեխի ամրոցում տեղի ելին ունենում անընդհատ աղմուկ, աղաղակ, բողոք և ցուցեր, վորոնց յերբեմն մասնակցում էյին նաև քրեական հանցավորները: Հունիսի վերջին կոմիտեն թոռւցիկ ե բաց թողնում քաղաքական բանտարկչաւ 4 ընկերոջ աքսորի վերաբերմամբ: Նրանց ուղարկում են Արևելյան Սիբիր հուլիսի 1-ին, վորի առիթով բանտում սրտաշարժ մի մանիֆեստացիա յի կազմակերպվում: Այս մոմենտին, յերբ ծածկված կառքերով նրանց ուղարկում են, փակ կամերաներում միահամուռ բարձրացնում են անդադար թիվոց ու աղմուկ: «Կորչի ինքնակալությունը, կեցցե ազատությունը, կեցցեն ազատության մարտիկները» բացականչությունները խլացնում են բանաը: Հուսամուտաներում յերեսում են կարմիր թաշկինակներ: Փողոցները շղթայակապվում են զորքերով, հսկայական բազմությունը պատրաստվում ե հանդիսավոր կերպով ուղեկցել աքսորիաներին, բայց նրան ցրում են: Քաղաքում, կայարանում անսովոր մի շարժում ե տիբում: Այստեղ նույնպես հիասքանչ ցուց ե կազմակերպվում, վորին մասնակցում են վոչ միայն բանվորները, այլ և շատ քաղաքացիներ ու մոտ 60 դիմումունքները^{**}):

*) Ibid.

**) «Искра» № 54.

Այդ ցուցը «Խօսք»-ի № 45-ում բանվորն իր թղթակցության մեջ հետևյալ կերպ է նկարագրում.

«Դեռ միքանի որ առաջ քաղաքում լուրեր ենին պտտում, վորհութիսի 1-ին Սրբելյան Սիրիո են աքսորում քաղաքական 4 բանտարկյալներին՝ 1) Գեորգ Ղարաջանին (ինտելիգենտ, բանտարկված 1902 թ. փետրվարի 16-ին, 40 տարեկան), 2) Գեորգ Վարդոյանին (ինստիտուտի աշակերտ, բանտարկված 1902 թ. փետրվարի 4-ին, 23 տարեկան), 3) Վլաս Մգելաձեյին (գրաշար, բանտարկված 1901 թ. նոյեմբերին, 28 տարեկան), 4) Երսան Զանտլաձեյին (գրաշար, բանտարկված 1901 թ. ապրիլին, 30 տարեկան): Այս առթիվ հունիսի 1-ին մեծ բազմությունը շրջապատում ե բանտը: Բայց բանվորներից, հավաքված ելին նաև շատ կանաչք, լերեխաներ ու կողմանակի անձինք: Բայց շուտով նրանց ցըռում են: Այն ժամանակ բազմությունը ուղեռվում ե գեղի Պետրոպավլովսկից գերեզմանատունը (գերեզմանատանը հավաքվում ե մոտ 5000 մարդ), իսկ իսկ ուղեռվում եմ կայարան: Սրգեն ժամը մեկի կեսն եր, յերկրորդ դանողը վաղուց եր հնչել, բայց աքսորականներին գեռ չեյին բերել: Վերջապես ըերին քրեականներին (քրեական ետապ), բայց նրանց մեջ չկային մեր 4 ընկերները: Դնացքը շարժվեց, իսկ այդ իսկ միջոցին պլատֆորմայում բազմաքանակ բանվորների մեջ (մոտ 10000 մարդ) հպարտությամբ փողփողաց կարմիր գրոշակը, վորի վրա վրակե տառերով յերեք լեզվով գրված եր. «Բանվորներ բոլոր յերկրների, միացեք», «Կեցցե ազատությունը», «Կորչի ինքնակալությունը»: Ցուցարարները, կարծելով, թե այդ գնացքում զանվում են մեր ընկերները, մի յերեք բոլով կանգնեցնում են գնացքը: Այդ ժամանակ իշխանության կողմից սկսվում ե գաղանային մի դատասատան (քառական), սկսում են բանվորների վրա ատրճանակներ կրակել: Մերոնցից վերափորվում են 5 հոգի, մեկը նրանցից վիրափորվում ե շատ ծանր, իսկ մյուսներն անվտանգ կերպով:

Պարզվեց, վոր կառավարությունը խարել եր մեզ: Բանտից մեր ընկերներին տանում են ուղիղ Նավթլուղ ((առաջին կայարանը Թիֆլիսից Բագու) այստեղից ճամպելու հասար: Յերբ Պետրոպավլովսկից գերեզմանատանը գտնված բազմությունն իմանում ե, վոր իրենք խարված են, իսկույն եեթ Հավլաբարով (քաղաքի մասը) քաղաք են վերադառնում. նրանք տեսնում են կազակներով*) շրջապատված 4 կարետ վոստիկանապետի ու նահանգապետի հետ միասին: Այդ կարետներով

*) Ինչպես և ժանդարմենով ու վոստիկաններով և բաղմակիսի խոշոր ու մանը պոշտուայնաների՝ ահազին վոհմակով։ Քաղաքական բանտարկյալներից յուրաքանչյուրին տանում եյին մի կառքի մեջ գրած սուսերամերկ յերեք զինվորի պահպանության ներքո։

աանում էլին քաղաքական գ բանտարկութան հերին: Այդեղ բազմությունն,
ինարկե, իր համակրությունն և արտահայտում դեպի ազնիվ մար-
տիկները:

Ծանր վիրավորված ընկերոջը*), Միքայելան հիվանդանոց են տանում, վորտեղ հենց նույն յերեկոյան մեռնում է: Այդ բանը բանավորներին սաստիկ տրամացնում ու վշտացնում է: Ուզում ելին մոտակա կիրակի որը հիսաքանչ ցույց սարքել և հանդիսավոր կիրապով թաղել ազատության մարտիկին: Սակայն ինչպես զարբացանք ու գրգռվկեցինք, յերբ հաջորդ որն իմացանք, վոր իշխանությունը գիշերգով ժամը 3-ին գողացել է դին և ծածուկ թաղել նրան: Աչքմ մեղ մոտ նույնիսկ փոքրահասակ յերեխաներն են կատավարությունը զող ավագակ անվանում, վորովհետև նա բանտից զողացակ մեր 4 ընկերոջը, իսկ հիվանդանոցից՝ մեռածին:

Այսպիսով, կառավարությունը իվիճակի չլինելով բռնի ուժով մեզ հաղթել, դիմում ե այժմ՝ խորամանկությունների ու ավագակության»:

IV

ԲԱԳՈՒ. ԲԱԹՈՒՄ. ՔՈՒԹԱՅԻՍ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔՆԵՐ

Թվուած եր, թե Բագուն, վորպիս պըոլետարիստի ասսսարոշո՞ր
կենարուններից մեկը ու կովկասյան կապիտալիզմի սիրտը հանդիսա-
ցող քաղաքը, իր հարցուք հազարանոց աշխատանքի բանակով, այդ
իսկական արդյունաբերական պլոտետարական բնակչությամբ, վա-

*) Աղքանունով Գալստյան:

J. S. U.

Ծանոթ. II հրատարակությանը:

դուց իվեր պիտի կովկասյան բանվորական շարժման ավանդաբուժի գերը խաղաք: Թիֆլիսում, բացառությամբ յերկաթուղարին արհեստանոցների, գեղարդի և միքանի մեքենայական զավողների, կաշվե-կոշկաբական և ծխախոտի գործարանների, ընդհանուր առմամբ գեռմանը արտադրությունն և տիրում, չկա խոշոր կապիտալիստական արտադրություն, ինչպես Բագիի նավթի արդյունաբերությունն եւ, վորը յերկաթուղին մինչ Բագուանցկացնելու ժամանակից սկսած (1883 թ.)՝ մագնիսի պես, յերկրի զանազան մասերից գեղի իրեն և քաշում գյուղական չքաղաքությունը և մի հզոր բանակի մեջ կենտրոնացնում ու համախմբում տասնյակ հազար պրոլետարների:

Վորհնք են պատճառները հապա, վոր Բագվի պրոլետարիատը տնտեսական ու քաղաքական ակտիվ պատքարի ասպարեզ համեմատաբար ավելի ուշ և լենում, քան Թիֆլիսինը: Այս հարցը հետաքրքրական և շատ նկատառությունը, այդ պատճառով ել արժե միքիչ մանրամասն պարզաբանել այն:

Բագվի ազգաբնակության ընդհանուր թիվը՝ բանվորների շարունակական ներհուման ու արտահոսման (որում և առաջ) պատճառով՝ գժվար և վորոշել: Բնակչության միջին թիվը հասնում և մոտ 200,000 հոգու*): Ամենից շատը մուսուլման ազգաբնակությունն եւ, նետո հայ ազգաբնակությունը. քիչ չեն ուռւները, հրեաները, լեզգիները, վրացիք, շվեդները, գերմանացիք և այլն: Դա իսկական ինտենացիոնալ մի քաղաք եւ: Նավթի հարստությունը մարդանց հրապուրել և դեռ այն ժամանակից, յերը նավթը արտաբերվում էր (դօբիվալաս) նախնական յեղանակով: Այս արտադրությունը հսկայական չափերով ըստ ամենայնի զարգանալ և սկսում յերկաթուղարին հազորդակցության բացման որից (1883 թվից): Նավթի արդյունաբերությունն իր զարգացման ամենաբարձր աստիճանին հասնում եւ 90-ական թվականներին: Մարդիկ հարստանում են արագ կերպով, հեշտությամբ միլիոնատեր են դառնում, գործի մեջ դնելով թեկուզ ամենաչին կապիտալ: Յեթե բախտը բերի, «շատրվանը» խիթ, մանր բաժնետերերը կարճ ժամանակում նորագույն ասպետներ են դառնում: Գլուղական վաշխառուն, մանր խանութպանը, մի 4—5 տարվա ընթացքում դառնում են խոշոր կապիտալիստներ:

Շահելու, խոշոր հարստություն ձեռք բերելու այս ձգտումը հը-

*) Ներկայում Բագու քաղաքի և գործարանական-հանքային ուայուների ըընակշնչին կապիտալ: Յեթե բախտը բերի, մասնակի միլիոնատեր էր, ըստ 1926 թ. գեկտեմբ. վիճակգրության, հասնում է 446,832 հոգու:

Հեղինակի ծանոթությունը հայերեն թարգմանության:

բապուրում և ամենքին, թոցնում բոլորի խելքը: Բագուն 80 ական թվականների կեսից արգեն դառնում եւ այն կենտրոնը, դեպի ուր հրապում են յերկրի ինտելիգենտու: Ժողովրդական ուժերը: Ինտելիգենցիան զբաղված եր նավթային գործերով: Հայկական դպրոցները կառավարության կողմից փակվելուց հետո հարցուրավոր ուսուցչիչներ իրենց կյանքն անզործությունից ու սովից փրկում են վողջիրենց յեռանցը կապիտալին տալով և նրա տերերի շահերին պաշտպան կանգնելով: Ինտելիգենցիայի այն մասը, վոր առաջներում, վողերոված «ժողովրդական գաղափարով», յերգում եր նրա բարորությամբ ու նրա շահերով (շատերը նրանցից նույնիսկ համարվում ելին օնարողնիկներ), ամբողջապես անձնատուր լինելով բուրժուազիայի ծառայությանը, միանգամայն անբարյականանում և ու ապականվում: Ժողովրդական բարորության գաղափարը նույնացնում և բուրժուազիայի բարեկեցության ու հաջողության գաղափարի հետ: Այն ամենը, վոր իղեալական եր, ինչ վոր կազմում եր մարդկացին հարաբերությունների բարձր ըմբռնությունները, նա փոխարինում և առելորական հաջովով: Գաղափարակից, համալսարանական, վերջապես, կուսակցական նախկին ընկերը խուսափում եր իր խոկ նախկին ընկերներից, արհամարհանքով, բարձրից նայում նրանց վրա, վորպես գժրախտ, մոլորված ու աղքատ մարդկանց վրա: Իսկ չեթե վորեն մեկը փորձ աներ խոսել ժողովրդի մասին, մարդկության մասին, աշխատավոր մասսաների դրության բարելավման մասին, ապա դրանով նա իրեն խելագար, ցնորամիտ ու ավարա հայտարարելու վահանգին միայն կենթարկեր: Սժիոտաժ, բորսայի չարաշահություն (ըռէկուլյացիա), զողություն, խարեալություն, շատրվան, ակթուալիտետ, իսպաթուղթ, կին, «քեփ» և մարդկային արժանապատճենության մոռացում՝ իր և ուրիշի մեջ,—ահա Բագվի բուրժուազիայի ու նրա ինտելիգենցիայի առաքինությունները և խոսակցության ու զբաղմունքի ամենորյա առարկան:

Ինքնին հասկանալի յե, վոր այդ մթնոլորտի ազդեցությունը մեծ եր նույնպես բանվորների ու ծառայողների վրա: Այդ մթնոլորտը միապնում և նրանց միտքը, յերկար ժամանակ նրանց անդնդունակ և զարձնում արտահայտելու վորեն ձգտում և զաղափարական հարցերի վերաբերմամբ յերեան բերելու ինքնուրուցին նախաձեռնություն, թեկուզ հետո գրության բարելավման հարցի վերաբերմում:

Մի կողմից այդ մթնոլորտը, մյուս կողմից արտադրության հայկապահական ընությը՝ կեղար, ծուխը, մուրը, աշխատանքի կապառական գաղափարի պայմանները և կյանքի ընդհանուր կացությունը, վորոնց մեջ բանվոր գասակարգը քարշ եր տալիս իր գործությունը, և ործա-

Նիշ կերպով են ներգործում նրա վրա. նա ճղմված, լքված, դատապարտված եր յերկարատև ամլության, ֆիզիկական ու բարոցական այլասերման:

Բագվի բանվորության գլխավոր մասը կազմում են տեղացիները, հայերը, թուրքերը և պարսիկները: Թուրքերն ու պարսիկները թերես ամենահետամնաց տարրն են կովկասյան պրոլետարիատի: Պարսիկ բանվորներից շատերը ժամանակավորապես աշխատանքի յին գալիս Պարսկաստանից: Նրանք գրեթե բոլորն ել ու աշխատանքի բանվորներ են, «համբալներ», վոչշվորակյալ բանվորներ: Հայրենիքում տընտեսական ու սոցիալական ցածր մակարդակի վրա գտնվելով, այդքաղած, պատառութված, մարդկային թեկուղ սուր զոյության համար բոլոր միջոցներից զուրկ պարսիկ բանվորները ծախում են իրենց բանվորական ուժը ամենաչնչին վարձով, իջեցնում են տեղական ու յեկվոր ավելի կուլտուրական բանվորների գնահատականները և այդպիսով վերջիններիս համար հանդիսացել ու հտնդիսանում են թշնամի, մրցակից մի տարր: Հայերի ու թուրքերի—պարսիկների միջներունական-ազգային հոգի վրա արգեն զոյություն ունեցող ավանդական թշնամությունը ել ավելի ուժեղանում և պրոլետարական, տնտեսական այդ մրցակցությամբ: Զարմանալի չե ուղիմի, վոր այդ հանգամանքը, նրանց դասակարգային գիտակցության ու համերաշխության լիակատար բացակայության հետեանքով, համարյա միշտ առիթ ե ծառայել նրանց միջև փոխադարձ դժբոնություն ու ընդհարումներ առաջանալուն: Իրերի այսպիսի զբության ժամանակ ընդհանուր պրոլետարական շահերի պաշտպանության համար համախմբվելու և համերաշխ գործողությունների դիմելու մասին խոսք անգամ չի կարող լինել:

Հայ բանվորները, զոր մեծ մասամբ բանվորացած գլուղացիներ և այնպէս զյուղական, նահապետական կլանքի շատ նախապաշտության ու ավանդություններին կապված են, իրենց ահազին մեծամասնությամբ ճիշտ նույնպիսի անգիտակից մի մասսա յեն ներկայացնում: Մի կարեոր հանգամանք, զոր խոչընդուռ և հանգիսացել ընդհանրապէս հայ պրոլետարիատի և մասնավորապէս Բազմի պրոլետարիատի զարգացման համար, հեռու չե պահել նրան ընդհանուր-քաղաքական ու պրոլետարական հեղափոխական շարժումից և սթագնել նրա դասակարգային ինքնագիտակցությունը. դա «Հայաստանի վերածնության», այսպէս կոչված «հայկական հարցի» գաղափարի լայն տարածումն ու պրոպագանդան և Տաճկաստանում, զոր հայ ազգաբընակության զանազան խավերին և հատկապէս ինսենվիդենցիյին անցյալ դարի 70-ական թվերից արդին սկսում ե հրապուրել և շարունակում մինչ ներկա ժամանակները:

90-ական թվերից սկսած հայ «հեղափոխական» ազգայնական կազմակերպությունները՝ հնչականներն ու դաշնակցականները, վորոնց մասին մանրամասն խոսք կլինի հետագայում, իրենց գործունեյությունն ուղղում են այդ գործի սպասավորմանն ու իրագործմանը: Խոկ հիմա պիտի նշել վոր այդ կազմակերպությունները, կյանքի կանչված լինելով «հայկական հարցի» գոյության փաստի հետևանքով, իրենց գործունեյությունը յերևան են բերում վոչ այնքան տաճկական, վորքան, ոռուսական հողի վրա, Անդրկովկասում և Ռուսաստանի մյուս հայարձնակ վայրերում: Այդ կազմակերպությունների հիմնադիրներն ու զեկավարները գլխավորապես ոռուսահայեր են: Ռուսահայերի շրջանում նրանց գործունեյությունը, բացի Տաճկական Հայաստանի ազատագրության գաղափարի պրոպագանդայից, հետազո՞ղում եր, գլխավորապես, գործնական նպատակներ, այն ե՞ւ փող հանգանքել և զենք ու մարդիկ հասցնել Տաճկական Հայաստան, վորի համար կովկասի և Ռուսաստանի զանազան քաղաքներում գոյություն ունեցին և ունեն կոմիտեներ ու յենթակոմիտեներ: Ընդուն տիրում եր այն կարծիքը, թե հայերը Ռուսաստանից վոչինչ սպասելիք չունեն, վոր նրանց փրկությունը պիտի վորոնել միայն Տաճկաստանում, «Հայաստանի անկախության» գաղափարը—Ասիական Տաճկաստանում իրագործելու մեջ, խոկ Ռուսաստանը նրանց ոտար ե, ոռուսական այս կարծիքը, թե հայերը Ռուսաստանից վոչինչ սպասելիք չունեն, վոր նրանց փրկությունը պիտի վորոնել միայն Տաճկաստանում, «Հայաստանի անկախության» գաղափարը—Ասիական Տաճկաստանում սակայն կարծիքը, թե հայերը Ռուսաստանից վոչինչ սպասելիք չունեն, վոր սիստեմատիկ, կոտորածների մասին լուրերը և վոսկե այն սարերը, վոր հայ «հեղափոխական» կուսակցություններն ապագա «Անկախ Հայաստանի» ապագա թագավորության մեջ խոստանում եյին պրոլետարիատին ու գյուղացիությանը, վերջիններիս վերջնականապես իմելքահան են անում: Մոռանալով իրենց սեփական տանջանքները, նրանք առաջ տարվում են այդ գաղափարով և այնունեակ իրենց հայացքներուն ու հուսերը հառում միայն գեպի այդ «Նոր Յերուսաղեմը», ուրիշ ու սպասում են նաև իրենց լիակատար «ազատագրությունը»: Ահա հենց ապասում են նաև իրենց լիակատար «ազատագրությունը»: Ահա հենց այս բանն եր, վոր պլոտեատարական ու գյուղացիական մասսաների մեջ այս բանն եր, վոր պլոտեատարական ու գյուղացիաների պարզ լմբոնումը և դասակարգությունում ու խավարեցնում եր իրերի պարզ լմբոնումը և դասակարգային հակամարտության իրականությունը: Այս բանի շնորհիվ նրանց գային հակամարտության իրականությունը: Դեռ մինչ որս ել, չնայած ոռուսական հեղափոխության մեծ զեպքերին, հայ «հեղափոխական կուսակցությունները» թյան մեծ զեպքերին, հայ «հեղափոխական կուսակցությունները» պատահած պրոլետարիատի ու գյուղացիության նկատմամբ ունեցած այդ ժողորությունից ազատագրված չեն:

հայկական մասով, այդ աշխարհայացքի աղքեցության տակ, յերկար ժամանակ չեր կարողանում գասակարգային նորմալ բանվորական շարժման ուղին բռնել։ Սակայն կյանքում վոչինչ անփոփոխ չի մնում։ Այս խոչընդոտները, վոր փակում ենին Բագվի պրոլետարիատի ժամանակին արթնանալու և զարգանալու ուղին, տնտեսական ու սոցիալական բնույթ ունեցող նոր որչեկտիվ պայմանների առաջացման հետևանքով, պիտի վերանային։

«Շատրվանը» հաճախ դադարում եր առաջաւ պես խփելուց։ Նավթի արտարերումը (Ճօնավանիք) հակայական ծախքեր եր պահանջում, վորովհետեւ նավթը դուրս եր զալիս հողի չափաղանց խորը շերտերից և այն ել սակավ։ Շատ մասնավոր մտրդիկ ու բաժնետիրական ընկերություններ քայլավում են։ Արագ հարստանալու տեւչն անհետանում եւ Ակսում և աղգարնակության բոլոր խավերի համար հուսախարության ու վհատության մի շրջան, արդյունաբերության ձգնաժամի, բանվորների աշխատավարձի իջեցումի, մասսայական կերպով բանվորների հետ հաշիվ տեսնելու, գործադրկության շրջանը և այլն։ Բանվորների գժգոնությունն ընդհանուր և դառնում։ Այդ ժամանակ (1900 - 1901 թվականներին) ուստանողական հուզումների և Ռուսաստանի ու Կովկասի զանազան վայրերում տեղի ունեցող բանվորների գործադրություն, քաղաքական ցուցերի մասին ստացվող լուրերը քաջալերում ու խռովում են նույնպես Բագվի բանվորներին։ Վարչական իշխանությունն սկսում և բանվորներին հազարներով արտաքսել Բագվից։ Այս ամենն անկատած, ունենում եր ներգործությունը։ Բայց զլիսավորը, վոր չպետք է մոռանալ, դա տեղումը կազմակերպված սոցիալ-դիմոկրատիայի մեծ թափով վարած աշխատանքի նշանակությունն եւ։

Քաղաքում մինչ սոցիալ-դիմոկրատական կազմակերպության առաջացումը հայ կուսակցությունները՝ հնչակյաններն ու դաշնակցականները, բանվորներից խմբակներ ունեցին։ Բայց այդ խմբակները նպատակ ունեցին վոչ թե պարզաբանելու պրոլետարական, սոցիալ-քաղաքական խնդիրները, այլ միայն պրոպագանդա անելու Տաճկական Հայաստանի անկախության գաղափարը, հանգանակելու փող և ցուցակագրու տաճկական իշխանությունների ու ցեղերի (քրդերի, չերքեղների, տաճիկների և այլն) գեմ գործող հացուկացին խմբերի շաբթիրը մտնել համաձանող և համակրող անձանց։

Քառակարգային շահերի համերաշխության և միարան պայքարի անհրաժեշտության ճիշտ ըմբնումը Բագվի բազմացել բանվորական միջավայրում կարող ելին մտցնել միայն Ռուսաստանից յեկվոր ավելի գիտակից ու կուլտուրական բանվորական տարրը՝ ուռւները, հրեաները, լեհները և ուրիշները, ինչպես և սոցիալ-դիմոկրատական գործունեցու-

թյունը, վոր սկսվում ե 1900 թվից սկսած Թիֆլիսի սոցիալ-դիմոկրատական կազմակերպությունը Բագվի հետ կանոնավոր կապ և հաստատում։ Թիֆլիսի ընկերներից միքանիսն իրենց գործունելությունը փոխադրում են Բագվու, Կովկասյան պլոտիտարիատի կարստագույն այդ վայրը (ինչպես, որինակ՝ լադո կեցխովելին, բանվոր «Դեղուշկան» և ուրիշները)։

Այսպիսով, Թիֆլիսի ընկերները և տեղական սոցիալ-դիմոկրատները, կորիզ կազմելով, յեսանդագին գործի լին կայչում՝ կազմակերպելու պլոտիտարիական մասսաները և կանոնավոր, սիստեմատիկ պլոտագանգա ու ազիտացիա մղելու բանվորների խմբակներում ու ժողովներում։ 1901 թվին արգեն բանվորները, թվով չ00 մարդ, քաղաքից գուրս կատարում են մայիսյան տոննը։

Սեպտեմբերին հանգուցյալ կեցխովելին միքանի ուրիշ ընկերների ոգնությամբ հրատարակում ե վրացերեն լեզվով սոցիալ-դիմոկրատական առաջին անլեզալ թիրթը «Բրձոլա» անունով։

Քաղաքում սաստիկ կերպով սկսում են պտտել թերթիկներ, թըռուցիկներ, ուսանողական հուզութիւնների մասին բյուլետեններ և ընդհանրապես անլեզալ զրականություն։ Աշնանը և ձմռանը (1901 թ.) Բագվի սոցիալ-դիմոկրատական կոմիտեն փութաջան կերպով ձեռքից-ձեռք տարածում է անլեզալ զրականություն (բրոյցը բներ և «Խորա» ու «Խօհոյ Բարօն» թերթերը) և համառուսական թերթիկներ («Փետըրվարի 19-ի մասին» և այլն*): Այդ իսկ ժամանակ միքանի զավողներում ու արհեստանոցներում տեղի ին ունենում գործադուլներ, վորոնք վերջանում են բանվորների հաղթությամբ։ 1902 թվի մարտին բունք վերջանում են մոտ 30 բանվորներ և ինտելիգենտներ (սոցիալ-դիմոկրատներ)։ Ապա կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպվում ե մալիս-մեկյան բացահայտ ցույց, վորի առթիվ ապրիլ ամսում տարածվում են «Խորա»-ի «Մայիսյան թերթիկը», կոմիտեյի սեփական մայիսյան թերթիկը և հասարակությանը ուղղած կոչը**):

Ապրիլի 21-ին հաջող անցած առաջին մայիսյան ցույցը հական ազգեցություն և ունենում ինչպես Բագվի պլոտիտարիատի, այնպիս և այդ քաղաքի ազգաքանակության մէտս զեմոկրատիկ խմբերի վրա։ Ազտվում են «Խորա»-ի № 22-ում այդ ցույցի առթիվ տպված բանվորի նամակի բովանդակությունից։

«Բագվի բանվորները, մյուս քաղաքների բանվորներից յիտ չըմալու համար, ընդհանուր համաձայնությամբ վորոշում են առաջին քայլն անել զեպի սուրբ գործը։ Սկսում են ուժ ու ժամանակ չխնաքալ անել զեպի սուրբ գործը գումարել և պլոտագանգա մըել, սկսում են մասսական ժողովներ գործունեցում և պլոտագանգա մը»։

*). «Խորա» № 24.

**). Ibid.

դեր, ինչպես և մայիսի 1-ի բացահայտ տոնակատարության մասին խոսել: Գալիս և վորոշված որը, ապրիլի 21-ը: Բոլորը սիրով հավաքվում են վորոշված տեղը: Բայց հն թողնում ազգանշանի պնդակները: Դրոշակակիրը, չսպասելով յերբորդ գնդակին, ծածանում և գրոշակը և հաղարտ ու համարձակ արտասանում: «Ընկերներ, այսոր մեծ տոնե, և այս տոնին մենք յենում ենք անարդարության, տգիտության ու աղքատության դեմ: Կորչի ինքնակալությունը: Կեցցե՛ աղքատությունը»: Իսկ ընկերները գրոշակակիրի շուրջը շաղ են տալիս փոքրիկ թռուցիկներ, վորոնց մեջ տպված ելին հետեւյալ պահանջները»՝ «Աղասություն, ութմամյա բանվորական որ» և այլն: Բոլոր փողոցներովը մեկ հնչում են բացականչություններ՝ «Ուռա, կորչի ինքնակալությունը, կեցցե՛ աղքատությունը»: Բոլոր փողոցներից ահազին բազմությամբ սկսում են վազել զեպի «Պարապետը», վորտեղ հպարտությամբ ծածանվում եր՝ գրոշակը: Յերբ ցուցարարներն ուղղում եյին թեքվել նիկոլայեսկի: Վորոշը, կառքով նրանց մոտից անցնում են վոստիկանագետը, նրա ողնականը և պրիմատավը: «Կորչի վոստիկանությունը» և այն բացականչությունների վրա նրանք կանդ են առնում ու մեռելի պես գունատ մոտենում բազմությանը: «Յրվեցեք», յեզի պետքառաջում և վոստիկանագետը: Բայց ցուրարարները նրանց վրա ուշադրություն չեն դարձնում, այլ միայն փայտերով սպառնում են: Մանիքիստացիան ավելի ու ավելի սաստկանում ե: Գալիս և աշակերտությունը, մեծահասակներն ու յերեխաները՝ բացականչելով՝ «Կեցցե՛ աղքատությունը»: Տանիքներում ու պատշաճամբներում հավաքվածները համակրությամբ արձագանքում են՝ «Կեցցե՛ աղքատությունը»:

Մի փողոց չկար, վոր ժողովուրդ լցված չէինք: Վոչ մի յերեխատանը չեր մնացել: Բոլորը գուրս յեխն յեկել տանից, 5000-ի չափ ժողովուրդ կար, այնպես վոր բացականչությունները մեռածներին անգամ վոտքի կհանեյին: Գիմնազիոնի մոտ կես ժամի չափ կանգնելուց հետո ցուցարարներն սկսում են ցրվել, զոհ մնալով, վոր փոքրիկ կայծը, իրոք վոր, բորբոքվեց, և վողջ քաղաքը յեռաց ու աղմկեց... Մի բանվորի յեն կարողանում ձերբակալել. նա յել տեսնելով, վոր արգեն չտարագործների ձեռքն ե ընկել, ինքն իրեն աղքատություն և տալիս, այս ինքն ծեծում ե յերկու քաղաքապաններին, դուրս պրծնում նրանց ձեռքից ու փախչում: Ցույցի վայրում բացի սրանից ձերբակալություն չի լինում:

Ցույցից հետո Պարապետում մեծ բազմություն և դեռևս կանգնած մնում: Գալիս են զինվորները, կազակները, Բագվի վողջ վոստիկանությունը, նավատօրմղի զինվորները, հրդեհաշեների խումբը և այլն: Վոստիկանագետը, կատաղածի պես, մեկ այստեղ, մեկ այնտեղ երայլն: Վոստիկանագետը, կատաղածի պես, մեկ այստեղ, մեկ այնտեղ երայլն: Վոստիկանագետը, կատաղածի պես, մեկ այստեղ, մեկ այնտեղ երայլն:

Հոտոտում եր ամենուրեք, թերեւ վորս ճարվեր: Բրանդմեյտերը ղեկավարում եր հրդեհաշեներին, իսկ կազակները ինդրում եյին հասարակությանը, վորպեսզի ցրվեն: Բայց շուտ չեն ցրվում:

Այժմ շատ բանվորներ խնդրում են, վորպեսզի իրենց այնպիսի մարդիկ տան, վորոնք բացարձեն իրենց գրությունը: Շատերն անհամբերությամբ նոր ցույցի յեն սպասում և մեր ուսուցչի խոսքերը՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» տպավորվել ե բոլոր բանվորների հոգում»:

Բագվից գրած մի ուրիշ թղթակցության*) մեջ ասված ե: «Ամենուրեք խոսում են միայն ցույցի մասին. հասարակության այն մասը, վոր դեռ չի կարգացել թերթիկները, յեռանդուսկում և վորոնել այդ թերթիկները: Ամենքը զարմանում են, վոր Բագվում նման ցույց հաթերթիկները: Կորչի ինքնակալությունը» բացականչությունը ջողվեց կատարել: «Կորչի ինքնակալությունը» բացականչությունը տարածվում և վողջ քաղաքովը մեկ, և յուրաքանչյուր յերեխա կրկնում ե այն: Բանվորական ցրջանում ցույցը շատ լավ տպավորություն և գործել. նա բարձրացրել ե բանվորների վորին և նրանց վստահություն տվել իրենց ուժի մեջ:

Մայիսի 1-ին միքանի զավոդներում ու նավթահանքերում բանվորները վարչությանը պահանջներ են ներկայացնում և բավարարություն ստանում: Իսկ շատ հիմնարկներում բանվորները հայտնում են վարչությանը, վոր մայիսի 1-ին չեն աշխատի»:

Ցույցի պատճառով ձերբակալվում են. Յե. Գալիկովա (կանանց բարձրագույն կուրսերի նախկին ունկնդիր), Ռ. Բարիկովա (Փելդերարձակույն կուրսերի նախկին ունկնդիր), Բ. Կուռնյանց ըուհի), Լ. Կուռնյանց (Կիեվի պոլետեխնիկումի ուսանող), Բ. Բեկունյանց (նկարիչ), Ս. Կոսունյանց (նկարիչ), Ա. Բեկզադյան (Կիեվի (աղատակամ գինվոր), Ա. Նիկոլաձե (տեխնիկ), Ի. Մելիք-Հովսեպութեանկումի ուսանող), Ի. Կազարենկո, գիմնազիստներ՝ միան (նախկին ուսանող տեխնոլոգ), Ի. Կազարենկո, գիմնազիստներ՝ մարդ, վորոնցից 3-ը կին:

Բագվի այս առաջին բացահայտ յելությը, Թիֆլիսինի նման, խիստ զարկ և տալիս այդ քաղաքի բանվորական շարժմանը: Պրոլետարական ասսաների մեջ գործունեյության ավելի լայն ասպարեզ և բացվում: Պրոպագանդայի ու ագիտացիայի համար ավելի նպաստավոր պայմանագիր ինկողության մեջ ակտուարների մեջ ներ ունեյին քաղաքի նավթահանքերի, և թե ակնհայտ ու գաղտնի վոստիկանների ու ժանիմբավորության պատճառով, ինչպես և զիշերային այն գաղաների թուց հակողության պատճառով, վորին վերաբականմիների ու փորձանքների վատնգի պատճառով, վորին վերաբականմիների յերեխ յենթարկել: Ցույցից հետո կառավարությններս կարող եյին իրենց յենթարկել:

*) Ibid. № 24.

թյունն, այնուամենայնիվ, լեռանդապին գործի յե կոչում: Թիֆլիսի պահնորդական բաժանմունքը խիստ հետաքրքրվում է նույնպես Բագուշ քաղաքով: Ժանդարմապետ Լավրովը մոլեզնում է: Այդ ժամանակ ամբողջ յերկիրը լրտեսների ու պրովոկատորների ցանցով և ծածկվում: 1902 թ. աշնանը, ամենայն խստությամբ կատարած մի շարք խուզարկություններից հետո, ձերբակալվում է սոցիալ-դեմոկրատների մի խմբակ, զորի թվում գտնվում եր նաև հանգուցյալ կեցիովելին: Չերքակալված կեցիովելուն և որա հետ նաև ուրիշներին բազվից փոխադրում են Թիֆլիսի Մետեխի ամբողջ Այդ գործը ղեկավարում եր հենց նույն Լավրովը:

Այդ ժամանակ Բագվում ընդհանուր տրամադրությունն ախալիս եր, վոր, չնայած տապալումներին ու ձերբակալություններին, ամենքն ել ուղում ելին մասնակցել շարժմանը, դուրս թափել և ազդարաբել այն ամենը, վոր տարիներով կուտակվել եր նրանց սրտներում, վոր նրանցից լուրաքանչուրն զգում եր:

Գործադրուներ ու ցույցեր,—ահա պայքարի ու բողոքի այն յերկու տեսակները, վոր գործադրում են այդ ժամանակ բանվորական մասսաներն ամենուրեք, ինչպես նաև Բագվում: Գործադրուներն ու ցույցերը լայն մասշտաբով արտահայտվում են առանձնապես այս քաղաքում: 1903 թվականը գերազանցում ե բոլոր սպասելիքներին:

Սույն թվի մարտի 2-ին կազմակերպվում ե բացահայտ ցույց: Ժամը 10^{1/2}-ին բանվորների բազմությունը դադանակները ձեռքներին սկսում են հավաքվել «Պարապետ» հրապարակը: 20-ի չափ կազմներ, մի ամբողջ վաշտ զինվորներ ու ահազին քանակությամբ վոստիկաններ շրջապատում են Պարապետը: Վողջ Բագու քաղաքն այգտեղ եր: Վոստիկաններն սպասում եյին, վոր այգտեղ ցույց կլինի, բայց խարվում են: Բանվորների մեծամասնությունն սկսում ե հավաքվել Մոլոկանսկի այգու մոտ: Ժամը 11-ին առանց գլխարկի ու կարսիր կոփաներ հազար 8 աղջիկ, պարզելով կարմիր դրոշակը և բացականչելով «Ընկերներ, համախմբվեցեք կարմիր դրոշակի առակ», առաջ են շարժվում դեպի հրապարակը. . 2000-ից ավելի բանվոր կար: Ալստեղ, բարձր մի տեղից սկսում են ճառեր ասել ժողովրդին: Թռուցիկները մի գլուխ հենց թռչում են ողի մեջ: Բոլոր փողոցները լցվում են թըռուցիկներով: Կազմակները Պարապետից տճապարում են այստեղ: Բայց նրանք իսկույն ենթ փախչում են, իսրբ տեսնում են դիմացը բանվորների ահազին մի բազմություն՝ յերգելով ու դագանակները բարձրացրած: Մինչդեռ բանվորների մի ուրիշ խումբ, կարմիր դրոշակը պարզած, շարժվում ե գեպի ծովափը: Կազմակները գործի յեն դնում իրենց նադայկաները. բանվորներն այդ բանից արդեն կատարում են և հանելով իրենց ատրճանակները, կացիններն ու դագանակները

հարձակվում են կաղակների վրա: Զախճախում են փոխ-նահանգապետի գլուխը: Յերթը տեսում է մոտ յերեք ժամ: Բանվորներից ձերբակալվում են մոտ 12 հոգի, բացի գրանցից ձերբակալվում են նույն բերկու ունալիստ (ունալական դպրոցի աշակերտ) և մեկ զիմնազիստ: մնացածները կարողանում են թագնվել: Մանիքնեստացիան մի սքանչելի տեսարան եր ներկայացնում: միքանի կարմիր դրոշակներ մակազրություններով, գագանակներով զինված բանվորների ահազին մի բազմություն, կարկտի պես թափվող քարեր և այս բոլորի միջքացականչություններ. «Ուսա, կեցցե սոցիալիկմը» և այլն*):

Մարտի 2-ին հետեւող դեպքերը ցույց են տալիս, թե մարտան ցույցի նշանակությունն ինչքան մեծ եք տեղական շարժման համար: Մարտնչող պրոլետարիատի շարքերը նկատելի կերպով խտանում են, կոմիտենի գրամական միջոցներն ավելանում և կազմակերպչական աշխատանքն ընթանում ավելի ուժեղ տեմպով: Դրա հետ միասին, բանվորների տրամադրությունն ալնքան և բարձրանում, վոր խոշոր գործադրուներ ծագում են նույնիսկ պակաս զիտակից բանվորների շրջանում: Այսպես, զատկից առաջ գործադրու են անում ձիաքարշի կոնցուկտորներն ու կառավարները և պահանջում կարճել բանվորական գործը, վոր մինչ այդ նրանց համար տեսում եր մոտ 19 ժամ: Բանվորները պահանջները բավարարվում են, և նրանց յերկու հերթի չեն բաժանում, ամեն հերթին սահմանելով 9-ական ժամ աշխատանք: Այնուհետև գործադրու ե բռնկվում Միբրաբեկյանի ծխախոտի խոշոր գործարանում (800 մարդ): Բանվորներն այնպիսի համերաշխություն են ցուցադրում, վոր յերկու որից հետո նրանց բոլոր պահանջները բավարարվում են: Ապրիլի 18-ին տեղական բոլոր թերթերը գրաշարները հրաժարվում են աշխատանքից, այնպես վոր հաջորդ որը վոչ մի թերթ լույս չի տեսնում, և մայիսյան տոնի գաղափարը, ալլպիսով, պրոպագանդա ար: Վում լայն հասարակության մեջ: Այդպիսի տրամադրությունը կոմիտենի մայիսյան համարակարություն և տալիս կազմակերպելու ապրիլի 27-ին մի նոր ցույց**): Այդ ցույցը նախապատրաստելու համար կոմիտեն կազմակերպում և միքանի մասսայական ժողովներ՝ 100-ից մինչ 700 մարդ գուց բաղկացած, ինչպես և բաց թողնում թերթիկներ: Ցույցից մի վարոշ ժամանակ առաջ ուղևերեն և հայերեն լեզուներով լույս և տեսավարությունը ժամանակ առաջ ուղևերեն և հայերեն լեզուներով տպված 400 գիրքը: Այնուհետև բաց և թողնվում ուղևերեն լեզուով տպված

*). «Անքա» № 37:

**). Ինչպես արդենառաջ հիշատակեց, կովկասյան Միութենական Կոմիտեի գործադրությունը մայիսյան որինակից բաղկացած ապրիլի 27-ին տեղի պիտի ունենար միաժամանակ Թիֆլիսում, Քաղաքում և Բաթումում:

որինակից մի կոչ՝ ուղղված զինվորներին ու կազմներին, վորի մեջ նրանց բացատրվում եր քաղաքական ցուցերի և ընդհանրապես բանվորական շարժման իմաստը: Զատկին բաց ե թողնվում ոռւսերեն լեզվով տպված մի թերթիկ՝ ուղղված գործազուրկներին՝ աշխատանք ճարիլու մասին նահանգապետին արած նրանց անհաջող միջնորդության առթիվ: Ցուցից առաջ տարածվում են 1) կազմակերպչական կոմիտեյի նախնական թուոցիկը՝ տպված ոռւսերեն (2900 որինակ), հայերեն (2400 որ.) և վրացերեն (1000 որինակ) լեզուներով, 2) Կովկասյան Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Միության թուոցիկը՝ նույնպես յերեք լեզուներով և 2.100-ական որինակից բաղկացած և 3) վերջապես, ցույցից մի որ առաջ բաց ե թողնվում ոռւսերեն ու հայերեն լեզուներով կոմիտեյի կոչը՝ առաջիկա ցուցին մասնակցելու համար:

Բացի այդ՝ բաց և թողնվում թուրքերին լեզվով առաջին անգամ հեկտոդրաֆով տպված 100 հատ թերթիկ, վորոնցով թուրքերը նույնպես հրավիրվում են ցուցյին մասնակցելու: Ցուցյի ժամանակ ցրելու համար կովկասյան Միությունն ուղարկել եր համապատասխան մակագրություններով պատկերներ: Ցուցյն, վոր կատարվում ե կազմակերպչական տեսակետից նախորոք մշակված ծրագրով, իր ծավալով գերազանցում ե բոլոր սպասելիքները*):

Ապրիլի 27-ի ցերեկվա ժամը 12-ին մոտ բանվորները՝ բաղկացած 300 մարդուց, կարսիր զբոշակով և «Ուռա», «Կորչի ինքնակալությունը» բացականչություններով Պարապետ հրապարակում սկսում են լերթ: Բոլոր փողոցներից լերթին միանում են գագանակներով զինված բանվորները մեծ-մեծ խմբերով ու բարձրաձայն խանդակառ կանչերով: Հաղարավոր բազմությունը Նիկոլայիսկի փողոցի սկզբին հանդիպում է գրոշակով առաջ շարժվող ցուցաբարների մի ուրիշ խմբի:

Նիկոլայևսկից փողոցում և Պետրովսկից հրապարակում ցուցաբար-ների թիվը խիստ բազմանում է, հասնելով մոտավորապես 10,000 մարդու: Ցուցաբարների այդ աճագին բազմությունը զեկվարում եր մի բանվոր: Այստեղ 6 կարմիր գրոշակ կար պարզած, իսկ ապա, ցուցաբարների ուրիշ խմբերի միանալուց հետո, ավելանում են դարձյալ 4 հատ: Բազմահազար բազմությունն ենտուքիազմի ու ցնծության բարձր աստիճանին հասնում ե Պետրովսկից հրապարակում, յերբ ընդհանուրով բարձրածայն կանչում են՝ «Կորչի ինքնակալությունը», «Կեցցեք քաղաքական ազատությունը»: Վոստիկանները և քաղաքապանները (городовои) թագնիում են, չեն յերեսում վոչ մի տեղ նաև կազակները: Միայն յերբ նահանգական այլու մոտ ցուցաբարները պատ-

*.) Բազվի կոմիտեի հաղորդագրությունը «Искра»-ի մեջ № 42:

բաստվում են ցրվելու, հայտնվում ե քաղաքապանների մի ջոկատ (ՅԵՅՈՎ) և մերկացրած սրերով փակում նրանց ճանապարհը, սկսվում են համազարկեր մեկը մըռուսի յետեից: Բազմությունը ցրվում է փողոցները, վոչվոք չի վիրավորվում, վորովհետև անգնդակ փամփուշտներ ելին կրակում: Ակավում ե սովորական ջարդ: Կազակների նագալաները, քաղաքապանների բառնցքներն ու սրերը գործում են անգամաները, վոչվոք չի վիրավորվում, վորովհետև անգնդակ փամփուշտներն առաջանաւ: Բառում են մի գրոշակակրի, վորին վոչ մի կերպ չեն կախնայորեն: Բոնում են մի գրոշակակրի, վորին վոչ մի կերպ չեն կախնայորեն: Բառում են մի գրոշակակրի, վորին վոչ մի կերպ չեն կախնայորեն: Երբ նրա ձեռքին միքանի վերք են հասցը նում: Սրերով վիրավորում են 12 մարդու և ձերբակալում միքանի տասնյակ հոգի:

Կովկասի կառավարչապետ Գալիցինից հրաման և ստացվում էլ-
լինայի ցույցին մասնակցողներին և կրակել նրանց վրա: Նախորդ
դարան և կազմակերպվում, բայց այդ չի հաջողվում, և բազմահա-
զար սագմությունը կոտրութիւն փրկվում է:

դիվիստ), Աբբահամ Եյլենբերգին (սեցիոն.), Դրողդովսկուն (հաիկին աքսորական): Կազմակերպությունը շատ չի տուժում: Զերբակալմած-ները մեծ մասամբ հանդիսատեսներից են լինում: Նահանգապետի վորոշմամբ նրանք բանտարկության են դատապարավում 3 շաբաթից մինչև 3 ամիս ժամկետով: Բազվի կոմիտեյի հաղորդագրության համաձայն բանտում այդ ժամանակ ընդհանուր թվով նստում են 95 մարդ*):

Յուլյան ամբողջ քաղաքում խիստ հուզմունք և առաջացնում: Մայիսի 1-ին ընդհանուր գործադուլ եր սպասվում: Ամբողջ քաղաքում ֆանտաստիկական զրույցներ ու լուրեր ելին պտտում: Առանձնապես հուման լուրեր ելին պտտում նախապատրաստվող ջարդերի մասին, հրեաներն սպասում են, վոր կրկնվեն Քիշների դեպքերը, իսկ հայերը՝ հայկական ջարդը: Այդ տեսակի լուրերը վոստիկանությունն եր բաց թողնում ե, ինչպես հետաքա տարիները ցուց տվին, դրանք ամենեին ֆանտաստիկական բնույթ չելին կրում: Հեղափոխական շարժման ցուրաքանչյուր վերելքի ժամանակ սուսական ինքնակալ կառավարությունն իր մանր ու խոշոր գործակալների միջոցով ջարդեր եր կազմակերպում հեղափոխությունը ճնշելու համար: Հետագայում ջարդի քաղաքականությունը սիստեմ և դառնում: ցարական կառավարությունն իր համար գրանից ել լավ զենք չեր կարող հնարել: Բազվի հասարակությունն սպասում եր, վոր մտվիստան ցուցի որն ազգային կոսորած կլինի**):

Մայիսի 1-ի համար կազմակերպչական կոմիտեն հայերեն և ոռումերեն լեզուներով բաց ե թողնում մայիսիան յերկրորդ թերթիկը 3000 որինակից բաղկացած: Հիբավի մայիսի 1-ին գործադուլն սքանչելի դուրս յեկավ: Այդ որը գործադուլ են անում վոչ միայն քաղաքի զավոդներն ու արհեստանոցները, այլ և Սև ու Սպիտակ քաղաքներում, Բայիլովի, Բիբի-Ելբաթի, Բալահիանու և ուրիշ նավթահանքերում: Աշխատում են միայն գետինը ծակող բանվորները (նյորությունը), վորոնք բացառապես թուրքեր են: Վերջին ցուց այնքան եր ահարեկել գործատերերին, վոր նրանք ընդդիմազրություն չեն ցուց տալիս: Մայիսի 1-ին քաղաքն անսովոր մի տեսք ե ունենում: Վոստիկանությունն ու զորքը պատրաստ սպասում են, կրպակների ու

*) «Խէքրա» № 40.

**) Զարդի նպատակով Բազվի նահանգապետի պաշտոնում իզուր չեր նշանակած հրեշ նակաշիձեն, հայ-թուրքական ազգային ստոր կրքերի ամենաականափոր բորբոքողը: Յեկ յեթե այդ տարի Բազվում ջարդ չեղավ, ապա գրա փոխարեն կազմակերպից այն 1905 թվի սկզբին, նակաշիձեն նահանգապետ նշանակվելուց հետո, իսկ այնուհետեւ ջարդերը կրկնվում են համարյա Անդրկովկասի հայարնակ բորբոքում, վորի մասին մանրամասն կիսունք այս գրքի II ժամանակ:

խանութների մեծ մասը փակ ե: Փողոցներում յերեսում են տոնական զգիստներ հագած շատ բանվորներ, բոլորն ել զարմանալի կերպով վայելուչ ու ծանրաբարու: Մայիսիան տօնը բանվորները կատարում են քաղաքից գուրս: Մթնոլորտը քաղաքում ինչ-վոր մի առանձին տեսակի լինում, նույնիսկ բանկերում, բորսայում և զրասենյակներում այլիս չեն լսվում նավթ, սպորտի խոսքերը, զրանց փոխարեն հնչում են՝ ցուցի, թոռոցիկ, Քիշնե և այն: Ամենքն ել խոսում են, թե ալդպի ինչպես լերկար տեսել չի կարող: «Մենք հեղափոխության նախորդակին ենք ապրում», այս խոսքերը կարելի յե լսել այժմ բուրժուազիալիքերանից: Զանազան գորոցների աշակերտները նույնպես հավերժացնում են այդ որը և պարապմունքի չեն գնում*):

* *

Բանվորական շարժումը Բաթումում սկսվում ե Բազվինի հետ հոմարիա միաժամանակ: Բաթումի բանվորներն իրենց զրութան նկատմամբ զիտակցական վերաբերմունքի առաջին նշանները 1901 թվի վերջից արդեն յերեան են բերում: Սոցիալ-դեմոկրատական աշխատանքը, պրոպագանդան ու ազիտացիան անքան հաջող ու արդունավետ կերպով և տարգում, վոր Բաթումի պրոլետարիատը 1902 թվի սկզբին արդեն կովի յե յելնում թե շահագործող կապիտալիստների և թե ցարական կառավարության դեմ: Բանվորության դասակարգակցության համար համարական զարգացման գիտակցության բարձրացմանը նպաստում են վրացի (առավելապես զուրիխացիք ու իմերեթցիք) զիտակից բանվորների հաճախական տեղափոխությունները (գործադուլների պատճառով հեռացվելու թիֆլիսից ծննդավար՝ Քութայիսի նահանգն աքսորվելու հետեանքով) ու Բաթումի հետ ունեցած հարաբերությունները, ինչպես և նրանց ակտիվ մասնակցությունը տեղական աշխատանքի մեջ բանվորներին կազմակերպելու և համախմբելու համար:

Բազվի նավթարդունաբերությունը կենանություն ե տալիս այդ գեղեցիկ նավահանգստային քաղաքին: Մի 10—15 տարվա ընթացքում նա արտգ կերպով աճում ե: Նկարագրված շրջանում Բաթումն ունենում ե յերկու տասնյակից ավել զավոդներ, ինչպես նավթալին, վորտեղ նավթն արկղների մեջ ելին աճում արտասահման արտահանելու համար, այնպես և թիթեղե-գողիչ զավոդներ արկղների մեջ ելին աճում արտասահման պատրաստելու համար:

Միաժամանակ պատճառներն առաջացնում են միատեսակ հետեանքներ, այս կամ այն ձեռքով: Ինչպես կովկասի մյուս վարերում, այնպես և Բաթումում գոյություն ունեցին բանվորների շահագործուան

*) «Խէքրա» № 41 և Բազվի կոմիտեյի հաղորդագրությունը, ապրված «Խէքրա»-ի № 42-ի մեջ:

Նույն կոպիտ ձևերը, արտադրության մեջ լիակատար կամացականությունն ու խառնաշփոթությունը և դաժան վերաբերմունքը դեպի բանվորությունը:

Մոայլ գուշներով և նկարագրում բանվորների դրությունը «Աչքրա»-ի (№ 16) Բաթումի թղթակիցը, վորը վերջացնում է իր նամակը հետեւյալ խոսքերով. «Այսաեղ աշխատավարձը վերջին տարիներս խիստ նվազել եւ Տասը տարի առաջ Ռոտշիլդի զավողում 4000 մարդ եր աշխատում*): Բանվորներն որական ստանում են ին 2—3 ռուբլի։ Իսկ հիմա, մեխանիզմների բարելավումից հետո, սիենուցն աշխատանքը, նույնիսկ մեծ չափերով, կատարում են 1500 մարդ։ Այս տասը տարվա ընթացքում 2.500 մարդ փողոց են նետվել, իսկ աշխատավարձն իջել ե որական մինչ 60 կոպեկի։ Հիմա մենք հացի ու ջրի փող ենք սիայն վաստակում, վորպեսզի քաղցից չմեռնենք, վորպեսզի ի վիճակի լինենք հարստություն ստեղծելու վոչ թե մեզ համար, այլ ուրիշների... Ծանր ե այսպես ապրելը, և ակամաչից հարց ե առաջ գալիս, թե՝ ինչո՞ւ յենք մենք այսպես տանջվում։ Մեր կյանքը զուրկ ե ամեն տեսակի ուրախություննից, մեր կյանքը միայն մի անհատնում ուղի յե գեպի գերեզմանը։ Ուրեմն ավելի լավ չե լինի արդյոք, վոր մենք մեռնենք վոչ թե դապդյաների յետեռում և վոչ ել վորպես ստրուկներ, այլ մեռնենք կովելով աղատության, լավ ապագայի համար...»:

Այս, կովել ու մեռել լավ ապագայի ու ազատության համար...
Այս բանի մեջ Բաթումի բանվորները յետ չեն մնում մյուս բանվորներից:

1901 թվի հուլիսի 23-ին գործադուլ են անում Գուրսկու տպացանի բանվորները, վարտեղ տպվում եր հետազիմական «Կերոմօրչկի Վետհիք» թերթը: Պահանջում են աշխատավարձի հավելում և բանվորական ժամանակի կանոնավոր բաշխում: Միջամտում ե վոստիկանությունը, վորն սկզբում հորդորում ե բանվորներին աշխատանքի անցնել, իսկ ապա սկսում ձերբակալել նրանց: Բանվորներից միքանիսն, իրենց անդիտակից ու հետամնաց լինելու պատճառով, դավաճանում են ընդհանուր գործին: Գործադուլը տանուլ են տալիս, և գործադուլավորներից միքանիսը հեռացվում են գործից: Այս գործադուլն առաջին փորձն ե լինում, վորից հետո բաթումի բանվորներն որինակելի համերաշխություն են լերկան բերում բանվորական շարժման բոլոր արարահայտությունների մեջ^{**}):

1902 թվի փետրվարին մի շաբաթ գործադուլներ են սկսվում Մանթաշյանի, Ռոտշիլդի, Հակոբյանի և ուրիշների զավողներում։ Պահանջ-

*) Արտապրությունից և բանվորների թվի կրծմից սմբենամեծ զավորները Քաթոլիկում այդ ժամանակի Ռուսականից ու Մանթաշյանի զավորներն ենին:

**) «Радио» № 1-:

Ներ են ներկայացնում՝ բարելավել աշխատանքի պայմանները, վերաց-
նել տուփանքները, կարճել բանվորական ժամանակը, ծառայության
բնգույնել հեռացված լնկերներին և այլն:

Նույն թվի մարտի 9-ին Բաթումում կատարվում ե ստրափելի մի բան, վոր կովկասյան բանվորական հեղափոխական շարժման պատմության մեջ մինչ այդ տեղի չեր ունեցած Յարական կառավորության տեղական ներկայացուցիչների կատարած կոտորածը բանվոր դասակարգի պատմության մեջ ընդունված կմնա վորպես անձննելի խաչտառակ մի բիծ նրա թշնամիների համար: Ահա թե ինչպիսի հանգամանքներում ե տեղի ունենում այդ կոտորածը:

Բանվորների մեջ հուզումներն ու խմբումներն սկսվում են ամենից առաջ Մանթաշյանի զավոդում:

Հունվարի 31-ի առավոտյան ժամը 8-ին հիշյալ զափողի բանագործները (մոտ 400 մարդ) բանթող են լինում նրա համար, վոր զափողի կառավարիչ Տեր-Հակոբյանը մի բանվորի հաշիվը տալիս հետացնում ե, վորովհետև վերջինս աշխատանքի ժամանակ խոսելիս ե յեղել ընկերների հետ: Բանվորները համոզված են լինում, վոր զբանից հետո նրանցից յուրաքանչյուրին, ամեն որ կարող են հաջիվը տալ ու հեռացնել Զոռբա (Կոլա) կառավարիչը ողնության ե կանչում վոստիկանությունը: Վոստիկանությունը կործի լե զնում բառնցքն ու նագալիան և ձերբակալում ե 112 մարդու: Զնայած սրան, բանվորները մնում են հաստատուն իրենց խոսքին: Նրանց վրա չեն ազդում վոչ սպառնալիքները, վոչ քաղցր խոստումները և վոչ ել կարիքը, վոր միշտ պահպան են: Նրանք հայտարարում են, վոր աշխատանքի չեն նրանք քաշում են: Նրանք հայտարարում են, վոր աշխատանքի չեն գնացած, մինչեւ վոր չաղատեն իրենց ընկերներին: Միշտ պահպան անց վոստիկանությունը մի ամբողջ խումբ բանվորների աքսորում ե զնութերը: Բայց բանվորները յերկրորդ որոն սեթ բաթում են վերադառնում և կրկին պահանջում անմիջապես աղատել իրենց ընկերներին:

Մանթաշանն ինքը (զավորի տերը), գործադուլից մհծ վնասներ կլրելով, վճռում և միջնորդել ազատելու ձերբակալվածներին։ Բայց վոստիկանությունը համառում է, ասելով, վոր այդպիսի գեղքում չպետք է խնդրելին նրանց ձերբակալել։ Գործարանային տեսչի գալուստից հետո, փետրվարի 17-ին ազատում են բոլոր ձերբակալվածներին, բացի լերկուսից։ Փետրվարի 18-ին բանվորներն սկսում են աշխատել (ընդունում են բոլորին), վորովհետև նրանց պահանջները բավարարում են։ ճաշի ընդմիջումը մի ժամից ավելացնում են մեկ ու կես ժամի, կառավարիչ Տեր-Հակոբյանին ու բանվորների համար միասակար մյուս վարպետաներին, բանվորների պահանջով, հեռացնում

ևն, բացի այդ՝ խոստանում են ազատել մնացած 2 բանվորին և լրիվ վճարում են այն ամբողջ ժամանակի համար, վոր բանվորները չեն աշխատել, այն եւ հունվարի 31-ից մինչև փետրվարի 18-ը:

Այդ ժամանակ Ռոտշիլդի մի ուրիշ զավողում բանվորներն իմաստում են, վոր այդ զավողի վիրատեսուչ (նորագույն) Վանշտեյնը կարգադրել եւ հաշիվը տալ ու հեռացնել հին բանվորներին (մոտ 420 մարդ)*), նրա կարծիքով, վորպես անրարինուս անձանց:

Այդ ժամանակ փետրվարի 28-ին այդ զավողի բոլոր բանվորները (մոտ 500), բացի զավողի փայտի պահեստի բանվորներից, վորոնք տաճիկներ եյին, գործադուլ են անում: Մարտի 2 ին բանվորները հարկադրում են մեքենավարներին, հնոցավաններին (կոչեգար) ու ելեկտրական բաժնի բանվորներին բանթող անել և դրանով կանգնեցնում են պահեստներից կերոսինն արտասահման փոխադրող նավթատար նավերի մեջ լցնելու գործը: Ամսի 4-5-ին բանվորները հարկադրում են զաղարեցնել աշխատանքը նյութեղենի պահեստում, ուրացխատում եյին թլութերը: Ամսի 6-ին զինվորական նահանգապետը բացատրության համար կանչում եւ բանվորներին: Նա լսում է բանվորներին և զինվորական յիշանակով կարգադրում: «Յեթե վաղաաշխատանքի չգնաք, ապա ձեռք կառնեմ իսկամ միջոցներ»: Բանվորներն, իհարկե, աշխատանքի չեն գնում, այն ժամանակ ամսի 7 8-ին ձերբակալում ու բանա են նստեցնում 32 մարդու: Զավ գը պահպանելու համար գալիս և վոստիկանությունը, վորին տեղավորում են պահեստներում ու գրասենյակներում: Ամսի 8-ին բանվորները, թվով մոտ 600 մարդ, հավաքվում են և ցերեկվա ժամը 1-ին հեղափոխական լիրկեր յերգելով քաղաքի գլխավոր փողոցներով գնում են գեղի բանաւոր նստած եյին բանտարկված ընկերությունը: Ճանապարհին նրանց միանում են հասարակությունից շատերը: Բանտին հասնելով, նրանք պահանջում են ազատել բոլոր բանտարկյաներին, կամ, հակառակ դեպքում, բանտարկել նաև իրենց: Վոստիկանությունը փորձում երազությունը ցրել, բայց անհաջող և անցնում: Ըստհարման ժամանակ մի բանվոր վիրապուրվում ե: Յերբ վոստիկանությունը համոզվում է, վոր ուժ դործադրելով վոչինչ չի կարելի անել, դիմում ե խորա ժանկության, բանտարկյաներին ազատում են և բանվորներին սկսում են ինդիքել վոր նրանք տուն վերադառնան, բայց վոչ թե քաղաքով, այլ բանտի աքսորական բաժնի բակով: Բանվորները միամտարար հավատում են նրանց և գնում են մատնանշած ուղղությամբ, իսկ այնտեղ դարձանակալած նրանց սպասում ելին յերկու վաշտ զինվոր,

*) Պատասխանատվության կանչված 21 բանվորի մեղադրական ակտի մեջ ստում ե 389 մարդ:

վորոնք հարձակվելով բանվորների վրա, քշում են նրանց կազարմաների մեջ. բանվորները վոչ մի ընդդիմադրություն ցույց չեն տալիս: Մյուս որը դեպի բանտի աքսորական բաժինը գնում ե բանվորների մի բազմություն՝ մոտ 400 մարդուց բաղկացած: Ճանապարհին նրանց խառնվում են քաղաքային հասարակությունից շատ մարդիկ:

Յերբ բազմությունը հասնում ե աքսորական բաժնի շենքին, տեղի յի ունենում ընդհարում զինվորների հետ: Բազմությունը, վոր մինչ հոգու խորքը վրդովված եր իր ընկերների վերաբերմամբ կատարած արարմունքից, զինվորների վրա քարեր ու ցեխ և նետում: Այն ժամանակ զինվորները, ըստ հրամանի, համազարկ են բացում անզեն բազմության վրա: Բազմությունը ցրվում ե, բայց գետնին ընկած մնում են մի սպանված բանվոր և 19 վիրավոր: Վերջիններից շուտով մենանում են դարձյալ 9 հոգի*): Ծանր են վիրավորված լինում,— ուղղակի փորից: Թիֆլիսից պահանջում են 4 վաշտ հետիոտն, 2 հարյուրական կազակներ և յերկու հարյուրյակ պահանորդներ (տրաջնիկ— չափարի): Զավոդը պահանջում են զինվորները: Այս բոլորից հետո զավոդը պահանջում են զինվորները: Այս բոլորից հետո բանվորները դադարեցնում են աշխատանքը քաղաքի բոլոր զավոդներում, թե Ռուսաստանի ընկերություններում: Նըներում, թե Ռուսաստանի ըրինակին հետեւում են «գրոգաչինները» և մյուս կառապանակերը**):

Զնայած այն բանին, վոր մարդասպանների տեղական շայկան, ցարական կառավարության տեղական ներկայացուցիչներն իրենց սուցանական կառավարակային տակտիկային գիմելով բարդություններ ելին վորական ավազակային տակտիկային կոտորածը սարքել այնուամենանիվ առաջացրել և այդ սարսափելի կոտորածը սարքել այնուամենանիվ մեղավորը կրկին բանվորներն են համարվում, նրանք դեռ մի բան ել մեղավորը կրկին բանվորներն են համարվում, այնպես վոր կոտորածից հետո նրանց դատական պարտք են մնում, այնպես վոր կոտորածից հետո նրանց դատական պատճեն կանչում***): Մարդասպանը պատասխանատվության են կանչում***): Այս բանվորները մեղադրական ինքնակալության արդարադատությունը: Այս գործի մեղադրական ակտը հաստատում ե վերը բոլոր սասաները, բայց անհետաքրքրական չեն միքանի մանրամասնությունները.

«Բաթումում անկարգություններին վորակես առիթ—ասկած ե ակտի մեջ—ծառայում ե փետրվարի 26-ին Ռոտշիլդի զավոդից 389 բանվորի արձակումը: Բանվորների այլչափ նշանակալից մասի արձա-

*) Մեղադրական ակտի մեջ հիշվում են 14 սպանված և շատ վիրավորներ: Հետո սպարզվում ե, վոր վիրավորվածների թիվը 40-ից ավել եր:

**) «Իսկրա» № 20.

***) Կոտորածից հետո դատական պատասխանատվության են կանչում 21 բանվոր—սպանվածների ընկերները:

կումը բացատրվում է նրանով, վոր «թիթեղե արկդներով կերոսինի պահանջը նվազում ե»: Փետրվարի 27-ին զավոդի բոլոր բանվորները բանթող են անում: «Նրանք պահանջում են, վորակեսդի վոչփոքի չարձակեն, իսկ յեթե աշխատանքն ամենքին չի բավականացնի, ապա զավոդը թող կարգի նրանց հերթական փոխարինախումը (Ըմեհա), ընդումին նրանք, վորոնք աշխատանք կունենան, ստանան լրիվ բանվորական վարձ, իսկ առանց աշխատանք մնացած հերթից դուրս աշխատողներն ստանան այդ վարձի կեսը»: Բաթում ժամանած Քութաշխի զիսի զինվորական նահանգապետը, ժողովելով գործադուլավորներին, սպառնում և բոլորին, վոր յեթե աշխատանքի չգնան, ետապով ծննդավայր կուղարկի, և յերբ հորդորանքները հետևանքի չեն հասնում, վաստիկանությունը, «Խոտշիլդի զավոդի վարչության ցուցմունքով», մարտի լույս 8-ի գիշերը ձերբակալում և 32 բանվորի ետապով ուղարկելու համար: Մարտի 8-ին 400-ի չափ մարդ ներկայանում և փոստիկանական վարչության և պահանջում «ազատել բանված ընկերներին»: Վոստիկանական վարչությունից բազմությունն ուղևորվում և դեպի բանտի շենքը, ուր նրա հետքից ժամանած գինվորական նահանգապետի ոգնական զնդապետ Դրյագինը կանչում և կովկասյան Շ-րդ հրացանաձիգ գումարտակի մի վաշտը: Բազմությունը պահանջում եր կամ բաց թողնել ձերբակալվածներին, կամ թե ձերբակալել իրենց բոլորին: Գնդապետը կատարում է այս վերջինը և, ձերբակալելով 348 մարդու, առաջուց բանտարկված 32 հոգու հետ միասին տանում և բոլորին աքսորյաների բանտը: Հաջորդ առավոտյան, մարտի 9-ի «իններորդ ժամին, կանոնավոր շարքեր կազմած մոտենում և բանտի աքսորյաների բաժնին բանվորների ահազին մի բազմություն՝ առաջնորդների գլխավորությամբ՝ յերգերով, ազմուկով և սուլով: Բազմության գլուխը կանգնած բանվորներ Միք. Խրիմյանը և Թեոֆիլ Դոգորիներին բազմության անունից ընդառաջ դուրս յելած գնդապետ Դրյագինին, հայտնում են միենուն պահանջները՝ կամ ազատել բանտարկաներին կամ ձերբակալել իրենց բոլորին: Այս անգամ գնդապետը պատասխանում է ցրվելու հրաժան տալով: Վորովհետև բազմությունը հրաժարվում է կատարել այս հրամանը, Դրյագինն այնտեղ կանգնած բերդային գումարտակի գորամասին ոգնական ուժ տալու համար կանչում ե կովկասյան Շ-րդ հրացանաձիգ գումարտակի մի վաշտը: Ցերք զինվորները փորձում են հրապարակը բանվորներից մաքրել, վերջիններս պատասխանում են քարերի տարափով: «Բանագործում եին զինվորներից խլել վենքերը, և լսելի եին այս գործը բացականչություններ՝ խփի նրանց, վերցրու զենքը, նրանք չեն կարող կրակել»: Հրապարակում յեղած բանվորներին միանում են աքսորյաների բաժնում բանտարկվածները, վորոնք այնտեղից քարեր

ելին նետում և իվերջո դուրս պրծնում բանտի բակից: Վերջը զորքերն սկսում են կրակել և սպանում են 14 բանվորի և վիրավորում շատերին: Բազմության մեջ բանված և վոստիկանների ցուցմունքով ավելի ուշ ձերբակալված բանվորները՝ թվով 21 հոգի, մեղագրվում են տեղական վարչական իշխանությանը բացահայտ ընդդիմագրություն ցույց տալու մեջ՝ նպատակ ունենալով հարկադրել նրան ազատելու կալանավոր բանվորներին, ընդումին Գոգորերիձեն (26 տարեկան) և Խրիմյանը (31 տարեկան) «գեկավարում ելին բազմության գործողությունները», այսինքն մեղագրվում են պատժական որենսգրքի 13-րդ մասի 294 և 1-ին մասի 266-րդ հոդվածների հիման վրա»:

Բաթումի սոցիալ-գեմոկրատներն ամեն հնարավոր բանը անուժ են, վորպեսզի չեզոքացնեն բանվոր դասակարգին կառավարության հասցրած ոեպրեսիաների ու հարվածների հետևանքները և նպաստեն, բանավոր ու գրավոր ազիտացիայով, նրա դասակարգային գիտակցության ու հեղափոխության վոգու բարձրացմանը: Գործադուրացին շարժումը և հուզումները կոտորածից հետո դարձյալ չեն դադարում:

Նույն թվի գեկտեմբերին մեծ գործադուր և տեղի ունենում մոտաշիլդի արտադրական ձեռնարկությունների մեջ: Գործադուր են անուժ 1500 հոգի: Նրանք պահանջում են վերադարձնել տուգանքների փողերը, վոր, ինչպես ասում ելին, կուտակվել ու ահազին գումար են կազմել, և պարզեատրել ծննդավան տոնի առթիվ ամսական աշխատավարձի չափով: Տասն որվա գործադուրից հետո բոլոր բանվորներին արձակում են, իսկ այդ ժամանակաշնթացքում գրասենյակը պահպանելու համար կանգնեցնում են զինվորներ: Մոտշիլդի փիրմալի վարչությունը վճռում է բանվորների նոր կազմ վարձել և հին արձակված բանվորներից վոչ մեկին ցիտ չընդունել:

Զեւնարկուների և կառավարության հալածանքները բանվորներին ավելի ու ավելի հուսահատական կովի յեն հոնդում: Խշխանությունները նրանց չեն խնայում: Նման գրությունն առաջացնում է զինված ընդդիմագրության անհրաժեշտությունը: Հենց այս փոթորկալից ժամանակ ե, վոր Բաթումի ընկերները Պետերբուրգի կոմիտեին հալածնի հարցումն են անուժ, թե «Նրանք, բանվորները, բացահայտ կոիմների ժամանակ պաշտպանողական գործի մեջ արդյոք չպիտի գործածության դնեն հրաժիգ զենքեր, դանակներ ու դաշույններ», վորի պատասխանն ընթերցողը կգտնի «Խօրա»-ի № 23-ի մեջ (1902 թ.) (տես հավելված № 2):

Բանվորների այդ տրամադրությունը վառ կերպով արտահայտվում է 1903 թվի մարտի 9-ին, մարտի գեկտերի տարեկարձի որը, չերք նրանք սարքում են հիտոքանչ մի ցույց: «Բանվորների ահազին

մասը զինված էր, և նախատեսվում էր նրանց կողմից կատաղի ընդդիմադրություն։ Չորս պարզած դրոշակներով բանվորները պտտում են ամբողջ քաղաքը յերգելով ու բացականչելով «Կեցյե քաղաքական ազատությունը», ճանապարհին թռուցիկներ են ցրում և ատրճանակներ կրակում, փշրում են տեղական մարդաբաց թերթի՝ «Վերհոմորսկի Վետհիկ»-ի խմբագրության ապակիները։

Հետո 3000 մարդուց ավելի բանվորներն ուղերձում են դեպի կայարան։ Յուլից գուգաղիպում և 21 բանվորի դատավարության վախճանին։ Շնորհիվ փայլուն պաշտպանության; Նրանց վերաբերմամբ դատարանը մարտի 8-ին համարյա արդարացման դատավճիռ և հանում։ Յեվ ահա բանվորները կանգնեցնում են շարժվող գնացքը վրովի գնումունքին շրջանային դատարանի վողջ կազմը և բանվորների պաշտպաններից յերկում։ Պաշտպաններին սրտառուչ մեծարանք են սարքում։ Գնացքը կանգնում է 7 րոպե։ Իշխանություններն իրենց վերջնականակես կորցնում են։ Վոստիկանությունը և զորքը վազում են բազմության յետեց, բայց վոչինչ չեն կարողանում անել։ Նրանք չեն համաձայնվում կտրուկ միջոցների գիմել, վորովհետեւ ցուցաբարները զինված են լինում։ Յեվ տոնելով իրենց հաղթանակը գլուխը կորցրած իշխանությունների դեմ, բանվորները, իվերջո, փաթաթում են գրոշակները և խաղաղությամբ ցրվում*）։

Հունիս ամսին Բաթումում կենրա ազգանունով պրովոկատորն սպանում ե մի գիտակից բանվորի՝ Լոմագտարիային։ Թաղմանը՝ շչակից հետո՝ մեծ քանակությամբ ժողովուրդ և հավաքվում (3000 մարդ), ուղում են դին գլխավոր փողոցներով տանեն, բայց Մանթաշչանի զավոդի մոտ, վոստիկանության կողմից արգելքի հանդիպելով, ուղեղվորվում են ուղղակի յերեղմանատուն։ Այսուեղ միքանի քաղաքական ճառքեր են ասում։ Հուղարկագորությանը մասնակցողները վերադառնում են յերեք լեզվով մարսելող յերգելով (վրացերեն, հայերեն և ռուսերեն)։

Վոստիկանությունը չեր աշխատում հետապնդել մարդասպանին, բայց բանվորներն իրենք յերեմն դաժանորեն պատժում եյին պլուզոկատորներին։ Հենց այդ ժամանակ Բաթումի մոտակա կայարաններից մեկում սպանվում ե պրովոկատորը։

* *

Բանվորական շարժումը, վոր ընդդրկում և Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները, իր ազգեցությունն ե գործում նույնական մանր նահանգական քաղաքների վրա, ինչպիսին

Քութայիսն ե, և գավառական քաղաքների, ինչպիսին են Գորին, Սղնախը, Թելավը (Թիֆլիսի նահանգ) և այլն։ Այս քաղաքների առանձնահատուկ զիծը մանր տնայնագործական արտադրությունն ե։

Քութայիսում խոշոր ձեռնարկությունները հանգիսանում են Փիրալովի ծխախոտի գործարանը (միքանի տասնյակ բանվորներ) և ուկան Տոլգեյմ Փիրմայի բարիատաղացը (նույն քանակի բանվորներ)։ Տնացած մանր մեքենաչական արհեստանոցներում, միքանի տպարաններում և Լագիձեկի արհեստական հանքաջրերի զավոդում աշխատում են ամեն մեկում միքանի բանվորներ։ Դրա փոխարեն կան շատ զանազան արհեստավորներ, ասիական կոշկակարային և գերձակային արհեստանոցներ, վորոնց մեջ աշխատում են քարգյահները կամ աշկերտները։

Քութայիսում սոցիալ-դեմոկրատական գործունելությունն սկսվում է 1901 թվից։ «Մինչև 1900 թիվը բանվորական շարժման նըշաններ չկային։ Բայց Թիֆլիսի յերկաթուղարկին բանվորների մեծ գործադուլից հետո Քութայիս են ընկնում, վորպես աքսորավայր, ինտելիգենտներից ու գիտակից բանվորներից վումանք։ Քութայիսի բանվորներն իրենց գասակարգային ինքնագիտակցության արթնացումը պարտական են հենց այդ բանվորներին ու ինտելիգենտներին։

Առաջին գործադուլը Քութայիսում լինում է 1901 թվին Փիրալովի ծխախոտի գործարանում։ Բանվորները պահանջներ են ներկայացնում՝ կարձել բանվորական որը, ավելացնել գնահատականները, վերացնել տուգանքները և յենթարկվել գործարանային հսկողության։ Գործարանատերն ընդգիմադրում է։ Բանթող մնում են յերկու շաբաթ։ Միջամտում է մարչական իշխանությունը, և վերջը այդ պահանջները բավարարում են, բայց դրա հետ միասին միքանի բանվորների (մինչ 20 հոգի) ծառայության յետ չեն ընդունում։ Բանվորները ժողով են գումարում և այդուեղ հաշիվ ստացած հեռացված բանվորները պետքում են, վորպեսզի ծառայության ընդունված բանվորները, վոր հրաժարվում ելին աշխատանքից, գործի անցնեն։ Գործադուլի ժամանակ ձերբակալվում են միքանի մարդ։ Գործադուլ են անում նիկոլայի ինջիալի մեքենաչական արհեստանոցի աշկերտները, ինչպես և Վացաձեյի մեքենաչական արհեստանոցի աշկերտները սոցիալ-դեմոկրատական խմբակի զեկավարությամբ։ Գործադուլը տևում է մի շաբաթ, պահանջներից միքանիսը բավարարվում են։ Դեկտեմբերին գործադուլ է լինում նույնպես բարիտաղացում, բայց անհաջող յելք ե ունենում։ «Այդ գործադուլների հետևանքն այն եր լինում, վոր բանվորների գասակարգային շահերի զիտակցությունն ավելի հասունանում եր, իսկ ընդհանուր առմամբ, բանվորների դրությունը վերջին յերկու տարվա ընթացքում գործադուլների շնորհիվ նշանակալից

կերպով բավարարվել է, գործադուների, վոր հաջողվում և առաջացնել սոց-դեմ. գաղափարների ուժեղ պրոպագանդալի շնորհիվ»*):

1903 թվին, Կովկասում ու Խուսաստանում կատարվող մասսա-յական գործադուների, քաղաքական ցուցերի և հողագին հուզումների աղդեցության տակ ուժեղանում և քաղաքական ու սոցիալիստական գաղափարների տարածման գործը:

«Դուք քեզ պատկերացնել չես կարող, թե այժմ ինչ և կատարվում կովկասում, — գրում ե «Խորա»-ի № 40-ի մեջ տպված մասնավոր նա-մակի հեղինակը... Բոլորը մայիսի 1-ի համար են պատրաստվում, ասում են, վոր «բունտ» և լինելու: Այդ մասին առանձնապես խոսում են չինովսիկներն ու ամենից շոտ նրանց կանայք: Նրանք կարծում են, թե ուզում են ծեծել չինովսիկներին ու հարուստներին: Այսպիսի յեղակացությունը նրանք հանում են այն թոռւցիկների հիման վրա, վոր քաղաքի ատենական վայրերում զանազան մարդիկ ցրիվ են տալիս: Չինովսիկների վախկոտ յերեակայությունը նկարում և այն-պիսի բաներ, վոր ցուցաբարները յերազում անդամ յերբեք տեսած չեն: Ասում են, վոր մայիսի 1-ին կովկասի բոլոր խոշոր կենտրոն-ներում մեծ մանիֆեստացիաներ պիտի լինեն: Ապրիլի 18-ին կուլաշի գյուղում (Քութայիսի նահանգ) տեղի է ունեցել մանիֆեստացիա ու ընդհարում վաստիկանության հետ: Գուրիայում գյուղացիք ազնվա-կանության հողերից մի թիզ կտորի անգամ գեռն անոք չեն տվել իրենց հողն են միայն մշակում: Նահանգապետը մեկնեց գյուղացի-ներին համոզելու, բայց բան գուրս չեկավ: Յերեխաներն արդին փո-ղոցում «բունտ» են խաղում: Ընդհանրապես մենք արագորեն հառաջ ենք շարժվում»:

Քութայիսում գործող սոցիալ-դեմոկրատական խմբակը, ոգտվե-լով ազգաբնակության զանազան խավերի տրամադրությունից, ավելի ու ավելի ընդլայնում և ազիտացիան ու պրոպագանդան. նա տարածում է անեղակալ գրականություն, թերթիկներ ու թոռւցիկներ: Քութայիս-ցիների վրա ել ավելի ուժեղ ազդեցություն և գործում ապրիլի 13-ին կուլաշի գյուղում տեղի ունեցած գյուղացիական ցուցը, վորին մաս-նակցում են մոտ 300 մարդ հեղափոխական յերգիր յերգելով ու կար-միր գրոշակով.

Իշխանությունը շփոթվում է, վրաքի է հանում իր բոլոր լրտես-ներին ու վոստիկաններին:

Քութայիսի բանվորները, ցանկանալով յետ չմնալ իրենց ոռւսա-կան ու կովկասյան ընկերներից, վճռում են ապրիլի 20-ին կատարել մայիսյան տոնը: Սոցիալ-դեմոկրատական խմբակը տարածում է Կալ-

կասյան Միության, Թիֆլիսի ու Բաթումի կոմիտեների թռուցիկները: «Կարմիր գրոշակներով ու վրացերեն լեզվով հեղափոխական յերգե-լութելով՝ Քութայիսի բանվորներն առաջին անգամ տօնեցին պրոլե-տարիատի մեծ տոնը»: Բնակիչները վախից թագնվում են. քաղաքում լիակատար լուռթյուն և տիրում: Տոնի առթիվ այդ որը դպրոցական աշակերտությունը գործադուլ և անում: Պարապմունքներ չեն լինում արական ու իգական գիմնազիոններում չինովսիկների ու պրովոկատոր-ների յերեակալության ստեղծած սպասելիք «սարսափելի բունան» անցնում և շատ խաղաղ կերպով:

Մայիսի 2-ին գործադուլ են անում զյուղատնտեսական գոլրոցի աշակերտները, և նրանց պահանջներն անմիջապես բավարարվում են:

Հարկավոր և նշել, վոր այն քաղաքներում, ուր գերակշռում է մանր արտադրությունը և թույլ և բանվորական շարժումը, դպրոցա-կան աշակերտությունը (սեմինարիստները, կյասսիկ ու ուսաւական գիմնազիոնների, զյուղատնտեսական, տիբնիկական և այլ դպրոցների բարձր գասարանների աշակերտներն ու աշակերտունիները), լինելով բյությամբ նրբազգաց ու արձագանգող հեղափոխական գաղափար-ների ազգեցության տակ հարում և շարժմանը և մասնակցելով հենց առաջին քայլերից և թիզ թույլ սաղմային բանվորական շարժմա-նը, նշանակալից չափով նպաստում և վերջնիս զարգացման գործին: Ինչպես ուրիշ քաղաքներում, այնպես ել Քութայիսում, սոցիալ-դեմո-կրատիայի ազգեցության տակ դպրոցական աշակերտությունն ամեն անգամ արձագանգ և տալիս բանվորների ցուցերին ու մանիֆես-տացիաներին:

Բանվորական շարժման արթնացնում և նույնպես գործակատար-ներին: Նրանք հարում են շարժմանը և, 1903 թվից սկսած, ակտիվու-թյուն յերեան բերում:

Թե ինչպիսի կարեոր նշանակություն կարող և ունենալ ընդհան-րապես բազմակողմանի սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան ու ազիտացիան աշխատավոր մասսաների զանազան հեղափոխա-կանացման գործի մեջ նույնիսկ այնպիսի խուլ, մանր-բութուական քաղաքում, ինչպիսին Քութայիսն ե, ցույց և տալիս զարձյալ այն փաստը, վոր հուկայան որերի ընդհանուր գործադուլն ու դեպերն այնտեղ խիստ շարժում են առաջացնում:

«Հուլիսյան որերին, — հաղորդում ե «Խորա»-ի բանվոր թղթա-կիցը № 62-ի մեջ, — Քութայիսի բանվորների մեջ ուշագրավ խիստ հուզմունք եր տիրում: Նրանք նետվում ենին կովի և ուզում ենին, իրենց հերթին, բոլոր արտահայտել ինքնակալության գեմ: Կուտակ-ված եներգիան գուրս և թափվում բանվոր ժողովական հուղարկա-յորության ցուցը (մասնակցում են 300 մարդ) ժամանակ»:

*) «Խորա» № 62.

1903 թվի ՀՈՒԼԻՍՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

1903 թվի հուլիսին Ռուսաստանի հարավային արդյունաբերական ռայոններում՝ Ռդեսսա, Կիև, Նիկոլայկ, Յեկատերինովակ քաղաքներում, ինչպես և Կովկասում մասսայական հիասքանչ գործադրութենքի ունեցած այլ տեղի ունենում, վորոնք իրենց ծավալով ու սոցիալ-քաղաքական նշանակությամբ գերազանցում են մինչ այդ կատարված պրոլետարիատի մասսայական յելույթներին։ Հուլիսան հարավ-ռուսական ընդհանուր գործադրությամբ նշանավոր եւ գառնում վորակն նոր հոտապ պրոլետարական հեղափոխական շարժման մեջ, նա հանդիսանում է արդարեւ 1905 թվի հոկտեմբերիան համառուսական գործադրությամբ։

Մինչ այդ մոմենտը բանվորական շարժումը սահմանափակ, մեկուսացած բնույթեր կրում։ Նա տեղական ամենորյա պայքարի սահմաններից դուրս չեր գալիս։ Կովկասյան շարժման վերաբերմամբ վերը շարադրածներից արդեն կարելի յեւ պարզորեն տեսնել, վոր մինչ մեզ հետաքրքրող շրջանը բանվորական մասսաները կազմակերպվում են տեղերում և տեղական պայքար են մղում կապիտալիստական շհագործման ու կառավարական ճնշման դեմ։ Թշնամու դեմ կազմակերպված միահամուռ, ընդհանուր մասսայական գործադրություն վոչ մի դեպք չի լինում։ Իսկ հուլիսյան դեպքերը հեղափոխական, պրոլետարական պայքարի համագույն բնույթ են ներկայացնում։ Դա բանվոր դասակարգի գասակարգային համերաշխության, շատ թե քիչ գիտակցական սոցիալ-քաղաքական պայքարի ահազին մասշտաբով կատարված մի արտահայտություն եր, պայքարի, վոր ընդգրկել եր յերկրի արդյունաբերական լայնածավալ ուայնուները։ Ահա թե ինչու 1903 թ. հուլիս ամիսը վոչ միայն կովկասյան, այլ և ամբողջ Ռուսաստանի հեղափոխական շարժման պատմության մեջ հանդիսանում եւ վորակն տեղական պայքարից համազգային պայքարին անցնելու մի եպոխա։

*) Միքանի տարի սրանից առաջ (1913 կամ 1914 թ.), մենա բաղաքում (Շվեյցարիա) տեղի ունեցած եմիգրանտ սոցիալ-դեմոկրատների ժողովներից մեկում, վորատեղ ներկա յեր իմիշի այլոց պ. Բ. Ակսելրոդը, հայտնի մենշևկի Մարտինովը (նախկին «Եկոնոմիստ») այս տեսակի կարծիք հայտնեց, թե 1903 թվի հուլիսյան դեպքերն առաջացան «զուբառովականների» պրովկացիոն աշխատանքի հետեւնքով։ Հարկ յեղափ, վոր սույն աշխատության հեղինակն յեռանդագին բողոքե կովկասի ու Ռուսաստանի բանվորական շարժման պատմության նման պրոֆանացիյի գեմ և նշեր, վոր մեր յերկրի պրոլետարիատի շարժման մասին նման կարծիք արտահայտու անձինք միանգամայն անժանոթ են առարկային։

(Հեղինակի Ծանոթ. 2-րդ հրատարակ.)

Կովկասյան արդյունաբերական քաղաքներում վերջին ամիսներին տեղի ունեցած տնտեսական անընդհատ պայքարը և քաղաքական շարք ցուցերն ընթերցողին արդին հայտնի յեն, ինչպես և հեղափոխական այն բարձր տրամադրությունը, վոր հայտաբերում ելին այդ ժամանակ պրոլետարիատն ամսաները, Այս ժամանակ իսպովում եր վոչ միայն արդյունաբերական պրոլետարիատը, այլ և Արևմտյան Անդրկովկասի համարյա վողջ գյուղացիական մասսան, խոռվում ելին նույնիսկ Գորու (Թիֆլիսի նահանգ) նման փոքրիկ քաղաքները։ Գորի քաղաքում, ուր արդյունաբերական վոչ մի ձեռնարկություն չկա, ինտելիգենցիաներ՝ Զիբլաձեյին և Ցարաձեյին աքսորի ուղարկելու պահին կայարանում հավաքվում են 200-ից ավել մարդիկ՝ ինտելիգենցիաներ, բանվորներ, խանութպաններ և արհեստավորներ։ Կայարանում հավաքված հասարակությունը գնացքին ուղեկցում եւ յերգով ու բացականչությամբ՝ «Կորչի ինքնակալությունը», «Կիցցե հանրապետությունը», «Կեցցեն մեկնող ընկերները»։

Ընդհանուր գործադրություն բագվում սկսվում է հուլիսի 2-ին։ Այդ որը գործադրություն անում Բիբի-Ելբաթում՝ Խատիսյանի արհեստանոցները, Մանթաշյանի Բիբի-Ելբաթի նավթային ընկերությունները, «Շիխովո» և «Ոլիում» նավթային ընկերությունները, Սև քաղաքում՝ Խատիսյանի, Լենսոսոնի, Մելնիկովը ու Եյզենշմիդիտի արհեստանոցները։ Հուլիսի 3-ին գործադրություն միանում են՝ յերկաթուղարին դեպոն, ձիաքարշի արհեստանոցները և Լավինի, Ռիսուի ու Բարգերի զավուը։ Թերթիկներ բաց են թողնում Բագվի կոմիտեն և Սև-քաղաքի ուայնական կոմիտեն։ Հուլիսի 3-ին, առավոտյան ժամը 10-ին տեղի յեւ ունենում մոտ 2000 գործադրություն բանվորների ժողովը։ Ճաներ են ասում պայքարի անհրաժեշտության մասին, յերգում են մարսելյոց։ Հուլիսի 4-ին կանգ են առնում Շիխակի, Ռոտշիլդի և բազմաթիվ մանր զավողները։ Հուլիսի 4-ին արդեն գործադրություն անում վողջ Սև ու Սպիտակ քաղաքները և Բիբի-Ելբաթում ժողով ելինում։ Նորելի զավողի դիմաց հավաքվում են 3000 հոգուց բաղկացած մի բազմություն, բանակցություններ են վարում վարչության հետ։ Յերկաթուղարին դեպոյի գործադրություն պատճառով ապրանքատար գնացքները կանգ են առնում։ Հուլիսի 5-ին գործադրություն կոխում ե Բալախանին։ Քաղաքի ու շրջակայքի ամբողջ արդյունաբերական կյանքը վճռականապես մեռնում է։ Թերթեր ամենեին լույս չեն տեսնում։ Բանվորները հազարավոր բազմությամբ շրջում են գործարանա-հանգացին ուայնուները և ամենուրեք ընդհատում աշխատանքը։ Բանվորները շոգեկաթսայից բաց եյլն թողնում շոգին, և

*) «Իսկրա» № 45.

ամեն ինչ ակամալից կանգ եր առնում: Ընդգիմադրություն համարյա-
վոչ մի տեղ ցուց չեն տալիս: Վրաստիկանությունը լուսկաց հանդիսա-
տես և լինում այդ բոլոր գեղքերին, նա ուղեկցում է զործադուլա-
վորների բազմությանը և միջամտելու վոչ մի փորձ չի անում: Նույն
ամսաթվին հենց կանգ է առնում ձիաքարշը: Քաղաքում սկսում են
զործադուլ անել զործարաններն ու մանր-արհեստային արհեստանոց-
ները: Ժամանած նավթատար թեքակայդ նավերի (ակուհա) զորամասն
անմիջապես միանում է զործադուլին, ուստի և զագարում է ապրանք-
ների ամեն տեսակի արտահանությունն ու ներմուծումը: Կայարանը
լեփ-լցուն եր ապրանքատար գնացքներով, նավակայանը՝ պատվար-
ված նավթատար թեքակայդ նավերով: Կառուցող բանվորներն ընդհա-
տում են աշխատանքը, ներկարարներն ու ատազագործները բանթող
են անում: Կոմըջազործները գցում են աշխատանքը: Որավարձ-սև
աշխատանքի բանվորները բեռնակիր նավին չեն մոտենում վարձվե-
լու համար: Նույնիսկ թշվառներից թշվառ համբալները, պարսիկները,
քաղաքալին փողոցներ ավլողները, աղբատարները և ասսենիգասոր-
ները (աղտահանները) միանում են զործադուլին, հայտարարում են
իրենց պահանջները, ճառեր են ասում այն մասին, թե իրենք անա-
սուններ չեն և պահանջում են աշխատանքի ավելի լավ պայմաններ:
2—3 ճաշարանում զործադուլ են անում թվով 100 սպասավորներ: Քաղաքապանները (գործօնություն) համակրում են զործադուլին և իո-
սակցությունների ժամանակ պատրաստակամություն հայտնում միա-
նալու դրան: Սպիտակ քաղաքում մոտ 50 դռնապան (պատմանների
համաձայն) վրաներից դեն են շպրտում իրենց «արժանապատվության»
նշանները և հայտարարում, վոր 8-10 ուռելի ոռնկի համար համա-
ձայն չեն «ներքին թշնամու» դեմ մղվող կովի մեջ իրենց կյանքը
փանգի չենթարկել: Նրանք համաձայնվում են տնտերերին ծառա-
ցելու և վոչ թե վոստիկանությանը: Զորքը (1000 մարդուց պակաս)
և կազակներն ի վիճակի չեն լինում վոշինչ անելու:

Թիֆլիսից գալիս և կառավարչապետը *) և նրա ողնականը, գա-
լիս և նաև Անդրկովկասյան իերկաթուղագծի պետը: Նավթարդյունա-
բերողները խորհրդակցում են ամեն որ, նրանք որական $\frac{21}{2}$ միլիոն
ֆաս եյին տեսնում, իսկ զործադուլավորները՝ 400 հազար: Բոլոր
զործադուլավորները մոտ 50 հազար մարդ ենին:

Սկսվում են ժողովներ, ժողովներին ամեն անգամ հավաքվում են
վոչ պակաս քան 3000 բանվոր, 20-30 հազարանոց ժողովները հազար-
գյուտ յերեսությ չեն լինում:

*) 2-րդ հրատարակության մեջ սխալմամբ տպված և գլանոկոմանդույած փոխանակ գլանոկոմանդույած:

Կոմիտեն հուլիսի 6-ին, կիրակի որը ընդհանուր ժողով և նշանա-
կում Գայլի Դրունքի մոտ քաղաքից գուրս: Տեղը Բալախանիի համար
հեռու յեր և անհարմար, զրա համար ել սպասած 15-20 հազարի
փոխարեն հավաքվում են 5-6 հազար հոգի: Մոտ 7 հոետոր ճառ են
ասում քաղաքական նյութերի շուրջը, զործադուլի, առաջադրված
պահանջների ու քաղաքական պայքարի անհրաժեշտության մասին:
Ժողովը տեսում է մոտ յերկու ժամ՝ ներկայությամբ զավառապետի,
կազակ սպալի և միքանի հարյուրական կազակների: Ամեն բոպե հնչում
էր յեղջերափողը, և թվում եր, թէ կազակները հենց հիմա կհարձակվեն
բազմության վրա: Սպան միքանի անգամ ձին հեծած մոտենում է
բազմությանը և բղավում հաետոքներին: «Դարպարեցրեք»: «Շարունա-
կեցեք»—լովում է պատասխանը: Ապա արգեն ժողովը խաղաղությամբ
սկսում է ցրվել: Այդ ժամանակ մեկը բացում է կարմիր դրոշակը,
բազմության մի մասն շտապում է գեպի գրոշակը, բայց կազակները
ցրում են նրանց և բռնում են 2-3 մարդու:

Նույն որն ևեթ ժողով և լինում Բալախանում, «Ստենկա Ռազի-
նի» մոտ և կշաղում, իսկ ամսի 7-ին նույն տեղում մեծ ժողով և կազ-
մակերպվում բաղկացած 15000, գուցե և ավել սարդուց: Բանվորները
պահանջում են 8-ժամիս բանվորական որ, գպրոցներ, ժողովրդական
թատրոններ, հիվանդանոցներ և աշխատավարձի ու ոռմկի 20% ովզ
հավելում:

Կոմիտեն իվիճակի չի լինում դեկավարելու մինչ այդ չեղած
հիասքանչ շարժումը: Կազմակերպվում է հատուկ զործադուլային կո-
միտե: Բայց ուժեր ընդհանրապես պակասում են: Բազի կազմակեր-
պությունը պրոլետարիատի ակտիվիտ սասսայական շարժման զեկա-
վարության համար պատրաստված չեր: Կոմիտեն ու զործադուլային
կոմիտեն ամեն որ լույս են ընծայում թուոցիկներ զանգան լեզու-
ներով, ինչպես և թուրքերեն լեզվով, վորոնք և պահում են ընդհանուր
տրամադրությունը, բայց այդ թուոցիկները բավական քանակի չեն
լինում (կոմիտեի կողմից տպագրված եյին 3, 6, 8, 10, 14 հազարա-
նոց թուոցիկներ, հեկտոգրափով տպված եյին թուոցիկներ՝ ուղղված
ծիստափակ զործադրաններին, ճաշարանների սպասավորներին, ծովա-
գնացներին և հասարակությանը):

Բազմում բավական քանակի զորք չկար, ուստի և իշխանությունն
ստիպված է լինում այդպիսի հիսաքանչ զործադուլի ժամանակ սպա-
սողական տակտիկա բանեցնել: Մինչդեռ ասեն կողմից զորքեր են
համարում Բագու: Նրանք սկսում են արդեն ամենուրեք ցրել փոքրիկ
հավաքությունները. վոստիկանությունը բռնազատում է. փողոցներում
ծեծում են բանվորների առանձին փոքրիկ խմբերին: Բայց հաջող շա-
րունակվող զործադուլը պահում է խիզախ տրամադրությունը: Ծովա-

Հուրը խմելու դարձնող ապագարատը (օպրչիտել) պատրաստ եր կանգառնելու և քաղաքին առանց ջուր մնալու վտանգն եր սպառնում. կազակները նագայկաներով ստիպում են բանվորներին աշխատելու: Եթետրակայանը չի գործում և ի սարսափս բուրժուայի, նրանց փարթամ տները յերեկոները մնում են մույլ առանց լուսավորության: Մի յերեկո այն ակումբը, ուր հավաքվում եր տեղական բուրժուագիան, թաղվում և խավարի մեջ: Այն ժամանակ սկսում են ավելի վճռական միջոցներ ձեռք առնել: Նավաստիների ոգնությամբ փորձում են ելեկտրակայանը գործի գնել, բայց յերբ այդ չի հաջողվում, բանվորներին սվիններով հարկադրում են աշխատել: Չիտեղ ամեն տեսւկի խառնիճաղանձ մարդիկ են հավաքում և ահա չտեսնված մի տեսարան ե բացվում՝ ձիաքարշի ամեն մի վագոնը յերկու սվինով և շարժվում մեկը առաջին, մյուսը հետին հրապարակում կանգնած: Յերկաթուղային արհեստանոցներն սկսում են աշխատել սկզբում Անդրկասպյան յերկրից բերած յերկաթուղային գումարտակի (բատալիոն) ոգնությամբ: Յերկաթուղային բանվորներին հայտարարում են՝ հաշիվ ստանալ ու հեռանալ: Սկզբում ցուցակագրվում են 18 հոգի: Աշխատել ցանկացող բանվորներին ընկերները թակում են, իսկ ժանդարմներին դիմավորում բացականչելով՝ «կորչեն ժանդարմները»: Բացատրության նպատակով գծի պետին ներկայանում և 3000 մարդուց բազկացած մի բազմություն (դեպոյում ընդամենը 4—5000 մարդ կար): Բաց և թողվում սայոնական կոմիտեյի շատ լավ պատասխանը:

Նավթարդյունաբերողների հետ բանակցություններ են սկսվում: Մշակում են Բալախանիի բանվորների պահանջները (հեկտոգրաֆով հրատարակել եր գործադրությին կոմիտեն) և պատգամավորության միջոցով ներկայացվում և Նավթարդյունաբերողների համազումարի Խորհրդին: Նավթարդյունաբերողներն իրենց ժողովի ժամանակ «սկզբունքով» ընդունում են, վոր բանվորներն իրավունք ունեն հավասար իրավունքներով պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու և զրա համար կոալիցիաներ ու գործադրույներ կազմակերպելու: «Բայց... սա գործադրու չե, այլ բանվորների մի մասի «բռնություն» մյուս մասի վրա, այդ պատճառով ել նրանք «սկզբունքով» մերժում են բանվորների բոլոր պահանջները: Կապիտալիստներն իրենց թիկունքում զգում են սվինների պաշտպանությունը: Պետերբուրգից ստացվում ե Պլեյյի խիստ հրամանը՝ վոչ մի գեպքում չզիշել: Ամենուրեք հայտարարություններ են կախվում այն մասին, թե՛ ով հուլիսի 14-ի առավոտյան ժամը 6-ին աշխատանքի չներկայանա, կհամարվի արձակված, և թե աշխատանքի վերսկսումից հետո բանվորների կարիքները քննության կառնվեն ու «ըստ հնարավորության» կրավարքեն: Ֆիրմաների կառավարիչներն անբավական են մնում այդ

վճռից, հավաքվում են առանձին և մշակում են կոմպրոմիսաներ, բայց սուսպիրենները նրանց վճիռները խոռվարար են հայտարարում: «Վոչ մի զիջում», այսպես և այժմ լոզունքը վոչ միայն խոշոր, այլ և մանր ֆիրմաների, վորոնք պատրաստ եյին առաջ մեծ զիջումներ անելու: «Եթերեալ կապիտալիստները ժանդարմների գիրկն են ընկանում:

Ամենից յերկար դիմանում են գործադրությունների գլխավոր միջուկը՝ Բալախանիի բանվորները և Բալախանիի ու Բիբի Ելբաթի նավթահանքերը գործադրություններում են յերկու շաբաթից ավել, մինչդեռ մյուս սայոններում արդեն բանվորներն սկսել ելին աշխատանքի անցնել: Ըստհանուր առմամբ գործադրություններ առվում, բայց և այսպես նրա բարոչական նշանակությունն ահազին ե լինում, հետևանքները մեծ և վկայում են շաբաթման ահազին աճումն ու զարմանալի համերաշխությունը: Բաղմաթիկ բանվորներ գործադրություններ անում միմիայն համերաշխությունից դրված: Պրոլետարիատի ասենասորին խավերը, մուսուլման բանվորությունը, նույնիսկ խեղճ ու կրակ պարսիկները, առաջին անգամ կովի յեն դուրս գալիս իրենց վիճակը բարեկալելու համար: Վորոշ տեղերում նրանք հանդիսանում են ամենաթունդ գործադրությունները. վորպես ամենից քիչ գիտակից տարրեր, նրանք ֆիզիկական ձնշում գործ զնելու ամենից շատ հակումն են յերեան բերում: Բալախանիում մի տեղ լեզգիների բազմությունը քարուքանդ և անում հնոցը: Սպիտակ քաղաքում Շիբայիկի զավողի մոտ Բիբիկի գործարանի թուրք բանվորների մի բազմությունը ընդհարում ե ունենում Շիբայիկ գործարանում աշխատանքի անցած մի խումբ բանվորների ու զորքերի հետ: Բանվորների բազմության միջից կրակում, են, լինում են միքանի վիրավորներ:

Ըստհանուր առմամբ բանվորներն իրենց կորրեկտ եյին պահում, և նրանց վարքի մասին բուրժուազիան նույնիսկ արժանի գնահատական և տալիս. բանվորներն իրենք եյին պահպանում նավթահանքերը և լինելով մինչեւ զորքերի գալը գրության լիախշան տերը, վոչ մի բանի ձեռք չեն տալիս: Միայն յերբ հանքատերերը Պլեյյի ու Վիտամեյի հրամանով մերժում են բանվորների բոլոր պահանջները, սկսվում են հանքանորերում հրձգության գեպքեր: Այսուամենալիվ բանվորները բռնություն գործ զնելու մեջ չափը շեն անցնում: Բոնությունների դիմում են համարյա բացառապես անկազմակերպ հետամնաց բանվորները: Հասարակության համակրությունն ընդհանրապես բանվորների կողմն ե մնում: Ինչ-վոր անհայտ մարդկանց ձեռքով սարքագագագների խորակումները, վորը մարդկային զոհեր և ունենում, անկասկած ցավալի յերեսություններ են: Թե՛ ովքեր եյին նյութել այդ խորտակումները, չի պարզվում:

Չնայած կառավարության հրամանին ու ճնշմանը՝ բանվորներին ամենաչնչին զիջումներն անգամ չանելու մասին, բանվորների պահանջներն այնչափ կենսական են լինում, վոր նավթարդյունաբերողները վաղ թե ուշ հարկադրված են լինում բավարարել այդ պահանջները։ Սրան վորպես ապացույց՝ նորելի ֆիրմայի շրջաբերականը, վորի մեջ թեև զանց են առնվում բանվորների գլխավոր պահանջները, բայց այդ չի խանգարում, վորպես կիցար պահանջները կրկին ու կրկին անգամ զրվեն նավթարդյունաբերողների դիմաց, մինչեւ վոր շիրագործեն, նորելի ֆիրմայի շրջաբերականն առում և հետեւալը։

«Յեղբ. նորելների վարչության կողմից ի գիտություն բոլոր ժառանգությունների ու բանվորների հայտարարվում և հետեւալը։

Յեղբ. նորելների Ընկերությունն իր համարյա քառորդ գոր գույության ընթացքում, իրենից կախված բոլոր միջոցները ձեռք ետք ետք հասավորին չափ բարձարաբելու ծառայության պայմաններն ու բանվորների կենցաղը։

Ընկերության վարչությունը, հավատացած իր արդարացի լինելու մեջ, կարող ե ասել, վոր նա ինչպես բանվորների վարձատրության քանակը սահմանելու, այնպես և նրանց անային կենցաղը կարգավորելու կողմից, միշտ առաջինն ե յեղել մյուս նավթարդյունաբերող ֆիրմաների մեջ։ Ընդհանուր ուժոցների ձեռք առումից զատ, Ընկերությունը միշտ արձագանք ե տվել առանձին բանվորների խնդրանքին ու միջնորդությանը, բավարարելով նրանց հնարավորության սահմաններում։

Ներկայումս, չնայած այն բանին, վոր բանվորներն իրենց կարիքները ներկայացնելու համար ընտրեցին մի ուղի, վոր անհամաձայն եր որենքին և չեր արդարացվում նրանց նկատմամբ Ընկերության վարչության բռնած վերաբերմունքով, բանվորների միջնորդությունները քննության են առնված, և այդ քննության հետևանքների մասին սրանով հայտարարվում և բանվորներին։

1. Տոների թիվը կերպարվի մինչ կառավարության կողմից հաստատված նորման։ Բոլոր տոն որերի ճիշտ ցուցակը՝ ի տեղեկություն բանվորների՝ կկախվի։

2. Տոն որերի նախորյակին աշխատանքը մի ժամ շուտ կվերջանա։

3. Մոճիկը կարվի աշխատանքը կատարելու ժամանակ։

4. Գործողելիք աշխատանքների ժամանակ որապահիկող կարվի, նայած թե ուր ե գործողելիքում բանվորը և ինչքան աշխատավարձ և ստանում։

5. Զավողների ու նավթահանքների արհեստանոցներում առաջիկա ձմեռվա ընթացքում, շինություններ կկառուցվեն, վորոնց մեջ բան-

վորները կունենան պահարաններ շոր պահելու համար, տաք ջրի գույքը, լվացարաններ և ճաշի սեղաններ ու նստարաններ այն բանվորների համար, վորոնք ճաշի ընդությունների մեջ վաղ լեկած բանվորները կարող են սպասել, մինչև վոր կսկսվի աշխատանքը։

6. Սահմանված և սե աշխատանք կատարող բանվորների մշտական խումբ, վորոնց տրված ևն հաշվեգրքույկներ։

7. Զավողների ու նավթահանքների արհեստանոցների աշակերտները կհամարվեն բանվորների կարգում, իսկ նրանց աշխատավարձի շափն այսուհետեւ դարձյալ կնշանակվի ըստ նրանց ընդունակությունների։

8. Բանվորների ապահովագրության և հիվանդության ժամանակ ու հաշմանդամության գելքում վարձահատույց տալու յեղանակի վերաբերյալ որենքն արդեն հաստատված և կառավարության կողմից։ Այդ որենքը կհարատարակվի բանվորների հիվանդանոցակին ու ապահովագրական դրամարկղների կանոնադրության հաստատումից հետո, վոր նավթարդյունաբերողների համագումարն արդեն մշակել ե, հաստատումից հետո դրամարկղներն անմիջապես գործի մեջ կդրվեն։

9. Ինչ վերաբերում և շրջիկ քիչելների ու մանկաբարձուների շտամը մեծացնելուն, հիվանդներին ռեսուր ունեցող կառքերով փոխաղելուն, ընթերցարան-գրադարանների ժողանակում ունեցող փոստ-հեռագրական գրասենյակներ հիմնելուն և գպրցների թիվը ավելացնելուն, ապա բանվորների այս միջնորդությունների բավարարումը, վորպես բոլոր նավթարդյունաբերողներին վերաբերող ընդհանուր միգործ, կկատարվի վորոշ հաջորդականությամբ։ Ընկերությունն իր կողմից խոստանում և աջակցել վորպես կամագումարի խորհուրդը բավարարի հինությալ պահանջները։ Բանվորներին իրենց կարիքներն ու միջնորդություններն որինական ճանապարհով հայտնելու հնարավորությունը տալու համար Ընկերությունը թույլտվություն և խորհրդական աշխատանքում կիրառելու սույն նորմ, արհեստանոցներում և նավթահանքներում կիրառելու սույն թվի հուլիսի 10-ին բարձրագույն հաստատություն ստացած կանոնադրությունը բանվորների համար ալագներ (старосты) սահմանելու մասին։

Ավագները ընտրելու համար բոլոր բանվորները կարգերի կրաժանվեն, և լուրաքանչյուր կարգն իր միջից կընտրի մի ավագ, վորը կհանդիսանա միջնորդ իր կարգի բանվորների ու Ընկերության տեղական վարչության միջն վարձելու պայմաններին ու բանվորների կենցաղին վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ։

Ավագների ընտրությունը, Բագվի պ. նահանգապետի հաստա-

տած կանոններով, տեղի կունենա ոգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը, իսկ հոկտեմբերի 1-ից սկսած ալվագները կանցնեն իրենց պարտականությունների կատարմանը։ Ավագների մասին կանոնները, տաղագրվելուց հետո, ի տեղեկություն բանվորների կլասիֆեն»*):

Թիֆլիսում ընդհանուր գործադրություն համաձայն կովկասյան Միության կոչի, սկսվում ե հուլիսի 14-ին։ Մինչ այդ՝ արդեն գործողության մասն լինում գործակատարները (հուլիսի 2-ից), մսագործները (հուլիսի 11-ից) և հացթուխների մի մասը (փոնչիները հուլիսի 12-ից):

Գործակատարները պահանջներ են առաջադրում, վորպեսզի խանություններն ու կրպակները կողպակներն յերեկոյան ժամը 8-ին։ Թամամշանի քարվանսարայի գործակատարներն 8 որ շարունակ յերեկոյան ուղիղ ժամը 8-ին միանգամից դուրս են գալիս փողոց ու կողպում բոլոր խանութները։ Հիասքանչ տպագրություն եր ստացվում դրանից։ Նրանք հասնում են իրենց նպատակին։

Մսագործները պահանջում են վոչնչացնել քաղաքային կրպակները (մի) և միքանի փոփոխություններ մտցնել անասունների փոխադրման ու զննելու մեջ։

Փոնչիները նույնիսկ տակն ու վրա յեն անում թաղային վոստիկանատունը և ազատում իրենց ձերբակալված 5 ընկերոջը։ Նույն որն եթե պրիստավին թուլության պատճառով հեռացնում են։

Ճաշարանների սպասավորները (օֆիցիանտներ) միանում են ընդհանուր գործադրությունները։ Նրանց պահանջները, այն եւ սահմանել վորոշակի ոռոճիկ (ամսական 10 ո.) ճաշ ու բնակարան ստանալ ճաշարանատիրոջից, վերացնել տուգանքներն ու զեղջումները (բայցետ), — անմիջապես բավարարվում են։

Վոտքի յեն կանգնում մանր արհեստանոցները, վորոնք, իմիջի այլոց, պահանջում են բանվորական որը վերջացնել յերեկոյան ժամը 6-ին։ Այս արհեստանոցները՝ պղնձա-ձուլական, կոշկակարային և այլն, աշխատում եյին մինչև յերեկոյան ժամը 10—11-ը։

Չիաքարշի յերթեեկությունը դադարում ե։ Բայց հուլիսի 14-ին ձիաքարշն սկսում ե բանել շնորհիվ զինվորների միայն, վորոնք թե տոմսեր են ծախում և թե պահպանում վագոնները։ Տրամվայի վագոնը այդ որերին իրենից մի իսկական բերդ եր ներկայացնում։ ամեն մի վագոնում 4-5 ավին կար։ Դորձադրութիւններուն այժմ, ինչպես և միշտ, յերկաթուղարին դեպոն ու արհեստանոցներն են լինում իրենց 4-5 հազարանոց բանվորներով։

Ընդհանուր առմամբ թիֆլիսի գործադրությունը գլխավորապես համա-

*) Տես «Հէքրա» №№ 44, 45 և 47։

կրանքի մի արտահայտություն եր զեպի Բագվի գործադրություները։ Այդ գործադրությունը յերկար չի տեսում և շաբաթվա վերջն արդեն սկսում են աշխատանքի անցնել։ Բայց վորպես բագվեցիներին ցույց տված մի աջակցություննա, համենայն դեպու, իր նպատակին հասնում ե։

Հավաքույթներ չեն լինում, յեթե չհաշվենք հուլիսի 14-ի առավոտյան հավաքույթը, վորպիկան ամբողջ քաղաքը գրավել ելին ահագին քանակի զորքեր, վորոնք և անհնարին եյին դարձնում այդ։ Թիֆլիսում չեն կրակում, բայց ծեծում են նագալկաներով մինչ կատաղության հասած։ Վոստիկանական թաղամասերում ձերբակալվածներին ստիպված են լինում բաց թողնել, վորպեսզի նորերի համար տեղ ազատվի։ Յեկ ահա այդ գեղքում ազատ արձակվածներին անց են կացնում կազակների նագալկաների «հարվածների տակից»։ Դաժանորեն ծեծում են խաղաղ բնակիչներին, բանվորների տեղ ընդունելով նրանց։ Ընդհանրապես ահարեկումն աննկարագրելի յեր։ Վոստիկանությունը միանգամայն հալից ընկնում ե։ Քաղաքապահներին թույլատրում են իրենց պահակատեղերում աթոռներին նստելու։ Զինվորները մեծ մասամբ ուղղում ելին ողի մեջ կրակել։

Միխայլովկա կայարանում (ականատեսի պատմածից) 150 մարդուց բաղկացած մի բազմություն ե հավաքվում յերկաթուղարիծը։ Նրանց հետ բանակցության մեջ և մտնում ինժեները և արդեն համարյա համոզում ե նրանց ցրվելու։ Նրա հորդորանքների համաձայն նրանք բանվորներին ուղարկում են պահպանելու ջրմուղը, խնալողական գրամարկները և այլն։ Տեսնելով, վոր բազմությունը խաղաղ ե տրամադրված, այդ ինժեները բանվորներին ասում ե, թե նրանց պահանջներն ինքը չի կարող բավարարել այլ իսկուն այդ մասին կհեռագրի Պետերբուրգի։ Նա հեռազրատուն ե գնում, նախորդը զորամասի հրամանատար պրիստավից խոսք առնելով, վոր զենք չի գործածի։ Այդ պահին մոտենում ե Բորժոմի գնացքը։ Բանվորներից մեկը վճռում ե շղթայլուծել շոգեշարժը։ Նրա վրա հարձակվում են պահնորդները (տրաջիկ)։ բանվորին ոգնության են գալիս դարձյալ միքանի բանվորներ։ Կոիվ ե բացվում։ Պրիստավը հրամայում ե կրակել, և հետեանքը լինում ե այն, վոր 36 հոգի վիրավորվում ու սպանվում են։ Բոլորն ել ծանր կերպով են վիրավորվում, համարյա անհույս։ Մոտակա գյուղում վիրավորվում ու սպանվում են միքանի կանացք։ Զինվորները (մոտ 40 հոգի) բոլորն ել համարյա ողի մեջ են կրակում, իսկ պահնորդները (տրաջիկ) առանձին յեռանդ են ցուցադրում։ Նրանցից մեկը 7 մարդ ե գետին փոռում։

Այդ կոտորրածից ամենքն ել խիստ վրդովվում են։ Նույնիսկ սպաներից մեկի մեջ մարդու զգացումն ե խոսում։ Նա փախչում ե այդ վրդովեցուցիչ տեսարանից։ Մի ուրիշը նրա հետքից բղավում ե։ «ՓաՍոց-գեմ» Անդրկովկասում—9

խեք, փախեք, գուցե դեռ շքանշան ստանաք»: «Ալդպիսի խայտառակ գործի համար ինձ շքանշան պետք չի», պատասխանում ե սպան:

Բաթումում (մասնակից լնկերոջ պատմածից) կատարյալ ու որին նակելի մի գործադուլ ե լինում: Գործադուն այստեղ սկսվում է հուլիսի 16-ին: Ամբողջ կյանքը մեռնում է: Զավողների ու արհեստանոցների բոլոր բանվորները, նավահանգստի, ելեկարակայանի բանվորները և, վերջապես, արհեստալին արհեստանոցները բոլորն ել գործադուլ են անում: Հացթուխները նույնիսկ գործադուլ են անում, փոները փակվում են, հացը պակսում: Հաց ճարում և ազգաբնակությանը բաշխում են միայն բանվորները: Գործադուլը 3 որ ե տեսում: Տեղի յե ունենում ցուց և փողոցներով հանդիսավոր յերթ՝ կարմիր դրոշակներով, Մարսելլով ու հեղափոխական յերգեր յերգելով: Ցույցը կազակների ու վաստիկանության հետ առանց ընդհարվելու չի անցնում: Յուցարանների վրա կրակում են, վորոնցից վիրավորվում են միքանի մարդ, իսկ մի բանվոր՝ շատ ծանր կերպով: Նա շուտով մեռնում է:

Հուլիսի 18-ի մոտերքը գործադուլ ե սկսվում Զիառուրի մարգանեցի լեռնային շրջանում: Թվում ե, թե Զիառուրի բանվորների սրտերը պիտի շատ դառնացած լինելին: Այստեղ, ինչպես պատմում են, գործադուլի ժամանակ ջարդում են ու ավերում ամեն ինչ, կրակի ճարակ դարձնելով իրենց ճամպին ամեն բան:

Այդ ժամանակ Ոզուրգեթի և մյուս գովառների գյուղացիների մեջ գտնվում են նույնպես շատերը, վորոնք հրաժարվում են հին պայմաններով մշակելու կալվածատերերի հողերը:

Այսպիսով, Անդրկովկասում հուլիսյան գործադուներին մասնակցում են. Բագվում՝ մոտ 50 հազար հոգի, թիֆլոսում՝ վոչ պակաս 15 հազար հոգուց, Բաթումում և Փոթիում՝ մոտ 10 հազար, Անդրկովկասյան յերկաթուղագծի վրա՝ մոտ 5 հազար հոգի (Մեխալլովկա, Սամարեդի և շրջակայքը), Զիառուրիի լեռնային շրջանում՝ մոտ 20 հազար հոգի (մարզանեցի արդյունաբերության շրջանը): Ընդամենը՝ մոտ 100,000 գործադուլավորներ, իսկ գյուղացիների հետ միասին, իհարկե, ավելի շատ, քան այդ թիվը ե*):

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռուսական Մեծ Հեղափոխության հրատապ հիմնական պրոբլեմներից մեկը, վոր պիտի լուծել, դա, ինչպես հայտնի յի, հողավին հարցն ե: Ժամանակակից հիմնական այդ պրոբլեմի այս կամ այն ձեր լուծումը Ռուսաստանում կարող ե վորոշել յերկրի սոցիալ-տնտեսական դրության զարգացման հետագա ընթացքը:

*) «Անկրա» № 47, բացի Բաթումի մասին յեղած աեղեկություններից:

Բուրժուական տնտեսական կարգը մեզ մոտ զարգացել ե այն աստիճան, վոր գոյություն ունեցող հողային հարաբերությունները սոսկալի արգելք են հանդիսանում այդ կարգի հետագա զարգացման առաջ, վորի հետեւանքով կյանքն ինքն ստիպողական պահանջներ և առաջադրում վերակառուցելու հողային հարաբերությունները, վոր տնտեսական կարգը նոր ներդաշնակությամբ՝ համապատասխան յերկրում զարգացնող արտադրական ուժերի լարվածության աստիճանին:

Հողային հարցը, սուսական կյանքին ու հեղափոխությանը հատուկ և ընդհանուր սոցիալ-քաղաքական ստրուկտուրայի առանձին, անկախ մի հարց չե, ինչպես շատերը հակումն ունեն կարծելու: Դա նախ և առաջ մի հարց ե, վոր վերաբերում ե հողը կալվածատիրական կապանքներից ու մնացորդներից և հողի ոգտագործման «համայնական» կարգերից ազատելուն, «ազատագրելուն», իսկ ապա՝ այնպիսի պայմաններ ստեղծելուն, վորպեսզի «ժողովուրդը» հնարավորություն ունինա ազատորեն տնորիներու հողը և կյանքի պահանջներին համաձայն կարգավորելու հողային հարաբերությունները: Ժողովուրդը ձգում ե «հող և ազատություն» ձեռք բերել, «հող» այն պատճառով, վոր նա առանց դրա, առանց արտադրության գլխավոր միջոցներից մեկը հանդիսացող այդ տվյալի, չի կարող «ազատ» տեր լինել, և «ազատություն» այն պատճառով, վոր առանց դրա նա չի կարող տնորինել իր գույքային, հողային հարաբերությունները: Այս տեսակետից հողային հարցի լուծումը ներկա ռուսական հեղափոխական շրջանում, սերտ կերպով կարգած և բուրժուազիայի քաղաքական, տնտեսական հեղափոխության ընդհանուր ընթացքի հետ: Դա ներկայացնում ե իսկական բուրժուազիան հեղափոխության կիմուսեսնցիան: Բուրժուազիան քաղաքական հեղափոխությունն այդ հարցն այս կամ այն կերպ անխուսափելուրեն պիտի լուծի: Իսկ թե ինչպես կլինեն նոր սահմանված հողային, հարաբերությունների ընույթն ու ձերը, դա արդեն կախված կլինի մարտնչող շահագրգիռ կողմերից մեկն ու մեկի ուժերի գերազանցությունից, ուժերի հասարակական փոխարարերություններից:

Գոյություն ունեցող հողային հարաբերությունները կովկասում, ինչպես և Ռուսաստանում, անկարգ, քառային մի պատկեր են ներկայացնում, թերեւ ել ավելի վատթար, քան Ռուսաստանում: Բռնագրավման սիստեմը, վոր սրանից վոչ ալնքան վաղ ժամանակում իշխում եր լայն մասշտաբով, մինչ որս ել գործադրվում ե անկոնտրու ու անպատիթ կերպով: Մասնավոր մարդկանց միջև, ինչպես և արքունիքի ու գյուղական ամբողջ հասարակությունների, յերբեմն նույնիսկ թուրք ու հայ գյուղերի միջև հողի ու ջրի համար տեղի ունեցող մըշտական վեճերը մինչև հինչել որդի չարիք են կազմում: Այս ու

այն կալվածատիրոջ, հողատիրոջ, բեկի կամ խանի կատարած հողի հափշտակությունը կամ ջրաբաշխական հերթի բռնի լուրացումը անսպիր յերեւութ չեւ:

Կալվածատիրական կայսերական (սկզբան) կամ գալվածատկան հողատիրությունը յերկրում խոշոր մեծություն և կազմում:

Թուրք խաներն ու բեկերը, հայ մելիքները կամ քալվաճարները և վրաց թագաղ-ազնավուրներն*) ահագին կալվածքների յեւ տիրում: Միքանի կալվածատերերի հողի տարածությունը տասնյակ հազար դեսիմատինների յի հասնում: Դրանք իսկական լատիֆունդիաներ են**:

Յեկեղեցական ու վանքապատկան կալվաճները նույնպես ահագին տարածություն են բռնում: Նշանավոր կալվածատերը Եջմիածնի վանքն եւ, վոր ունի բազմաթիվ գյուղեր, արոտներ, վարելահողեր, այգիներ և անտառներ:

Կայսերական (սկզբան) վարչությունը գրավել է կովկասում ամենալավ պատղաբեր հողերն ու անտառները: Բորժոմի ու Աբասթումանի կիրճերը, այդ հրաշալի կուրորտները, իսկական «Կովկասի մարզարիտները» պտղաբեր Ղարայազը***): և Կովկասի խաղողի կենտրոնական ռայոնի, հանրահռչակ «Կախեթիայի» նշանակալից մասը և ալյն և ալյն, բոլորն ել պատկանում են կայսերական կալվածքների վարչությանը:

Փոխարքա Վարանցովի ժամանակից սկսած գյուղացիները կալվածատերերին պիտի վճարելին բերքի $\frac{1}{5}$ մասը, կոռ քաշելին 20 որ և կատարելին ուրիշ պարտականություններ: Սա մինչև 1870 թվականն եր: Իսկ այդ ժամանակից սկսած՝ համաձայն այդ տարվա կանոնադրությանը՝ գյուղացիները պարտավոր ելին վճարել բերքի $\frac{1}{10}$ մասը միայն: Սակայն դա թղթի վրա յեր միայն, այնինչ իսկապես գյուղացիները միշտ վճարում ելին և վճարում են «որենքի» սահմանածից շատ անգամ ավել:

*) Այդ ազգերի տոհմական ազնվական, հողային արխատոկրատիան:

**) Անա այդ լատիֆունդիաների միքանի խոշոր սեփականատերերի անունները (մեկից մինչև միքանի տասնյակ հազար դեսիմատին ունեցողները). Աբասկուլիսան Մակինսկի, Փանախան Յերկանսկի (Յերկանսան նահանգ), Զվանշիրներ, Շամփոր-սկիներ, Զյուլգագարով, Աղալարով և Հասայիսան (Գանձակի նահանգ): Այս վերջին յերկուս նախկին շատ խոշոր հողատերեր են, վարոնց հողերը գնել են Բագվի կապիտալիստ միլիոնատերեր՝ Թաղիկը, Մուսա Նաղիկը, Շատուրյանը և շուշեցի կապիտալիստ Յուղաշյանը: Եղիշեղարով, Մանթաշյանը, Արամյանը (Թիֆլ. Դաշտուրյանը, Արաքելյանը, Թաղիկը Բագվի խոշոր նավթարդյունաբերող կապիտալիստներ են, վարոնք յերենց կապիտալի մի մասը դրել են արդյունաբերության գյուղատնտեսական ճյուղերի մեջ:

***) Թիֆլիսի նահանգում մի ամբողջ շրջան ե, վոր ընկած և Անդրկովկասյան յերկաթուղագծի յերկարությամբ և ներկայացնում ե թե յերկրագործության և թե բրնձի ու բամբակի արտերի արոտների ու վորսի համար պետքական ամենալավ հողերը:

Կալվածատերերը մեծ մասամբ իրենց հողերը կապալով են տալիս: Կապալառուները բոլորն ել համարյա հայեր են, առանձնապես հարավ-արևելյան յերկրամասում (Յերեանի, Գանձակի և Բագվի նահանգները): Թուրք կալվածատերերը նույնպես իրենց հողերը հայ կապալառուներին են տալիս: Կապալառուներն, իրենց հերթին, հանձնում են յենթակապալառուներին: Ավելորդ ե հիշատակել, թե անոգնական ու խեղճ ու կրակ գյուղացիներին այդ վաշխառու-կապալառուներն ու յենթակապալառուներն ինչպիսի անսահման շահագործման ու ամեն տեսակի բռնությունների յեն յենթարկում:

Յերկրի միքանի սայոններում հողի մեծ մասը կալվածատերերին ե պատկանում, իսկ փոքր մասը գյուղացիներին: «Իրերի դրությունը հասկանալու համ որ պիտի ուշադրություն դարձնել Ողուրդիթի գավառում գյուղիլուն ունեցող հողային հարաբերությունների վրա: Հողի ամբողջ տարածության յերեք քառորդից ավելին գտնվում է խոշոր ու մասը հողատեր-ազնվականների ձեռքում»*): «Մշակման համար պետքական հողի յերկու յերրորդ մասը կանվում է մասնավոր սեփականատեր-ազնվականների ու արքունիքի ձեռքում և միայն մնացած մի յերրորդ մասն է պատկանում գյուղացիներին»**): Սակայն այս «պատկանելություն» ավելի շուտ ֆիկտիվ է, քան իսկական:

«Բոլոր գյուղացիները, - կարգում ենք նույն բրոշը ուրիշ մեջ, — հողատերության տեսակետից միքանի խմբերի յեն բաժանվում: Տնատերերի մոտավորապես կեսը կալվածատերերից համարյա լիակատար ճորտատիրական կախման մեջ ե գեռ գտնվում, զրանք ժամանակավորապես-պարտավոր (վրեմенно-օբյազնական), իրենց հողարածինները յետ չգնած գյուղացիք են: Նրանց թալանում են հենց որենքի հիման վրա: Իսկ նրանք, վորոնք բախտ են ունեցել սարքվելու մի կտոր սեփական հողի վրա, միենույն ե, ստիպված են լինում հենց նույն կալվածատիրոջից հող վարձակալել (արենձօւած) և ճորտագրվել նրան կամ թե բարձիթողի անել այդ կտոր հողը և քաղաքները յերթալ իր բանվորական ուժը ծախելու: Բացի այդ՝ յետինում ասած բանը, վոր համախ հարկադրական ե լինում, վաշխառուների ձեռքում գյուղացիներին պարտքի մեջ ե գցում, վորովիետե հարկավոր գումարը բացի վաշխառուներից նրանք ուրիշ վոչ մի տեղից ճարել չեն կարողանում: Սակայ չեն նույնպես այնպիսի գեղքերը, յերբ կալվածատերը, հողի համար գյուղացուց ծանր աշխատանքով վաստակած գումարն ստանալով, հետո կրկին տեր ե մնում այդ հողին, — նրա դեմ դատ վարելը դժվար բան է: Հետեյալ խումբը արքունի կամ պետական գյու-

*) «Из Озург. уезда» թղթակցությունը „Ասկրա“-ի № 28-ի մեջ:

**) «Очерки рев. движения в Гурии», եջ 6:

ղացիք են: Սրանք ևս նույնպիսի փոքրիկ հողի կտորից են ոգտվում ինչպես և մյուս գյուղացիք, բայց իսկապես սրանց զրությունը շատ ավելի վատ է: Յեթե իր հողաբաժինը յիտ գնած գյուղացին կարող է համեմայն դեպս ուղածին պես տնօրինել իր փոքրիկ հողի կտորը, ուրիշին հանձնել կամ վաճառել, ապա արքունի գյուղացին այդ միխթարանքը նույնիսկ չունի: Նա մշտական մի վարձակալ է (արենդատօր), վոր կապված է հողին ծայրահեղ կարիքից դրդված և իրեն ու իր ընտանիքին կերակրելու համար բացի արքունիքի կողմից նրան հատկացված հողի կտորից այլ հնարավորություն չունենալու պատճառով, մի հողի կտոր, վոր հատկացված է նրան փոխարենը չափից դուրս վճարումներ ստանալու համար:

Վերջապես, այսպես կոչված խիզանները: Նրանք ճորտեր չեն յեղեւ բայց յերբեք ազատ մարդիկ ել չեն յեղեւ: Մի ժամանակ, շատ վաղուց, նրանց նախնիքը վրաստան են յեկել և բնակություն հաստատել կալվածատերերի հողերի վրա՝ մշտական վարձակալության (արենդա) և, հետեւապես, մշտական ճորտագրման իրավունքով: Ստացած հողի փոխարեն նրանք վորոշ պարտավորություններ են կատարում, ինչպիսին կցանկանա կարվածատերը, վճարելով վերջինիս ոգտին ահազին քանակությամբ բազմապիսի տուրքեր թե բնամթերքով և թե դրամով: Խիզանն իր սեփական հողը չունի և, հետեւապես, կամա թե ակամա, նա ստիպված է իր շնչքին դնել այն լուծը, վոր դնում է նրա վրա կալվածատերը, կամ թե լքել գյուղը*):

Հողային հարաբերությունների վիճակը մոտավորապես այսպես է վոչ միայն Գուրիայում, այլ և ամբողջ Վրաստանում (Թիֆլիսի ու Քութայիսի նահանգները), թեև Գուրիայում գյուղացիների համար հողային, ընդհանուր-տնտեսական պայմանները շատ ավելի անտանելի յեն դարձել, քան յերկրի ուրիշ վայրերում: Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասի հարավ-արևելյան մասին՝ Բագվի, Գանձակի, Յերևանի նահանգներին ու Ղարսի շրջանին, ուր ազգաբնակության մեծ մասը կազմում են հայերն ու թուրքերը, այնտեղ փեռագլական-կալվածատիրական հարաբերությունների շրջանում:

Հայ գյուղացի ազգաբնակությունը համարյա փրկվել է գուտ հայկական փեռալ-կալվածատիրական հարստանարումից, յեթե հաշվելու ըլինենք միքանի վայրերում դեռ մինչև այժմ մնացած հին տոհմական հողային ազնվականության՝ մելիքների և ուրիշների հարստանարությունը: Հայ գյուղացուն, ինչպես և ամբողջ գյուղացիությունը ձնչում է պետության հարաբերությունը, վորի հողերի վրա բնակություն են հաստատել գյուղացիք (պետական), ինչպես և վանքերի (Եղմիած-

*.) „Очерки рев. движений в Гурии“, стр. 6.

նի և ուրիշների), հին (Փեռալ-մուսուլմանական) և նոր տիպի խոշոր ու մանր կալվածատերերի և, վերջապես, բյուզուլուստիայի չինովնիկության հարստանարությունը: Սրանց բոլորին հայ գյուղացիությունն անչափ շատ հարկեր ու տուրքեր և վճարում:

Իսկ թուրք գյուղացիությունը, ինչպես և վրաց գյուղացիությունը, զեռ գտնվում է Փեռալ-կալվածատիրական դասի՝ բեկերի, իսանիերի, այդ տոհմական ազնվական հողային արիստոկրատիալի զորեղ ճիրանների մեջ, արիստոկրատիալի, վորը կովկասում պարսկի տիրապետության ժամանակներից սկսած թուրք ազգաբնակության վրա իշխող դասն ե հանդիսանում: Թուրք գյուղացիությունը, վորպես ավելի հետամնաց ու լքալ մի տարբ, տանում ե իր ցեղակիցների, Փեռալ բեկերի ու խանիերի անիրավության ու կամայականության բոլոր սարսափները*):

Հողազրկությունը կամ, ավելի ճիշտ՝ սակավահողությունը վողջ յերկրի համար ընդհանուր մի լեռեռլիթ է: Ընդհանուր առմամբ գյոււր յերկրի համար ընդհանուր մի լեռեռլիթ է: Ընդհանուր առմամբ գյոււր

*) Թուրք գյուղացիության միջն պլոտագանդա, ագիտացիա յերբեք չեն մղել վոշ սոցիալ-պեմոկրատիան և գոչ ել վորեե մի այլ հեղափոխական կազմակերպություն: Իսկ մինչեւո, յերկրի ընդհանուր հեղափոխական գործի զարգացման տեսակետից, իսկ մինչդեռ, յերկրի ընդհանուր հեղափոխական հեղափոխակային անհամաժամկետում սոցիալ-գեմոկրատական հեղափոխական գործուներությունը հարավ-արևելյան նահանգներում, ուր բնակում են թուրք կան գործուներությունը հարավ-արևելյան նահանգներում, և յայտեղ պահանջն անազին ե Սոցիալ գեմոկրատական հեղափոխական գործուներությունը, լինելով միակողմանի հենց սկզբից մինչև վերջը գյուղավայելու կենտրոնացած և յեղեւ յերկրի արևմտյան մասում՝ թիֆլիսի ու Քութայիսի նահանգներում (Վրաստան): Սրանով ել հենց մասամբ բացարձում են ժամանակ, յերբ թիֆլիսի ու Քութայիսի նահանգների գրեթե ամբողջ գյուղացիությունը և քաղաքացին պլուտարքարան համար (1905 թվի հոկտեմբեր—հունատ կոիվ եր մղում քաղաքական ազատության համար) գյուղացիության համար գեկանգները, թուրք և հայ գյուղացիությունն ու քաղաքացին ազգաբնակությունը հեղափոխական կովին վոչ միայն չելին աջակցում իրենց անմիջական մասնակցությամբ, այլ և աշխատում ելին հականեղափոխության ոգտին՝ զբաղված լինելով թյամբ, այլ և աշխատում ելին հականեղափոխության ոգտին զբաղված լինելով միայն միայնաց վոչնչացնելու և ջարդելու գործով:

Վոր թուրք գյուղացիների մեջ հեղափոխական հաջող զորությունների մաս հող կա, այդ կարելի յե ապացուցել բազմաթիվ փաստերով: Այստեղ կմատնանշեմ զրանցից մելու: Յերբ Յերեանում 1907 թվին մուսուլման կուրիայի ընտրությունների հողատեր խաներն ու բեկերը Պետական 3-րդ ֆումայի անդամության թեկնածու յեն զուում նախիջեանի փեռալ Շահթափահնուկուն, ընտրող գյուղացիների մեջ աղմուկ ու բողոք և բարձրանում, նրանցից ընդգիւմաղիր մի խմբակ և կաղամակերպություն: «Մենք չենք ուզում այդ «աղային», վորը մեկ թալանում ե ու կողոպատեր: ապաւմ ելին գյուղացիի, —մենք ուզում ենք գյուղացի պատգամավոր, վորը կար կարեները և կարող և Գումայում մեր շահերը ներկայացնելու: Այսուամեցիսի մեր կարեները և կարող և Գումայում մեր շահերը ներկայացնելու: Հայության հաղթափահնուկին ընտրվում ե 14 ձայնով ընդդեմ 6-ի:

դաշիք ներկայումս այնքան հող ունեն, ինչքան սրանից մի 20-25 տարի առաջ, չնայած ազգաբնակության աճումին: Շատ տեղերում յուրաքանչյուր գյուղացիական «ծխին» 1-2 գեսիատին հող և ընկնում: Գուրիայում «գուրիացի-գյուղացին միջին հաշվով 2-3 քցկ (1800-2700 քառ. սաժեն) վարելահող ունի, վորը, ինչքան ել հողագործը ջանք չթափի, իվիճակի չի լինի կերակրելու նրա ընտանիքը»*): Դաղստանի շրջանում «յուրաքանչյուր հոգուն ընկած հողաբաժինը միջին հաշվով շատ փոքր ե՝ 1,8 գեսիատին, բայց այս չափը շրջաններում տատանվում է և ել ավելի նվազում, հասնելով լեռնային շրջաններում մինչ 0,25 գեսիատինի: Դրան համապատասխան ել բերքատվությունը Դաղստանում չափազանց ցածր է, և շրջանի ազգաբնակությունը քաղցում է: Հիմնական բնակչության յուրաքանչյուր հոգուն միջին հաշվով 1,7 չետվերտ և ընկնում, ընդումին առանձին շրջաններում այս թիվն ել ավելի պակսում է, հասնելով մինչ 0,4 և 0,6 չետվերտի: Միայն զարմանալ կարելի յե, թե ինչպես և ինչով են ապրում այդ մարդիկ: Աղքատություն և կես կուշտ-կես սոված մի կյանք, — ահա նրանց վիճակը: Բացի այդ պիտի նկատել, վոր 30,000 հոգուց ավելի դաղստանցիներ մինչ որս ել ճորտատիրական կախման մեջ են գտնվում իրենց բեկերից (ազնվականներից), Դրանք այսպես կոչված «ուայաթ» են, այսինքն ստրուկներ:

Հողատիրության իրավունքները մինչև այժմ չպարզված լինելու հետեանքով հողային հարցը Դաղստանի համար շատ սուր կերպով և գրված»**):

Հողագրկությունը հարկադրում ե գյուղացիներին կալվածատերերից հող վարձակալել: Կալվածատերը շատ լավ գիտի նրանց ծալքահեղ կարիքը: Նա գիտի, վոր նրանք հարկադրված են անպատճառ ոգտվելու իր հողից, այդ պատճառով ել ծանր պայմաններ և նրանց առաջադրում, ձգտելով ավելի ու ավելի բարձրացնել հողային սենտան: Վճարումի չափը յերկրի զանազան վայրերում զանազան ե, այսպես՝ $\frac{1}{4}$, $\frac{1}{3}$ և նույնիսկ $\frac{1}{2}$: Այսպես, հենց նույն Գուրիայում գյուղացիք հողատիրոջը վճարում են բերքի մի յերբորդը, յերբեմն իսկ կեսը և բացի այդ ամեն մի քցեին (900 քառ. սաժ.) դարձալ մեկ սուբլի: Բացի այդ՝ գյուղացիք պարտավոր են բերքի կալվածատիրոջ բաժինը նրա սուն տանել ինչքան ել կալվածատիրոջ առւնը հեռու գտնվելիս չլինի: Ընդումին, վոր ամենից կարենուն ե, «գորպես չափի միավոր

*) Ibid. Եջ 7:

**) Արևելյան կովկասի նվաճման 50-ամյակի առթիվ «Русск. Ведом.» թերթի 1909 թ. № 200-ի մեջ ապահանգամակությունը՝ «Наши культуртрегеры» խորագրութիւն:

միշտ առատ բերքն ե ընդունվում, թեկուղ ավյալ տարում ամենեին բերք յեղած չլինի, այնպիս վոր գյուղացին այդպիսի դեպքերում պարտավոր և կալվածատիրոջը տալ իր սեփական միջոցներից յենթադրելիք բերքի մի յերբորդը»*):

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր նման գեղքերում գյուղացիք ծախում են իրենց աղքատիկ վողջ շարժական գույքը և դիմում վաշխառությունցքին, վորը սովորաբար բերթում և 40-50 %, յերբեմն նույնիսկ ավելի: Գյուղացիք, ինարկի, հնարավորություն չեն ունենում պարտքը փողով վճարելու, ուստի և վաշխառուն գտնուում ե պարտապանի բերքի տերը և այդպիսի դեպքում բնամթերքով ստանում վոչ միայն պայմանով իրեն հասանելիք պարտքը տոկոսներով հանդերձ, այլև կրկնակի, յեռակի ավել: Գյուղացիների գլխին մշտապես կանգնած են վաշխառուները, կապալառուներն ու յենթակապալառուները, կալվածատերերի ու հոգերականության (վանքապատկան կալվածքներում) գործակալները և չափում են նրա բերքը, զատելով բերքի «իրենց բաժինը». բայց «իրենց բաժինը» զատելու ժամանակ գյուղացիքը պարզապես թալանի ու կողոպուտի յեն յենթարկվում:

Բացի այդ՝ գյուղացիք անասունների համար հաճախ սեփական արոտաեղի չունեն: Նրանք ոգտվում են արքունիքին, վանքին կամ կալվածատիրոջը պատկանող արոտներից ու անտառներից և դրա համար հարկադրված են նույնպես վճարել: «Հողատիրը հաճախ արոտի իրավունքները ունենալուց ստանում է կենդանու ամբողջ արժեքի կեսից վոչ պակասը, հաշվի չառնելով դեռ այն, վոր կալվածատերերն ու նրանց կառավարիչները հաճախ գրավում են կենդանիներին, ծեծում են նրանց և պահում ամբողջ որերով առանց կերի»*): «Բացի վարելահողի կտորանքից, մենք չունենք վոչ անտառ և վոչ ել արոտավայր, — իր ճառի մեջ գյուղացիական պատգամավորը գանգատվում եր կովկասի կառավարչապետի ողնական կրիմ-Գիրեին, վոր 1905 թվի գարնանը Գուրիա յեր այցելել: Ամառային արոտավայրերը պատկանում են արքունիքին, իսկ ձեռաւլին արոտավայրերը՝ մասնավոր մարդկանց, թե մեկը և թե մյուսներն իր ժամանակին մեր կաշին են քերթում: Ամառային արոտավայրերից մենք տարեկան ամիս ու կես ենք ոգտըվում և այդ կարճ ժամանակամիջոցի համար արքունիքը մեզանից 500 սուբլի բահրա (օբրու—գала) յե վերցնում: Միենալուն բանը նաև անտառների վերաբերմամբ: Այնտեղ ծառերը փառում են, իսկ մենք փայտը փողով ենք գնում: մի փոքրիկ խոիվի համար մեզ տուգանում են»: «Բացի այդ՝ մեր վրա դրված են անորինակ չափի ուղղակի և

*) «Очерки рев. движ. в Гурии», Եջ 49 և «Искра» № 28.

**) «Искра» № 28:

անուղղակի հարկեր, իսկ այսպես կոչված արքունի գյուղացիները բազմապիսի տուրքեր են վճարում հոգուտ արքունիքի»*):

Հողային հարաբերությունների կատարյալ խառնաշփոթությունը, կառավարության կողմից գյուղացիների վրա զանազան հարկեր, տուրքեր ու բահրաներ դնելը, հոգեորականության (քահանաների, վարդապետների) կողմից նրանց թալանումը, վողջ վոստիկանական ճնշումը և նին կալվածատիրական-ազնվական ռեժիմի կամայականությունը իդեմ նրա տեղական ներկայացուցիչների՝ ստորին վոստիկանների, պրիստավների, գովառապետների, զանազան չինովնիկների ու բուրոկրատիկ գատարանի՝ ամբողջ գյուղացիությունը ծայր աղքատության են հասցըրել: Պառակերիդմը (հանրաչքալորությունը), վորի մեջ սուզված և կովկասի ամբողջ գյուղացիությունը, մի դրություն և, վորի ժամանակ բացարձակապես անհնարին և հասարակական ուժերի նորմալ զարգացումը: Ուստի և, բնականաբար, գյուղացիական յերիտասարդ սերուղը գյուղից գեպի քաղաք փախուստի պիտի գիմեր, մի հանգամանք, վոր կովկասի միքանի մասներում լայն չափեր և ընդունել: Այս գաղթը վոչ թե գյուղացիական մասաների նորմալ պրոլետարացման հետեանք և, այսինքն տեղերում տնտեսա-արդյունաբերական կյանքի զարգացման հետեանք, այլ ավելի շուտ հողային հարաբերությունների մեջ իշխող անարխիաի և ալիրող պետական գաղափով:

Հողագրկությունը կամ սակագահողությունը գյուղացիության թշվառության միակ պատճառը չէ: Սոցիալ-տնտեսական գարգացման գլխավոր խթանները՝ տեխնիկական առաջադիմությունը, աշխատանքի արտադրականության աճումը, ընդհանուր պրոֆեսսիոնալ կրթությունը և այն՝ կայ ամենեին բացակալում են կամ թե արտահայտվում են գյուղատնտեսական կյանքում աննկատ, չափազանց թույլ կերպով:

Յերբ կովկասան գյուղացիության գիտակցությունը՝ իրավական ու սոցիալական դրության մասին՝ կհասնի վորոշ աստիճանի բարձրության, այն ժամանակ նա իվիճակի կլինի իր տնտեսական ու սոցիալական աղատագրության համար հեղափոխական կովի մեջ մըտնելու հին ռեժիմի հետ: Նրա մի մասը (Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում) 1902 թվից սկսած հարում և Ռուսաստանի ընդհանուր հեղափոխական հողային շարժմանը:

Ի նկատի ունենալով, վոր կովկասի արևմտյան մասի գյուղացիությունը, իսկ առանձնապես Գուրիայինը, հեղափոխական շրջանում նշանավոր դեր և խաղացել, այդ շարժման պատմությունը, անկասկած,

հետաքրքրական և մենք, թեկուզ և ընդհանուր գծերով, հարկ ենք համարում ընթերցողներին ծանոթացնել նրա հետ:

Նախ և առաջ, ամենից կարևոր հանգամանքը, վոր մենք այստեղ պիտի նշենք, գա այն և, վոր գյուղացիական շարժումը կովկասում, իր առաջնապացման որից սկսած և իր հետագա զարգացման ընթացքում, հանգիսանում և քաղաքավին պրոլետարիատի շարժման արտացոլումը: Քաղաքավին սոցիալ-դեմոկրատական շարժման հետ նա շատ ընդհանուր գծեր ու նմանություններ և ունեցել: Սոցիալ-դեմոկրատիայի հետ կովք-կողքի ու զուգընթաց և նրա դրոշակի տակ գյուղացիությունը կովում երվոչ միայն տնտեսական աղատագրության, այլ և քաղաքական աղատության համար: Նրա պայքարի հնարներն ու ձեռքը համարյաց ներկայական կուսակցությանը: Դա այդպես ել պիտի լիներ, յեթե ինկատի ունենանք, վոր «Գուրիայում գյուղացիական շարժման գլուխը սկզբից եեթ կանգնած և յեղել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վորը այստեղ լավ պատրաստի հող գտավ վոչ միայն քաղաքական աղատության ու պայքարի զարգափարների պրոպագանդի համար, այլև սոցիալիստական ուսմունքի պրոպագանդի համար»*: Ճիշտ և, թեպետ վերջին տեսակետը միքիչ չափազանցված և, վորովհետեւ գյուղացիական սոցիալ-տնտեսական կարգի գյուղություն ունեցող որյեկտիվ պայմանները հնարավորություն չեն ընձեռում սոցիալիստական զարգափարների լայն զարգացման համար, զարգափարների, վոր հետառությամբ ըմբռանում և գյուղացիության մի մասը միայն, այն և գյուղական վարձութանվորները, պրոլետարները, բայց վեմոկրատական շարժման լայն զարգացման համար գյուղական հասարակական կյանքում հողը շատ բեղմնավոր եր: Գյուղացիական շարժումը, ըստ իր ներքին բովանդակության ու բնույթի, մանր-բուրժուատական, դեմոկրատական լինելով հանդերձ, այնուամենայնիվ հեղափոխական շրջանում կարող և աջակցել սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի մինիմումի իրագործմանը: Այդ պատճառով ել սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը մեծ ազդեցություն կարող և ունենալ գյուղացիության վրա, չխօսելով արդեն այն մասին, թե նա, կուսակցությունը սոցիալ-դեմոկրատական շարժման ու կազմակերպության մեջ առաջ պիտի քաշի գյուղացիության վարձու, պրոլետարական մասը, ինչպես և այն կիսապրոլետար մանր գյուղացիներին, վորոնք տնտեսական պայմանների հետեանքով արագաքայլ դիմում են գեպի կատարյալ աղքատացումն ու բանվորացումը: Յեկ պիտի ճշմարտությունը խոստավանել կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի մասին նա կատարում և իր դերը յերկրի ա-

*) «Очерки рев. движ. в Гурии», 40 և հաջորդ հջերը:

*) «Очерки рев. движен. в Гурии», 42 3:

բեմայան մասում (Քութայիսի, Թիֆլիսի նահանգ) բնակված դյուզացիության վերաբերմամբ ընդհանրապես և Գուրիայի գյուղացիության նկատմամբ մասնավորապես, իսկ հարավ-արևելյան գյուղացիությունը (հայ և թուրք) շարժումից դուրս և մնում*): Այս յերեսութիւնը (հայ և թուրք) շարժումից դուրս և մնում*): Այս յերեսութիւնը (հայ և թուրք) շարժումից դուրս և մնում*): Այս յերեսութիւնը (հայ և թուրք) շարժումից դուրս և մնում*):

Դյուղացիական հողալին շարժումը կովկասում ամէնից առաջ ըսկսվում և Գուրիայում 1902 թվի սկզբին: Զարգանում և այնտեղ ամենայն ուղղությամբ, իսկ այսուհետև արդեն ընդգրկում Մինդրելիան, Խմերեթիան, Քարթալինիան և այլն:

Ինչպես արդեն վերը մատնանշվեց, ընդհանրապես գյուղացիության և մասնավորապես Գուրիայի գյուղացիության տնտեսական զըրությունն այգպիսի, թեկուղ և նախնական տարերային շարժման համար հող ներկայացնում եր: Ստկայն սրանով շարժման հարցը դեռ չի սպառվում: Ինչո՞ւ Գուրիայում, ինչպես և Անդրկովկասի մյուս վայրերում, շարժումն սկսվում է հենց 1902 թվականին, և վոչ թե մի 2-3 տարի գրանից առաջ,—ասկէ 1899, 1898 թվականներին, յերբ տիրում ելին սոցիալ-տնտեսական դրության միենալին պայմանները: Այս կարդինալ հարցը միեր առաջ ծագում և այն դեպքում, յերբ խոսք ելինում քիչ թե շատ գիտակցական մասսայական շարժման առաջացման մասին:

Ճիշտ ե, կեղեքված, ընկճված դրությունը կարող է ընդհանուր առմամբ տարերային շարժում առաջացնել, վորի մեջ մենք կարող ենք միշտ սաղմեր ու տարբեր գտնել՝ մասսայի կողմից իր շահերը թեկուղ տարտամ կերպով ըմբռնելու և իր դրությունը վորոշ չափով գիտակցելու վերաբերմամբ, չխոսելով արդեն տարերային շարժման գլուխը սովորաբար անցնող առաջնորդների գիտակից լինելու մասին: Բայց այգպիսի տարերային շարժումները հաստատուն, տեսական չեն և մեծ մասամբ թերություններ ու անցանկալի հետեւնքներ են ունենում: Այլ բան է գիտակցական, կազմակերպված շարժումը: Այդպիսի բնույթ եր կրում մասնավորապես Գուրիայի շարժումը: Գուրիայում մենք զըտնում ենք պլանաչափ, քիչ թե շատ գիտակցական շարժում, վորովհետև շարժումից թե առաջ, և թե հետո այնտեղ ուժեղ կերպով աշխատանք ե վարել սոցիալ-գեմոկրատիան, վորը և շարժման վլուխն և անցնում ու զեկավարում նրան: Այն յերեսութը, վոր կառավարությունն արդյունաբերական կենտրոններից՝ Թիֆլիսից, Բաթումից և այլ տեղերից սիստեմատիկորեն մեծ խմբերով ծննդավալը եր աքսորում արդեն

*) Այս վերջին պարբերությանը Ա հրատարակության մեջ սիստեմատիկան և թարգմանում ենք 1 հրատարակությունից: Ա հրատարակության մեջ սրանից զատ պատճեն են նաև ուրիշ սիստեմատիկան և այլ տեղերում ամենուրեք թարգմանությունը կատարել ենք 1 հրատարակությունից: Ծան. քարզ.

պրոպագանդայի լենթարկված բանվորների, գործադուլավորների ու ցուցարարների, դա կարևոր մի հանգամանք և լինում, վորպեսզի աշակցի վոչ սիալն Գուրիայի, այլ և ընդհանուր-գյուղացիական շարժումի առաջացման գործին և աղղի նրա զարգացման ամբողջ ընթացքի վրա: Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցներում ու գեղարդում և Բաթումի զավոդներում բանվորների մեծ մասը գուրիացիք ու իմերեթցիք ելին կազմում:

Առաջին անգամ Թիֆլիսից շատ բանվորների Գուրիա և Խմերեթիա ետապով աքսորում են 1900 թվին, Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցների ու գեղարդի հայտնի գործադուլից անմիջապես հետո: Այնուհետև Բաթումից 1902 թվի մարտին, գործադուլից ու բանվորների կոտորածից հետո, Ոզուրգեթի գավառի (Գուրիա) գլուղերն աքսորվում են 300-ից ավելի բանվորներ, չխոսելով արդեն աքսորելու մյուս գեղաքերի մասին, վորին կառավարությունը սիստեմատիկորեն զիմում եր քաղաքաներում պրոլետարական-հեղափոխական շարժումն արմատախիլ անհետու համար: Հենց այս բանվորներն ել մտցընում են գյուղացիական միջավայրում քաղաքային պրոլետարիատի գաղափարներն ու պայքարի ձեռքերը: Նրանք զարթեցնում են գյուղացիական պրոլետարներին ու կիսապրոլետարներին, պրոպագանդամում նրանց մեջ, տարածում անլեգալ գրականություն ու թուուցիկներ, կազմակերպում խմբակներ ու ժողովներ, տոնում պրոլետարական մայիսի 1-ը և այլն: Մի խոսքով, պրոլետարական կարմիր գրոշակը նրանք ծածանում են գլուղերում և հենց իրենք ել դառնում հեղափոխական շարժման պիոներները գյուղերում:

Ազգբում պրոպագանդան ու ագիտացիան կրում են պատահական բաժան-բաժան բնույթ և, ընդումին, ագիտատորներն ու պրոպագանդիստներն իրենց գլխավոր ուշադրությունը զարձնում են՝ պարզաբանելու գյուղացիների տնտեսական ձնշված գրությունը, նրանց հողալին հարաբերությունները և կալվածատերների ու հոգեորականության կողմից նրանց շահագործումը: «Միայն յերբեմն հարեանցիորեն աշխատում ելին բացատրել գյուղացիության իրավագրկության ու աղքատության կազմ Ռուսաստանի ընդհանուր քաղաքական պայմանների հետ»*): Սակայն շարժման աճման հետ միասին ավելի ու ավելի վերաբանում են չքանում են գործիչների գործերի այդ բաժանվածությունն ու անկատությունը և նրանց՝ առանց վորոշ ծրագրի ու նախապատրաստության միակողմանի գործունեցունը: «Դյուղերում կազմակերպվում են արդեն ինտելիգենտների խմբակներ, վորոնք իրենց համար նպատակ են դնում գրականություն տարածել և բանավոր պրո-

*) Ibid. եջ 17:

պագանդա մղել, նրանք ել հենց կապ են պահում քաղաքային կաղմակիրպությունների հետ և ստանում անլեզալ զրականություն, վորը և տարածում են գյուղացիների մեջ»*):

1901 թիվը, առանձնապես Գուրիայի համար, ծայրահեղ գժրախտ մի տարի յելինում: Այդ տարվա անբերրիությունը գծից միանգամայն դուրս ե գցում գյուղացուն, կործանում նրան:

Նակարութավարձը (օրենդայ ոլորտ) վճարելու վոչ մի միջոց չի ունենում և կրկին պարտքի մեջ ե ընկնում:

Սոցիալ-դեմոկրատական հեղափոխական գործունելությունը քաշալերում ե նրան, բացում ե նրա աչքերը, կարծես թե նա զարթնում ե զարագոր քնից: Մկանում ե գյուղացիական կյանքի համար նոր թվական:

1902 թվի մայիսի սկզբներին, Նիզոիտի գյուղում (Արևմտյան Գուրիայում) ընդհարում ե տեղի ունենում գյուղացիների ու կալվածատերերի միջև: Դա առաջին անգամը չեր: Կալվածատերերը, իշխանք Մաշուտաձեները, սաստիկ ճնշում ելին գյուղացիներին և առաջներում քանից զանազան առիթներով բաղխումներ ելին տեղի ունեցել նըրանց միջև: Խոկ այժմ վեճը ծագում է արոտավայրերի առթիվ:

Սոցիալ-դեմոկրատական խմբակը միքանի ժողովներ ե կաղմակերպում, վորտեղ մանրամասնորեն ուսումնասիրում ե գյուղացիների դրությունը: Ճառերը գյուղացիների վրա ահազին տպավորություն են գործում: Միուս գյուղերը, հենց վոր խմանում են շուտով այդ մասին, պահանջում են, վորպեսզի իրենց մոտ ևս այդպիսի դրույցներ կաղմակերպվեն:

Նույն թվի մայիսին, գիշեր ժամանակ անտառում, Միքել-Գարբիելան հասարակության մեջ, մեծ ժողով ե հրավիրվում, վորին ներկա յելինում գյուղացիների մի բազմություն՝ հավաքված զանազան գյուղերից: Ժողովին ճառեր ասում ելին վոչ միայն պրոպագանդիստները, այլև ներկա յեղող գյուղացիներից շատերը չերմ մասնակցություն են ունենում ամենքին հուզող հարցերի քննության մեջ: Մինչ առավոտ տեսում ե ժողովը և գյուղականները, ընդհանուր գործին չդաշտանելու յերդում անելուց հետո, ցըլում են նրա խիստ աղքա-ցության տակ:

Մայիսի 28-ին նույնպիսի բազմամարդ ժողով կաղմակերպում ե Զաշխատի գյուղում, հետո հունիսին Սուպսի գյուղի ույունում, Խվարբետի, Գուրիանտա, Գվարզու, Մամաթի, Զիմիտի և ուրիշ գյուղերում**): Այդ ժողովներում վոչ միայն մանրամասնորեն պար-

*) Ibid.

**) Այս ու հաջորդ բոլոր տեղեկությունները համարյա բառացիորեն քաղում ենք նույն բըռջուրից և շարժմանը մասնակից գուրիացի ընկերների պատմածներից:

զարանվում են գյուղացիների տնտեսական դրությունը, նրանց հարաբերությունները կալվածատերերի ու հոգեորականության հետ, այլ և ձեւակերպվում են անհրաժեշտ պահանջներ, նշանակվում պայքարի միջոցներ ընդդեմ շահագործողների: Գործադուլը, բոլիկոտն ընդունվում են վորպես պայքարի ամենալավ գործնական միջոցներ: Գյուղացիք ակսում են բոլիկոտի դիմել հոգեորականությանը չվճարելով «գրամացին փողերը»*): Կալվածատերերն ու հոգեորականությունն անտարբեր են վերաբերվում դրան, չին հավատում, թե այդ ամբողջ պատմությունից մի լուրջ բան դուրս կգա. Նրանց թիկունքում կանգնած եր վոստիկանական ու կաղակային վողջ ուժը, և, նրանց կարծիքով, իրենց հնագանդ «մշտական ստրուկներն» այնքան վախկոտ ելին, վորիվիճակի չելին լինի ընդդիմադրելու իշխանությանը: Սակայն նրանք չարաշար սխալվում են: Հուզումներն ավելի ու ավելի մեծանում են և ահեղ բնույթ են ընդունում: Շահագործող դասերն սկսում են ավելի զիջող գառնալ և կեղծությունների իրենց պատրաստակամությունն են հայտնում՝ ընդառաջ գնալու նրանց, մինչդեռ նրանք մշտական փոխհարաբերությունների միջ են լինում իշխանության հետ և միջնորդություն հարուցում նրա առաջն պաշտպանելու իրենց ապստամբ ժողովրդից: Լրտեսությունն ու պրովոկացիան այդ ժամանակ ամեն ասհանան անց են կենում: Խոռված ժողովուրդն ավելի սաստիկ կատագում և լրտեսության ամեն տեսակի ակտի ու ժողովրդական գործի պավաճանության դեմ:

Զնայած սոցիալ-դեմոկրատիան յեռանդագին ընդդիմանում ե տերըրին, բայց գյուղացիք սկսում են այդ միջոցին հաճախ զիմել: Վոչնչացնում, սպանում են կալվածատիրոջը, տերտերին և բոլոր նըրանց, ովքեր այս կամ այն կերպ վնասակար են յերեսում: Այսպիս, այդ ժամանակ սպանվում են՝ իշխան դավիթ Գուրիելի, Վարնավա Կարցիկաձե, վիրավորվում են՝ Տելեմաք Գուրիելի, «կառավարական լըրտես» Եսիկա Նակաշիձե և ալլն:

Կալվածատերերն ահարեկված ելին: Ազնվական-կալվածատեր Կոցիա Երիստովի, Բեղիա Կոբախիձելի, Տիտիկո Երիստովի և ուրիշ շատերի նախաձեռնությամբ Ողուրգեթ քաղաքում գաղտնի աղնվական ժողով ե գումարվում, վորտեղ մշակվում են ինքնապաշտպանության միջոցներ և վորոշվում ե միջնորդել բարձր իշխանության զիմաց անմիջական ոգնություն ցուց տալու: Ներկա յեղողներից մեկը նույն խսկ առաջարկում է Կովկասում որոշի մացնելու պահանջը դնել: Յերկու կողմերն ել կովի յեն պատրաստվում:

*) «Դրամա» Վրաստանում կոչվում եր ծխական քահանաների սպահն հավաքվող առուրքը թե փողով և թե բնամթերքով:

Ակզրում կառավարությունը չեր միջամտում. Նա սպասողական տակտիկա չեր բռնում: Այդպես յերկար չեր կարող շարունակվել: Համոզվելով, վոր գյուղացիական շարժումն իրեն համար վատանգավոր ձեւը և ընդունում, կառավարությունն սկսում է դիմել իր սույորական տակտիկային՝ նազայկային ու սվինին:

Հրաման և արվում Քութայիսի նահանգապատճեռ Ամագինին Գուրիա շրջել և խստագույն միջոցներ ձեռք առնել: Նա շրջում և և ժողովներ և գումարում: Ամենից համարձակներին (բյուրոկրատիալի լեզվով «հանգուգներին») ձերբակալում և և ձերբակալություններով ու սպանալիքներով լենթադրում և վերացնել համաժողովրդական դժգոհությունը: Միքել-Գաբրիելյան հասարակությունը, վորին միանում են մյուս բոլոր գյուղական համայնքները, հետեւալ պահանջներն ե առաջարկում. 1) վերացնել վճարումները հավաքելու զորություն ունեցող կարգը. հողի կալութավարձը իջեցնել մինչ բերքի $\frac{1}{8} - \frac{1}{10}$ մասը, 2) վոչնչացնել արոտավայրերի բահրային վճարումները, 3) վոչնչացնել սպիրտի ու ողուակցիզը, 4) պարտադիր դարձնել տեղի բոլոր բնակիչների համար սալլուղիների բարեկարգումը և յեկեղեցիների պահպանությունը, 5) հավաքել սահմանաբաժանության ծախսերը բոլորից հավասարապես, 6) վոչնչացնել «գրամային» տուրքը և 7) վոչնչացնել բոլոր դասային հատուկ իրավունքներն ու արտոնությունները և հավասարեցնել բոլորին որենքի առաջ: Հասկանալի յե, վոր նահանգապետը չեր կարող բավարարել գյուղացիների պահանջները, նա միայն վայրագանում ե. մերթընդերթ խրատում և ժողովրդին, թե նրան խելքից հանում են ինչ-վոր ավարա ու պարապարապ թրել յեկող մարդիկ: Ամենաչնչին չափով անգամ չբավարարելով գյուղացիներին, Սմագինը մեկնում ե, միանգամայն համոզված լինելով, վոր գրությունը «լուրջ գտանգավոր ե»:

Նահանգապետի մեկնելուց հատու գյուղացիք վճռում են հանրադուլ (օճառայ շտակա) սկսել: Վճռի համաձայն վոչվոք չպիտի աշխատեր կալվածատիրական հողերում: Կալվածատերերի ծառաներն ու աշխատավորներն անմիջապես պիտի ընդհատելին ծառայությունն ու աշխատանքը: Լիազորներին հանձնարարվում և ամենուրեք հայտարարել այս գճիրները: Գյուղացիք, միմյանց յերգում տալով, վոր խստորեն կկատարեն այդ գճիրները, խանդավառ բացականչություններով ու յերգեր յերգելով ցրվում են գյուղերը:

Պայքարը սրվում ե: Պահանջվում է շատ ավելի միահամուռ, վորոշ սիստեմի բերած ու պահանջափ գործունելություն և աշխատանք: Տեղական խմբակները գործում են ցիրուցան: Զար դեռ տեղական զեկավար մի կենտրոնական մարմին: Միայն Բաթումի կոմիտեն եր գյուղացիների համար թուցիներ ու թերթիկներ հրատարակում:

Գուրիայի համար անհետաձգելի անհրաժեշտություն եր սոցիալ-դեմոկրատիկան հատուկ կոմիտե ունենալը: Այդ կոմիտեն հիմնարկվում ե 1903 թվի գարնանը՝ «Գուրիայի գյուղական բանվորական կոմիտե» անունով: Նա տպագրված մի կոչով դիմում և ժողովրդին: Այդ իսկ ժամանակ կովկասյան Միութենական կոմիտեն նույնպես թուցիկ ե բաց թողնում՝ «Գուրիայի գյուղացիությանը» վերնագրով, վորի մեջ ընհանուր գծերով շարադրվում ե գյուղական բանվորների տնտեսական ու քաղաքական ծրագիրը:

1903 թվի մայիսին Գուրիայի կոմիտեն համագումար ե հրավիրում, վորի կազմի մեջ մանում են մեծ մասամբ գյուղացիները, ինչպես և սոցիալ-դեմոկրատական աշխատավորները, ազիտատորներն ու պրոպագանդիստները:

Համագումարի որակարգի մեջ հետեւալ հարցելն են նշանակվում.—կազմակերպության պլանը, պարապմունքների ծրագրի մշակումը, տակտիկան, ազիտացիսն, տերրորը և այլն: Համագումարում վերլուծվում ե «կոմմոնիստական Մանիքեստը» և, ինկատի ունենալով սոցիալիստ-հեղափոխականների ծրագիրը, վորի մեջ տերրորը կարևոր տեղ եր բռնում, քննության ե առնվում վերջինիս (այսինքն տերրորի) հարցը: «Համագումարը դասակարգային գիտակցության և մասսայական պայքարի զարգացման համար տերրորը վնասակար ե համարում, ուստի և վորոշում ե արգելել բոլոր ընկերներին, վորպես կուսակցական անդամների, դիմելու տերրորին»:

Այնուհետև մշակվում ե տակտիկական ծրագիր և պարապմունքների սիստեմ: «Բացի հատուկ կարևոր գեղքերից, համագումարը ժիառում ե մասսաների մեջ ազիտացիան, այն նկատառումով, վոր նախկին մասսայական ժողովները հնարավորություն են ընձեռնել պրովկատորներին խցկելու տեղական կազմակերպությունների մեջ: Կազմակերպությունը հետեւալ տիպն ե ընդունում. «Յուրաքանչյուր գյուղում պիտի լիներ յեթե վոչ ավել, գոնե մի հատ գյուղական խմբակի բաղկացած տասն հոգուց. գյուղական խմբակերի պատգամավորները, մեկական յուրաքանչյուր խմբակից, կազմում են հատուկ ուայոնական ներկայացուցիչը և նրա ոգնականը: Ռայոնական ներկայացուցիչները կապ են հաստատում բոլոր հասարակությունների հետ և ընտրում են իրենց համար հասարակությունների ներկայացուցիչներ: Ռայոնական ներկայացուցիչների աշխատանքի մեջ մաս-

նուց-դեմ. Անդրկովկասում—10

նակցություն ունենում ելին նաև պրոպագանդիստները։ Նրանք կազմակերպում ելին դրամարկղային խմբակներ, վորոնց մեջ ել պրոպագանդա ելին մղում։ Տեղական վերջին ինստանցիան հանդիսանում եր կոմիտեն, վորն անմիջական կապ եր պահում ուսյոնական ներկայացուցիչների հետ և վողջ կազմակերպության միջոցով իր ազդեցությունը տարածում ժողովրդի մեջ»*):

Այսպիսով կովկի պրոցեսում զբուղացիության հեղափոխական տարրերը կազմակերպվում են, ավելի ու ավելի զիտակցում իրենց դասակարգային շահերը և ընդհանուր քաղաքական ու տնտեսական կովկի անհրաժեշտությունը։ Համակրանքը դեպի սոցիալ-դեմոկրատիան, դեպի «Ախալի-Թառուա»-ն (նոր սերունդը), ինչպես կոչում ելին նրան գուրիացիք, շատ մեծ եր։

Բարձրագույն կառավարությունը և Կովկասի կենտրոնական իշխանությունը խիստ կատարում են «ապստամբ Գուրիայի» դեմ։ Ճընշել Գուրիային ինչ ել լինի, ինչպիսի միջոցներով ու զնով ել լինի, — ահա այն ինդիքը, վորն իրազործելու համար ինքնակալ կազակային կառավարությունը գործադրում ե իր վողջ արվեստը։ Կալվածատերից վոմանք, նախազգալով փոթորիկը պատրաստակամություն են հայտնում բավարարելու գյուղացիների պահանջները։ Տերտերները նույնիսկ հակառակ չելին հրաժարվելու «գրամագին» փողերից, բայց նահանգապետ Սմագինը և նրա ոգնականն իշխանաբար ու կտրուկ կերպով նախազգուշացնում են նրանց, վոր այն ամենը, ինչ մտազըրվում են նրանք զիջելու գյուղացիներին, ինքը նահանգապետը հարգունիս կրավի և բացի այդ նրանց պատասխանատվության կենթարկի **):

Բարձր իշխանության հրամանով Քութայիսի փոխ-նահանգապետը մի հարյուրական կազակներով 1903 թվի ոգոստոսի 6-ին ժամանում ե Ողուրգեթ քաղաքը։ Այդ ժամանակից ենթ սկսվում ե այդ ամբողջ ժողովրդի իսկական մարտիրոսության պատմությունը։ Ինքնակալ կառավարությունը կենսական հարցերը վճռելու այլ միջոց չգիտի, բացի իրեն սովորաբար գործադրած միջոցներից, ինչպիսին՝ կազակ հրոսակութերի վանդական ասպատակությունները, եկեղեկուցիաները, բանատը, գնդականարությունը, աքսորը և այլն։ «Յերկու ամբողջ ամսվա ընթացքում, — գրում ե հիշյալ բրոյցուրի հեղինակը, — ոեպրեսսիաներն ու աշխատավոր մասսաների քայլքայումը դադար չեն առնում։ Ոգոստոսի 7-ին Միքել-Գաբրիելյան գյուղական հասարակությունից կանչում են 25 գյուղացիների և նրանց մեջ նաև 4 ինտելիգենտների։ Նրանց բոլորին ձերբակալում են և պահում կազակների պահպանության տակ։

*) Ibid., «Աշքրա» № 104.

**) «Աշքրա» № 57.

Զյուղականները վորոշում են կազակների վրա հարձակվել և բռնվածներին ազատել, բայց այդ ձեռնարկությունից հարկ է լինում հրաժարվել։ Հաջորդ որը բոլոր ձերբակալվածներին Քութայիս են ուղարկում։ Ոգոստոսի 8-ին Նիգոյիտի գյուղում ձերբակալում են մոտ 20 մարդ, նրանց ևս Քութայիս են ուղարկում։ Շատ մարդկանց են ձերբակալում նույնպես Սուպսի, Չոչխատի, Միքել-Գաբրիելի, Ամազլեբա, Խվարբետի, Խիգիսթավի և ուրիշ գյուղերում։ Քութայիսի, Ողուրգեթի ու Բաթումի բանտերն ամբողջովին լեփ-լեցուն ելին ժողովրդով։ Կալվանավորված ելին ընդամենը մոտ 250 մարդ *): Բանտարկում ելին բոլորին, նույնիսկ հիվանդներին, ինչպես Փելզեր Ան։ Մամիշվիլուն, վոր 40⁰ տաքության մեջ չարորակ ջերմախտով հիվանդ եր և շաբաթից ավել անկողնից վեր չեր կացել։

Այժմ Գուրիա մի ամբողջ գունդ զինվոր ե գալիս։ Բանտարկյալներին սկզբում ուղարկում են Ողուրգեթ, իսկ հետո Բաթում, Փոթի կամ Քութայիս։ Տանում են վոտքով, ծաղրանքի ու հայնուանքի լինթարկելով։ Վոչվոքի չեն խնայում՝ վոչ լերեխաներին, վոչ ծերերին և վոչ ել հիվանդներին։ Կազակներն ու պահանորդները (Շրայնիկ), աշտանակելով ձիերը՝ մտրակները ձեռքներին քցում են նրանց, հարկա գրելով վազեվազ հասնել ձիերի յետերից. վայ նրան, ով հոգնածությունից կամ թուլությունից ի վիճակի չեր լինում վազելու։ Նազայկան իշնում եր նրա թիկունքին առանց խնայելու։

Այս արշավանքից ու պատժից հետո նահանգապետ Սմագինն ածապարում ե անձամբ շրջել գյուղերը կազակներով ու զինվորներով։ Նա կանչում ե յուրաքանչյուր գյուղն առանձին (և վոչ թե հասարկությունները), վորպեսզի ավելի հեշտ լինի իրեն համար գատաստան անելը։ Յեթե մեկը համարձակվում եր պաշտպանվելու և արդարանալու թեկուք մի խոսք տաել, նրան Սմագինը ձերբակալում եր և կազակներին հանձնում գտատաստան կտրելու։ Նշավակությանը վերջ չի լինում. լրտեսների ցուցմունքներով ուսուցիչներին բանտարկում կամ արձակում են։ Գյուղական յոթ հասարակությունների զրկում են տանուտերը ընտրելու իրավունքից և նշանակում կառավարական տանուտերներ՝ տարեկան 450—500 սուրլի ոռնիկով։ Նահանգապետը գյուղերից ամեն մեկում ուղարկում ե 50—60 հոգի զինվոր, վորոնց ապրուստը լիովին գյուղացիները պիտի հոգային։ Հոգեորականության ոգտին «զրամային» տուրքերը պահանձելու համար ամենուրեք պահնորդներ են ուղարկում, վորոնք բնակչության հետ վարդում են ուղածնին պիտի Յեթե փող չեր լինում, նրանք իրեր ելին վերցնում ։ «Խոռվություններ» մասին տեղեկություններ ստանալու համար Սմագինը միքանի

*) Մի ուրիշ աղբյուրի համաձայն՝ մոտ 300 մարդ։

որով կալանավորում եր 4—5 հոգուց կազմված խմբերի, հուլս ունենալով այդ կերպ հարկադրել թուլամորթներին մատնելու իրենց ընկերներին: Ողուրդեթում մարակի զսոսվ հարկադրում են մատնիլ շարժման ղեկավարներին: Բայց ի մեծ ցավ բարբարոսների, ժողովուրդը չեր մատնում իր ղեկավարներին, թեպետ և ամենքն ել ճանաչում ելին նրանց:

Ամբողջ Գուրիայում փակում են բոլոր ընթերցարան-գրադարանները, վոր մինչ այդ համարյա ամեն մի գյուղ ուներ:

Իսկ ի՞նչ ելին անում այդ ժամանակ իշխաններն ու կարվածառերը: «Իրենց գործերը շտկելու համար նրանք խոսքը մեկ արած հըրդեհում են իրենց ավերգող խարխուլ շենքերը և մեղքը գյուղացիների վրա գցում, իսկ իշխանությունն այրված կարգածքն իր արժեքից 10 անգամ բարձր եր գնահատում ու ժողովրդից գանձում:

Հնձի ժամանակ գաշտում գյուղացիների յետելց մշտապես մահ եյին գալիս պահնորդները և զոսով վերցնում այն, ինչ վոր կալվածատերն ուղում եր իրենից վարձակալած հողի համար: Յեթե գյուղացին ընդդիմանում եր այդ բացահայտ կողովուտին, նրան ձերբակալում եյին: Գյուղն այդ ժամանակ իրենից վրդովեցուցիչ մի պատկեր եր ներկայացնում: Կարելի յեր կարծել, թե ժողովուրդն ապրում և ԱղաՄամեդ խանի արշավանքների ժամանակները»:

Նահանգական կառավարիչների այս ասպատակություններից հետո հաստատվում ե գաղտնի վրատիկանական մշտական գործակալություն (լրտեսություն ու պրովինցիա), գյուղերն ու շենքերը լցվում են լրտեսներով: Հետո պրիստավներից վոմանց հեռացնում են և փոխարինում ավելի «լեռանդու» մարդկանցով: Լազարենկոյի տեղը նշանակվում ե իվան Զատպարիձեն, վոր իր գազանություններով հոչակ եր ձեռք բերել: Նա շրջում ե գյուղերը և բոնությամբ ու հորդորանքներով, մտրակով ու շողոքորթությամբ հարկադրում ե բոնել ագիտատորներին ու հանձնել նրանց իշխանությանը: Կարգածատիրական հողերում յերբ գյուղացիներն աշխատելուց հրաժարվում եյին, նա հարձակվում եր նրանց վրա ու մտրակով անխնա ծեծում: Նա ժողովներ եր կազմակերպում և ոռզդիներով, մտրակներով ու զանազան պատժիչ միջոցներով սարսափեցնում բոլորին: Բայց ժողովուրդը չեր վհատվում: Նատկուն կերպով տանում եր կառավարության և նրա մանր ու խոշոր չինովնիկների բարբարոս ու ավերիչ բոլոր արարմունքները և կազմակերպում ու պատրաստվում եր կովի համար: Խնքնակալ կառավարությունը նրան այժմ փորձնական մի դաս և տված լինում և գյուղացիունն ի գեմս նրա ճանաչում և իր ամենաչար թշնամուն: Նրա արիությունն ու հեղափոխական յեռանդն ել ավելի բարձրանում ե, յերբ մայիսյան համագումարից անմիջապես հետո Գուրիայի ժողովրդի լայն խավերի կազմակերպությունները, այդ պատճառով ել վճռում առժամանակ բավականանալ միայն սովորական ագիտացիայով ու պրոպագանդայով»):

Այն ամենը, ինչ վոր կատարվում եր Գուրիայում, համարյա միաժամանակ տեղի յեր ունենում նաև Քութայիսի ու Թիֆլիսի նահանգների զանազան մասերում: Գուրիայի շարժումն անդրադառնում է նաև նրանց վրա: Իմերեթ-մինքը գյուղացիները նույնպես պահանջում են, վորպեսզի պահանջներն ունենան, վոչնչացնեն հոգուտ տերտերների գանձվող «գրամային» փողերը, և աղնվականները մասնակցեն գյուղա-

կերպությունը ձեռնամուխ և լինում նոր սկզբունքներով բազմակողմանի ու յեռանդագին աշխատանքի: Կազմակերպչական կապերն ընդլայնվում են, և այդ նպատակի համար յուրաքանչյուր գյուղում նշանակվում են ներկայացուցիչներ: Արագ կերպով շատանում ե գյուղական խմբակների թիվը, վորոնց սերտուն համախմբում ու զեկավարում ե մեկ կազմակերպություն: Պրոպագանդան ու ազիտացիան, թե բանավոր և թե գրավոր, նույնպես պլանաչափ ու սիստեմատիկ բնուկթ ե ընդունում: Այդ տեսակի աշխատանքի կարիքն այնքան խոշոր և լինում, վոր այդ ժամանակ պրոպագանդիստների ու ազիտատորների մեծ պակասություն և զգացվում:

Կառավարության դիտավորությունները հայտնի գառնալուց հետո ժողովրդական շարժումն ավելի քաղաքական բնուկթ ե ստանում: Քաղաքական հարցերի հետաքրքրությունը խիստ մհծանում է: Կալվածատերին անտեսական բոյկոտ անելուն զուգընթաց պահանջ և առաջանում բոյկոտելուն նաև կառավարությունն ու նրա հիմնարկները: Այդ ժամանակ արդեն կոմիտեն բաց ե թողնում «մեծ մասամբ քաղաքական բնույթ ունեցող թռուցիկներ»: Աշխատանքի մեջ այժմ խիստ կերպով զաղանապահություն ե պահվում, մի բան, վոր առաջ համարյա գոյություն չուներ: Ամեն ինչ արվում ե առանց աղմուկի ու զաղտնի կերպով: Յեկ յերբ նահանգական իշխանակորները 1903 թվի ոգոստոսին կրկին ալցիկում են Գուրիա, ապա նրանք այդ «հանգստությունից» այն համոզմունքին են գալիս, վոր շարժումը սիանգամայն արմատախիլ և արված: Դա այդպես միայն թվում եր նրանց: Ընդհակառակն՝ ժողովրդական մասսաներն այդ ժամանակ նետվում են բացահայտ կովի, և կազմակերպությունը միծ դժվարությամբ կարողանում է զսպել վաղաժամ անոգուտ բռնկումները: Այդպես եր, որինակի համար, հուլիսյան գործադրություններին: «Կոմիտեն տվյալ մոմենտի համար ավելի կարենոր ու ոգտակար եր համարում զարգացնել խմբակների ցանցը և ընդհանրապես ամրապնդել քիչ առաջ ստեղծված Գուրիայի ժողովրդի լայն խավերի կազմակերպությունները, այդ պատճառով ել վճռում առժամանակ բավականանալ միայն սովորական ագիտացիայով ու պրոպագանդայով»):

Այն ամենը, ինչ վոր կատարվում եր Գուրիայում, համարյա միաժամանակ տեղի յեր ունենում նաև Քութայիսի ու Թիֆլիսի նահանգների զանազան մասերում: Գուրիայի շարժումն անդրադառնում է նաև նրանց վրա: Իմերեթ-մինքը գյուղացիները նույնպես պահանջում են, վորպեսզի պահանջներն ունենան, վոչնչացնեն հոգուտ տերտերների գանձվող «գրամային» փողերը, և աղնվականները մասնակցեն գյուղա-

կան ճանապարհների աշխատանքներին, յեկեղեցիների վրա պահակ կանգնեն և այլն: Ազնվական-հողատերերը գրգռվում են և, ըստ սովորության, դիմում են վոստիկանական իշխանությանը: Գործադուլ և անում Յեցերի գյուղական հասարակությունը: Սրան հետո միանում են՝ կուլաշի, Գանիրի, Ցիսինչի, Զաղանի, Սաշիլատ, Ղեղաթի և ուրիշ գյուղերը: Գյուղացիների մեջ մեծ քանակությամբ թուոցիկներ են տարածվում: Դավառապես Դադեշկելիսանին շրջում ե գյուղերը՝ հայ հուելով ու սպառնալով գյուղացիներին: Յեցերի գյուղում նա ձերբակալում ե 8 գյուղացիները բոյկոտ շարունակում են և վոչ սի տեղ էին պայմաններին չեն համաձայնվում: Նա սկսում ե սիստեմատիկ ռեպրեսսիաներ գործադրել բայց ամենուրեք համերաշխ ընդդիմագրության և հանդիպում: Նա ձերբակալում ե դարձալ միքանի մարդու, իսկ մեկին՝ նրա համարձակ առարկության համար՝ հրամայում ե նաշգայկաներով ծեծել: Վոստիկանության նոգնությամբ յերկու յերիտասարդ ազնվական զենքերը ձեռքներին բռնի կերպով հարկադրում են միքանի գյուղացիների աշխատել իշխ. Միքելաձելի հողի վրա: Սրանք ընկեր-գյուղացիների պահանջով ընդհանուր գործը չխանգարելու համար անմիջապես ընդհատում են աշխատանքը: Հրդեհում են իշխ. Միքելաձելի խոհանոցը, ընդսմին կոտորվում են նաև յեղները: Գավառակետը կալանավորում ե միքանի մարդու, ժողով և գումարում և հայտարարում, թե հրդեհի պատճառած վնասները, խոհանոցի համար 300 ռուբլի և յեղների համար 150 ռուբլի, գյուղականներից կգանձի: Գյուղացիները վրդովվում են. գավառապետի հրամանով պահնորդները գյուղացիներից մեկին ծեծում են նրա համար, վոր նա համար ձակություն և ունենում ասել. «Այդ գեպքում յուրաքանչյուր աղնվական կիրդեհի իր խարիսուլ խոհանոցը և դրա համար գյուղացիներից կգանձի տասնապատիկ ավելի»:

Սենակի գավառապետը նույնպես ուրիշներից պակաս ջերմուանդություն յերեան չի բերում: Նա պրիստավի հետ միասին Սաշիլատ գյուղում կալանավորում ե միքանի մարդու: «Անբարեհուլսների» յերկար ցուցակ կազմելու մեջ ազնվականները վորպես լրտեսներ մեծ յեռանդ են յերեան բերում: Սաշիլատ գյուղում հրդեհում են Դիդիավի պահեստի խանութն ու յեփիպատացորենի ամբարը՝ ծեծում ազնվական կործայալին: Նորից միքանի ձերբակալություններ են լինում: Գյուղերում հաճախակի յեն դառնում հողատերերին ծեծելու և հրդեհներ գցելու գեպքերը, բայց նման գործերը կատարում են այնպիսի մարդիկ վորոնք չեյին պատկանում կազմակերպությանը *):

1903 թվի սկզբին շարժում ե առաջանում նաև Թիֆլիսի հաճան-

*) Ա-ԴՐԱԿ հրատարակած «Բօրեա պրոլետարիա» թերթիկ № 1-ը:

գի Բորչալուի գավառի գյուղացիների մեջ: Այստեղ Հաղպատ գյուղի բնակիչները, վարձակալ-գյուղացիները պայքար են մղում տեղական կալվածատեր Բարաթովի դեմ: Հաղպատի գյուղացիները լուրաքանչուր «Ճիխն» ունեցին յերկու գեսիատին «Հողաբաժին», և սրանից ստացված յեկամուար չեր բավարարում գյուղացիների կարիքները: Այդ պատճառով եւ նրանք կալվածատեր Բարաթովից վարձակալում եին վարելահողեր, արտավայրեր ու անտառ, իսկ նա ամեն տարի բարձրացնում եր կալութավարձը (արենդայ պլատա) և քայքալման հասցնում գյուղացիներին: Վերջապես, համբերության բաժակը լցվում ե, և գյուղացիների մեջ սկսվում ե խորումը, վոր սպառնալից չափեր և ընդունում, յերբ Բարաթովի կարվածքներին նոր կառավարիչ և նշանակվում համալսարանական դիպլոմ ունեցող լիբերալ իշխ. Ավդուշելիշվիլին, վորի գաղանային արարքները սահման չեն ճանաչում: Ամենահասարակ պատրվակով նա ծեծում ե գյուղացիներին, դաշույնով հարվածելու նույնիսկ միքանի գեղքեր են լինում: Գյուղացիների գանգատները միշտ անհետնանք են մնույ, տեղական վոստիկանությունն այդ բանին մատների արանքով և նայում: Իշխ. Ավդուշելիշվիլին դա բավական չհամարելով՝ կրկնակի չափով բարձրացնում ե կալութավարձը: Գյուղացիները հրաժարվում են իշխ. Բարաթովից հող վարձակալել և սկսում են աշխատանք ճարելու համար գնալ քայքաները և Ղարսի յերկաթուղագծի ուղղությամբ, վորպեսզի այդ կերպ ստիպեն իշխ. Բարաթովին իշեցնելու կալութավարձը: Գաղան Ավդուշելիշվիլին իշեցնում ե կալութավարձը, բայց ուզում ե նողը վարձակալության տալ հարեան գյուղերի գյուղացիներին: Մուս գյուղերի գյուղացիները, հաղպատցիների հետ համերաշխ լինելուց զրդված, հրաժարվում են սիրալիր առաջարեկությունից: Սակայն արտոնագրված (պատենտօնանայ) ինտելիգենտն ուրիշ միջոցներ և գտնում հաղպատցիներին նեղելու համար: Գյուղացիների «Հողաբաժինները բաժանված եյին միմյանցից իշխ. Բարաթովի ճեռքում գտնված նողի շերտերով (օրեզք) և այդ իսկ հողի շերտերով նա սկսում ե նեղել գյուղացիներին «Հողաբաժիններից» ողտվելու ժամանակ: Գյուղացիներն սկսում են պահանջել «հողի շերտերը»: Իշխ. Ավդուշելիշվիլին դիմում ե վոստիկանությանը: Այդ մոմենտից սկսած պայքարը քաղաքական բնուկթ և ընդունում: 1902 թվի մայիս ամսին գավառապետը մի զորամաս կազմերով Հաղպատ և գալիս և հրամայում ե վոչ միայն «Հերտերից» հրաժարվել, ալ և կալութավարձը վճարել իշխ. Ավդուշելիշվիլուսահմանած չափով: Գյուղացիք կտրականապես հրաժարվում են և հեռագրով գանգատ են հըղում կովկասի կառավարչապետ Գալիցինին: Գանգատը մնում ե անհետեանք: Գավառապետը պնդում ե իր հրամանը, բայց դա գյուղացիներին չի վախեցնում: Այն ժամանակ նա հրամայում ե կազմակներին

գյուղացիներից խլել անասունները ծախելու համար: Կազակներն իսկույն և եթ ձեռնամուխ են լինում կատարելու իրենց «ծառայության պարտականությունը», բայց գյուղացիները քարերով ու դագանակներով հարձակվում են ցարական բաշիրողուների վրա և յետ խլում անասունները: Գավառապետը, տեսնելով, վոր հուզումները սուր բնույթ են ընդունում, դիմում ե ձերբակալությունների: Զերբակալում ե շատ զուղացիների: Դրանից հետո միքանի ամիս շարունակ վոստիկանությունն ու Ավուշելիշվիլին ամեն կերպ աշխատում են ստիպել գյուղացիներին անձնատուր լինելու, բայց այդ բանը վոչ մի կերպ չի հաջողվում: Գյուղացիների համերաշխությունը որը որին ամրապնդվում էր: Պրիստավը քանից գալիս ե ու սպառնում բոլորին բանտ ուղարկել: Վերջապես 1903 թվի գեկտեմբերին գալիս ե պրիստավը չափարներով (стражник—պահանորդ) և սկսում ջարդը: Գազազած գյուղացիները խիստ ջարդ են տալիս պրիստավին ու պահանորդներին, վորոնք և փախուստի յեն դիմում: Բայց մյուս որը գալիս ե գավառապետը 200 կազակներով ու վերջիններիս գրգռում գյուղացիների դեմ: Ընդհանուր ջարդից հետո ձերբակալում են բոլոր լերիտասարդ գյուղացիներին ու լցնում գոմը: Անասուններին քշում-տանում են վտճառելու համար: Ծերերն ու կանայք սկսում են աղերսել գավառապետին, վորպեսզի խղճա իրենց և վերադաշնի անասունները, բայց նա դիմում ե նրանց փողոցային հայուանքներով ու հրամայում «տղերանցը» խելքի բերել «լրերին»:

Տեղի է ունենում վրդովեցուցիչ մի տեսարան: Կազակներն ըսկում են ծեծել նաև յերեխաններին, բայց նրանք սկսում են պաշտպանվել քարերով ու դադանակներով: Գազանացած կազակ սպան հրամայում ե կրակել: Կազակները մի համազարկով գետին են վլորուս ութ մարդու (չորսը կին): Վախեցած բազմությունը ցրվում-փախչում է: Իշխան Ավուշելիշվիլին ու գավառապետը հասնում են իրենց նպատակին. գյուղացիներին խոռվարաններ են հայտարարում ու սկսում են ձերբակալություններ: Զերբակալում են 60 մարդու, վորոնցից 40 հոգու թիֆլիս են ուղարկում: Բացի այդ՝ ձերբակալվում ու Թիֆլիսի Մետեխի ամրոցն ե ուղարկվում ծխական քահանա Տեր-Հարություն Յերզնկյանը, վորին մեղադրում են գյուղացիական շարժումը կազմակերպելու և զեկավարելու մեջ:

Չնայած սրան, գյուղացիները չեն դադարում իշխան բոյկոտելուց^{*)}:

Գյուղացիական շարժումը, ինչպես և ամեն մի շարժում, զուրկ չե պատահական, բայց դեպքերի ընդհանուր ընթացքից յենող եպի-

գողներից: Այդպիսի եպիզոդներից մեկը կարելի յե համարել Թիֆլիսի նահանգի Գորու գավառի Բերզուետի գյուղացիների ընդհարումը իշխանության հետ, վոր տեղի յե ունենում մի պատահական առիթով 1903 թ. նոյեմբերին:

Գյուղական բժիշկը միայն ազնվական-կալվածատերերին երթշկում. յերբ գյուղացին հրավիրում եր նրան, նա այցելության համար պահանջում եր վոչ պակաս քան յերեք ոուրի, թեև տմեն տարի գյուղացիներից գանձումներ եյին կատարում բժշկի ոոճկի համար: Բյուրոկրատ իշխանավորի կողմից նշանակված խուլիգան-բժիշկն ինքնուրույնաբար յերեք գյուղ չեր գնում բժշկելու, չնայած վոր գյուղացիներից ոոճիկ եր ստանում: Այդ պատճառով ել գյուղական ժողովը միահայն վճռում և հրաժարվել բժշկական տարեկան տուրքերը վճարելուց և կարեք յեղած զեպքում հրավիրել ազատ գործող բժշկներին կամ թե բժշկական ոպնություն ստանալու համար մեկնել գավառական քաղաք:

Եեվ ահա այդ առթիվ գալիս ե պրիստավը պահանորդների հետ միասին և սկսում պահանջել գյուղացիներից վճարել փողերը: Գյուղացիները չեն տալիս: Այն ժամանակ նա ձեռք ե առնում «հատման միջոցները» (мерը պրեսենիա) և կանգնեցնում պահանորդներին միքանի գյուղացիների գլխին, իրեն մեջ հաշիվ անելով, թե այդպիսով պահանորդները նրանց կոտիպեն անձնատուր լինել: Յեկ, իսկապես, մի գյուղացի չգիմանալով պահանորդական այդ հսկողությանը, տալիս ե իր մասը: Մյուս գյուղացիներն այդ իմանալով պահանջում են պրիստավից վերադանել փողերը: Պրիստավը չի համաձայնվում: Գյուղացիները մի լավ ջարդում են պրիստավի ու պահանորդների կողերը և վորնում նրանց գյուղից: Նոր ասպատակության սպասումով ժողով են գումարում, վորին հրավիրում են նաև հարեան գյուղի գյուղացիներին: Համաձայնության են գալիս, վորպեսզի միասին մղեն պայքարը և զանգակների առաջին դողանջունը լսելուն պես հավաքվեն բոլորը:

Ութերորդ ժամին պրիստավը կրկին գալիս ե 60 կազակներից բազացած ոգնական զորքով: Գյուղը քնած ե լինում, միայն միքանի մարզիկ խաղաղ կերպով նստած են լինում ցանկապատի մոտ: Հենց սրանց վրա յել հարձակվում են կազակները նազայկաները ձեռքներին: Մեկին հաջողվում ե զանգակատուն հասնել և կոչնակ զարկել: Ամեն կողմից թափվում են գյուղացիները, և սկսվում ե կոիվը, վորը տեսում ե մինչև զեկերված ժամը 3-ը, յերբ պրիստավը կազակների հետ միասին, սաստիկ ծեծ ուտելուց հետո, ստիպված են լինում փախուստի դիմել և ազատվել: Մինչդեռ ժողովը կրկին անգամ հաստատում ե իր նախկին վճիռը՝ կովել մինչև վերջին հնարավորությունը:

*) «Անքա»-ի № 60-ի մեջ տպված թղթակցությունը:

Հաջորդ որը գալիս ե գավառապետը կազակների ու յերեք վաշտ զինվորների հետ միասին։ Նախքան գյուղ ներս խուժելը նա դիմում ե ազնվական-կալվածատերերին՝ խնդրելով ներգործել գյուղացիների վրա, ըստ յերևութին վախենալով պրիստավի վիճակին յենթարկվելոց։ Կալվածատերերը գործին միջամահել չեն համարձակվում, և գավառապետը շարժում ե գորքը «թշնամի» գյուղերի վրա։ Տեսնելով, վոր գավառապետի ուժերը գերազանցում են իրենց սեփական ուժերից, գյուղացիներն անձնատուր են լինում և վճարում պարտքը։ Ձերբակալվում են 13 մարդ^{*}։

Այստեղ մենք կանգ ենք առնում։ Այս գորքի յերկրորդ մասի մեջ կտանք գյուղացիական շարժման շարունակությունը, առանձնապես Գուրիայինը, վոր կընդգրկի 1904 թվից մինչև 1905 թվի հոկտեմբեր-դեկտեմբերին հեղափոխության վերջը և ոեստավլյացիայի սկզբնական շրջանը։ Շարժման առաջին շրջանը վերջացնելու համար այստեղ մեջ բերենք գյուղացիական շարժման ժամանակ ձերբակալվածների ու աքսորվածների ցուցակը, վոր ամենեին լրիվ չե։

1902 թվի սեպտեմբեր և ոգոստոս ամիսներին Գուրիայում ձերբակալված գյուղացիներին տեղափորում են Քութայիսի, Փոթիի, Ողուրգեթի և Բաթումի բանակրում։ Նրանցից տասն հոգու հինգ տարով աքսորում են Ռուսաստանի ներքին նահանգները։ Աքսորյալների անունները և ազգանուններ՝ Յերմոլայ Խոմերիկի, Մելիտոն Սարիշվիլի, Յերմոգեն Դարչիս, Իվակիմ Զխարտիշվիլի, Անտոն Պուրցելի, Անդրեյ Կալանդաձե, Պավել Արխագավալի, Պուտում 9 մարդու։ Այս տասն մարդուց յերկուսը գյուղական տանուտեր են, մեկը տանուտերի ողոնական, չորսը մանր հողատերեր, յերկուսը գործարանալին բանվոր, մեկը ինտելիգենտ։

Նույն թվի սեպտեմբեր ամսին Քութայիսի նահանգի Զուգդիդի գավառից (Մինքրելիա) Քութայիսի ամրոցն են բերում տասն մինչգրելցիների, վորոնցից յերկուսը չկարողանալով տանել բանացին կյանքի ծանր պայմաններ՝ մեռնում են բանառում։ Մնացած ութ հոգին հինգ տարով աքսորվում են ներքին նահանգները։ Նրանք բանտում վեց ամիս նստում են առանց վորեե հարցաքննության։ Ցոթերորդ ամսին կառավարչապետից հրաման ե գալիս նրանց աքսորելու ետապով։

1903 թվին ձերբակալված գուրիացիների վերաբերյալ բարձրագույն հրաման ե գալիս։ Նրանցից տասն հոգուն 3 տարով աքսորում են Արխանգելսկի նահանգը և 13 հոգուն Աստրախանի վրայով ուղարկում

*) Ibid. № 56.

են Արևելյան Սիբիր՝ յերկուսը տասն տարով, իսկ մնացածները վեց տարով։ Աքսորյալների անուններն ու ազգանունները։—Արխանգելսկի նահանգն աքսորվում են՝ Մետիֆո Փարեչավա, Ալեքսանդր Խոմերիկի, Խոսիֆ Զոյձե, Նոյ Զոյձե, Իրակի Միմինոշվիլի, Սամսոն Ցենտրաձե, Անանիա Դոմաձե, Գեորգի Կաղեշվիլի, Նեստոր Կեչակմաձե։ Բացառությամբ վերջինիս (բանվոր), մնացած բոլորը ընտանիքավոր գյուղացիներ են։

Արևելյան Սիբիր աքսորվում են տասն տարով՝ Վարդեն Զիեկիձե (ուսուցիչ) մոտ 28 տարեկան—ութ տարով, Գուրգեն Գուրգենիձե, Միղարբոկ Գաբրոնիձե, վեց տարով՝ Արչիլ Գուրգենիձե, Ստեփան Գուրգենիձե, Սոլոմոն Խոմերիկի, Բերուտ Խոմերիկի, Վիսավրիոն Միտահշվիլի, Մեհրաբ Դուրոջկինաձե, Իրակի Ցենտրաձե (բացի յերկուսից). մնացած բոլորն ընտանիքավոր գյուղացիներ են։ Միքայել Լեժավան հիվանդության պատճառով մնում ե Քութայիսի նահանգում։

1903 թվի ապրիլ ամսին Քութայիսի գավառից Քութայիսի բանտն են բերում 20 մարդու։ Բանասրկության չորրորդ ամսին սրանցից 13 հոգուն ազատում են, վեց հոգուն աքսորում են Ռուսաստանի հինգ տարով, վորոնք են՝ իլիս Կապալեշվիլի, Սեվերիան Խվիբիս, Դարիսպան Խուչուս, Անտոն Ստուրուս, Գեորգի Կակաբաձե (սրանցից չորսը Բաթումի բանվորներ են, յերկուսը գյուղացիներ, ընտանիքավոր չորս հոգի յեն). Մեկը՝ Միքայել Խոմերիձեն, աքսորվում է Ռուսաստան։

1903 թվի ապրիլ ամսին Ռուսակեթի գավառից Քութայիսի բանտըն են բերում 9 մարդու։

Սրանցից աքսորի գատապարտվում են չորս հոգի՝ Ֆիլիպպ Դոմիձե, Միքայել Միկիս (յերկուսով ել հինգ տարով), Կոնստանդին Գոնզա և Նեստոր Դոմաձե (յերկու տարով)։ Չորսն ել ընտանիքավոր գյուղացիներ են։ Նույն թվի մայիս ամսին Սուխումի շրջանից Քութայիսի բանտն են բերում տասնեմեկ մարդու, տեղական սղոցարանի (լեօպուլինայի զավո) բանվորներին։ Այդ իսկ ժամանակ Քութայիսի բանտում մնում են դեռ 80 քաղաքական բանտարկալներ՝ գյուղացիներ, բանվորներ, ինտելիգենտներ և այլն^{*})։

VII

ԲԱՆՏ ՅԵՎ ԱՔՍՈՐ

Նախորդ գլխում մենք քաղաքական բանտարկալների ու աքսորյալների մասին միքանի թվեր տվինք, վոր մեկ կամ անձամբ հայտնի ենին կամ գտել ենինք «Անկրա»-ի ու այլ հրատարակությունների մեջ։

*) Ibid. № 57.

Կովկասի հեղափոխական շարժման ինչպես այդ, այնպես և հետագա շրջանների քաղաքական բանտարկյալների ու աքսորյալների ստատիստիկան կազմելն անհնարին մի բան է: Դրա համար պիտի մտնել ժանդարմական, վոստիկանական վարչությունների ու բանտարկին գրասենյակների արխիվները և այնտեղից գուրս հանել զանազան ժամանակներում բանտարկված, աքսորված, ազատված, հիվանդացած, վախճանված հեղափոխականների ճիշտ ստատիստիկան և այդ տվյալների հիման վրա լայն հասարակությանը ծանոթացնել ժանդարմական պաշտոնյանների ու զատախազների կատարած այսպես կոչված քաղաքական գործիրի ամբողջ ընթացքին ու զատավարությանը: Իսկ ժանդարմերիայի գործավարության զաղանի կողմի այդ մանրամասն ու փաստական լուսաբանությունը յերեան կրերի անշափ շատ բան, վոր անհայտ ելայն հասարակությանը:

Այնուամենայնիվ ինձ թվում ե, վոր հասարակական շահեկանությունից զուրկ չել լինի, չեթե յես իմ անձնական դիտողությունների ու հիշողությունների հիման վրա այդ հարցի և ընդհանրապես համարանտավին ռեժիմի մասին համառոտակի խոսեմ:

Ժանդարմերիան, պահնորդական բաժանմունքն իր գաղտնի խուզարկուներով, լրտեսներով ու պրովոկատորներով հանդերձ, բանտն ու աքսորը հանդիսանում են այն հիմունքները, վորոնց վրա կանգնում ե ինքնակալ կառավարության ամբողջ իրավագիտությունը: Ամբողջ Ռուսաստանն իրենից մի անսահման բանտ ե ներկայացնում, վորի մինիստրություն սովորական բանտն ե: Այս վերջինի ռեժիմի ու ներքին կարգ ու կանոնի հիման վրա կարելի յե դատել այն բոլորի մասին, ինչ վոր բնութագրում ե ցարական բոնակալ կառավարությունը:

Քիչ թե շատ գիտակից բնակիչը (օբյեւգել) գտնվելով մշտակես խուզարկելու կամ ձերբակալվելու վատանգի մեջ, աշխատում ե իրեն այնպես պահել, վորպեսզի անբարեհուսության կասկածանք դեպի իրեն չհարուցի: Դրա համար բավական ե շպիկի լոկ մի ցուցմունքը:

«Գիշերային գալուրի*» տների մեջ կատարած բարբարոսական ներս խուզումներից և անպատճառ խուզարկությամբ անհատի ու ընտանիքի համար սրբազն ամեն ինչ պղծելուց հետո խուզարկվածը և ձերբակալվածը վոստիկանական թաղամասում և բանտ տանելու ձանապարհին շատ հաճախ դարձնալ չենթարկվում ե ամեն տեսակի կամայականության՝ հայտնիանքի, ծեծի և ալին:

Իսկ չեթե ձերբակալվածը բանվոր ե, գործադուլավոր կամ ցուցարար, ել ավելի վատ նրա համար: «Հասարակ», «ցածր վորակի» մարդու,

*) Մի հաջող անուն, վորով բնութագրում եր ժանդարմերին բանտի վերակացուներից մեկը, վոր ժանդարմական նախկին ստորին պաշտոնյա յեր:

բանվորի կամ գլուղացու նկատմամբ արտահայտվում ե ըստ ամենայնի անողոք վերաբերմունք:

«Քաղաքական հանցավորների» համար ձերբակալության պայմանները, գործիրի ժանդարմական քննությունը և բանտարկին ռեժիմն ամբողջ Ռուսաստանում համարյա միատեսակ են: Բայց յես հարցը պիտի մասնավորեցնեմ Կովկասի վերաբերմամբ, վերջինիս պայմաններին մոտ ծանոթ լինելուս պատճառով:

Սոցիալ-դեմոկրատական շարժման սկզբին, յերբ կառավարությունը համոզվում ե, վոր իրեն վտանգ ե սպառնում, սկսում ե որը ցերեկով դիմել ակնհայտ, անլուր գաժանությունների, թեպետ և, մինչ այդ, նա բոլոր սարսափներն ու զաժանությունները գործադրում եր առանձին գեպքերում գաղտնի և սուսուփուս:

Գործադուլավորների, ցուցարարների և կասկածելի ինտելիգենտների մասսայական ձերբակալությունները և նրանց դաժան ծեծի ու տանջանքների յենթարկելը կատարվում են սխտեմատիկորեն: Ձերբակալության առաջին որերին ձերբակալվածների դրությունը հուսահատական եր լինում: Մետեխի ամրոցը և Թիֆլիսի նահանգական բանալը լեփ-լեցուն ելին լինում «քաղաքական հանցավորներով», և տեղ չեր լինում նորերին նստեցնելու: Այդ գեպքում նրանց պահում ելին վոստիկանական թաղամասերի նկուղներում կամ ուղարկում զինվորական հառուպտվախտը:

Այստեղ ձերբակալվածներին պահում ելին սոսկալի պայմաններում. վոստիկանական խոնավ ու կեղտոտ նկուղներում և զինվորական բանտի լույսից ու ողից զուրկ մութ ու հեղձուցիչ կարցերներում նրանք մնում ելին նստած, մինչև վոր բանտերում ազատ տեղ եր բացվում: Այդ իսկ ժամանակ կառավարությունն սկսեց շտապ կարգով քաղաքական հանցավորների համար յեռահարկ նոր բանտ կտուցել Մետեխի ամրոցին առընթեր:

Բավական չեր, վոր կալանավորներին սարսափելի պայմաններում ելին պահում, նրանց յերբեմն յենթարկում ելին պարզապես չարչարանքների: Ինչպես յես արդեն միքանի անգամ հիշատակել եմ, այդ կողմից առանձնապես աչքի յեր ընկնում ժանդարմատիկան ոռտամիստը և պահնորդական բաժանմունքի պետ Լավրովը: «Փոքրիկ տըղա Շարաձեյին, վոր Կուրնատովսկու հետ հարևանությամբ նստած եր զինվորական բանտում, նա չարչարում եր շաբաթներով՝ մերթ խեղդում, մերթ յերեսին թակում և ստիպում ասելու, թե թոռոցիկները Շարաձեյի տպարանումն են հենց տպված և նույնիսկ հաճախ ավելացնում եր: «Դե, գոնե ստիր»: Տղան սարսափելուրեն ծեծված լինելով, փեղիկապես չկարողանալով տանել իրեն համար Լավրովի հնարած բոլոր տանջանքները, իսկապես վոր ստում ե և վայրիկերո կերպով

տում թուցիկների ձեռագլերն իրեն հանձնող մարդկանց անունները» *):

Բանվոր Տրիային Լավովը յերկու որ շարունակ պահում ե սութ . նկուղում առանց սնունդի և դուրս չի թողնում հարկավորության համար:

Նման փաստերը քիչ չեն:

Հարցաքննության համար նա բանտ եր զալիս սովորաբար զիշեր ժամանակ, ալսպիս ժամը 10-ին կամ ավելի ուշ, յերբ բանտարկյալները ջարդված, հոգեպես ու ֆիզիկապես քայլալիվ լինելով՝ հեշտությամբ կարող ելին յենթարկվել նրա սպառնալիքներին ու տանջանքներին: Նա վոչ մի միջոցից չեր խորշում, վորպեսզի կարողանար հարկադրել մեղադրյալին խոստովանելու «կրամոլայի» (խոսվության) գործին մասնակցելու մեջ կամ մատնանշելու շարժման դեկավարներին ու միքանի հանգամանքների վրա: Ընդունին խոստանում եր լիակատար «ազատություն» շնորհել, լավ «վարձատրություն» տալ և իերեմն լկտիություն եր ունենում առաջարկելու մասել «Ճառայության»:

Նա իրեն մոտ տուն եր կանչում «վկաններին», առավելապես բանվորներին և զանազան խարերայական միջոցներով «վկանների ցուցմունքներ» ստանում: Ամբողջ ժամերով, նույնիսկ որերով ստիպում եր նրանց իր բնակարանի միջանցքում կանգնել ու սպասել, վորպեսզի հալումաշ աներ նրանց և դուրս կորպեր իրեն համար ցանկալի ցուցմունքները: Յեթե մեկը համարձակվեր տաել թե իրեն բացարձակապես վոչինչ հայտնի չե, ապա նրան կամ անմիջապես ձերբակալում եր կամ թե յենթարկում մի շարք տանջանքների ու լկումների:

Հարցաքննության ալսպիսի յեղանակը միայն Լավովը չեր գործադրում: Նրան այս կամ այն կերպ նմանվում ելին ժանդարմական մյուս «քննիչները»:

Ճնշում, սպառնալիքներ, սարսափ, վկանների կեղծ ցուցմունքներ, սարքովի վկաններ, գործեր ստեղծելը և ուղղնելը, զաղտնի գործակալների ցուցմունքներին բացարձակ նշանակություն տալը,—ահա այն բնորոշ գծերը, վոր ունի ժանդարմաների գործակարությունը: Ընդունին, այս «յուրահատուկ քննությունը» վոչ միայն ամիսներ եր տեղում, այլև շատ հաճախ տարիներ: Սակայ չեր պատահում, վոր քայլաքական հանցավորը բարձրագույն հրամանով դեպի Արեելան Սիրիք 3-5 տարով աքսորի յեր դատապարտվում նախ առանձին կամերայում մի տարի «քննության» տակ և ապա, դատավճորի սպասումով, դար-

* «Из Тифлисск. рабоч. движений», № 12:

ձյալ մի յերկու տարի քաղաքական բանտարկյալների ընդհանուր կամերայում նստելուց հետո:

Բանտարյին սեժիմի և միայնակ կալանավորության պայմաններում յերկարատև նստած մնալուց, քաղաքական հանցավորը զանազան հիվանդություններ և ստանում, չխոսելով արդեն այն հոգեկան ու բարույական տանջանքների մասին, վոր ապրում ե նա: Այդ հիվանդություններն են՝ ստամոքսի կատարը, շնչարգելություն և գլխացավ, թոքախտ, ջղերի քայլայում (նյարդաթուլություն—հերաստենի—մի ընդհանուր հիվանդություն և բոլոր բանտարկյալների համար), հոգեկան ու մտավոր ընդունակությունների քայլայում և սրա հետևանքով նաև ամեն տեսակի աշխատունակության կորուստ: Մարդիկ կորցընում են քայլելու և խոսելու կարողությունները... Հիշում եմ, մի անգամ գիշերը ժամը 11-12-ին, հանկարծ լսվեց աղմուկ, սաստիկ գոփյուն, շտապ քայլվածքի ու անկարգ վազվազը ձայներ, կարծես թե մի ինչ-վոր տեղ փուլ յեկավ շենքը: Հարևան կամերաներում բանտարկյալների մեջ խիստ հուզմունք ու շփոթ ընկար: Նրանք, վորոնք նըման գեղաքերում միշտ զգայուն ու արձագանգող ելին լինում, սկսեցին ուժեղ կերպով բաղեկ գոները և բղավել: «Հանգստացեք, հանգըստացեք, վոչինչ վոչինչ չկա», բղավում եր վերակացուն, Պարզվեց, վոր բանտարկյալներից մեկը, իրեն շատ վատ զգալով, խելագարի պես սկսում ե իր նեղիկ կամերայում զանազան աղմկալի շարժությունը կատարել: «Ենկողնումս պառկած, հանկարծ արյան շրջանառությունը իմ մեջ կանգ առավ,—զանգատվում եր նա զրանից հետո,—սիրտ կարծես թե դադարեց բարախելուց, յես շնչասպառ ելի լինում և մտածում՝ ահա հիմա շրւտով կյանքիս վերջ կլինի. հավաքեցի բոլոր ուժերս և սկսեցի արագ թոշկոտի ու պարել կամերայում»:

Բացի այս բոլորից բանտարկյալներն ամեն տեսակի անսպասելի այլուրպիզների ելին հանդիպում: Յեղել են այնպիսի դեպքեր (միայն սակավ), վոր գիշերը, ժամը 12-ին կամ ավելի ուշ, զարթեցնում ելին բանտարկյալներ և հրամայում վեր կենալ անկողնից: Բացում ելին կիսով շափ բացվածքը (ֆորտոչկա*) և 1-2 բուգելից հետո կրկին փակում: Հաջորդ որն իմանում ելինք, վոր ժանդարմական «քննիչը» հաճել և այդպիսի ուշ գիշերով ծպտյալ շպիկի ուղեկցությամբ այցելել բանտարկյալներին և նրանց բացվածքի միջով ցուց տալ շպիկին: Յեղել են նաև այնպիսի դեպքեր, վոր ցերեկը հարցաքննության ժամանակ հարեւան սենյակից դռան ձեղքերով շպիկները դիտելիս են յեղել բանտարկյալներին, վորպեսզի հաստատեն մեղադրյալի անձնավո-

*) Բացվածքը շենքած եր կամերայի դռան մեջտեղում, վոր վերակացուն ըստ պահանջին բացությունի եր անում:

բությունը, մի բան, վորի մասին բանվորներն իմանում ելին միայն հետո:

Այժմ դիտենք բանտի ներքին կյանքը և տեսնենք, թե ինչպիսի կարգեր գոյություն ունեն այնտեղ: Հենց վոր բանտարկյալը ժանդարմաների կամ քաղաքապահների ուղեկցությամբ բանտ և գալիս, բանտարկին զբասենլակում ավագ վերակացուն նրան խնամքով խուզարկելուց հետո վերցնում ե այն ամենը, ինչ վոր նա ունենում ե մոտը, ինչպես՝ թուղթ, մատիտ, գրքույկ, քսակ, փող, ծխախոտ և ծխախոտի տուփ, գանակ, ժամացույց և այլն: Բանտարկյալի ցանկությամբ փողը կարիք յեղածին չափով նրա ծախքերի համար զբասենլակից բաց են թողնում բազարներն *):

Բանտարկյալին առանձին կամերայում կողպեքի տակ ներփակելով, նրա վրա նույն կամ հաջորդ որը մի խեկական կատակերգություն ե սարգում, բանտի բժիշկը նրան յենթարկում ե մարդաբանական կամ գանգաբանական հետազոտության: Նա խնամքով չափում ե միանգամայն հանգած, մերկ բանտարկյալի հասակն ու բոլոր որպանները և նշանակում մարմնական առանձնահատկությունները, յեթե այդպիսիք լինում են:

Բանտարկությունից միքանի որ անց, ժանդարմական լուսանկարիչը ժանդարմի ներկայությամբ հանում ե թակարդ ընկած «քաղաքական հանցավորի» նկարը:

Այս նախնական կատակերգությունից հետո բանտարկյալը հարկադրված ե լինում նստել առանձին կամերայում և սպասել յերկար ժամանակ:

Նա ուղում ե իմանալ, թե ինչու յեն իրեն բանտարկել և ինչ բանում են իրեն մեղադրում, բայց անցնում են որեր, շաբաթներ ու ամիսներ, իսկ ժանդարմը և դատախազը չեն գալիս հարցաքննություն կատարելու: Այնուհետև արգեն տեղի յե ունենում «գործի ժանդարմական քննության ու կատարման» տրագիկոմիկ այն կարգը, վորի մասին հիշեցինք վերը:

Բանտարկյալը գիշեր ու ցերեկ իր կյանքն անց ե կացնում կողպեքի տակ նեղլիկ ու մութ կամերայում: Նա չի համարձակվում վորեն մեկին տեսնել ու հետը խոսակցել, նույնիսկ ցանկություն ունեցած դեպում անգամ նա իվիճակի չի լինում այդ անելու, վորովեան որվա ընթացքում նրան 10—15 րոպեյով զբոսանքի դուրս են բերում առանձին, միայնակ և այն ել քաղաքական հանցավորների համար

*) Բանտարյին այն պաշտոնյան, վոր մթերքներ ու անհրաժեշտ իրեն եր գնում բանտարկյալների համար:

Ծանոթ. բարգմ.

հատկապես նշանակված տեղում: Ինքն իրեն խոսել կամ բարձրածայն կարգալ չի թույլատրվում, իսկ յերգել, թեկուզ և մեղմ՝ առավել հս: Արգելվում ենույնիսկ խոսակցության մեջ մանել պարագնիկի*): հետո: Արգելվում ե նույնպես լաց լինել և հեկեկալ...Մի անգամ հարկած կամերաները հասնում ե մի բանտարկյալի սիրտ մղկտացնող հեկեկանքի ձայնը, ժանդարմ վերակացուն մոտենում ե նրա կամերային և ահեղորեն հրամայում «դադարեցրու» հեկեկանքը:

Բանտի գրադարանից ընթերցանության համար տալիս են հին, բացառապես գեղարվեստական և կրօնական բովանդակություն ունեցող գրքեր, ինչպես և շատ հին հանդեսներ: Թերթերի ընթերցանությունը խիստ արգելված է: Դրսից գրքերը հանձնվում են դատախազին կամ ժանդարմական վարչությանը, վորոնք բաց են թողնում խիստ գրաքննությունից հետո: Հասարակական գիտությունների լեզու հեղինակությունները բանտ ամենեին չեն թողնում: Բանտարկյալն իր մոտ չի կարող ունենալ վոչ մատիտ, վոչ թուղթ և վոչ ել թանաք. յերբ նա նամակ գրել ե ուղում, վերակացուն նրան տալիս ե անհրաժեշտ բաները, իսկ նամակը վերջացնելուց հետո նորից յետ վերցնում: Զփակցրած գրած նամակները յերեկուան ստուգության ժամանակ հանձնվում են գրասենյակը ըստ պատկանելույն ուղարկելու համար: Իսկ յերբ բանտարկյալը մի յերկար բան ե ուղում զրել, նրան համարակալած ու ժապավինած մի տեսր են տալիս բանտի գրասենյակի կնիքով, վորը վերջում բանտի վարչությունը յետ ե վերցնում վոչնչացնելու համար:

Թիֆլիսի բանտերի կամերաներում աղտոտության դուզեր (պարակա) չկան, ինչպես այդ Ռուսաստանի մլուս բանտերումն ե: Կան միայն թաղարներ (գօրակն), իսկ ընդհանուր կամերայում՝ տակառ: Այդ պատճառով ել մեծ պահանջի համար հերթով յուրաքանչյուրին մեկմեկ բաց են թողնում քաղաքականներին հատկացրած ընդհանուր արտաքնոցը: Հենց այսաեղ, արտաքնոցում ել լվացվում են: Յենթարելով, վոր շենքի բաժանմունքի (կօրպուս) մի հարկում նստած են յերեսուն մենակիաց կալանավորներ, առավոտներն ստիպված եյինք լինում շատ յերկար հերթի սպասել: Դա խեկական մի տանջանք եր: Հեշտությամբ կարելի յե պատկերացնել հիվանդ մարդու տանջանքները, իսկ բանտարկյալները մեծ մասամբ հիվանդ են ստամոքսի կատարով ու փորլուծով կամ ուրիշ հիվանդություններով: Բաղիումը, աղմուկը և հայնոյանքն ամեն առավոտ չեն դադարում: Ինչքան անբավականություն, ինչքան հուզումներ են ապրում այդ առթիվ բանտարկյալները...ինչ ել անելու լինելին նրանք, վոչինչ չեր

*) Այն անձնափորությունը, վոր մաքրում ե կամերան և դուրս տանում աղտոտության դուզեր:

ոգնում: Դա բանտի վարչության ու դատախազական իշխանության համար մի անլուծելի, բարդ հարց եք:

Ստուգումից հետո (յերեկոյան ժամը 8-ին) մեծ պահանջի համար այլևս վոչվոքի բաց չեն թողնում, բացի, ծայրահեղ դեպքում միայն, շատ հիվանդ մարդուց: Մյուս քաղաքների բանտերում, ինչպես, որինակ, Բագվի բանտում, ստուգումից հետո վոչ մի դեպքում դուրս չեն թողնում: Այդպիսի կարգ կար նաև բանտի հիվանդանոցում*):

Իսկ Ռուսաստանի բանտերում բանտարկալներին դուրս չեն թողնում վոչ ցերեկով և վոչ ել գիշերով, վորովհեակ ամեն մի կամերացում առանձին դրված կա ազտոտության դույլ (պարագա), ցարական կառավարիչների այդ հանձարեղ գուտար:

Թիֆլիսի բանտում գրոսանքի բաց են թողնում որական մեկ անգամ 10—15 րոպեյով: Մինչև 1901 թիվը գրոսանքը կատարվում եր գիշերը, ստուգումից հետո (վորովհեղ քաղաքական բանտարկալներին վոչվոք չտեսներ և ընդհակառակն), սկսած յերեկոյան ժամը 9-ից մինչև առավոտ: Հերթով զարթեցնում ելին բանտարկալներին, վորոնցից շատերը, չուզենալով ոգտվել այդ լուրահատուկ ու անխորժ ըզբուանքից, հրաժարվում ելին զրոսանքի գնալ: Ենունետե, բազմիցս արված կոլեկտիվ բողոքներից հետո, 1902 թվից սկսած գիշերալին զրոսանքները փոխարինեցին ցերեկվա զրոսանքներով: Քաղաքական բանտարկալներն զբոնում ելին մեկ-մեկ ծածկութիւն տակ 10—15 րոպե բանտի վերակացուի խիստ հսկողությամբ:

Բանտարկության սկզբին, 2—3 ամիսների ընթացքում ազգականների հետ տեսակցություն չի թույլատրվում: Նրանցից ընդունում են միայն իրեր՝ հագուստ, սպիտակեղեն և ալին: Այդ ժամկետի անցումից հետո տեսակցությունները կատարվում են մեկ-մեկ կրկնակի վաճ-

*) Հիշատակեմ հետեւյալ գեղքը միայն, վորտեղի յե ունեցել 1903 թվի հուլիսին Բագվի բանտի հիվանդանոցում: Հիվանդանոցային կամերայում չորս քաղաքական հանցագորներ են լինում: Յերեկոյան ժամը 9—10-ին հիվանդներից մեկը սասարկ ցավեր և զգում ստամբում: Բաղասում են, վորովհեղ արտաքնոց դուրս թողնեն: Վերակացուն վոչ մի կերպ դուռը չի բացում, վորովհեակ ստուգումից հետո «որենքով» չի թույլատրվում: Բաղասում, կոտրում են դոները: Այդ աղմուկին ու աղաղակին վրա հասնելով ալագ վերակացուն նախագուշական տոնով հայտարարում ե, վոր ստուգումից հետո դուրս թողնելը չեղած մի գեղք ե, և վոր բոլոր կամերաների բանալիներն ստուգումից հետո գտնվում են բանտապետի մոտ, վորին այդպիսի ուշ գիշերով ինքը չի կամերայում թաղարից (ГОРДОК) բացի ազտոտության դույլ (պարագա) չի լինում: Սարսափելի աղմուկն ու բաղասումը շարունակվում ե: Զարդում են լուսամուտների ու դռների ապակիները, տարսուետներով խփում են դռներին, ջարդում են ամեն բան, ինչ վոր ընկնում ե ձեռքները: Մարդ չի յերեւում, բոլորն ել անհետացել ելին: Այդպիս շարունակվում ե մոտ ½ ժամ: Վերջապես, ավագ վերակացուն բանալիները ձեռքին գալիս ե, բացում ե դռները և հիվանդին 8 պահակների հսկողությամբ դուրս տանում արտաքնոց, վորից հետո աղմուկը զաղարում ե ամեն ինչ հանգստանում:

դակի միջոցով, ավագ վերակացուի, պահակների, ժանդարմական պաշտոնյայի և յերբեմն ել բանտի տեսչի կամ նրա ոգնականի ներկայությամբ: Տեսակցությունները տեսում են 5—10 րոպե:

Բանտարկուաների նամակները՝ ուղղած իրենց ազգականներին, անցնում են բանտի գրասենյակի ու ժանդարմերիայի միջոցով: Ժանդարմերիան նամակները կարգալուց և պերլյուստրացիայի յենթարկեցուց գաղտնագիր նամակի գրանորման միջոց—պերլյուստրացիան հետո փոստով ուղարկում ե հասցեատիրոջը: Նույն այդ կերպ ել ազգականները հանձնում են իրենց նամակները բանտարկալներին, այն է՝ ժանդարմերիայի ու բանտի գրասենյակի միջոցով: Քիչ գեպքեր չեն լինել, վոր ամենաանմեղ նամակները ժանդարմական պաշտոնյան պահել կամ գցել ե իր թղթերի մեջ և բանտարկալին հանձնել 1—2 շաբթից հետո միայն:

Ճարկ կամ արդյոք մանրամասնորեն նկարագրել բանտարկուան պայմանների այն սարսափելի ռեժիմը, վորի մեջ տարիներով ստիպված հյուծվում ե միանգամայն անմեղ մարդը: Նեղվածք, մթություն կամերաներում, կերտ, փոշի, մկներ, միջամբներ, խոնավություն և սրանց ավելացրած զես անբավարար սնունդ, վատորակ մթերք, դժվարամարս կերակուր, վոր բանտի խոհանոցում բոլոր բանտարկալների համար պատրաստում ե «խոհարար»-բանտարկուալը, ահա այս բոլորից հետո զժվար չի հասկանալ այն տանջալից վիճակը, վորին իշխանությունը գիտությամբ լինթարկում ե հայրենիքի «լավագույն զավկեներին»:

Յերբ ցուցի կամ գործադուկի առթիվ մասսայական ձերակալություններ ելին տեղի ունենում, բանտի լեփ-լեցուն լինելու պատճառով մի կամերայում, ուր կարելի յեր տեղափորել միայն 2—3 հոգի, լցնում ելին 10—15 մարդ: Ինչպես տառեխը տակառի մեջ, նրանք թափալում են հատակին, նրանց նույնիսկ գոշակներ չեն տալիս: Ել ավելի վատօթար եր զրությունը նահանգական բանտում, վորի շենքը միհարկանի լին ու շատ խոնավ, իսկ կամերաների հատակը հողից: Նրա ամեն մի կաղեմատում, վոր փոշիով, ժանդարմակալը (ՄԱՅ-ՄԱ) ու գարշանոտությամբ հագեցած նեխված մթնոլորտ ուներ, տեղափորում ելին միքանի տասնյակ մարդ:

Պիտի մարդ հերոսական համբերություն ունենար, վորպեսզի կարողանար այս ամենը տանել և վայ նրան, ով զուրկ եր բանտարկուան կալանավորության համար այդ անհրաժեշտ հատկությունից: Նա, ով ջղայնանում եր, ով չափազանց վրգովվում եր, մի խոսքով՝ ով բավականին համբերությունը չուներ ուռսական բանտի ոեժիմի այլանգակությունները տանելու, նա իր կյանքը վտանգի մեջ եր դնում, հանձնում եր իրեն թշնամիներին հոշոտելու: Նայել կյանքին բան-

կանորեն ու լրջմտորեն, համբերութիամբ տանել ամեն տեսակի տան-
ջանքներ, բայց միաժամանակ վոչ մի բոպե չմոռանալ և հարմար
դեպում գործադրել մարդու կենցաղը բարելավելու և ազատազրելու
լավագույն միջոցը՝ պայքարը,—ահա թե ինչ սովորեցրեց մեզ հեղափո-
խական կլանքը, յերկարամքա բանտարկությունն ու աքսորը:

Յեվ այդ պայքարը բանտարկալները մղում ելին, բայց, իհարկե,
վոչ միշտ նպատականարմար յեղանակով:

Իշխանությունը բանտարկալների վոչ մի բանական ու արդա-
րացի պահանջներին ընդառաջ չեր գնում, ընդհակառակն՝ նա ավելի
ու ավելի վատացնում եր նրանց դրությունը: Բանտապետը, դատա-
խաղը կամ նրա ոգնականը, նահանգապետը կամ փոխնահանգապետը
բանտարկալներին այցելում ելին և նրանց պահանջների ու կոլեկ-
տիվ բողոքների գեպքում խոստանում ելին բավարարել նրանց:
Բայց դա կալանավորներին հանգստացնելու նրանց տակտիկան եր
միայն, նրանք յերբեք չելին կատարում իրենց խոստումները: Ինչքան
ել խոսելիք, հայտարարելիք, բողոքելիք ալլանդակությունների ու ա-
պորինության (նույնիսկ ինքնակալ որենսդրության սահմաններում)
դեմ, միենույն ե, վոչինչ չեր ոգնում: Յերբեմն բանտարկալները կա-
ռավալրության հասցեին շատ խիստ հայտարարություններ ելին ա-
նում, բայց նա մինչև վերջը հավատարիմ եր մնում ձեականության,
դաժանության ու ռեպրեսսիաների իր սիստեմին: Բանտարկության
պայմանները լավացնելու ուղղությամբ արված ամենաչին փոփո-
խությունը ձեռք եր բերվում ծանր զոհերով:

Բանտում պայքարը ել ավելի դաժանորեն եր մղվում, քան դուր-
սը, կլանքի մեջ: Իշխանությունն իր վողջ յեռանդը գործադրում եր,
վորպեսզի վրեժինդիր լինի բանտարկալներին այն բոլորի համար,
վոր կատարելի ե կյանքում, և ճնշի բանտի ներսում անհատական ու
կոլեկտիվ բողոքների ու պայքարի ամեն տեսակի արտահայտու-
թյունը:

Հիշատակեմ այստեղ հուսահատական ու համերաշխ պայքարի մի-
ելիզոդ, վորով բանտարկալներն իրենց վրա դարձրին հասարակական
ուշադրությունը: Քաղաքական բանտարկալներին բակն ու փողոցը
նայելու հնարավորությունից զրկելու համար 1902 թվին «կառավա-
րիչների» խելքին փչում ե դրսի լուսամուտներին դադաղանման յեր-
շաբար արկղներ ամրացնել այնպես վոր կամերալի մեջ աղոտ լույսը և
ողը լոկ վերից եր թափանցում, ավելի ճիշտն ասած՝ իշխանությունը
և ժանդարմերիան նպատակ ելին դրել իրենց զրկել քաղաքական բան-
տարկալներին ոգտվելու բավականաշափ ողից ու լուսից: «Քաղաքա-
կան հանցավորների» համար տանջալից պատժի լավագույն միջոց
հնարել չելին կարող:

Հունիսի 8-ին ըստ ընդհանուր ազդանշանի բոլոր քաղաքական
բանտարկալները (կամերաների պատերին զարկի նշաններով հաղոր-
դելով ու տոմսեր հանձնելով) մի ակնթարթում սկսում են հուզվել և
մի անհերեակայելի կատաղի իրարանցում սարքել, սկսում են վոտքե-
րով ջարդել արկղները, վորոնք սարսափելի ճարճատյունով ու դղբր-
դունով 2-րդ և 3-րդ հարկերից ցած են ընկնում: Տեսարանը հրա-
աւ ոիչ եր. թվում եր թե փլում ե ինքնակալության շենքը: Խանդավա-
ռության մեջ ելին վոչ միայն քաղաքական, այլև քրեական կալանա-
վորները:

Բանտի վարչությունը բանտարկալների «չտեսնված հանդու-
թյունից» շփոթվել ու վրդովվել եր: Հեռախոսով կատարված «սկան-
դալի» մասին հաղորդվում ե վուստիկանապետին ու ժանդարմական
պետին, վորոնք անմիջապես գալիս են, զայրույթով միայն դիտում
փլատակները և շտապով թուչում մի ինչ վոր աեղ:

Գիշերվա ժամը 1-ին կամերաները թափվում ե մի ամբողջ վոհ-
մակ՝ բանտապետը, վոստիկանապետն ու ժանդարմական վարչության
պետը ժանդարմակների, վերակացուների ու զինվորների ուղեկցությամբ: Յուրաքանչյուր բանտարկալին առանձին իր կամերայում հայտնում
են կովկասի կառավարչապետի ոգնական «հարբեցող» Ֆրեզեյի նախա-
զանությամբ տեղի ունեցած արտակարգ իորհրդակցության վորոշու-
մը, ըստ վորի բանտարկալներին պատժում են զրկելով մեկ ամիս
ժամկետով՝ 1) ամին տեսակի այլ կերակրից, բացի սև հացից ու հում
ջրից, 2) յեփած ջրից, թեյից և շաքարից, 3) զրուանքից, 4) ազգա-
կանների տեսակցությունից, 5) նրանց հետ նամակագրություն ունե-
նալուց, 6) ծխելուց*): Ապա վերջում, վորպես ուլումատում, հայտա-
րարում են՝ յեթի բանտարկալները կրկին փորձեն կոտրտել նորից
շինվելիք արկղները, ապա անմիջապես կշղթայակապեն նրանց վոտ-
քերն ու ձեռքերը: Վոմանց՝ «հանդուզն պատասխանի» համար այն
անհեթեթ հարցին, թե ինչպես են համարձակվել կոտրտել արկղնե-
րը, միքանի որով կարցեր են նստեցնում: Հաջորդ որն և եթ արկղ-
ները նորից շինում ու լուսամուտների առաջն են դնում: Բանտար-
կալները հերոսարար մի ամբողջ ամիս տանում են այդ սարսափելի
գրությունը: Նրանք յերբեք չեն վհատում և նման դեպքերում ընդա-
ռաջ ելին դնում ամեն տեսակի անակնակալներին:

Իշխանությունն ամենեին չեր ուղում և ընդունակ ել չեր հաս-
կանալու, վոր գաժանությունները, ռեպրեսսիաները և ահարեկումը

*.) Ընդհանրապես բանտերում ծխել չի կարելի, բայց քաղաքական բանտար-
կալներին թիֆլիսի բանտերում թույլատրում ելին ծխել, նույնիսկ քրեական հան-
ցավորները թագուն ծխում ելին:

վոչ մի արդյունք չեն տալիս, վոր ընդհակառակն՝ դրանք ժամանակի ընթացքում առաջացնում են միանգամայն հակառակ հետևանքներ այն նպատակներին, վորոնց իրագործելու համար դրանք գործադրվում են: Դրանք սոսկալի անբարուականացնող նշանակություն ունեն հատկապես քրեական կալանավորների վերաբերմամբ: Իսկ թե ինչպիսի դրություն մեջ են գտնվում քրեական կալանավորները Ռուսաստանի ու Կովկասի բանտերում, և ինչպիսի վերաբերմունք են ցույց տալիս նրանց նկատմամբ կառավարության մանր ու խոշոր պաշտոնյաները, այդ մասին միտին նա կարող է դատել, ով գժբախտություն և ունեցել, սրտի կակիծով և այս կամ այն կերպ նրանց ոգնությունն ցուց տալու հնարավորությունը չունենալով, հանդիսատես լինելու այն ամենին, վոր կատարվում եր նրանց հետ: Նրանք իսկական անարդեակներ են (պարիաներ), տանջված, ալլանդակության հասած մարդկային կերպարանքներ, այն, ինչ վոր հայտնի յե ստրկության դարձընի, հին պատմությանը միայն:

Ռուսաստանի բանտերը, վորոնց մեջ տամնյակ ու հարյուրավոր հազար քրեական կալանավորներ կան, վորոնց թվում քիչ չեն կանաչք, պատանիներն ու յերեխաները, ամեն տեսակի հանցագործությունների իսկական տնկարաններ են հանդիսանում: Բանտերը դաստիարակում են նորանոր հանցագործների և ամեն ամիս, ամեն տարի հաստակելությանը հարստացնում այդպիսիների նոր խմբեր դուրս թողնելով: Բավականին շահեկան կլինի Ռուսաստանի բանտարին գործի բարեինդամ, բազմակողմանի գիտական ուսումնասիրությունը, բազմակողմանի գիտական ուսումնասիրությունը մի հիմնարկության, վորը ամենավատթար կերպով այլամերում ու ալլանդակում և մարդուն:

Յես չեմ խոսի այն մասին, թե ինչպիս անարգաբար են վարվում քրեական կալանավորների հետ, ինչպիս սիստեմատիկ կերպով ծեծում ու ստրկացնում են նրանց, մի խոսքով, բանտարին ոեժիմի այն սպառնիչ պալմանների մասին, վորոնց մեջ դրված են նրանք, զա ներկա աշխատության նպատակներից դուրս ե: Այնուամենայնիվ յես մի յերկու խոսքով կբացատրեմ կարցերով պատճելու այն յեղանակը, վոր հաճախ յեթարկում եյին նրանց թիֆլիսի բանտերում, և վորից աղաստ չելին նաև քաղաքական կալանավորները:

Թիֆլիսի Մետեխի ամրոցի ներքնահարկում 3 կարցեր կան, և 1, 2, 3, ամեն մեկի լայնությունը մոտավորապես 1 ու կես արշին ե, իսկ յերկարությունը 3 արշին: Դուռը հերմետիկ կերպով փակվում ե կողմեքով, դուռն մեջտեղում մի բացվածք (ողանցք) կա, վոր փակվում և շարժուն դռնակով: Բացվածքը մշտապես փակ ե, միայն հարկ յեղած դեպքում յերբեմն բացում ե վերակացուն նայելու համար, թե ինչ դրության մեջ ե գտնվում կալանավորը... Այդպիսով կարցերի

ներսը միանգամայն մութն ե լինում ու ողի շրջանառությունը անհնարին: Կարցերում պահում են 1- 2 որ, յերբեմն նաև շատ և տալիս են հաց ու հում ջուր: Արգախով պատժված կալանավորը միքանի որ կարցերի բացարձակ մթության և հեղձուցիչ ու թունավոր մթնությունի մեջ լոկ նստելու և մերկ հատակին պառկելու հնարավորություն ե ունենում: Արտաքնոց գնալ թողնում են գուան սարսափելի ու կատաղի բաղխոցից հետո միայն: Կծկված նա յերերում և այդ ժամանակ լույսի ու ողի խիստ զգացումը զգալով: Այս բարբարոսական պատժի հետեւանքները կալանավորի առողջության ու հետագա կյանքի համար ինքնին հասկանալի լին:

Դա զեռ քիչ եր: Բարբարոսության բարձրագույն աստիճանն արտահայտելու համար, բարբարոսության, վորին միմիայն րնդունակ են ինքնակալության ծառաները, սարքում են յուրատեսակի մի կարցեր: Հիշյալ կարցերները տեսանելի տեղում ելին գտնվում: Յեվ ահա, մարդկայնց աչքից հեռու, բանտի շենքի ներքնահարկի մի խուլ անկյունում կառուցում են կրկնակի կարցեր, այսինքն կարցեր կարցերի մեջ, վորտեղից վոչ ձայն, վոչ ել մարդկալին հառաչանք լսելի լինել չելին կարող...

Յերբ մարդ անցնում եր վոստիկանական-բարբարոսական ճարտարապետության այդ հնարագիտության մոտից և նայում նրա վրա, ակամալից ցնցվում եր ու մտածում, թե ինչպիս այնտեղ, այդ կատակուրների խորքում հառաջում ու կենդանի մեռնում և մարդը...

Քրեական կալանավորներն իրենց համար կործանիչ բանտարին ոեժիմի այդ պայմանները վերացնելու համար չելին պայքարում, իսկ քաղաքական բանտարկյաներն այդ ոեժիմի դեմ սիստեմատիկ պայքար ելին մղում: Իսկ յեթե նրանք չելին կարողանում իրենց պահանջներն ամբողջովին բավարել տալ, այնուամենայնիվ հնարավորություն եյին գտնում անլեզակ միջոցով հակագործել (քացրությամբ) բանտարկության միքանի անտառնելի պայմաններին: Ալսպես, որինակ նրանք նորություններն իմանում ու միմանց հազորդում ելին զանազան մեծ մտսամբ գաղտնի գրագրությամբ (գաղտնագիր զան յեղանակով) մեծ մտսամբ գաղտնի գրագրությամբ (գաղտնագիր թե բացահայտ) կամ թե կամերաների պատերի թիվկոցով՝ զարկի պայտ, մանական նշաններով: Թեև այս յերեւութը խիստ հետապնդվում եր, բայց և այնպես բանտարկյաների մեջ զալայն գործածություն ուներ: Բացի այդ՝ ձեռք եյին բերում թիվթեր ու գրքեր և սիմլանց հասցընում, բայց այս բանը շատ սակավ եր լինում և այն ել մեծ դժվարությամբ: Իսկ զրոցից ստանում եյին թե նամակներ և թե անլեզակ գրացնություն: Ճիշտ նույն կերպ ել քաղաքական բանտարկյաները հըկանություն ունեյին կոնսպիրատիվ կերպով զրագրություն ունենալ կազմակերպության ու ընկերների հետո: Նրանք կոնսպիրատիվ այն-

պիսի միջոցներ ելին գտնում նամակներ, բրոշուրներ ու թերթիկներ դուրս ուղարկելու և զրոխ ստանալու համար, վոր զրանց մասին բանադի վարչությունն ու ժանդարմերիան վոչ մի գեղքում հասկացողություն անդամ չելին կարող ունենալ. Մի ժամանակ քաղաքական բանատարկալներն անլեզալ զրականության մի փոքրիկ զրադարան ունելին, վորից, յերբ հարկավոր եր լինում, ամենքն ողափում ելին: Ընկերներից վոմանք, առանձնապես բանվորները բանտում հնարավորություն ունելին ավելի հեշտությամբ ճարել ու անվտանդ կերպով կարգական այս կամ այն անլեզալ հրատարակությունը, քան թե դուրս, ազատության մեջ յեղած ժամանակ:

Սիստեմատիկ կապ եր հաստատված բանտարկալների ու կազմակերպության բանտային հանձնաժողովի միջև: Կալանավորների նյութական ոժանդակության գործը հատկապես լավ կազմակերպված եր: Կազմակերպությունը նյութական աջակցություն եր ցուց տալիս ինչպես բանտարկալներին, այնպես և, հնարավության չափով, նրանց ընտանիքներին:

Աքսորի դատապարտված ընկերները բոլոր անհրաժեշտ բաները, փող լիներ այդ թե իրեր, կազմակերպությունից ելին ստանում: Կազմակերպությունն առանց խորության ոգնում եր նույնպես Էազաբականապես բոլոր տառապողներին, ինչպիսի կուսակցության ել նըրանք պատկանելիս լինելին, յեթե այդ մասին տեղեկացնում ելին ընկերները բանտից: Այդ բանում արտահայտվում եր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեծությունն ու գաղափարական մաքրությունը, և զրանով ել հենց նա ձեռք եր բերում համակրություն ու ժողովրդականություն:

Ընդհանրապես քաղաքական բանտարկալները բանտում իրենց պահում ելին քաջարի ու համարձակ: Թեպետ յերկարատես մենակաց բանտարկությունը մարդուս ֆիզիկապես ու հոգեպես խիստ քայլքայում ե, բայց և այնպես վհատության ու անկման գեղքեր քաղաքական բանտարկալների մեջ շատ սակավ ելին պատահում: Առանձին կամերայից ընդհանուր կամերան փոխադրելու մոմենտը, մի կամերա, ուր սովորաբար նստած ելին լինում 2-3 տասնյակ և նույնիսկ ավելի քաղաքական կալանավորներ, բանտարկալի համար վերին աստիճանի ուրախալի բան եր: Կոմմունալ, միաբան ընկերական կանքը մեծ թեթևություն եր, թեև բանտարկության պայմաններում այդպիսի միաբան կենակցության հարատեսությունը բանտարկալների համար հետագայում առաջացնում եր բավականին անհարմարություն:

Ընդհանուր կամերայում հաճախ կազմակերպվում ելին զրուցներ զանազան քաղաքական ու հասարակական հարցերի շուրջը և ընդհանուր ընթերցում: Այդպիսի գեղքում ողափում ելին ձեռքի տակ ու

նեցած լեզաւ ու անլեզաւ գրականությունից: Տեղի ելին ունենում վեճեր ու ընդդիմախոսություններ: Խնտելիքնուտ ընկերները բանվորներին դասավանդում ելին զանազան առարկաներ, ինչպիսի՝ սուսաց լեզու, քերականություն, թվաբանություն, աշխարհագրություն և այլն:

Ընդհանուր կամերան իր տեսակի մի կենտրոն եր, ուրկից մնացած մենակաց բանտարկալները, կարիք յեղած գեղքում, ստանում ելին անհրաժեշտ բաներ, ինչպես են՝ թերթեր, թերթիկներ, ըրոշուրներ, նաև կանուններ, թերթ շաքար և այլն:

Ավելի ուրախ եր անցնում, առանձնապես ընդհանուր զբոսանքի ժամանակը, վոր տեսում եր մի ժամից ավել. այդ ժամանակ զրուցում ելինք հսկող զինվորների հետ և պրոպագանդա անում նրանց: Խաղեր ելին կազմակերպվում, յերգում ելին հեղափոխական յերգեր, իսկ այս ամենը քաջալերիչ նշանակություն եր ունենում հատկապես թուլարնույթ բանտարկալների համար: Բանտի վարչությունը միշտ ի վիճակի չեր լինում բանության դիմելու և պատժելու «անուղղելի քաղաքական կալանավորներին», վորոնք վոչ «որինք» ելին ճանաչում և վոչ ել «բանտի դիսցիպլինա»: Նա պատժում եր այս կամ այն բանտարկալին առանձին, յերբ դրա համար հարմար մոմենտ եր լինում: Պատիմներ տալու ժամանակ նա զանց եր առնում նույնիսկ իշխուկ «գոյություն ունեցող որինքը»:

Կալանավորի կյանքը վոչվոքի կողմից և վոչ մի բանով ապահոված չեր և հաճախ վտանգի յեր էնթարկվում: Բանտի ոեժիմի սահմանված նորմաներից բանտարկալի արած ամենաշնչին շեղումն անգամ ծանր հետեւանքներ կարող եր առաջացնել շեղում կատարողի կյանքի համար: Յեթե բանտարկալը համարձակվեր, որինակի համար, լուսամուտի յերկաթապատ վանդակից մի վարչէյան լուսու աշխարհ նայել կամ խոսակցել վորեն մեկի հետ, ապա նա սփակի կենթարկեր իր կյանքը: Նման դեպքերում պահապան զինվորին հրահանգ եր տրված կրակելու: Այդ կերպ 1903 թվի ոգոստոս ամսին իր կամերայում սպանվում ե կովկասյան սոցիալ-դեմոկրատական լավագույն գործիչներից սեկը կեցիսովելին:

Այն, ինչ վոր այստեղ ասում ենք թիֆլիսի բանտի վերաբերյալ, կարելի յե վերագրել քիչ թե շատ չափով նաև կովկասի մյուս գավառական բանտերին: Բանտարկության պայմաններն ու բանտի ոեժիմը, վոր բոլորի համար միատեսակ են, վերջիններիս մեջ ավել կամ պակաս չափով յերեմն փոխվում են տեղական, մեկ ընդմիշտ սահմանված տրագիտիաների հետեւանքով, ինչպես և այս կամ այն բանտային տեսչի հայեցողության պատճառով: Իսկ զավառական բանտերի այդ տրագիտիաներն ու բանտային տեսուչների հայեցողությունը հաճախ

Նըանց մեջ պայմաններն ել ավելի անտանելի ու ալանդակ են դարձրնում, քան թիֆլիսի բանուերում:

Բազվի բանտում քաղաքական կալանավորներին *, այնպիսի սարսափելի նեղվածքի մեջ ելին տեղափորում, վոր ամբողջ հատակը ծածկված եր լինում քնած մարմիններով և անցնել առանց վորեն մելին կոխելու, անհնարին եր: Սարսափելի տոթ եր լինում, և բանտարկալները քնելու փոխարեն վողջ գիշերը տանջվում ելին ինչ-վոր կոշշարի մեջ: Պաոկում քնում ելին ուղիղ հատակին, վորովհետեւ բանտում վոչ անկողին կար և վոչ ել մահճակալ կամ թեկուզ թախտ նույնիսկ ծզտով լեցուն գոշակներ չկալին: Բանտարկալներին հարկադրում ելին թափալել ուղղակի կեղտոտ հատակին, ինչպես այդ անում են գոմում անսառների վերաբերմանը: Հետո, կամերաներում վոչ սեղան կար և վոչ ել աթոռ, ստիլված հենց նույն կեղտոտ հատակին ել ուտում ելին: Իլլումն այս բոլորի, բանտի գլուխը վորպես տեսուչ կանգնած եր բարոյապես ապականված լիրը Գրոմադան**), Նրա համար որենք չկար. վորպես որենք պիտի ծառայելին նրա ստոր ցնորամտությունները: Առանց վորեն բացատրության նա բանտարկալներին զրկում եր ծխախոտ ծխելու իրավունքից, թեև մինչև հունիսի 26-ը ծխում ելին աղատորեն և մյուս բանտերում քաղաքական բանտարկալներն ոգովում ելին ծխախոտ ծխելու իրավունքից: Այդ առթիվ նրա հետ ունեցած բացատրության ժամանակ նա հայտարարում է. «Թող մի իմ կամքից կախված լիներ, իս ձեզանից կխլելի վոչ միայն ծխախոտը, ալ և հացը»: Բանտերում ամենալայն չափերով կիրառվում են կաշառակերությունն ու ամեն տեսակի կողոպուտը: Իրեն ոգնական վերցնելով նախկին վոստիկանական պաշտոնյա իրաշիմքեկում ու թալանում եր կալանավորներին: Որինակ՝ խնդրագիր գրելու մի թերթ թղթի համար, վոր ստիլվում ելին գրասենյակից գնել

*) Բագվի բանտի վերաբերյալ տեղեկությունները վերցված են քաղաքական բանտարկյալի նամակից, վոր տողված ե Բագվի Կոմիտեյի թերթիկի մեջ և արտառողիքած «Աշքրա»-ի № 47-ում: Միքանիսի խակությունը յես անձամբ հաստատում եմ, փորոշիկութեա այդ ժամանակ (1903 թվի հուլիսին) յես առիթ ունեցաց ընկերների հետ զորոշ ժամանակով նստել այնտեղ՝ ետապի սպասելով Արևիլյան Սիրիս աքսորի յերթագու համար:

**) Հստ լուրերի, նա լվկումնի ըրդ տանջել եր իր առաջին կոնչը և զբա համար 8 տարով տաժանակիր աշխատանքի դատապարտվում, բայց հետո ներում են նրան և նրա անկոնտրու հայեցողությանը հանձնում բանտարկյաներին: Խայտառակ հանցագործությամբ արատափորված այդ բանտապահը բանտում իրեն պահում եր վորպես փոքրիկ ինքնակալ ու սատրապ:

վերցնում էլին 2-5 կոպեկ: Ծխախոտը, վոր արգելված եր բանտում, ոգնականը բացահայտ կերպով ծախում էր, ընդումին 4 կոպեկանոց մեկ ութերորդ փունտ մախորկալի համար վերցնում եր 20 կոպեկ: Նա դանակներ եր բերում բանտ ծախելու համար. սովորական ֆինանսական գանձակը քիչ առաջ նա ծախում է հինգ սուբլով: Խնդրազդիր զրելու համար, վորի մեջ թեկուզ թիթեակի կերպով մատնացույց եր արգում բանտապահների անկանոն արարքների վրա, բանտի տեսուչը կալանավորին յոթն որ բանտի կարցերն եր գցում, նախորոք խեղանդամ գարցնելով նրան:

Բանտի տեսուչ Գրոմաղան ովաստոսի 4-ի ցերեկվա ժամը 11-ին,
ուղարկելով աքսոր գնացող Թիֆլիսի քաղաքական հանցավորների
19 հոգուց բազկացած եատպը*), փակում և նրանց բանտի արհեստա-
նոցի բակում, վոր սիքանի քառակուսի սաժեն տարածություն ուներ,
և 45 զինվորից բազկացած պահակախումբ կանգնեցնում վրաները:
Այստեղ զինվորները հրացանների կոթերով, դահիճ տեսչի հրամանով,
Ակում են նրանց Յերկուսին վիրավորում են սվինով և շղթայակապեր
դնում նրանց վրա, թեև բաց գրության մեջ Կտրականապես
ասված եր, թե նրանք պիտի գնան առանց կապանքների:

Այն բանի համար, վոր նրանք որինական կերպով բողոքում են կապանքների գեմ, նրանց լիկում են ու վիրավորում և շղթալակապ ու արյունիքա ճածպա պցում:

Այդ իսկ ժամանակ գիշերով հափշտակում են քաղաքական բանտարկություններին, և անհայտ հմտում, թե ինչ առին նոր հետապնդություն է առաջանալ:

Բանտապահների այս վրգովեցուցիչ ու այլանդակ արարքներից հետո քաղաքական բանտարկյալներին մի հույս եր մնում՝ նրանց հետ բացահայտ պատքարի գուրս գալ, կյանքի ու մահվան պատքարից նրանք սովորուել են հայտարարում և հետեւյալ պահանջներն առաջարկում. 1) հանկարծակի չաքսորել այլ հնարյավորություն տալ աքսոր գնուլուց առաջ հրաժեշտ տալու ազգականներին և վերցնելու շորեր ու սպիտակեղեն, 2) տալ անկողնի համար անհրաժեշտ բաները, թախտ կամ մահճակալ, 3) կալանավորների թիվը կամերաներում պիտի համապատասխանի նրանց տարողությանը, համաձայն բժշկի վորոշման, 4) թուլատրել ծինելը, 5) ստամքսի խանգարման դեպքում արտաքնոց գուրս թողնել նաև ստուգումից հետո, 6) կամերաներում արտաթորության յերկաթե գույլ (պարաշակ) դնել, 7) չցցել մութկարցերը և ընդդանրապես առանց դատախազի կարգադրության պատիժներ չտալ, 8) բանտարկյալների հայտարարությունները՝ բարձր

*) Սըրանց թվումն երին լսմէի այլոց կ. Կուրճատովսկին, Զիբլաձեն, Ֆրան-չևսկին, Յաբաձեն, Ջուղալին, Գոգուան, Զորիշվիլին և ուրիշները:

թշխանության հետ անձամբ բացատրություն՝ ունենալու ցանկության մասին՝ բանափառություն անմիջապես պիտի իշխանությանը հանձնի, 9) հիվանդության դեպքում գիշեր ժամանակը ևս հիվանդի մոտ անմիջապես ֆեղակը հրավիրել, 10) պարտավորեցնել բանտային տեսչին ու վերակացուներին, վոր չծեծեն կալանավորներին և փողոցային հիշոցներով չհայնոյեն նրանց: Սովազուլը մի որ ե տեսում, վորովհետեւ իշխանությունը վճռում ե բավարարել գլխավոր պահանջները:

Ինչ վերաբերում ե աքսորին, ապա դա վոչ այ ինչ ե, յեթև վոչ բանտարկության շարունակությունը, այն տարբերությամբ միայն, վոր դա վոչ թե չորս պատերի մեջ ե, այլ բաց յերկնքի տակ: Դա տանջանքների ու չարչարանքների մի անընդհատ շղթա յե, առանձնապես Ծուսաստանի հյուսիսային անմարդաբնակ նահանգներում և Արևելյան Սիրիրի ամենահետավոր վայրերում, ուր աքսորականներից շատերը կյանքի դաժան ու անտանելի պայմաններից և զանազան պատահականությունից կործանվում են անժամանատկ: Աքսորի կյանքի ու պայմանների մասին մանրամասն խոսելու համար պիտի մի ամբողջ գիրք գրել: Ենդ սմին աքսորի մասին յեղած գրականության միջոցով շատ բան ծանոթ ե լայն հասարակությանը:

Աքսորի ետապի կարգը, վորի ժամանակ աքսորականը համախյենթարկվում ե զանակոծության ու պահանջների հրամանատարության այլ կամայական արարքներին, աքսորավայրերում վոստիկանական հսկողության պայմանները, աքսորականներին զանազան պատիժները տալը, այսպես՝ վոստիկանության կողմից «կատալաշկա» *) («Կատալաշկա») նստեցնելու կարգը և յերկրի իշխանության կարգադրությամբ նրանց հաճախակի փոխադրումները դեպի ավելի հեռավոր հյուսիսային դաժան վայրերը **), քաղաքական աքսորականների համար նահանգական իշխանության ու գեներալ-նահանգապետի մշակած դաժան դրակոնլան կանոնները և, վերջապես, կատարյալ անողնականությունն ու կյանքի բացարձակ անապահովությունը ցոտաշունչ ու ամայի աքսորավայրերում, — այս ամենը իմի առած ստեղծում են աքսորականների համար անտանելի դժոխային մի դրություն, վորից նրանք հաճախ փախուստի գիմելով և այլ միջոցներով ձգտում եյին ամեն կերպ ազատվել: Այս իսկ դրությունը հենց առաջացնում ե Ռուսանովյան հանրածանոթ արյունալից գրաման, վոր տեղի ունեցավ 1904 թվի փետրվար ու մարտ ամիսներին Յակուտսկ քաղաքում:

*) Աքսորի գյուղական վայրերում յեղած վոստիկանական նկուղները, վորոնց մեջ նստեցնում եյին վարչական կարգով աքսորականներին: Ծանօթ. քարզ.

**) Այս փոխադրումները սոսկալի տանջանքների հետ եյին կապված, և հարյուրավոր ու հազարավոր վերստ գնալու ճամապին աքսորականները յերբեմն յենթարկվում եյին զանազան գժբախտ պատահարների:

«ՄԵՍԱՄԵԴԱՍԻՍՏԵՐԻ» ԽՄԲԱԿԸ ՅԵՎ «ԿՎԱԼԻ» ԹԵՐԹԸ

Խոսել կովկասյան սոցիալ-դեմոկրատիալի պատմության մասին և հիշատակություն չանել «մեսամեղասիստների» խմբակի ու «Կվալի» թերթի վերաբերմամբ, անհնարին ե: Թե «մեսամեղասիստների» *) խմբակը և թե «Կվալի» թերթը, վոր հրատարակում եր այդ խմբակը, կովկասյան բանվորական շարժման ու սոցիալ-դեմոկրատիայի մեջ անկասկած գեր խաղացել են:

«Մեսամեծ գասիր նշանակում ե «յերրորդ խոռորդ», և այդ անունով նա մկրտվում ե տարբերվելու համար մյուս յերկու հոսանքներից՝ ֆեղալներից ու վաթսունականներից, վոր հիշալ խմբակի առաջացման ժամանակ իշխում ելին վրաց հասարակության ու գրականության մեջ: Խմբակի նախահայրը վրաց ժողովրդական գրող Նինոշվիլին և, վոր մեռել ե 1894 թվին: Վրաց ինտելիգենցիայի այս փոքրի խմբակը, վորի կազմի մեջ մանում ելին ապագա վրաց սոցիալ-դեմոկրատներից միքանիսը, խմբավորվում ե լիբերալ վաթսունական Գեորգի Ծերեթելու**), «Կվալի» շաբաթաթերթի հիմնադրի ու հրատարակչի շուրջը: 1898 թվից սկսած, Ծերեթելուց հետո***), թերթն անցնում է «մեսամեղասիստների» ձեռքը, վորոնք զանվում ելին մարքսիստական իդեոլոգիայի ազգեցության տակ:

Վորպեսզի հասկանալ, թե ինչ գեր ու նշանակություն ե ունեցել «մեսամեղասիստների» խմբակը վրաց հասարակության ու գրականության համար, անհրաժեշտ ե իմանալ այն յուրահատուկ պայմանները, վորոնց ժամանակ առաջանում ե այդ խմբակը:

Ասցյալ գարի ինստունական թվականները վրաց հասարակական կյանքի ու գրականության մեջ հայտնի յեն վորպես խառնաշփոթության ու անկենդանության մի շրջան: Այդ եպոխայում իշխում ելին հետադիմական, ազգային-շովինիստական տենդենցիներն ու խավարամտությունը: Վրաց ազնվական կալվածատիրական ինտելիգենցիան, վորի մի վորոշ մասը հարմար գեպքերում լիբերալ մտքեր եր արտահայտում, իր գերով ոգտակար եր գարձել ինքնակալ կառավարության հետադիմական հերյուրանքներին, հայերի գեմ ազգային թշնամանք գրգռելու նրա քաղաքականությանը: Կառավարական գործակալ ու

*) Ահա նրանցից միքանիսի անսոնները՝ նենոցվիլի, ժորգանիա, Զիբլանե, Զիսեհձե, Ռամիշվիլի, Ցիակայս, Մախարաձե, Դարչիաշվիլի, Ցուլովիձեները (Ալեքսանդրը և Գիգոն), Ցիալիձե, Ցինցաձե, Կիցիցիրիձե և ուրշները:

) Հայտնի հրակիլ Ծերեթելու հայրը: Ծանօթ. հեղինակի և հրատարակուր: * Նա մեռնում է ավելի ուշ, 1900 թվին: Հեղինակի ծան. հայեր. քարզ:

«Կավկազ» պաշտոնական թերթի խմբագիր Վելիչկովի ու ընկ. ակնհայտ պրովոկատորական գործունեցությանն ոժանդակում են իրենց գործելակերպով ու ընդհանրապես հայերի նկատմամբ բռնած դիրքով վրաց հասարակության այնպիսի լուսատու աստղերը, ինչպիսիք եյթն՝ իլիա ծավավաճեն, Ակակի, Ծերեթելին և ուրիշները։ Ճավավաճեն, Վելիչկոն ու ընկ. հայերի գեմ խաչակիր արշավանք են հայտարարում*):

«Դա վրաստանում հասարակական մտքի կատարյալ աղքատացման ժամանակն եր», — գրում ե «Կվալի» թերթի փակումը՝ խորագիր ունեցող հոգվածի հեղինակը «Իւրա»-ի № 60-ի մեջ։ Հասարակության ու մամուլի մեջ առետրական ընույթի բանիմացությունը վարում ե իդեալուր, և վրաց աղնվական ինտելլիգենցիալի շրջանում իշխում են մեռելությունն ու հասարակական անառակությունը, վորոնց հիման վրա պերճորեն ծաղկում ե շովինխստական մանիլովչինան։ Վրաց ինտելլիգենցիալի նախկին լուսատուները միանգամայն մթագնում են. անցյալ շրջանի բանաստեղծ ու հումանիստ Իլիա Ճավագաճեն, «Իվերիա» թերթի խմբագիրը, գառնում ե ֆեոդալական իդեոլոգիակի մի ներկայացուցիչը, վորի ճորտատիրական սովորությունները նույնիսկ բանկային ճարպիկ գործիշների (දելյալ) հետ ունեցած ինտիմ ու գործունյա կազերը չեն կարողանում ջնջել. Վրաց (և վոչ միայն վրաց) գրականության կոթողը հանդիսացող Ն. Նիկոլաձեն, 70-ական թվերի ու 80-ական թվերի առաջին կեսի այդ հայտնի գրականագետ և «Օтечественные записки», «Слово», և «Устюй» հանդեսների գործունյա աշխատակիցը, նույն այն հրապարակախոսը, վորի «Լուի բլան և Գամբետո» հոդվածի համար «Слово» հանդեսը 1879 թվին նախազգուշացում ստացավ, — ահա այդ մարդը թեքվում է գեպի հակառակ կողմը, «ստորությանը հարմարվելու» կողմը և պինդ հասատվելով Փոթի քաղաքում վորպես լորդ-մեր, իր տաղանդագոր ելության վող թափը զնում ե բանկային ճարպիկ ու այլ գործառնությունների մեջ։ Վերջապես, լիբերալ-վաթունական իշխան Ծերեթելին իր նախկին պատգամները փոխանակում ե դատարկախոսության, միաժամանակ անձնատուր լինելով շովինխստական սնամուռությանը և մեջընդմեջ առետրական գործառնություններին։ Յեկ ահա

*). Հարկագոր և նշեր վոր այդ ժողովուրդների տիրող դասակարգերի, մի կողմից հայ բուրժուազիալի, վոր Կովկասում կարեսը տնտեսական ուժ եր ներկայացնում, և մյուս կողմից՝ աղքատացած վրաց աղնվական-կալվածատիրական դասի ու նրա բուրժուականացած լիբերալ մասի միջն արայքարը վաղ ժամանակներից ե մղվում։ Այդ պայքարն արտահայտվում եր գրականության ու մամուլի և առանձնապես քաղաքային ինքնավարությունների մեջ։ Թիֆլիսը, վորանել, ինչպես և ուրիշ տեղերում, կովկասյան հայ բուրժուազիան անտեսական կողմից մյուսների վերաբերմար առավելություն ուներ, և թիֆլիսի քաղաքային ինքնավարությունը յեղել են միշտ այդ յերկու ազգերի տիրող դասակարգերի պայքարի ու հակամարտության առաջարկը։

այդ անժամանակայնության շրջանում յերեան և դալիս «մեսամեղամիսամերի» խմբակը։

Ինքնին հասկանալի լի, վոր այդ ձահճի մեջ «մեսամեղամիսամերի» այս խմբակի նետած քարը պիտի խոռվություններ ու հուզումներ առաջացներ։ Ճահճի մակերեսում հայտնվում են բոլոր գարշանքները՝ ֆեոդալ-ճորտատերերը, իրենց լիբերալ հորջորջող ազգայնականները և ուրիշները։ Իշխան Ի. Ճավագաճենի հրատարակած «Իվերիա» ֆեոդալական-հետադիմական թերթի ու «մեսամեղամիսամերի» «Կվալի» շարաթթերթի միջն լուրջ բանակոփվ և սկսվում։ Վերջիններս հաջողությամբ գրում են թշնամիներին, և իվերջո հաղթությունը նրանց և մնում։ Հասարակական առաջավոր տարրերը դեպի նրանց են թեքվում, նրանց ոգտին համակրական կարծիք և կազմվում։ Այս խմբակն իր հետաքահարապակախոսական գործունեցության ընթացքում, առաջին փորձերից հետո վերջնականապես պարզած լինելով իր վաքրագիծը և ունենալով արդեն սոցիալական անսասան մի պատվանդան իշեմս բանվոր գասակարգի հասարական մասսայական շարժման, վորի վրա նաև այժմ հենվում ե, նույնպիսի ինունդով ու հաջողությամբ բանակովի յե դուրս գալիս սոցիալիստ ֆեղերալիստների գեմ, վորոնք հանդես ելին գալիս ազգային հայտնի ծրագրով։

Ի՞նչպիսի ուղղություն ուներ ինքը «մեսամեղամիսամերի» խմբակը և ի՞նչպիսի բնույթ՝ նրա գրական գործունեցությունը։ Նրանց մասին շատ հաճախ լսել ենք զանազան կարծիքներ, և մինչ որս ել այդ տոթիվ գեռ խառնաշփություն ե տիրում։

Վոմանց կարծիքով այս խմբակի անդամները նրա գոյության սկզբնական պահին հանդիսանում եին լորպես մարքսիստներ, սոցիալ-գեմոլիցիատներ, ուրիշների կարծիքով՝ պարզապես դեմոկրատներ, արմատական ընտելլիգենտներ և նույնիսկ նացիոնալ-դեմոկրատներ։

Բնկ. Սոցիալ-Դեմոկրատը, վորին սույն աշխատության հեղինակը գիմեց՝ ինդրելով նրան արտահայտվել այս հարցի մասին, իմիջի այլոց գրում ե, վոր «մեսամեղամիսամերի» խմբակը, իր կարծիքով՝ արմատական սույնությայի մի խմբակ եր։ Նա իր գրական խմբակի մեջ համախմտելիքենցիայի մի խմբակ եր։ Ար ապագա սոցիալ-դեմոկրատների ու սոցիալիստ-ֆեղերալիստների տարրերը։ Պիտի խոստովանել, վոր այս ու այն տեղ («Կվալի»-ի մեջ) պատահում ելին պարզապես արմատականների հողվածներ... Իսկ ինչ վերաբերում ե ազգայնականության յերանգին, ապա այդ պիտին չի յեղել, կամ, ավելի ճիշտն ասած, միանգամայն թույլ կերպով պիտին չի յեղել, կամ, ավելի ճիշտն ասած, միանգամայն թույլ կերպով պիտին արտահայտվում *): Ժամանակի ընթացքում «Կվալի»-ն դառնում եր արտահայտվում։

*). Ներկայում պիտի հաստատենք, վոր ազգայնական տենդենցներ անկասկած կովկասյան հայ բուրժուազիան անտեսական կողմից մյուսների խմբակի անդամների մեծամասնության մեջ։ Մեսամեղամիսամերի խմբակի անդամների մեջ բարձրագույն ազգայնական կարգը անտեսական կողմից մյուսների վերաբերմար մեջություն ուներ, և թիֆլիսի քաղաքային ինքնավարությունը յեղել են միշտ այդ յերկու ազգերի տիրող դասակարգերի պայքարի ու հակամարտության առաջարկը։

Ե միանգամայն մարքսիստական որդան, մյուս կողմից, քանի գնում, նա շափազանց չոր ե դառնում, վոր կարելի յե տեսնել թեկուղ այն բանից, վոր առաջնորդող հոդվածների փոխարեն այնտեղ կրում են հոդվածներ՝ Մարքսի արձենի տեսության մասին... Թեպետ վերջին ժամանակը «Կվալի»-ն դառնում է մարքսիստական հանդես,—և սա պիտի այն մտքով հասկանալ, վոր այնտեղ գրում ելին բացառապես տեսական բնուլթ ունեցող մարքսիստական հոդվածներ,—բայց դրա հետ միասին ալդ հոդվածները բավականին ջրալի յեն լինում»:

Հիշյալ հոդվածի հեղինակը «Աւետ»-ի մեջ պնդում եւ, վոր ոռոսական լեզար ու անլեզար մարքսիստական գրականության վրա դաստիարակված մեսամեղասիստներն սպառագինված եյին միմիայն մարքսիստական անալիզի մեթոդի ճիշտ լինելու համոզմունքով... նոր հրատարակությամբ «Կվալի»-ն սկսում եւ քարոզել պատմության մատերիալիստական լուսաբանությունը և անցկացնում դասակարգային շերտավորման գաղափարը՝ վորպես դասակարգերի որբեկտիվ պրոցեսու պայքար, վորպես ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի բովանդակություն, կիրառելով այն անդրկովկասյան ազգաբնակության վերաբերյալ»:

Իհարկե, «մեսամեղասիստների» խմբակի մասին դատելիս որյեկտիվ լինելու և մեկընդմիշտ ճիշտ տեսակետ հաստատելու համար պիտի խիստ քննադատական անալիզի լինթարկել այն ամենը, ինչ վորդը գրել են այդ խմբակի անդամները «Կվալիֆի-ի մեջ և առանձին բրոցուրներում։ Խոկ սա ներկա աշխատության նպատակից դուրս եւ թողնելով այդ բանն ափելի կրծպետենտ ու նրանց գրական գործունելությանն ավելի ծանոթ մարդուն անելու, այնուամենակի յետինձ թույլ եմ տալիս ասելու միքանի խոսք իմ անձնական գիտողությունների ու այն ամենի հիման վրա, վոր յես կարողացել եմ իր

կըստական կուսակցության աջ տարրերը, ինչպես ցույց տվին մեր յերկրի քաղաքական անկման վերջին դեպքերը, մեսամեղասիստ-սոցիալ-գեմոլիբատներն ու նրանց կողմանակիցները խոշոր դեր խաղացին ազգային-սեպարատ շարժման մեջ և սեպարատիզմի քաղաքականությունը ծայր աստիճանի հասցըին վոչ միայն Ռուսաստանի նկատմամբ, այլև Անդրկովկասի տարրեր ժողովուրդներով բնակված առանձին յերկրամասերի վերաբերմամբ։ Ազգային-հետաղլիմական չփանկելիստական հոսանքը, հաղթելով սոցիալ-գեմոլիբատական կուսակցության ձախ տարրերին, ուժինանում եմը կյանքի համար մոռայլ տարիներին, 1918, 1919 և հետագա թվականներին։ Չփանկելիդմբն իր սկիզբն առնում ե մեսամեղասիստների խմբակից, փորոն ազգային ու սոցիալական հարցերի նկատմամբ աչքի եյին ընկնում իրենց խառնաշփոթ ասկացողություններով։ Նորագույն չփանկելիդմն իրենից ներկայացնում ե վոչ այլ ինչ՝ յեթե վոչ գորպես «մեսամեղասիստների» խմբակի նախկին անդամների իդեոլոգիան՝ արտահայտված վառ ու ավարտված ձևով։

Հեղինակի ծանոթություն և իրատակությանը:

ժամանակին կարդալ վրացերեն լեզվով։ Ընդսմին նախորոք հայտնում եմ, վոր այստեղ իմ ասածները կատեզորիկ նշանակություն չեն կարող ունենալ։

Ինձ ես թվում ե, վոր «մեսամեղասիստների» խմբակն ընդհանուր առմամբ արմատական մի ինտելիգենցիա յեր, թեպետ և նրա այս կամ այն տնդասմը կարող եր գտնվել մարդքսիստական լիդերովիայի խիստ ազդեցության տակ: Մակարն այս վերջին հանդամանքը չի փոխում խմբակի արմատականության ընդհանուր բնույթը: Եկեղեցիզմը «մեսամեղասիստների» մտածողության բնորոշ ուղղությունն եր: Մասամբ հենց սրա շնորհիվ կարելի յէ բացատրել զգացմունքների ու հասկացողությունների այն խառնաշփոթությունը, վոր մինչ որս ել արտահայտվում ե վրաց սոցիալ-դեմոկրատ բանվորների և նույնիսկ ինտելիգենտների վլուխներում զանազան գործնական ու տեսական հարցերի վերաբերմամբ*):

Զնայած այս բանին, «կվալի» շաբաթաթերթը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մաքրվուն ե զորոտներից, այնպես զոր համարձակորեն կարելի յե ասել, վոր փակման նախընթաց շրջանում նա ըստ bloc կանգնում ե պրոլետարական դասակարգակին պայքարի ու սոցիալ-դեմոկրատիայի ճիշտ տեսակետի վրա:

*) հաստատություն վերոինշյալին կիշշատակեմ այսուղ շատ փաստերից մի-
այն մեկը, զոր տեղի յեւ ունեցել Թիֆլիսում: 1907 թ. իր կալվածքում սպանվում ե
բանաստեղծ ու գրականագետ Խլիս ձավճավածեն, զոր նախկին լիբերալ երև և վե-
րաց հասարակության մեջ առաջին ազգեցություն ուներ: Վերջին տասնամյակների
ընթացքում նա կերպարանավորիվ գումար կազմակերպում եւ դառնալով տիպիկ հետազիմական, ֆեռուլ
ու հետապնդում թե գյուղացիական հողային շարժումը և թե առանձնապես բանվո-
րական շարժումն ու սոցիալ-դեմոկրատիան: Զնայած սրան, Թիֆլիսի վրացի ընկեր-
ներից վումանք ցանկանում են, զորպեսզի սոցիալ-դեմոկրատիան կազմակերպությու-
նը մասնակցի հանդիսավոր թաղմանը՝ հարգելու մի մարդու հիշատակը, զոր այնքան
շատ վասել եր բանվորական գործին ու նպաստել յիրկու ազգերի, վրացիների ու հա-
յերի ազգային ստոր զգացումների զարգացմանը: Այս հարցը Թիֆլիսի կազմակերպու-
թյան մեջ շատ մեկնություններ ու վեճեր ե հարուցում: Այդ հարցը քննության և
առնվում ույսուններում ու զեկավար կոլեկտիվում և, վերջապես, այս վերջինը 11 ձայ-
նի մեծամասնությամբ ընդուն 8-ի մերժում ե (Թիֆլիսի կազմակերպության զեկա-
վար կուլեկտիվի անդամները համարյա միշտ բացառապես վրացի սոցիալ-դեմոկրատ-
ներ են լինում): Այսուամենայնիվ, վրաց սոցիալ-դեմոկրատիան որպանի (Լեգալ-
կուսակցական որդան) խմբագրությունը սրանից անկախ, գնուում ե խմբագրության
անունից մասնակցել թագմանը պատկով ու ընկեր խմբագիրներից մեկին պատիվա-
կելով, զորը և ձավճավածեյի գործունեյության մասին համապատասխան մի քննա-
դատական ճառ և ասում: Ըստումին ձառեր ասում են նաև ուրիշ ընկերներ և սո-
ցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամներից շատերը, այդ գեպքից խորը
կերպով ազգված, լցնում են «ազգային» սիրելի բանաստեղծի ու հասարակական
դորձչի թաղման սպերթի շարքերը:

Թե վորքան ձիշտ և այն պնդումը, վոր թերթը «մեսամեղասիստների» խմբակի ձեռքն անցնելու ժամանակ արդեն ուզում են դարձընել այն մարքսիստական որգան, չեմ վստահում ասել։ Ամենից ձիշտն այն է, վոր «Կվալի» թերթը մարքսիստական դառնում և հենց բանվորական, սոցիալ-դեմոկրատական շարժման ազգեցության ատկ։ Դրան նից հետո, յերբ թերթը կանգնում է բացառապես բանվորների շահերը պաշտպանելու հողի վրա և ժողովրդականություն է ձեռք բերում նրանց մեջ, վերջիններս սկսում են մեծ հետաքրքրությամբ կարդալ այդ թերթը և նաև նրան, վորպես իրենց որդանի վրա։

Յերբ «Կվերիա» ու «Կվալի» թերթերի միջև տեղի ունեցած բանակովի ժամանակ «Իվերիալի» խմբագիր-հրատարակիչ իշխան Ժավադավաճեն թուլ ե տալիս իրեն վիրավորելու բանվոր դասակարգին, բանվորները, մասնավաճանդ Թիֆլիսի բանվորները, ցեռանդագին միջամտում են վեճին և «Կվալի»-ի միջոցով արտահայտում են բազմաթիվ ստորագրություններով իրենց կոլեկտիվ խիստ բողոքն ընդդեմ Ժավադավաճեցի։

«Կվալի»-ի բաժանորդների զլիավոր մասը բանվորներ ենին. թերթը կարգում նիմ տանը, խմբակներում, քննության առնում այս կամ այն հողվածը, մեկնաբանում ըստ իրենց հասկացողության և ալին։

Մի խորքով, բանվորական շարժման խիստ ազգեցության տակ «Կվալի»-ն կերպարանափոխում, դառնում և վրաց բանվորների որդանը, իսկ նա իր հերթին ներզործություն է ունենում և հնարավորին չափ նուաստում բանվոր դասակարգի զարգացմանը։ «Կվալի»-ի միակողմանի ջատագովը, «Խերա»-ի մեջ ապված վերոհիշյալ հողվածի հեղինակը նույնիսկ, ընդունում է, վոր «մինչ մեստմեղասիստներն ապացուցում ենին կապիտալիստական հարաբերությունների զարգացման հնարավորությունը Կովկասում, այդ իսկ ժամանակ հենց աճում ու նախապատրաստվում եր կապիտալիզմից տառապող բանվոր դասակարգի շարժումը և ակախիլ յելույթը՝ հասարակական կյանքի ասպարիզում... Այսպիսի մթնոլորտում, —շարունակում է հողվածի հեղինակը, —«Կվալի»-ն այլ նշանակություն է ընդունում, նրա ձայնը այլ ուեզրնանս ստանում։ Այդ մթնոլորտը «Կվալի»-ի մեջ նոր կյանք եներշնչում և իր հերթին սկսում նրանից նոր մտավոր սնունդ ստանալ։

Փաստապես «Կվալի»-ն լեզաւ միջոցով լրացնում եր այն ժայռահեղ բացը, վոր զգացվում եր այդ ժամանակ անլեզաւ սոցիալիստական գրականության մեջ։ «Համոզված կերպով կարելի լի ասել, վոր Քութայիսի նահանգությունը լցված բանվոր-ալլուստանդիստներն իրենց պատրաստությունը, քիչ բացառությամբ, ստացել եյին միայն «Կվալի»-ի շնորհիվ»*)։

*) Մեր թղթակցի գրակոր հաղորդագրությունից։

Մի ուրիշ հանգամանք և, վոր առանձնապես նպաստում ե «Կվալի»-ի զաղափարական բովանդակության ազատ զարգացմանը, դա այդ ժամանակ Կովկասում զրաքննության, առանձնապես վրացական զրաքննությունը վլխավորապես հետապնդում եր ազգային սեպարատ տեղինցները, մի բան, վոր, իդեալ ասած, ամեններն չկար թե վրացիների և թե հայերի մեջ, իսկ բանվորական հարցի մասին գրած հողվածները հանգեստ են մեջ իրերում ու թերթերում զրաքննությունը հաճախ բաց եր թողնում։

Վրացական զրաքննությունից լիբերալ ժուրուլին, վոր անձնական բարեկամական հարաբերությունների մեջ եր զոնվում «Կվալի»-ի խըմբագրության անդամներից մեկի հետ, հնարավորություն եր ընձեռում թերթերին ազատ արտահայտվելու։ Այդ թերթի վտանգավոր ուղղությունը կառավարությունը յերեան և հանում շատ ուշ միացն։ Թիֆլիսում մասսայական ձերբակալությունների ժամանակ, յերբ խուզարկելիս բանվորների ու ինտելիգենտների մոտ «Կվալի»-ի համարներ են գտնում, ձերբակալվում են նույնպես «Կվալի»-ի խմբագրության աշխատակիցները։ Գրաքննությունից ժուրուլին պաշտոնից հեռացվում է, իսկ թերթը մինխստության կարգադրությամբ ընդմիջատ փակվում։

Թե վորքան մեծ և լեզաւ հրատարակության գոյության նշանակությունը, չնայած վոստիկանական դաժան պայմաններին, դա ցուց է տալիս «Կվալի»-ի որինակը։ Ձիշտ ե, այդպիսի պայմաններում նա («Կվալի»-ն), շնորհիվ այն բանի, վոր ինքնասահմանափակում ե անում արտահայտության ձեր կողմից և անորոշության մեջ և թողնում ու չի ասում այն, ինչ վոր պետք եր ասել, ինչպես և շնորհիվ «մեստմեղասիստների» խմբակի այլատարը կազմի, նախապես եկելեկտիկ բնույթ ե կրում, բայց ժամանակի ընթացքում սոցիալ-դեմոկրատական բանվորական ազգեցության տակ նա զարգանում է, ու զուգում և զառնում ե բացառապես պրոլետարիատի շահերը պաշտպանող մի որգան։ Թիպես ձիշտ ե և այն, վոր եկելեկտիզմը կարող ե հասկացողությունների մեջ խառնաշփոթություն առաջացնել և բանվոր դասակարգի նորմալ զարգացումը կասեցներ բայց այդ միայն ժամանակագրություն և վարենպատ պայմաններում լեզաւ թերթը, ազատվելով բռնության կապանքներից և հրատարակության ուղղության մեջ աններգանակություն մացնող խմբագրության կազմի խորթ տարբերից, վորոշակի ու պարզ ծրագրով տարած իր հետապաշխատանքի ընթացքում կարող ե ցրել մշուշը և այդպիսով հսկայական ծառայություն մատուցել բանվոր դասակարգին։

Այս տեսակետից ել «Կվալի»-ն աներկբայելի դեր և խաղացել Կովկասում բանվոր դասակարգի շարժման զարգացման մեջ։

ՀԵՂԻՆԱԿԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1 (51-ՐԴ Էջին).

1. Ներկա գեղքում քիչ կարեն գեր չի խաղացել ազգային պարտիկուլյարիզմը, վոր արտահայտվում եր վրաց սոցիալ-դեմոկրատաներից շատերի մեջ։ Այս ակնհայտ շովինիզմի հասած պարտիկուլյարիզմը խոչընդուռ եր հանդիսանում բանվոր դասակարգի նորմալ շարժման զարգացմանը, միջազգային համերաշխությանը և նրա համախմբմանը համապրոլետարական դասակարգային պայքարի մեջ ընդդեմ բուժուական դասակարգերի։

Վրաց բանվորների վրա բարոյապես քայլքայիչ կերպով ներգործող վրաց սոցիալ-դեմոկրատ շատ գործիչների նեղ ազգային զգացումներն ու հասկացողությունները հայ բանվորներից շատերին վանում ելին բանվորական-հեղափոխական շարժման մեջակտիվ մասնակցություն ունենալուց։ Հարկ եր լինում յերեմն պայքարել այդ չարիքի դեմ։

Բանվորական շարժման պատմության մեջ, մանավանդ նրա զարգացման առաջին փաղի ընթացքում, վրաց սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքի մեկուսացումը, առանձնացումը՝ ըստ ազգային հատկանիշի լոկ ազգային-տերրիտորիալ հայրենիքի սահմաններում, հանդիսանում եր նրա գործունեյության բնորոշ գիծը։ Ընդ սմին, չխոսելով թուրք մասսաների մասին, վորոնց հասարակական-քաղաքական դաստիարակության ու գիտակցության դարձը յերբեք վրաց սոցիալ-դեմոկրատիայի ուշադրության ու հոգատարության առարկան չի լեզել վերջինիս գործիչներից շատերը հայ պրոլետարիատին մոտենում ելին միանգամայն վոչ սոցիալ-դեմոկրատական տեսակետից։

Նրանք դատում եյին այսպես. «Վրաստանի հայ բանվորները վրացերեն լեզվով հասկանում և խոսում են, ինչպես իրենց մայրենի լեզուն։ Նրանք ավելի շուտ վրացիներ են, քան հայեր։ Նրանց մեջ բանավոր ու գրավոր աշխատանքն առանց վորոն դժվարության կարելի յե վրացերեն լեզվով տանել, ուստի ժամանակի և ուժերի ավելորդ վատնում կլինի, լեթե հայերեն լեզվով ել հրատարակենք թերթիկներ, թուուցիկներ և ալլն»։

Նրանք չգիտեին (ձեւանում ելին, թե չգիտեն) և չեյին մտածում այն մասին, վոր Թիֆլիսի ու Քութալիսի նահանգների մյուս վայրեռում տասնյակ հազար հայ բանվորներ (հայ զավառներից յիկվո՞ւմ

առարրը) վրացերեն լեզուն չելին հասկանում ու վրացերեն չելին խոսում։ Ի՞նչ ե արել նրանց համար վրաց սոցիալ-դեմոկրատիան, վոր այն ժամանակ իրեն համարում եր միջազգային մի կազմակերպություն ու Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մի մասնիկը։ Կատարելապիս վոչինչ։ Յերբ գործադուլներ են տեղի ունենում «Թիֆլիս» յերկաթուղային կայարանի գեղայում ու արհեստանոցում, ուր բանվորների մեծամասնությունը վրացիներ ելին, թերթիկներն ու թուուցիկները բաց ելին թողնվում բացառապես վրացերեն լեզվով, յերբեքն և ոռւսիրեն լեզվով (վերջինս վորպես պաշտոնական լեզու)։ (Իսկ «այլազգի» բանվորների փոքրամասնության համար, մի հարյուրակ հայերի համար, վրացի տկտիվ հականակոր գործիչների կարիք չկար հայերեն լեզվով թերթիկներ ու թուուցիկներ հրատարակել։ Յերբ նման գեղեցերում հարկ եր լինում առարկել նրանց, թե այդ հեղափոխական անլեզգալ հրատարակությունները կազմակերպչական, աղիտացիոն ու դատաժիարական նշանակություն կարող են ունենալ վոչ միայն շատ սակավաթիվ յերկաթուղային հայ բանվորների համար, այլև քաղաքի աշխատանքի հազար հայ բանվորների համար, վորոնք բացի մայլենի լեզվից ուրիշ լեզու չգիտեն, ապա նրանք լուության ելին տալիս այդ հանգամանքը կամ թե ամենից հաճախ մատնանշում եյին տեխնիկական գժվարություններն ու ուժերի պակասությունը։

«Վրացի բանվորների խնայած գումարներից ի՞նչպես կարելի յե մասն հանել հայերեն անլեզգալ վրականություն հրատարակելու համար։ Թող հայ բանվորներն իրենք հոգան այդ մասին», — ասում եր մեզ վրացի ականավոր հարգելի բանվորներից մեկը (այժմ հանդուցյալ)։ Այսպես եր ընդհանուր առմամբ վրաց գործիչների վերաբերմունքը գեպի հայ պրոլետարիատը։

Վրաց սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարները յերբեք իրենց սըրտին մոտ գործ չեն համարել լուրջ հիմքերի վրա դնելու հայերեն լեզվով կուսակցական սոցիալիստական մամուլի հրատարակությունը։ Մենք նրանց մեջ ամենին ցանկություն ու ձգտում չենք նկատել բարեկալվելու և զարգացնելու հայ հրատարակչական գործը։ Ընդհակառակն, նրանք շատ հաճախ զանազան պատրվակներով մերժում եյին և միջոցներ չելին տալիս հալերեն լեզվով սոցիալիստական թերթ հրատարակելու համար, մինչդեռ նրանց բացառիկ ուշադրությունն ուղղված եր մայրենի, վրացերեն լեզվով սոցիալիստական պարբերական մամուլը զարգացնելու և լայն տարածելու վրա։

«Այլազգի» պրոլետարիատի նկատմամբ սոցիալ-դեմոկրատիայի վրաց պատասխանառ գործիների մեծամասնության ունեցած անմիաւուակ վերաբերելու մունքը, մեկուսացած, առանձնացած աշխատանքի քաղաքականությունը և ծայրահեղ հայրենասիրական պարտիկուլյարիզմը,

վորոնց վնասակար հետևանքները բանվոր դասակարգի նորմալ զարգացման համար պարզ են յուրաքանչյուր քիչ թե շատ գիտակից սոցիալիստ-քաղաքական գործչին, հանդիսանում են, անկասկած, մեր բազմացեղ յերկրի բանվորական դեմոկրատիայի հասարակական-քաղաքական եվրոպացիայի պատմական չարիքը:

Յեթե, մի կողմից՝ դաշնակցականների ու հնչակյանների նման հայ ազգայնականներն իրենց գործունելությամբ աջակցում ելին հայ պրոլետարիատի դասակարգային ինքնազիստակցության մթնագընմանը, ապա մյուս կողմից՝ վրաց սոցիալ-դեմոկրատիան ընդհանուր առմամբ իր նեղ-ազգայնական քաղաքական գործունելությամբ կրակի վրա լուղ եր լցնում, նպաստում եր, վորպեսզի հայ պրոլետարական մասսաներն ել ավելի խորթանան վրացական ու թուրքական պրոլետարիատից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2 (56-րդ էջին).

1. Իս «Անցյալի հիշողությունների» մեջ, վոր տպվել ե սոցիալ-դեմոկրատական «Բանվորի Զայն» հայերեն թերթում, իս հիշատակել են մի միջազգեպ, վոր հարկ հմ համարում այստեղ վերարտադրել:

«Տոնակատարության և ուրախության ժամանակ մի անհաճող դեպք տեղի ունեցավ, վոր այստեղ լուսության տալ չեմ կարող: Բանվորները հանկարծ նկատում են հորիզոնում մի ձիավորի (ԱՅՃԻԿ), վոր մոտենում եր մեր ժողովին բռնած ուղղությամբ: Յենթադրելով, վոր սպառազինված ձիավորը քաղաքից ուղարկված ժանդարմական մի հեծալ զորական ե, բանվորներն անմիջապես իջեցնում են գրոշակները, վորոնցից մեկը նույնիսկ ցեխի մեջ ե ընկնում:

Յես այս արարքը չկարողացա տանել: Պահանջիցի անմիջապես բարձրացնել զրոշակները և կրկին ծածանել նրանց, վրդովված հայտարելով, վոր յեթե նույնիսկ ժանդարմաների ու լրտեսների մի ամբողջ վոհմակ հարձակվելիս լիներ, այդ գեղքում դարձաւ բանվորները չպիտի ալգախ խայտառակ կերպով վարդելին, պետք եր տանց վախի դիմավորել նրանց, իսկ յեթե կարիք լիներ, նույնիսկ ընդդիմագություն ցուց աային նրանց:

Այս ճառը իստ ազգում ե նրանց վրա, և նրանք կրկին ծածանում են գրոշակները. իսկ ձիավորը միանգամայն մի անվտանգ մարդ դուրս չեկավ: Նա գյուղացի յեր և գյուղական հասարակության կողմից նշանակված եր հսկելու արտաները և միանգամայն պատահական կերպով անցնելիս ե լինում մեր ժողովի մոտով: Այնուամենայնիվ բանվորները նրան հյուրասիրում են նախաճաշիկով ու դինիով և այնպես են խմեցնում նրան, վոր նա հարբած վիճակում խոր քնի մեջ ե ընկնում միքանի ժամ շարունակ: Այդ ժամանակ ձիավրակի սիրահար

բանվորներն ուղարկութում են նրա ձին և հերթով չափչում դաշտում:

Այս գեղքը ցույց ե տալիս այն բանը միայն, թե բանվորներն ինչ աստիճան անվործ ու յերկշու ելին առաջին ժամանակը: Վախկոտության ու հեղափոխական գիմազրկության աստիճանին հասած այսպիսի թուլությունները բնականորեն առաջանում ելին վստիկանական ուժիմի շնորհիվ և զարգանում ելին ընդհատական հեղափոխական գործունելության պայմաններում, յերբ անհրաժեշտ եր լինում մշտապես ծայրահեղ զգուշության հետամուտ լինել:

Հեղափոխական պայքարն ստանց հեղափոխականների խիզախության ու անվեհերության անկարելի մի բան ե: Հետագա տարիների հեղափոխական իշլությունների պատմությունը ցուց ե տալիս, թե ինչպես բանվոր դասակարգը, շուտ ազատվելով իր սկզբնական անհաճատակամությունից, անձանաչելի յե գանոնում իր հերոսական կովետեցի ընդդիմութիւնը թշնամիների:

ՀԱՎԵԼՎԱԾՄ Հ 1

Ընկ. Լենինն իր ժամանակին արտահայտվել ե «Հայ Սոցիալ-Դեմկրատների Միության» ու նրա «Մանիֆեստ» մասին, վոր տպվել ե նրա որպան «Պրոլետարիստ» մեջ: Այս կարծիքի հետ հայ ընթերցողներին ծանոթացնելու նպատակով, ինչպես և նրանց հետաքրքրությանը զոհացում տալու համար, կարեոր ենք համարում թարգմանաբար բերելու այստեղ «Խօրա»-ի № 33-ում (1903 թ. փետրվարի 1) տպված ընկ. Լենինի «Օ մանիքեստ արմանական սոցիալ-դեմոկրատում» հոդվածը, վոր քաղում ենք նրա աշխատությունների Վ. հատորից:

«ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ» ՄԱՆԻՔԵՍՏԻ ՄԱՍԻՆ

«Կովկասում յերեան և յեկել սոցիալ-դեմոկրատական մի նոր կազմակերպություն» «Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միությունը»: Ինչպես հայտնի յե, այս միությունը կես տարուց ավել ե, ինչ սկսել ե իր պրակտիկ գործունելությունը և արդեն ունի իր որպանը հայերեն լեզվով: Մենք ստացել ենք այս որպանի № 1, վոր կոչվում ե «Պրոլետարիստ», և վորի վերտառության մեջ նշանակված ե՝ «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցություն»: «Պրոլետարիատը» իր մեջ պարունակում ե մի շարք հոդվածներ, դիմուլություններ ու թղթակցություններ, վորոնք լուսաբանում են «Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միությունը» գոյության կոչող հասարակական

ու քաղաքական պայմանները և նշում ընդհանուր գծերով նրա դորձունելութիւն ծրագիրը:

Առաջնորդող հոգվածում, վոր կոչվում է «Հայ Սոցիալ-Դեմոկրատ-Ների Մանիքեստը», կարգում ենք. «Հանդիսանալով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը, կուսակցության, վոր լայնատարած Ռուսաստանով մեկ ընդարձակորեն իր ցանցն և տարածել, Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միությունը միանգամայն համերաշխ և նրան իր գործունելության մեջ և նրա հետ միասին կկովի ընդհանրապես ոռուսական և մասնավորապես հայ պրոլետարիատի շահերի համար»: Այսուհետեւ, սատ նաև կապիտալիզմի արագ զարգացումը կովկասում և այդ պրոցեսին ուղեկցող իրենց ուժով ու բազմակողմանիությամբ հրեշտակին հետևանքները, հեղինակներն անցնում են կովկասի բանվորական շարժման ժամանակակից դրության հարցին: Կովկասի արդիունաբերական կենտրոններում, ինչպիսիք են՝ Բագուն, Թիֆլիսը և Բաթումը իրենց կապիտալիստական խոշոր ձեռնարկություններով ու բազմաքանակ գործարանային պրոլետարիատով, այդ շարժումն արդեն իր խոր արմատն ե զցել: Սակայն կովկասյան բանվորների պայքարը գործատերերի գեմ, նրանց ծայր աստիճանի ցած կուլտուրական մակարդակի պատճառով, մինչ այսոր կը ե, բնականաբար, ավել կամ պակաս անգիտակցական, տարերային բնույթ: Անհրաժեշտ որ մի ուժ, վոր կարողանար համախմբել բանվորների ցիրուցան ուժերը, տար նրանց պահանջներին առանձին-առանձին (վլենօրազծըլից) ձև ու մշակեր նրանց մեջ զասակարգային՝ ինքնագիտակցություն: Արդպիսի ուժը սոցիալիզմն ե: Ապա՝ հակիրճ շարադրելով գիտական սոցիալիզմի հիմնական սկզբունքները, միությունը պարզաբանում է իր դիրքը միջազգային, մասնավորապես ոռուսական սոցիալ-դեմոկրատիայի միջև լեզող ժամանակակից հոսանքների նկատմամբ: «Սոցիալիստական իդեալը՝ ասված և Մանիքեստի միջ, — մեր կարծիքով, անկարելի չե իրագործել վոչ բանվոր զասակարգի տնտեսական ինքնագործունելությամբ և վոչ ել քաղաքական ու սոցիալական մասնակի ուփորմերով. այդ իդեալն իրագործել հնարավոր ե միայն տիրող վողջ կարգի արմատական փոփոխության միջոցով, սոցիալական հեղափոխության միջոցով, վորին վորպես անհրաժեշտ նախերգանքը պիտի ծառալի պրոլետարիատի քաղաքական դիկտուրատուրան»: Այսուհետեւ, մատնանշելով Ռուսաստանում տիրող քաղաքական կարգը, վորպես ամեն տեսակի հասարակական ու տուանձնապես բանվորական շարժմանը թշնամի մի կարգ, միությունը հայտարարում ե, վոր նա իրեն մերձակա նպատակ և դնում քաղաքականապես դաստիարակելու հայ պրոլետարիատին և հա-

զորդակից անելու նրան ամբողջ Ռուսաստանի պրոլետարիստի պայքարին՝ ցարական ինքնակալությունը տապալելու համար: Զբացածելով միանգամայն գործատերերի գեմ բանվորների մղելիք մասնակի տնտեսական պայքարի անհրաժեշտությունը, Միությունն, այնուամենայնիվ, նրան ինքնուրուցին նշանակություն չի տալիս: Նա ճանաշում է այդ պայքարը այնչափ, վորչափ այն (պայքարը) բարելավում և բանվորների տնտեսական դրությունը և նպաստում է նրանց մեջ քաղաքական ինքնագիտակցության ու դասակարգային համերաշխության մշակման գործին:

Մեզ համար առանձնապես հետաքրքրական է միության վերաբերմունքը ազգային հարցի նկատմամբ: «Ինկատի ունենալով, — առված է Մանիքեստի միջ, — վոր ոռուսական պետության կազմի մեջ մտնում են կուլտուրական գորգացման տարբեր ասսիճանների վրա գտնված շատ այլազան ժողովուրդներ և, յենթաղբելով, վոր տեղական ինքնավարության լայն զարգացումը միայն կարող է ապահովել այդ այլազեղ տարրերի շահերը, մենք անհրաժեշտ ենք համարում ապագա աղատ Ռուսաստանում հաստատելու Փեզերատիվ (ընդգծումը մերն ե) հանրապետություն: Ինչ վերաբերում է կովկասին, ապա՝ նկատի ունենալով նրա ազգաբնակության խիստ այլազեղությունը, մենք կը ձգտենք համախմբել տեղական սոցիալիստական բոլոր տարրերին և զանազան ազգությունների պատկանող բոլոր բանվորներին: Ինքնակալության դեմ ավելի հաջող պայքարը մղելու համար՝ մենք կձգտենք ստեղծելու միասնական-կուլ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն: Ապագա Ռուսաստանում մենք ճանաչում ենք բոլոր ազգությունների իրավունքը ազատ ինքնորոշության համար, վորովհետեւ ազգային ազատության մեջ մենք ընդհանրապես քաղաքացիական սոցիալիստական գործությունը մեկը միայն: Յեկանելով այս սկզբանքներից և հաշվի առնելով, ինչպես մատնանշեցինք վերը, կովկասի այլազեղ կազմը և առանձին ցեղերի միջև աշխարհազրական բաժանման բացակայությունը, մենք հնարավոր չենք գտնում միր ծրագրի մեջ մտցնելու քաղաքական ինքնավարության պահանջը կովկասյան ժողովուրդների համար, մենք պահանջում ենք ինքնավարություն միայն կուլտուրական կյանքի նկատմամբ, այսինքն լեզվի, զպրոցների, կրթության ազատության և այլն»:

Ամբողջ սրատվ մենք վողջունում ենք հայ սոցիալ-դեմոկրատների մանիքեստը և առանձնապես նրա ուշազրավ փորձը՝ տալու ազգային հարցի նկատմամբ ճշշտ դրումն (ՊՈՍՏԱՆՈՎԿԱ): Անչափ ցանկալի կինուեր, յեթե այդ փորձը հասցվեր մինչև վերջը՝ չիմնական յերկու սկզբունքը, վորոնցով պիտի զեկավարվեն ազգային հարցի մեջ Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատները, միությունը ներկ է միան-

գամայն ճիշտ կերպով։ Դա, նախ վոչ թե ազգային ինքնավարության պահանջն է, այլ քաղաքական ու քաղաքացիական ազատության և կատարչ իրավահայտաբության պահանջը, յերկրորդ՝ ինքնորոշության իրավունքի պահանջը պետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգության համար։ Սակայն այս յերկու սկզբունքը հայ սոցիալ-դեմոկրատների միությունը գեռ միանգամայն հետևողական կերպով չի անցկացրել։ Հիրավի, կարելի՞ յէ արդյոք երանց ենաւակետից խոսել Ֆեդերատիվ հանրապետության պահանջի մասին։ Մեղերացիան լենթություններ, իսկ Միությունը հրաժարվում է ազգային ինքնավարության պահանջից։ Միանգամայն հետևողական լինելու համար Միությունն իր ծըրագրից պիտի վերացնի Ֆեդերատիվ հանրապետության պահանջը, սահմանափակվելով ընդհանրապես դեմոկրատիկ հանրապետության պահանջով։ Պրոլետարիատի գործը չե՛ քարոզել Քեդերալիզմ ու ազգային ինքնավարություն, պրոլետարիատի գործը չե՛ առաջադրել նման պահանջներ, վորոնք անխուսափելիորեն հանգում են գասակարգային ինքնավար պետություն ստեղծելու պահանջն։ Պրոլետարիատի գործն են սեւուեն միացնել բոլոր ու ամեն տեսակի ազգությունների բանվորների գորքան կարելի յէ ավելի լան մասսաներին, միացնել՝ հետագորդին շափ ավելի քննարկակ ասպարեզում պայքարելու դեմոկրատիկ հանրապետության ու սոցիալիզմի համար։ Յեկ լիթի մեր տվյալ պետական ասպարեզն ստեղծված ե, պաշտպանվում ու ընդարձակվում ե մի շարք վրդովեցուցիչ բռնությունների միջոցով, ապա շահագործման ու հարստահարման ամեն տեսակի զեմ հաջող պայքար մղելու համար հենք միտի վոչ թե բաժան-բաժան անենք, այլ միացնենք ամենից հարստահարված ու պայքարի համար ամենից շատ ընդունակ բանվոր գասակարգի ուժերը։ Յուրաքանչյուր ազգության համար ինքնորոշության իրավունք ճանաչելու պահանջն ինքնին այն և նշանակում միան, վոր մենք, պրոլետարիատի կուսակցությունն, պիտի ճիշտ և անպայման գեմ լինենք բռնությամբ կամ անարդարությամբ կատարած ամեն ենաւակի Փորձերին՝ արտաքուստ ազգելու ժողովրդական ինքնորոշության վրա։ Կատարելով մշտապես իր այս բացասական պարտականությունը (բռնության զեմ պայքարի ու բռնության), մենք ինքներս մեր կողմից հոգում ենք վոչ թե ժողովրդների ու ազգերի, այլ յուրաքանչյուր ազգության մեջ պրոլետարիատի ինքնորոշման մասին։ Այսպիսով, Ռուսաստանի սոց-դեմոկրատիալի ընդհանուր, հիմնական, մշտապես պարտավորեցուցիչ ծրագիրը պիտի կազմին մրայն քաղաքացիների (անկախ սեռից, լեզվից, գեղից, ազգից և այլն) կատարյալ իրավահավասարության պահանջը և նրանց իրավունքը՝ ազատ դեմոկրատական ինքնորոշության համար։

Իսկ ինչ վերաբերում է ազգային ինքնավարության պահանջների պատճենությանը, ապա այդ պաշտպանությունն ամենենին չի հանդիսանում պրոլետարիատի մշտական, ծրագրային պարտավորությունը։ Այդ պաշտպանությունը նրա համար անհրաժեշտ կարող է դառնալ միայն առանձին, բացառիկ գեղքերում։ Հայ սոցիալ-դեմոկրատիալի նկատմամբ այդպիսի բացառիկ հանգամանքների բացակալությունը խոստպահում է հենց ինքը Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միությունը։

Մենք հույս ունենք կրկին վերադառնարու Փեղերատիվության ու ազգության հարցին։ Իսկ այժմս՝ կրկին անգամ վողջունելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության նորանդամին՝ Հայ Սոցիալ-Դեմոկրատների Միությունը, վերջացնենք հոգվածում։

Ն. ԼԵԵՒԻՆ

«Искра» № 33, 1 февраля 1903 г.
Ленин, Сочинения, том V, изд. З-ье, 1928 г., Госиздат, Москва-Ленинград, № 241—244.

Ինչպես տեսնում ե ընթերցողը, հոգվածի վերջում ընկ. Լենինը խոստանում է կրկին անգամ վերադառնարության ու ազգության հարցին։ Իր այդ խոստումը շուտով կատարում է և «Искра»-ի 1903 թվի հունիսի 15-ի № 44-ի մեջ լույս ե տեսնում «Национальный вопрос в нашей программе»։ Հոգվածը, վոր ընթերցողը կգտնի Լենինի հեղինակությունների վերոհիշյալ հատորի 337 հջում։

ԾԱՆՈԹ. ԹԱՐԳՄԱՆՉԻ

ՀԱՎԵԼՎԱԾ Հ 2

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Հայ ընթերցողներին ծանոթացնելու համար կարենը ենք համարում թարգմանարար րերելու այստեղ Պետերբուրգի կուսակցական կոմիտեի պատասխանը Բաթումի բանվորների հարցումին, վորքազում ենք «Искра»-ի 1902թ. № 23-ից («Искра» № 1—52, 1900—1903, выпуск III, եջ 165, Изд. Истпарта при ЦКВКП (б), «Прибой»—Ленинград)։

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԱԹՈՒ-
ՄԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄԻՆ**

«Յերկու թե յերեք ամիս սրանից առաջ Բաթումի ընկերները դիմել ենին Պետերբուրգի կոմիտեին՝ առաջարկելով քննության առնել և մասուլի միջոցով իր կարծիքն արտահայտել ստորև հիշատակած յերեք հարցերի նկատմամբ։ Կատարելով ընկերների առաջարկը, Պետերբուրգի կոմիտեն իր ցավակցությունն ե արտահայտում պատասխանի ուշացումի առթիվ և հույս տածում, վոր Բաթումի ընկերները կհավատան, վոր պատասխանի ուշացումը կատարվել է կոմիտեյի կամքից անկախ պատճառներով։

Այս այդ հարցերը.

1) «Խնաբելիքենցիալի վերաբերմունքը բանվորական շարժման նկատմամբ», այսինքն՝ կապիտալիստների շահագործման, ինչպիս և կառավարության կամայականության գեմ ուղղված փողոցային ցուցերի, ույոնական, տեղական ու գործարանային անկարգությունների և այլ բացահայտ բողոքների ժամանակի ինտելիգենցիան, վորպիս ազգաբնակության ավելի զիտակից ու հեղափոխականորեն տրամադրված մասը, արդյո՞ք պիտի բանվորների առաջից գնա, թե պիտի սահմանափակվի խաղաղ խմբակային պրոպագանդով, իսկ շարժման ղեկավարությունն ու վոգենորությունը վերապահի իրենց բանվորներին։


2) Յեթե վողջ Ռուսաստանի բոլոր կոմիտեների ու կազմակերպությունների սահմանած ընդհանուր կարծիքի համաձայն Ռուսաստանում տիրող կամայականության գեմ բողոքելու միակ գրւխավոր միջոցը ցուցն ե՝ մասամբ տնտեսական, և վոր գլխավորն ե, քաղաքական ուղղությամբ, սակայն թե մեկ և թե մյուս ղեկըում կառավարությանն անմիջապես առաջարկելիք պահանջներով, ապա ինչպիս պիտի պահեն իրենց ցուցարանները վոստիկանության գրոհի ժամանակ, այսինքն նրանք արդյոք իրենցից կախված բոլոր միջոցներով պիտի ընդդիմադրություն ցուց տան, թե առաջին իսկ հարձակման ղեկըում պիտի ցիրուցան լինեն։ Յեթե նրանք հնարավորության գեպքում ընդդիմադրություն պիտի ցուց տան, ապա ինչպիս, ինչ կերպ և ինչպիսի զենքերով. արդյոք բացահայտ մարտի ժամանակ նրանք իրենց պաշտպանության համար գործի չպիտի զընեն հրածիգ զենքեր, դանակներ ու դաշուլներ, թե պիտի բավականան քարերով ու փայտերով։

3) Բանվորական շարժումն ավելի հետեղական, ավելի նպատակահարմար զարձնելու համար Բաթումի ընկերները ցանկություն են հայտնում հիմնելու համառուսական կենտրոնական մի կազմակերպու-

թյուն՝ միասնական կենտրոնական ղեկավար կոմիտեի գլխավորությամբ։ Իսկ յեթե վերջինս ստեղծելու հնարավորություն չկա, առաջերևս ժամանակավորապես կազմակերպել մի ավելի արագընթաց ու հուսալի միջոց՝ հաղորդելու միմանց Ռուսաստանի գանազան քաղաքաների մտադրությունների ու ղեպքերի մասին։ Պատասխանելով առաջարկված հարցերից առաջինին, Պետերբուրգի կոմիտեն իւնում է այն սկզբունքից, վեր միանգամայն ժխտում և սոցիալ-դեմոկրատական ինտելիգենցիայի ու բանվորների բաժանելու հանգամանքը, վորովհետեւ սոցիալ-դեմոկրատական, վրապես քաղաքական կուսակցություն, համախմբում և բանվոր դասակարգի գաղափարի հաղթանակի համար բոլոր մարտնչողներին, անկախ նրանց դասակարգային կամ դասային ծագումից։ Մեր ուսուցիչներ ու մեր «շարժման» հիմնադիրներ և նետելիքեն կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Ենգելսը, ինարկե, բանվորներ Ավգուստ Բերելից ու Իգնատիյ Լուերից պակաս սոցիալ-դեմոկրատականներ ու բանվորների առաջնորդներ չելին, իսկ մեր Ռուսական Խալտուրինը կամ Պյոտր Ալեքսեյյել՝ պակաս ինտելիգենցիայի, բառի կատարյալ իմաստով։ Այդ պատճառով ել Պետերբուրգի կոմիտեյի համար այն հարցը, թե՝ ով պիտի «խաղաղ խմբակային պրոպագանդ» վարի, ինտելիգենցիան թե բանվորները, և ով իր վրա վերցնի «շարժման ղեկավարությունն ու վոգենորությունը», լուծվում ե շատ պարզ կերպով, ավելի ճիշտը, միանգամայն վերանում է։ Ինչպիս ընդհանրապես ամեն մի շարժման մեջ, յեթե այն տեղի լի ունենում գիտակցականորեն ու պլանաշափ կերպով, ղեկավարների ու քաջալերողների զերը վիճակվում է շարժման ամենից գիտակից, ամենից ներկայացուցիչներին, այնպես և մեր շարժման գլուխը պիտի կանգնեն, և փաստապես կանգնած ել են, նրա ամենից գիտակից, ամենից զարգացած տարրերը, իսկ թե ծագում են նրանք բանվորների թե ուրիշ դասակարգերի ու դասերի միջից, — ու միենալուն է։ Ինչ վերաբերում ե յերկորդ հարցին, այսինքն այն հարցին, թե ցուցարաններն ինչպիս պիտի հակազեն վոստիկանության հարձակմանը, ապա Պետերբուրգի կոմիտեն անհնարին և գտնում այդ հարցին մի ընդհանուր կտրուկ պատասխան տալ մինչեւ կուսակցության հերթական յերկորդ համագումարը, վորին հայտնի կղարձվի իրերի ներկա զրությունը Ռուսաստանի զանազան անկյուններում, և յերբ կուսակցությունն այդ տվյալների հիման վրա հնարավորություն կըստանա մշակելու մարտական տակտիկայի ընդհանուր ձևեր։ Սակայն չհանձնարարելով ու չդատափետելով զինված ընդդիմադրությունը փողոցային ցուցերի ժամանակ, Պետերբուրգի կոմիտեն իւնթագրում է, վոր զինված վոստիկանության հարձ սկումը ցուցարանների վրա կարելի յեզ զոչ միայն զս կել այլ և ջատել վոչ միայն ցուցարանների սպառա-

զինումով, այլ նաև նրանց կազմակերպվածությամբ։ Յեթե ամեն մի ցույցից առաջ կատարվի առաջիկա ցույցի նպատակը պարզող է՝ ռանդապին ագիտացիա, յեթե ցույցին գնա վոչ թե կիսուգիտակից մի ամբոխ, այլ առաջիկա խնդիրների վողջ լրջությունը պարզորեն գիտակցող մարդիկ, ապա վոստիկանութիւնն առաջին իսկ հարձակման գեղքում փախչելու միտքը հաղիվ թե արագ կերպով պատի ցուցարարներին, և վոստիկանությունն ել հաղիվ թե կարողանա այնպես շուտով մաքրել փողոցները, ինչպես այդ, զժբախտաբար, այնպես հաճախ տեղի յե ունենում ներկա ժամանակա։ Արան վորպես համոզեցուցիչ հաստատումն ծառայում են մի կողմից՝ մարդկան ցույցիրը, վոր ամեն տարի կատարում են լին ու հրեա մեր ընկերները, մյուս կողմից՝ Հելսինգֆորսում մոտ ժամանակներս տեղի ունեցած ցույցը, յերբ չպինված, բայց լավ կազմակերպված բազմությունը փախուստի մատնեց զինված կազակների հարյուրյակը։ Վերջապես, յերբորդ հարցի առթիվ Պետերբուրգի կոմիտեն պարտք և համարում հազորդելու Բաթումի ընկերներին, վոր բանվորական սոցիալ-դեմոկրատական բոլոր կազմակերպությունների գործունեյությունների համախմբման կարիքն իր համար նույնքան կենսական ու անհետաձգելի մի զործ է, ինչպես և Բաթումի ընկերների համար։ Ներկայումս Պետերբուրգի կոմիտեն զրադիւն է հենց հիշյալ համախմբումը հնարավորին չափ շուտափությունը իրագործելու համար պարանոներ ու միջոցներ մշակելու, ինչպես և կուսակցական համագումարի շուտափությունը գործով, համագումարի, վորի ժամանակ հույս ունենք հանդիպելու Բաթումի ընկերների ներկայացուցիչների հետ։

Խուսա. Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցության



ՑԱՆԿ

Հեղինակի առաջաբանը 2-րդ հրատարակությանը	3
Հեղինակի առաջաբանը 1-ին հրատարակությանը	14
Գ. Վ. Պլեխանովին	17
Առաջաբան	
I. Ընդհանուր տեղեկություններ. Բանվոր դաստիարակի դրությունը Կովկասում	31
II. Բանվորական շարժման ծագումը. Նրա առաջին քայլերը Կովկասում	41
III. Բանվորական շարժումը Թիֆլիսում և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը	47
IV. Բագու, Բաթում, Բութայիս և ուրիշ քաղաքներ	95
V. 1903 թվի հուլիսան դեպքերը	120
VI. Գյուղացիությունը և հողային շարժումը Կովկասում	130
VII. Բանտ և աքսոր	155
VIII. «Մեսամեղասիստների» խմբակը և «Կվալի» թերթը	173
2-րդ հրատարակության ծանոթությունները	180
Հավելվածներ.	
«Հայ Սոց.-Դեմոկրատական կոմիտե» Մանիքեստի մասին	183
Կուսակցության Պետերբուրգի կոմիտեյի պատասխանը Բաթումի բանվորների հարցումին	188

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Բանվորների առաջովագրությունը Արևմտյան Յելրոպայում և Ռուսաստանում», Թիֆլիս, 1894 թ.
- ✓ 2. «Փուչ զավակ», դրամա 5 գործ. Թիֆլիս, 1905 թ.
- ✓ 3. „Рабочее движение и социал-демократия на Кавказе“, с предисловием Г. В. Плеханова. I изд., Женева, 1910 г.
II изд. (Гиз) Москва, 1923 г.
- ✓ 4. Եռվնը հայերեն, Պետհրատ, Յերևան, 1929 թ.
- ✓ 5. «La guerre mondiale et le socialisme», Լա Շո-դը-ֆոն (Շվեյցարիա), 1915 թ.
- ✓ 6. «Անցյալի հիշողություններից», Թիֆլիս, 1918 թ.
- ✓ 7. «Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թվին», Թիֆլիս, 1919 թիվ:
8. „Записки революционера“, № 1, непериод. изд., Тифлис, 1920 год.
9. «Материалы по истории отпадения Закавказия от России» изд. „Красн. Кн.“, Тифлис, 1923 г.
10. «Բայց և այնպես նա շարժվում ե», դրամա 4 գործ., Թիֆլիս, 1929 թ.
11. «Արտեմ Սոլոմոնովիչ Դոլմագովը բանտում», արագի-կոմի-դիս 2 գործ., Թիֆլիս, 1926 թ.
- ✓ 12. «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում», հրատարակություն «Զակկնիգա», Թիֆլիս, 1927 թ.
- ✓ 13. «Ռ. Խանազատի հեքիաթները», Թիֆլիս, 1928 թ.

Շուտով լուս կտեսնի ոռւսերեն

„Первая армянская группа революционеров на Кавказе“
հայերենից թարգմանություն, հրատ. «Զակկնիգա», Թիֆլիս:

С. Т. Аркомед
Рабочее движение
и социал-демократия
на Кавказе



ԳԻՒԸ | Ա.

1535

2013

